19194

ԽՍՀՄ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

ՅՈԹԵՐՈՐԴ ՍԵՍԻԱՆ

ՍՊԱԳՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

328(47)
Խ-11

27 SEP 2006
15 JAN 2010
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ
328(47)
Խ-11

ԽՍՀՄ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ՅՈԹԵՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

1 ոգոստոսի — 7 ոգոստոսի 1940 թ.

★

ՍՊԱԳՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
1940

10.09.2013

19194

ՀՍՍՀ Գրքի պալատ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
г. Ереван

2594
40

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՅՈԹԵՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

★

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1940 թվի օգոստոսի 1–ին)

Նախագահությամբ մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի ու Միության խորհրդի Նախագահի տեղակալները — ընկերներ Տ. Դ. Լիսենկոյի և Ու. Յուսուպովի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերեվալը դիմավորվում է ամբողջ դահլիճի ովացիայով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ա. Ա. Անդրեև (*Նախագահ*): *Գերագույն խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Միության խորհրդի Յոթերորդ Սեսսիան հայտարարում եմ բացված: (Ծափահարություններ:)*

Նախքան Յոթերորդ Սեսսիայի որակարգը վորոշելուն անցնելը, յես պետք է ասեմ, վոր Գերագույն խորհրդի Վեցերորդ և Յոթերորդ Սեսսիաների միջև յեղած ժամանակամիջոցում կարելո-ֆիննական հանրապետությունում կայացան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատների ընտրություններ:

Միության խորհուրդը պետք է լսի Մանդատային հանձնաժողովի զեկուցումը՝ մանդատների ստուգման մասին:

Զեկուցման համար խոսք ունի Մանդատային հանձնաժողովի նախագահ՝ դեպուտատ Շչերբակովը:

Ա. Ս. Շչերբակով (*Իրկուտսկի օկրուգ, Իրկուտսկի մարզ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Կարելական Ավտոնոմ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Միութենական Կարելո-Ֆիննական խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն վերակազմելու վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1940 թվի մարտի 31–ի Որենքի հիման վրա, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1940 թվի ապրիլի 15–ի հրամանա-*

դրով Կարելո-Ֆիննական ԽՍՀ կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրությունները նշանակվել էին 1940 թվի հունիսի 16-ին:

Մխության Խորհրդի դեպուտատների ընտրությունները կատարվեցին միայն Կարելո-Ֆիննական ԽՍՀ նոր տերիտորիայում, որը միացվել է նրան Կարելական Ա.ԽՍՀ-ն Կարելո-Ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն վերակազմելիս: Կարելական Ա.Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության նախկին տերիտորիայում Մխության Խորհրդի դեպուտատների ընտրությունները կատարվել են 1937 թվի դեկտեմբերի 12-ին:

Մխության Խորհրդի դեպուտատների ընտրությունների համար կազմվեց Վիխպուրիի (Վիբորգի) № 613 ընտրական okրուգը:

Մխության Խորհրդի Առաջին Սեսսիայում ԽՍՀՄ Սահմանադրության 50-րդ հոդվածի հիման վրա ընտրված Մխության Խորհրդի Մանդատային հանձնաժողովը «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» 44-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ստուգել է Վիխպուրիի ընտրական okրուգից Ակրուգային ընտրական հանձնաժողովի ներկայացրած ընտրական փաստաթղթերը և նյութերը դեպուտատի վերաբերյալ:

Մանդատային հանձնաժողովը փաստաթղթերն ու նյութերը ստուգելուց հետո գտել է, որ Վիխպուրիի ընտրական okրուգում Մխության Խորհրդի դեպուտատի ընտրությունները կատարվել են ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» հիման վրա ու նրանց համապատասխան:

Մխության Խորհրդի ընտրությունների Վիխպուրիի ընտրական okրուգում քվեարկությանը մասնակցել է okրուգի ընտրողների ընդհանուր թվի 99,67%-ը: Կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուի ոգին քվեարկել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 98,15%-ը:

Վիխպուրիի (Վիբորգի) № 613 ընտրական okրուգում Մխության Խորհրդի կազմում ընտրվել է Գեննադիյ Նիկոլաևիչ Կուպրիյանովը:

Մխության Խորհրդի Մանդատային հանձնաժողովը, ստուգելով դեպուտատի լիազորությունները և Ակրուգային ընտրական հանձնաժողովի ներկայացրած բոլոր ընտրական փաստաթղթերն ու նյութերը՝ Վիխպուրիի ընտրական okրուգում ընտրված դեպուտատի վերաբերյալ, ընդունել է հետևյալ որոշումը, որը մտցնում է Սեսսիայի քննարկմանը.

«Ստուգելով Մխության Խորհրդի դեպուտատի ընտրությունների Վիխպուրիի (Վիբորգի) № 613 Ակրուգային ընտրական հանձնաժողովի ներկայացրած բոլոր ընտրական փաստաթղթերն ու նյութերը, Մխության Խորհրդի Մանդատային հանձնաժողովը գտնում է.

1. Վիխպուրիի (Վիբորգի) № 613 ընտրական okրուգում Մխության Խորհրդի դեպուտատ Գեննադիյ Նիկոլաևիչ Կուպրիյանովի ընտրությունները կատարվել են ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» հիման վրա ու նրանց լիովին համապատասխան:

2. Ընտրությունները բեկանելու վոչ մի հիմք, ինչպես նաև վոչ մի բողոք ու դիմում չկա Վիխպուրիի (Վիբորգի) № 613 ընտրական okրուգում Մխության Խորհրդի դեպուտատի ընտրությունների ժամանակ ԽՍՀՄ Սահմանադրության և ընտրությունների Կանոնադրության խախտելու մասին:

Վերոհիշյալի հիման վրա Մխության Խորհրդի Մանդատային հանձնաժողովն ընդունում է Վիխպուրիի (Վիբորգի) № 613 ընտրական okրուգում ընտրված Մխության Խորհրդի դեպուտատ Գեննադիյ Նիկոլաևիչ Կուպրիյանովի լիազորությունների ճշտությունը»:

ԵՓ—2

Նախագահ: Ո՞վ է խոսք ինդրում Մանդատային հանձնաժողովի զեկուցման վերաբերյալ: Խոսքը տրվում է դեպուտատ Իգնատևին:

Ս. Դ. Իգնատև (Ուլան-Ուդեյի քաղաքային okրուգ, Բուրյաթ-Մոնղոլական Ա.ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն եմ մտցնում Մանդատային հանձնաժողովի զեկուցման չուրջը մտքերի փոխանակություն չբանալ և ընդունել հետևյալ վորոշումը.

Լսելով Մանդատային հանձնաժողովի զեկուցումը, Մխության Խորհուրդը վորոշում է. հաստատել Մանդատային հանձնաժողովի զեկուցումը՝ Վիխպուրիի (Վիբորգի) № 613 ընտրական okրուգում 1940 թվի հունիսի 16-ին ընտրված Մխության Խորհրդի դեպուտատի լիազորությունները ճիշտ ճանաչելու մասին:

Նախագահ: Ելի վորևե մեկը ցանկանո՞ւմ է արդյոք խոսք վերցնել Մանդատային հանձնաժողովի զեկուցման վերաբերյալ: Վո՛չ:

Այդ դեպքում թույլ տվեք քվեարկել դեպուտատ Իգնատևի մտցրած առաջարկությունը: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունվի այդ առաջարկությունը, ինդրում եմ ձեռք բարձրացնի: Ինդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Մանդատային հանձնաժողովի զեկուցումը հաստատվում է միաձայն:

Անցնում ենք Միության Խորհրդի Ցոթերորդ Սեսսիայի որակարգը վորոշելուն: Սեսսիայում քննարկելու համար ստացվել են հետևյալ հարցերը.

1. Զեկուցում կառավարության արտաքին քաղաքականության մասին:

2. Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին և Բուկովինայի հյուսիսային մասն ու Բեսսարաբիայի Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի գավառները Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին:

3. Լիտվական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

4. Լատվիական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

5. Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

6. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության այն Հրամանագրերը, վորոնք ընդունվել են Սեսսիաների միջև և չեն թվակա յին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հաստատմանը:

Ահա այն հարցերը, վորոնք ստացվել են ներկա Սեսսիայում քննարկելու համար:

Վորևե մեկը ցանկանո՞մ է արդյոք խոսք վերցնել որակարգի հարցի վերաբերյալ: Խոսք ունի դեպուտատ Կուզնեցովը:

Ի. Ա. Կուզնեցով (Սարանսկի okրուգ, Մորդվական ԱԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն եմ մտցնում Միության Խորհրդի Նախագահի կողմից հրապարակված հարցերը մտցնել Միության Խորհրդի Ցոթերորդ Սեսսիայի որակարգի մեջ:

Նախագահ: Ելի ո՞վ է ցանկանում խոսք վերցնել որակարգի հարցի վերաբերյալ: Ցանկացողներ չկան: Թույլ տվեք քվեարկել:

Ով կողմնակից է, վորպեսզի հաստատվի իմ ընթերցած որակարգը, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Որակարգը հաստատվում է միաձայն:

Ի՞նչ կարգով է առաջարկվում քննարկել հաստատված հարցերը: Ո՞վ է ցանկանում խոսք վերցնել: Խոսք ունի դեպուտատ Կուբրանովը:

Մ. Կուբրանով (Կուլյաբի okրուգ, Տաջիկական ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն եմ մտցնում Նախագահի կողմից հրապարակված հարցերը քննարկել Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստում: Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի առաջին համատեղ նիստն առաջարկում եմ հրավիրել այսոր յերեկոյան ժամը 7-ին:

Նախագահ: Ո՞վ է խոսք խնդրում դեպուտատ Կուբրանովի մտցրած առաջարկության վերաբերյալ: Դեպուտատ Կուբրանովն առաջարկություն մտցրեց այն մասին, վորպեսզի որակարգի բոլոր հարցերը քննարկվեն պալատների համատեղ նիստերում: Առաջին նիստը հրավիրել այսոր յերեկոյան ժամը 7-ին:

Քվեարկում եմ այս առաջարկությունը: Ով կողմնակից է դրան, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Առաջարկությունն ընդունվում է:

Այսոր յերեկոյան ժամը 7-ին կկայանա Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը:

Միության Խորհրդի առաջին նիստը հայտարարում եմ փակված:

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՅՈԹԵՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

★

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1940 թվի օգոստոսի 1–ին)

Նախագահությամբ մեջ Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի, Ազգությունների խորհրդի Նախագահի տեղակալներ — ընկերներ Զ. Ա. Ասաևովայի և Մ. Վ. Կուլագինի, իսկ օրյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերևալը դիմավորվում է բուռն ծափահարություններով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ն. Մ. Շվերնիկ (*Նախագահ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի Յոթերորդ Սեսսիան հայտարարում եմ բացված:*

Սեսսիա յեն յեկել Կարելո–Ֆիննական ԽՍՀ կողմից Ազգությունների Խորհրդում ընտրված դեպուտատները: Մանդատային հանձնաժողովը ստուգել և ընտրված դեպուտատների մանդատները: Մանդատային հանձնաժողովի զեկուցման համար խոսքը տրվում է դեպուտատ Բուրմիստենկոյին:

Մ. Ա. Բուրմիստենկո (*Մայկոպի դյուզպական ոկրուգ, Ադիգեյական ավտոնոմ մարզ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Վեցերորդ Սեսսիան, ընդառաջելով Կարելական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորության ցանկությունները և զեկավարվելով ազգությունների ազատ զարգացման սկզբունքով, ընդունեց Որենք Կարելական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Միութենական Կարելո–Ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն վերակազմելու մասին, նրան միացնելով ԽՍՀՄ և Ֆինլանդիայի միջև 1940 թվի մարտի 12–ին*

հնքված հաշտության պայմանագրի հիման վրա Ֆինլանդիայից ԽՍՀՄ-ին անցած տերիտորիան:

Կարելական Ա.ԽՍՀ-ն Միութենական կարելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն վերակազմելն ունի պատմական մեծ նշանակություն, վկայում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության նոր հսկայական հաղթանակների մասին, քաղաքականություն, որն ապահովում է ազգությունների հավասարությունը, բոլոր ժողովուրդների խաղաղ համակեցությունը և եղբայրական համագործակցությունը:

Կարելո-ֆիննական ԽՍՀ-ի աշխատավոր մասսաները, մեր ամբողջ հայրենիքի աշխատավորները Գերագույն Խորհրդի վեցերորդ Սեսսիայի այդ վորոշումն ընդունեցին հսկայական վոգևորությամբ ու յերախտագիտությամբ դեպի մեր կոմունիստական կուսակցությունն ու ամբողջ աշխարհի ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ:)

Կարելական Ա.ԽՍՀ-ն Միութենական կարելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերակազմելը հանրապետության աշխատավորների առջև լայն ճանապարհ բացեց հետագա տնտեսական ու կուլտուրական չինարարության համար՝ ազգային պետական դոյության նոր, բարձրագույն աստիճանի վրա՝ վորպես իրավահավասար միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն:

Կարելո-ֆիննական ԽՍՀ-ն մեծ Խորհրդային Միության հանրապետությունների յեղբայրական ընտանիքում հանդիսանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության խաղաղության և անվտանգության կայուն պատվարը նրա հյուսիս-արևմտյան սահմաններում:

1940 թվի հունիսի 16-ին Կարելո-ֆիննական ԽՍՀ բանվորները, դյուղացիները ու ինտելիգենցիան, անկախ իրենց ռասայական և ազգային պատկանելությունից, ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ դաշնի քվեարկությամբ ընտրեցին Ազգությունների Խորհրդի դեպուտատներ միութենական հանրապետության կողմից: ԽՍՀՄ Սահմանադրության 35-րդ հոդվածի և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» 22-րդ հոդվածի հիման վրա Կարելո-Ֆիննական ԽՍՀ-ում կազմված են Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրությունների 25 ընտրական okրուգներ:

ԽՍՀՄ Սահմանադրության 50-րդ հոդվածի հիման վրա Ազգությունների Խորհրդի Առաջին Սեսսիայում ընտրված Մանդատային հանձնաժողովը «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» 48-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ստուգել է բոլոր 25 ընտրական okրուգներից okրուգային ընտրական հանձնաժողովների ներկայացրած ընտրական փաստաթղթերն ու նյութերը յուրաքանչյուր դեպուտատի վերաբերյալ, այն է դեպուտատության թեկնածուների գրանցման արձանագրությունների առկայությունը և քվեարկության արձանագրությունների առկայությունը:

Յուրաքանչյուր դեպուտատի վերաբերյալ փաստաթղթերն ու նյութերը ստուգելուց հետո Մանդատային հանձնաժողովը գտել է, որ Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրությունները բոլոր 25 ընտրական okրուգներում կատարվել են ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» հիման վրա ու նրանց լիովին համապատասխան:

Մանդատային հանձնաժողովը գտել է, որ վորևե okրուգում ընտրությունները բեկանելու վոչ մի առիթ չկա, ինչպես նաև չկա վոչ մի բողոք ու դիմում, վորոնք կասկածի տակ դնեին վորևե okրուգում Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրությունները:

Կարելո-Ֆիննական ԽՍՀ կողմից Ազգությունների Խորհրդում ընտրված 25 դեպուտատներից բանվորներ են 12 մարդ, կամ 48%, դյուղացիներ — 4 մարդ, կամ 16%, ինտելիգենցիա — 9 մարդ, կամ 36%:

Բանվորների և դյուղացիների թվից մի մասը կատարում է կուսակցական, պրոֆեսիոնալ, խորհրդային և դինվորական աշխատանք:

Ընտրված դեպուտատների թվում կան ընտրողներին լայն կերպով հայտնի անհաչա մարտիկներ, վորոնք կռվել են սպիտակ-ֆինների դեմ՝ հանուն կարելո-ֆինն ժողովրդի ազատագրման: Նրանցից չատերը նստած են յեղել Ֆինլանդական բանտերում և նախկին ցարական Ռուսաստանի բանտերում, յենթարկվել են տանջանքների ու չարչարանքների: Հանրապետության աշխատավորները նրանց առաջադրել և ընտրել են Գերագույն Խորհրդի դեպուտատներ վորպես լավագույններից լավագույնների, վորպես խորհրդային ժողովրդի դործին ամենանվիրվածների, վորոնք ընդունակ են ակտիվ պայքար մղելու ժողովրդի թշնամիների դեմ, պայքարելու կոմունիզմի դործի համար: (Ջերմագին ծափահարություններ:)

Շատ դեպուտատներ աչքի չեն ընկել վորպես յեռանդուն հասարակական գործիչներ խորհրդային իշխանության չինարարության համար, սոցիալիզմի համար մղվող պայքարում: Ժողովրդական լայն մասսաներից նրանք բարձրացան ակտիվ քաղաքական գործունեության և այժմ հաջողությամբ աշխատում են պետական որգաններում, ղեկավարում են ձեռնարկությունները, կուլտուրական հիմնարկները, կարելո-ֆինն ժողովրդի համար անդադրում ստեղծում են նոր, ազատ և բերկրալի կյանք: Ժողովուրդը գնահատեց նրանց գործունեությունը և ՌՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրությունների որը ցույց տվեց խոր վստահություն:

Նոր ընտրված դեպուտատների ազգային կազմը հետևյալն է. 8 կարելացի, 9 ֆիննի, 7 ռուս և 1 վեպս:

Դեպուտատների ազգային կազմը մարմնավորում է կարելո-ֆիննական ՌՍՀ ժողովուրդների ստալինյան համագործակցությունը, վորում բոլոր ազգությունները հավասար իրավունք ստացան ընտրել և ընտրվել խորհրդային պառլամենտում:

Դեպուտատների թվում կա 4 կին, կամ 16%: Նրանք տղամարդկանց հետ հավասար իրավունքներով ընտրվել են պետական աշխատանքի:

Ազգությունների Խորհրդում ընտրված դեպուտատներից բարձրագույն կրթություն ունեն 12 մարդ, կամ 48%, միջնակարգ—9 մարդ, կամ 36%, տարրական—4 մարդ, կամ 16%:

Կարելո-ֆիննական ՌՍՀ կողմից Ազգությունների Խորհրդում ընտրված դեպուտատների հասակային կազմի վերաբերյալ տվյալները սրանք են. 22-ից մինչև 25 տարեկան—1 մարդ, 26-ից մինչև 40 տարեկան—14 մարդ, 40 տարեկանից մեծ—10 մարդ:

497 043 ընտրողների ընդհանուր թվից Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրություններին մասնակցել են 495 402 մարդ, վոր կազմում է ընտրողների ընդհանուր թվի 99,67%-ը:

Բոլոր 25 ընտրական okրուգներում Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրություններին կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին քվեարկել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 98,53%-ը: 7 299 բյուլետեններում չնչված էին թեկնածուների ազգանունները: Անվավեր ճանաչվեց 212 բյուլետեն:

Կարելո-ֆիննական ՌՍՀ կողմից Ազգությունների Խորհրդում ընտրված դեպուտատների թվում կան Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության 23 անդամ ու թեկնածու և 2 անկուսակցական:

Այս թվերը վկայում են կոմունիստների և անկուսակցականների բլոկի լիակատար հաղթանակի մասին:

Կարելո-ֆիննական ՌՍՀ աշխատավորները մխահամուռ քվեարկելով կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին, արժանի պատասխան տվին պատերազմի բոլոր հմպերիալիստական հրձիգներին, նորից ցուցադրեցին, վոր ժողովուրդը լիակատար հավանություն է տալիս Խորհրդային Միության կառավարության քաղաքականությանը:

Մխահամուռ քվեարկելով կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին, Կարելո-ֆիննական ՌՍՀ ժողովուրդը մեկ անգամ ևս արտահայտեց իր անսահման վստահությունը դեպի Լենինի—Ստալինի կուսակցությունը և Խորհրդային կառավարությունը, իր ջերմ սերը մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինին: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ:)

Ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի Առաջին Սեսսիայում ընտրված Մանդատային հանձնաժողովը ստուգել է Ազգությունների Խորհրդի դեպուտատների լիազորությունները և Կարելո-ֆիննական ՌՍՀ կողմից ընտրված յուրաքանչյուր դեպուտատի վերաբերյալ okրուգային ընտրական հանձնաժողովների ներկայացրած բոլոր ընտրական փաստաթղթերն ու նյութերը և ընդունել է հետևյալ վորոշումը, վորը և մտցնում է Սեսսիայի քննարկմանը.

«Ստուգելով առանձին-առանձին յուրաքանչյուր դեպուտատի բոլոր ընտրական փաստաթղթերը և Կարելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրությունների okրուգային ընտրական հանձնաժողովների ներկայացրած բոլոր նյութերը, Ազգությունների Խորհրդի Մանդատային հանձնաժողովը գտնում է.

1. Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրությունները Կարելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բոլոր 25 ընտրական okրուգներում կատարվել են ՌՍՀՄ Սահմանադրության և «ՌՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» հիման վրա և նրանց լիովին համապատասխան:

2. Ընտրությունները բեկանելու վոչ մի հիմք, ինչպես նաև վոչ մի բողոք և դիմում չկա՝ Կարելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից Ազգությունների Խորհրդի դեպուտատների ընտրությունների ժամանակ վորևե

2594
40

ընտրական okրուգում ԽՍՀՄ Սահմանադրությունը և ընտրությունների կանոնադրությունը խախտելու մասին:

Վերոհիշյալի հիման վրա Ազգությունների Խորհրդի Մանդատային հանձնաժողովն ընդունում է կաբելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից Ազգությունների Խորհրդում ընտրված բոլոր դեպուտատների լիազորությունների ճշտությունը, դեպուտատներ, որոնց ցուցակը հրապարակված է «Իզվեստիա» թերթի № 140-ում, 1940 թվի հունիսի 20-ին»:

Նախագահ: Ո՞վ է խոսք խնդրում Մանդատային հանձնաժողովի զեկուցման վերաբերյալ: Խոսքը տրվում է դեպուտատ Վագովին:

Ա. Վ. Վագով (Մարիի քաղաքային okրուգ, Թուրքմենական ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն եմ մտցնում Մանդատային հանձնաժողովի զեկուցման չուրջը մտքերի վոխանակություն չբանալ և ընդունել հետևյալ վորոշումը.

Լսելով Մանդատային հանձնաժողովի զեկուցումը, Ազգությունների Խորհուրդը վորոշում է. հաստատել Մանդատային հանձնաժողովի զեկուցումը՝ կաբելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի ընտրությունների բոլոր 25 ընտրական okրուգներում ընտրված Ազգությունների Խորհրդի դեպուտատների լիազորությունները ճիշտ ճանաչելու մասին:

Նախագահ: Ելի ո՞վ է խոսք խնդրում Մանդատային հանձնաժողովի զեկուցման վերաբերյալ: Ցանկացողներ չկան: Այդ դեպքում քվեարկում եմ դեպուտատ Վագովի մտցրած առաջարկությունը: Ով կողմնակից է այդ առաջարկությունն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Մանդատային հանձնաժողովի զեկուցումը հաստատվում է միաձայն:

Ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք ինձ Ազգությունների Խորհրդի անունից վողջունել Ազգությունների Խորհրդի մեր նոր ընկեր դեպուտատներին, կաբելո-ֆիննական ժողովրդի ընտրյալներին: (Ձեռքաբաու ծափահարություններ: Բոլորը վոտքի են կանգնում:)

Ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի Յոթերորդ Սեսսիայի քննարկմանը մտցվում են հետևյալ հարցերը.

1. Զեկուցում կառավարության արտաքին քաղաքականության մասին:

2. Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմելու մասին և Բուկովինայի հյուսիսային մասն ու Բեսարաբիայի Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի դավառներն Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին:

3. Լիտվական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

4. Լատվիական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

5. Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

6. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության այն Հրամանագրերը, վորոնք ընդունվել են Սեսսիաների միջև և յենթակա են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հաստատմանը:

Սրանք այն հարցերը, վորոնք մտցվում են Ազգությունների Խորհրդի Յոթերորդ Սեսսիայի քննարկմանը: Դեպուտատներից ո՞վ է ցանկանում խոսք վերցնել Սեսսիայի որակարգի հարցի վերաբերյալ: Խոսքը տրվում է դեպուտատ Խարխովին:

Զ. Խ. Խարխով (Բուդյոննի okրուգ, Թաթարական ԱԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն եմ մտցնում Ազգությունների Խորհրդի Նախագահի հրապարակած հարցերը մտցնել Ազգությունների Խորհրդի Յոթերորդ Սեսսիայի որակարգի մեջ:

Նախագահ: Դեպուտատներից ելի ո՞վ է խոսք խնդրում որակարգի վերաբերյալ: Ցանկացողներ չկա՞ն: Այդ դեպքում քվեարկում եմ դեպուտատ Խարխովի առաջարկությունը: Ով կողմնակից է, վորպեսզի հաստատվի Սեսսիայի որակարգը, վորը յես հրապարակեցի, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Որակարգը հաստատվում է միաձայն:

Այժմ անհրաժեշտ է վորոշել Սեսսիայում դրված հարցերի քննարկման կարգը:

Դեպուտատներից ո՞վ է խոսք խնդրում այդ հարցի վերաբերյալ: Խոսքը տրվում է դեպուտատ Մենթարիևին:

Ա. Խ. Մենթարիև (Յալտայի okրուգ, Ղրիմի ԱԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն եմ մտցնում Նախագահի հրապարակած հարցերը քննարկել Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստում: Առաջարկություն եմ մտցնում Ազգությունների Խորհրդի և Միության Խոր-

Հըրդի առաջին համատեղ նիստը հրավիրել այսօր յերեկոյան ժամը 7–ին:

Նախագահ: Եղի ո՞վ և ցանկանում խոսք վերցնել հարցերի քննարկման կարգի վերաբերյալ: Ցանկացողներ չկա՞ն: Այդ դեպքում ես կցանկանայի առաջարկությունն այն մասին, որ Սեսսիայի որակարգի բոլոր հարցերը քննարկել Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստում, ինչպես նաև առաջարկությունն այն մասին, որ Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի առաջին համատեղ նիստը հրավիրել այսօր յերեկոյան ժամը 7–ին: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունվեն այդ առաջարկությունները, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իմկերեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Առաջարկությունները ընդունվում են միաձայն:

Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը՝ կառավարության արտաքին քաղաքականության մասին զեկուցումը լսելու համար կկայանա այսօր յերեկոյան ժամը 7–ին:

Ազգությունների Խորհրդի Սեսսիայի առաջին նիստը հայտարարում եմ վակված:

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՅԵՎ
ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐԸ

★

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1940 թ-վի ոգոստոսի 1-ին)

Նախագահությամբ մեջ Միության Խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի, Ազգությունների Խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի և նրանց տեղակալներ — ընկերներ Տ. Դ. Լիսենկոյի, Ու. Յուսուպովի, Զ. Ա. Ասլանովայի ու Մ. վ. Կուլագինի, իսկ ոթյակներում՝ ընկերներ Ստալինի, Մոլոտովի, Վորոշիլովի, Կալինինի, Լ. Մ. Կագանովիչի, Միկոյանի, Ժդանովի, Խրուշչեվի, Բերիայի, Մալենկովի, Շկիրյատովի և մյուսների յերեվալը դեպուտատները դիմավորում են բուռն ծափահարություններով, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով լսվում են վողջույնի բացականչություններ՝ «կեցցե՛ ընկեր Ստալինը»:

Նախագահում է Միության Խորհրդի Նախագահ Ա. Ա. Անդրեևը:

Նախագահող: *Ընկե՛ր դեպուտատներ: Գերագույն Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված:*

Ըստ պալատների ընդունված վորոշման համաձայն Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստում պետք է քննարկվեն հետևյալ հարցերը.

1. *Ձեվուցում կառավարության արտաքին քաղաքականության մասին:*

2. *Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմելու մասին և Բուկովինայի հյուսիսային մասն ու Բեսարաբիայի Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի պավառներն Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին:*

3· Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

4· Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

5· Եստոնական հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:

6· ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության այն Հրամանագրերը, որոնք ընդունվել են Սեսսիաների միջև և կենթակա են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հաստատմանը:

Ահա այն հարցերը, որոնք կենթակա են համատեղ նիստի քննարկմանը:

Ընկե՛ր դեպուտատներ: Մոսկվա են ժամանել և Գերագույն Խորհրդի նիստի դահլիճում ներկա են Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովը (բուռն, երկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի, բոլորը վոտքի են կանգնում), Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովը (բուռն, երկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի, բոլորը վոտքի են կանգնում), Եստոնիայի Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովը (բուռն, երկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի, բոլորը վոտքի են կանգնում), Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորների պատվիրակությունը: (Բուռն, երկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի են կանգնում:)

Թույլ տվեք Գերագույն Խորհրդի, Խորհրդային Միության պետական իշխանության բարձրագույն որգանի դեպուտատների անունից, վողջունել Լիազոր Հանձնաժողովների և պատվիրակության անդամներին, իսկ հանձինս նրանց՝ վողջունել Լիտվային, Լատվիային, Եստոնիային, Բեսսարաբիայի ու Հյուսիսային Բուկովինայի յեղբայրական ժողովուրդներին: (Բուռն, երկար ժամանակ չլռող ծափահարություններ: Բացականչություններ՝ «ուռա»:)

Անցնում ենք որակարգի առաջին կետի քննարկմանը: Կառավարության արտաքին քաղաքականության մասին զեկուցելու համար խոսքը տրվում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովին: (Բուռն, երկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի են կանգնում: Բացականչություններ՝ «Ուռա՛ ընկեր Մոլոտովին»:)

Վ· Մ· Մոլոտով: Ընկե՛ր դեպուտատներ: Գերագույն Խորհրդի վեցերորդ Սեսսիայից հետո անցած չորս ամսվա ընթացքում Եվրոպայում կատարվեցին մեծ կարևորություն ունեցող իրադարձություններ: Գերմանիայի կողմից սկզբում Նորվեգիայում ու Դանիայում, իսկ այնուհետև Բելգիայում ու Հոլլանդիայում և, վերջապես, Ֆրանսիայի տերիտորիայում ծավալված պատերազմական գործողությունների հետևանքով պատերազմը Եվրոպայում ստացավ մեծ թափ: Հունիսի 10–ին Գերմանիային միացավ Իտալիան, որը պատերազմ հայտարարեց Անգլիային և Ֆրանսիային: Այսպիսով, եվրոպական չորրորդ խոշորագույն տերությունը մտավ պատերազմի մեջ:

Այս տարվա գարնանից պատերազմն սկսեց ծավալվել արագ տեմպերով: Կանգ չառնելով Նորվեգիայում, Դանիայում, Բելգիայում և Հոլլանդիայում տեղի ունեցած իրադարձությունների վրա, հարկավոր է հատկապես նշել Ֆրանսիայի արագ պարտության և կապիտուլյացիայի փաստը: Ինչ վոր մեկ–մեկ ու կես ամսվա ընթացքում գերմանական բանակը վոչ միայն ընկճեց Ֆրանսիայի դիմադրությունը, այլև նրան ստիպեց ստորագրել ղինադադարի այնպիսի պայմաններ, որոնց համաձայն Ֆրանսիայի տերիտորիայի մեծ մասը, Փարիզի հետ միասին, չարունակում է մնալ վորպես գերմանական զորքերի կողմից օկկուպացիայի յենթարկված տերիտորիա: Այնուամենայնիվ, ղինադադար ստանալով, Ֆրանսիան դեռ չունի հաչտություն: Հաչտության պայմանների մասին առհասարակ դեռ վոչինչ հայտնի չէ: Գերմանիային և Իտալիային հանդիման յերկու դաշնակիցներից մնացել է միայն Անգլիան, որը վորոշել է չարունակել պատերազմը, հենվելով ԱՄՆ–ի ողնության վրա:

Այստեղ անհրաժեշտություն չկա կանգ առնելու Ֆրանսիայի պարտության բոլոր պատճառների վրա, Ֆրանսիայի, որը դրսևորեց իր բացառիկ թուլությունը պատերազմի մեջ: Պարզ է, վոր բանն այստեղ միայն ռազմական վատ պատրաստությունը չէ, — թեև այդ պատճառը դարձել է հանրածանոթ: Այստեղ վոչ–վոքը ղեր խաղաց նաև այն հանգամանքը, վոր Ֆրանսիայի ղեկավար շրջանները — ի տարբերություն Գերմանիայի — չափազանց թեթևամտորեն վերաբերվեցին Եվրոպայի գործերի մեջ Խորհրդային Միության ղերի և տեսակարար կշռի հարցին: Վերջին ամիսների իրադարձություններն ակնառու կերպով ցույց տվին, ինչ վոր ավելին: Դրանք ցույց տվին, վոր Ֆրանսիայի կառավա-

դող շրջանները կապված չէին ժողովրդի հետ ու վոչ միայն չէին հենվում նրա վրա, այլև վախենում էին իրենց ժողովրդից, վորն ունի աղատասեր ժողովրդի արժանավոր համբավ՝ հեղափոխական պանծալի տրադիցիաներով: Դրանումն է Ֆրանսիայի բացահայտված թուլության լուրջ պատճառներից մեկը:

Ֆրանսիայի ժողովրդի առջև այժմ ծառացած են պատերազմի հասցրած վերքերի բուժման ծանր խնդիրները, իսկ ապա նաև վերածննդի խնդիրները, վոր, սակայն, անհնարին է իրականացնել հին մեթոդներով:

Գերմանիան դաշնակիցների դեմ մղած պատերազմի մեջ հասավ մեծ հաջողությունների, բայց նա դեռ չի հասել իր հիմնական խնդրին — պատերազմի դադարեցմանը իր համար ցանկալի պայմաններով: Հուլիսի 19-ին Գերմանիայի ռեյխստագը նորից դիմեց Անգլիային՝ կոչ անելով համաձայնության գալ հաշտության վերաբերյալ, բայց անգլիական կառավարությունը, ինչպես հայտնի է, մերժեց այդ առաջարկը: Անգլիական կառավարությունն այդ առաջարկը մեկնաբանեց վորպես Անգլիայի կապիտուլյացիայի պահանջ, և պատասխանեց այն հայտարարությամբ, թե ինքը պատերազմը կշարունակի մինչև հաղթանակը: Նա նույնիսկ դիմեց դիվանագիտական հարաբերությունների խզմանն իր երեկվա դաշնակցի՝ Ֆրանսիայի հետ: Այդ նշանակում է, վոր Անգլիայի կառավարությունը չի ուզում պնջել իր դաղութները, վորոնք պահվում են յերկրագնդի բոլոր մասերում, և հայտարարում է, թե պատրաստ է այսուհետև էլ պատերազմ մղելու հանուն համաշխարհային տիրապետության, չնայած, վոր Ֆրանսիայի պարտությունից հետո և այն բանից հետո, յերբ Իտալիան պատերազմի մեջ մտավ Գերմանիայի կողմում, այդ պայքարն Անգլիայի համար դարձել է դժվարին:

Մոռենում է յեվրոպական պատերազմի առաջին տարվա վերջը, բայց այդ պատերազմի վերջը դեռ չի յերեվում: Ավելի հավանական պետք է համարել, վոր տվյալ մոմենտում մենք կանգնած ենք մեկ կողմից Գերմանիայի ու Իտալիայի, և մյուս կողմից Անգլիայի միջև մղվող պատերազմի ուժեղացման նոր ետապի նախորյակին, Անգլիայի, վորին ոգնում են Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Մատնանշված բոլոր իրադարձությունները չփոխեցին Խորհրդային Միության արտաքին քաղաքականությունը: Խաղաղության և չեզոքության քաղաքականությանը հավատարիմ Խորհրդային Միությունը պատերազմին չի մասնակցում: Մեր հարաբերությունները Գերմանիայի հետ, վորոնց մեջ համարյա մեկ

տարի առաջ չրջադարձ կատարվեց, չարունակվում են լիովին պահպանվել ինչպես պայմանավորված և խորհրդային–գերմանական համաձայնագրով: Այդ համաձայնագիրը, վորը խստիվ պահպանում է մեր կառավարությունը, վերացրեց խորհրդային–գերմանական հարաբերությունների մեջ բաղխումներ առաջանալու հնարավորությունը՝ մեր արևմտյան սահմանի յերկայնությամբ խորհրդային ձեռնարկումներն անցկացնելիս և, միևնույն ժամանակ, Գերմանիայի համար հանդիստ վստահություն ապահովեց Արևելքում: Յեվրոպայում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքը վոչ միայն չթուլացրեց չհարձակվելու խորհրդային–գերմանական համաձայնագրի ուժը, այլ, ընդհակառակը, չեշտեց նրա դոյության և հետագա զարդացման կարևորությունը: Վերջին ժամանակներս ոտարերկրյա և, մանավանդ, անգլիական ու անգլիասեր մամուլում հաճախ սպեկուլյացիայի առարկա յեն դարձրել Խորհրդային Միության և Գերմանիայի միջև տարաձայնություններ ծագելու հնարավորությունը, վորձելով վախեցնել մեզ Գերմանիայի հզորության ուժեղացման հեռանկարով: Ինչպես մեր, այնպես էլ Գերմանիայի կողմից այդ վորձերը քանիցս մերկացվել ու դեն են դցվել, վորպես անպետք վորձեր: Մենք կարող ենք միայն հաստատել, վոր, մեր կարծիքով, ստեղծված բարի–դրացիական և բարեկամական խորհրդային–գերմանական հարաբերությունների հիմքն են կազմում վոչ թե կոնյունկտուրային բնույթ կրող պատահական նկատումներ, այլ, ինչպես ԽՍՀՄ–ի, այնպես էլ Գերմանիայի պետական արմատական շահերը:

Պետք է նաև նշել, վոր Իտալիայի հետ մեր ունեցած հարաբերությունները վերջին ժամանակաշրջանում բարելավվել են: Իտալիայի հետ տեղի ունեցած կարծիքների փոխանակությունը ցույց տվեց, վոր արտաքին քաղաքականության ասպարիզում մեր յերկրները լիակատար հնարավորություն ունեն փոխադարձ ըմբռնումն ապահովելու: Միանդամայն հիմնավորված են նաև առևտրական հարաբերությունների ուժեղացման վրա դրված հույսերը:

Իսկ ինչ վերաբերում է խորհրդային–անգլիական հարաբերություններին, ապա դրանց մեջ վերջին ժամանակներս վորևե էական փոփոխություն չի կատարվել: Պետք է խոստովանել, վոր Անգլիայի կողմից ԽՍՀՄ–ի դեմ կատարված թշնամական այն բոլոր ակտերից հետո, վորոնց մասին շատ անգամ ասվել է յեղել խոսելու Գերագույն Խորհրդում, դժվար եր սպասել խորհրդային–անգլիական հարաբերությունների լավ զարդացում, թեպետ կա–

բող է պատահել, վոր պ–րն Կրիպսին ԽՍՀՄ–ում դեսպան նշանակվելն արտացոլում է Անգլիայի ցանկությունը՝ բարելավել իր հարաբերությունները Խորհրդային Միության հետ:

Այժմ թույլ տվեք անցնելու մեր արտաքին քաղաքականության այն հարցերին, վորոնց հաջող լուծումը վերջին ժամանակներս դգալիորեն ընդարձակեց մեր տերիտորիան և բազմապատկեց Խորհրդային Միության ուժերը: (Բուռն ծափահարություններ:)

Այստեղ կարիք չկա մանրամասնորեն կանգ առնելու այն բանի վրա, թե ինչպես տեղի ունեցավ Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի միացումը Խորհրդային Միությանը: Համապատասխան փաստաթղթերը լրիվ հրապարակվեցին հունիսի 28–ին: Այն հայտարարության մեջ, վորը յես ներկայացրել եմ Մոսկվայի ռումինական դեսպան պ–րն Դավիդեսկուին, առաջարկվել եր.

1. Վերադարձնել Բեսսարաբիան Խորհրդային Միությանը:

2. Հանձնել Խորհրդային Միությանը Բուկովինայի հյուսիսային մասը:

Ինչպես հայտնի է, Ռումինիայի կառավարությունն ընդունեց մեր առաջարկը, և Խորհրդային Միության ու Ռումինիայի միջև 22 տարի ձգձգված կոնֆլիկտը լուծվեց խաղաղ ճանապարհով: (Ծափահարություններ:) Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի տերիտորիայում ապրող գլխավորապես ուկրաինացիները և մոլդավները հնարավորություն ստացան մտնելու խորհրդային ժողովուրդների համերաշխ ընտանիքի մեջ և ապրելու նոր կյանքով,—ռումինական բոյար–կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունից ազատագրված ժողովրդի կյանքով: (Ջերմ ծափահարություններ:) Այժմ մենք դիտենք, թե Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի բնակչությունն ինչպիսի մեծ բերկրանքով մտավ խորհրդային քաղաքացիների շարքերը:

Այսպիսով, Խորհրդային Միության տերիտորիան Բեսսարաբիայի միացումով ավելացավ 44,5 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ, 3 միլիոն 200 հազար բնակչությամբ և Հյուսիսային Բուկովինայի միացումով՝ 6 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ, ավելի քան 500 հազար բնակչությամբ:

Այդ կապակցությամբ, Խորհրդային Միության սահմանները տարածվեցին դեպի արևմուտք և հասան մինչև Դանուբ գետը, վորը Վոլգայից հետո ամենահզոր գետն է Եվրոպայում և ապրանքափոխանակման կարևորագույն ուղիներից մեկը յեվրոպական մի շարք յերկրների համար:

Դուք դիտեք, ընկերներ, վոր ամբողջ Խորհրդային ժողովուրդը մեծ հրճվանքով և գոհունակությամբ դիմավորեց Բեսսարաբիայի յերկար ժամանակ սպասվող հարցի հաջող լուծումը: Մյուս կողմից, մեր հարաբերությունները Ռումինիայի հետ այժմ պետք է մտնեն միանգամայն նորմալ հունի մեջ:

Անցնում եմ Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի հետ մեր հարաբերությունների հարցին:

Մերձբալթյան յերկրների հետ Խորհրդային Միության փոխհարաբերությունների հարցը վերջին ժամանակներս ծառացավ նոր ձևով, քանի վոր Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի հետ ֆինքված փոխադարձ ոգնության պակտերը չտվին հարկ յեղած արդյունքները: Այդ պակտերի կնքումը չհասցրեց Խորհրդային Միության հետ Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի մերձեցմանը, ինչպես վոր այդ հարկավոր եր սպասել, քանի վոր դրան ընդդիմացան այդ յերկրների կառավարող բուրժուական խմբերը: Այդ կառավարող խմբերը վոչ միայն չընթացան Խորհրդային Միության հետ մերձեցման ուղիով, մի բան, վորը կարծեք թե կարելի յեր սպասել փոխադարձ ոգնության պակտերի կնքումից հետո, այլ գնացին Խորհրդային Միության դեմ թշնամական գործողությունների ուժեղացման ուղիով, գործողություններ, վոր նրանք կատարում եյին գաղտագողի և ԽՍՀՄ–ի թիկունքում: Դրա համար ոգտագործվեց այսպես կոչված Բալթիական Անտանտան, վորի մեջ առաջ ԽՍՀՄ–ի դեմ ուղղված ռազմական դաշինքով կապված եյին միայն Լատվիան ու Եստոնիան, բայց վորն անցյալ տարվա վերջերից վերածվեց այնպիսի ռազմական դաշինքի, վորը բացի Լատվիայից ու Եստոնիայից ընդգրկում եր նաև Լիտվան:

Դրանից հետևում է, վոր Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի կառավարող բուրժուական խմբերն անընդունակ դտնվեցին աղնվորեն կենսագործելու Խորհրդային Միության հետ կնքած փոխադարձ ոգնության պակտերը, վոր նրանք ընդհակառակը, ե՛լ ավելի ուժեղացրին թշնամական գործունեությունը Խորհրդային Միության նկատմամբ: Հետզհետե ավելանում եր այն փաստերի թիվը, վորոնք վկայում եյին, վոր այդ յերկրների կառավարությունները կոպիտ կերպով խախտում են ԽՍՀՄ–ի հետ կնքած փոխադարձ ոգնության պակտերը: Միանգամայն անհնարին եր դառնում այլևս հանդուրժել այդպիսի դրություն, մանավանդ ժամանակակից միջազգային իրադրության պայման–

ներում: Ահա թե ինչու դրան հաջորդեցին Խորհրդային կառավարության ձեզ հայտնի պահանջները՝ Լիտվայի, Լատվիայի, Եստոնիայի կառավարությունների կազմը փոխելու և այդ պետությունների տերիտորիան Կարմիր Բանակի լրացուցիչ զորամասեր մտցնելու մասին:

Մեր կառավարության այդ քայլերի արդյունքները ձեզ հայտնի են:

Եստոնիայում, Լատվիայում և Լիտվայում ստեղծված՝ Խորհրդային Միության նկատմամբ բարեկամական՝ կառավարությունների կարևորագույն ձեռնարկումը յեղավ պատյմենտների ազատ ընտրություններ անցկացնելը: Հուլիս ամսին անցկացվեցին Լիտվական Սեյմի, Լատվիական Սեյմի և Եստոնիայի Պետական Դումայի դեմոկրատական ընտրությունները: Ընտրությունները ցույց տվին, որ Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի կառավարող բուրժուական կլիկաները չեյին արտացոլում իրենց ժողովուրդների կամքը, որ նրանք չահագործողների միայն մի նեղ խմբի ներկայացուցիչներն եյին: Լիտվայի և Լատվիայի սեյմերը, Եստոնիայի Պետական Դուման, որոնք ընտրվեցին ընդհանուր, ուղղակի ու հավասար քվեարկության հիման վրա՝ գաղտնի ձայնատվության, արդեն արտահայտել են իրենց միահամուռ կարծիքը քաղաքական արմատական հարցերի վերաբերյալ: Մենք դոհունակությամբ կարող ենք արձանագրել, որ Եստոնիայի, Լատվիայի և Լիտվայի ժողովուրդները համերաշխորեն քվեարկեցին իրենց ներկայացուցիչների ոգուն, որոնք միահամուռ կերպով արտահայտվեցին Խորհրդային կարգերի հաստատման և Լիտվան, Լատվիան ու Եստոնիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելու ոգին: (Բուռն ծափահարություններ:)

Դրանով իսկ Լիտվայի, Լատվիայի, Եստոնիայի և Խորհրդային Միության փոխհարաբերությունները պետք է նոր հիմքի վրա դրվեն:

Գերագույն Խորհուրդը քննելու է Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի, որպես միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություններ, Խորհրդային Միության մեջ մտնելու հարցը: Վոչ մի տարակույս չկա, որ Խորհրդային Միության մեջ այդ հանրապետությունների մտնելը նրանց համար կապահովի տնտեսական արագ վերելք և ազգային կուլտուրայի բարգավաճման ծաղկում, որ Խորհրդային Միության մեջ մտնելով, նրանց ուժերը բազմապատիկ ավելանալու են, նրանց անվտանգությունն ամրանալու է և, դրա հետ միասին, է՛լ ավելի կաճի Մեծ Խորհրդային Միության հզորությունը: (Բուռն, երկար ժամանակ չդադարող ծափահարություններ:)

Մերձբալթյան յերկրների ԽՍՀՄ-ի մեջ մտնելը նշանակում է, որ Խորհրդային Միությունն ավելանում է Լիտվայի 2 միլիոն 880 հազար բնակչությամբ, Լատվիայի 1 միլիոն 950 հազար բնակչությամբ և Եստոնիայի 1 միլիոն 120 հազար բնակչությամբ:

Այսպիսով, Խորհրդային Միության բնակչությունը, Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի բնակչության հետ միասին, կավելանա, մոտավորապես 10 միլիոն մարդով: (Ծափահարություններ:) Յեթե դրան ավելացնենք Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ավելի քան 13 միլիոն բնակչությունը, ապա դուրս է գալիս, որ Խորհրդային Միությունը վերջին տարին մեծացել է ավելի քան 23 միլիոն բնակչությամբ: (Ծափահարություններ:)

Պետք է նշել, որ այդ ամբողջ բնակչության $^{19}/_{20}$ մասն առաջ մտնում եր ԽՍՀՄ կազմի մեջ, բայց Արևմուտքի իմպերիալիստական տերությունների կողմից ուժով անջատվել եր ԽՍՀՄ-ից՝ նրա ռազմական թուլության պահին: Այժմ այդ բնակչությունը վերամիավորված է Խորհրդային Միությանը:

Ինչպես ցույց է տալիս բնակչության հաշվառումը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն այժմ կարող է հզոր ձայնով խոսել 193 միլիոն բնակչության անունից, չհաշված ԽՍՀՄ բնակչության ածը 1939 և 1940 թվերին: (Ցերկարատև ծափահարություններ:)

Մեր յերկրի համար առաջնակարգ նշանակություն ունի այն փաստը, որ այսուհետև Խորհրդային Միության սահմանները կվերապահվեն Բալթիկ ծովի ափը: Դրա հետ միասին, մեր յերկիրը Բալթիկ ծովում կստանա սեփական չսառչող նավահանգիստներ, որոնց կարիքն այնքան մեծ է մեզ մոտ:

Խորհրդային Միության արտաքին քաղաքականության հաջողություններն առավել ևս ղեկավել են այն պատճառով, որ այդ բոլորին մենք հասել ենք խաղաղ ճանապարհով, որ հարցերի խաղաղ լուծումն ինչպես մերձբալթյան յերկրներում, այնպես էլ Բեսսարաբիայում, տեղի ունեցավ այդ յերկրների ժողովրդական լայն մասսաների ակտիվ մասնակցությամբ և ոժանդակությամբ: (Ծափահարություններ:)

Միևնույն ժամանակ պետք է ասել, որ Խորհրդային Միության կառավարության վրա մեծ պատասխանատվություն և դրվում խորհրդային նոր հանրապետություններում քաղաքական

ու տնտեսական վերակառուցման գործնական ձեռնարկումները ճիշտ ու կազմակերպված անցկացնելու համար:

Գերագույն Սովետի նախորդ Սեսսիայում ես առիթ եմ ունեցել ղեկուցելու Ֆինլանդիայի հետ կնքված հաշտության պայմանագրի մասին: Ավելի քան չորս ամիս է անցել այդ պայմանագիրը կնքվելուց հետո, պայմանագիրը, որն ընդհանուր առմամբ բավարար է կատարվում: Այդ ժամանակամիջոցին Ֆինլանդիայի հետ կնքվեց նաև առևտրական պայմանագիրը, ընդվորում մենք դռնում ենք, որ մեր յերկրների միջև տնտեսական հարաբերությունները կարող են զարգացման բարենպաստ հեռանկար ունենալ: Ֆինլանդական կառավարությունն ընդունեց նաև Ալանդական կղզիները ապառազմականացնելու և այդ կղզիների վրա խորհրդային հյուպատոսություն հիմնելու մեր առաջարկը: Ինչ վերաբերում է խորհրդային–ֆինլանդական հարաբերությունների հետագա զարգացմանը՝ յերկու յերկրների համար լավ ուղղությամբ, ապա այդ կախված է գլխավորապես հենց Ֆինլանդիայից: Հասկանալի է, որ յեթե ֆինլանդական կառավարող շրջանների մի քանի տարրեր չդադարեցնեն իրենց ռեպրեսիվ գործողությունները Ֆինլանդիայի հասարակական այն խավերի դեմ, որոնք ձգտում են ամրացնել բարի–դրացիական հարաբերությունները ԽՍՀՄ–ի հետ, ապա ԽՍՀՄ–ի և Ֆինլանդիայի փոխհարաբերությունները կարող են վնասվել: (Ծ ի ծ ա ղ: Ծ ա վ ա լ հ ա ր ա բ ե ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Սկանդինավյան յերկրների՝ Նորվեգիայի և Շվեդիայի հետ մեր ունեցած հարաբերությունները չեն կարող կախված չլինել այնտեղ ստեղծված իրադրությունից: Նորվեգիայի վերաբերմամբ, նկատի ունենալով նրա առանձնահատուկ դրությունը, այժմ դեռ չի կարելի որևէ որոշ բան ասել: Շվեդիայի նկատմամբ պետք է առանձնապես ակտուալ համարել այն, որ մեր յերկու յերկրներն էլ չհագեցված են առևտրա–տնտեսական հարաբերությունների զգալի զարգացմամբ: Ցես հույս ունեմ, որ ներկայումս Շվեդիայի հետ վարվող տնտեսական բանակցությունները պետք է հանգեն յերկու յերկրների համար էլ բավականաչափ ձեռնտու համաձայնագրի:

Ինչ վերաբերում է բալկանյան յերկրներին, ապա նախ և առաջ պետք է նշել Հարավսլավիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատվելու փաստը: Ցեթե կարելի է ասել, թե մեզքը մերը չեր, որ մինչև այժմ դիվանագիտական հարաբերություններ չեն յեղել Խորհրդային Միության ու Հարավսլավիայի միջև, ապա այժմ այդպիսի հարաբերություններ հաստատվեցին

Հարավսլավիայի կառավարության առաջարկով, որը սիրահոժար կերպով ընդունեց Խորհրդային Միությունը: Պետք է հույս ունենալ, որ աստիճանաբար կզարգանան նաև Հարավսլավիայի հետ մեր ունեցած տնտեսական հարաբերությունները:

Մեր հարաբերությունները Բուլղարիայի հետ կարելի է նորմալ համարել: Կարելի է ավելացնել, որ Խորհրդային Միության և Բուլղարիայի միջև այնպիսի հակասություններ չկան, որոնք խանգարեին հարաբերությունների հետագա բարելավմանը:

Թյուրքիայի հետ մեր ունեցած հարաբերությունների մեջ որևէ եական փոփոխություն տեղի չի ունեցել: Պետք է միայն ասել, որ վերջերս ղեկմանական «Սպիտակ դրքում» հրապարակված փաստաթղթերն անախորժ լույս սփռեցին Թյուրքիայում նկատվող գործունեության վորոշ կողմերի վրա: Թյուրքիայի ֆրանսական դեսպան Մասիլյիի բացատրությունները, որոնք տեղի ունեցան դրանից հետո, վոչ մի բան չկարողացան փոխել այդ փաստաթղթերի բնույթի մեջ: Այդ կապակցությամբ յես պետք է ասեմ, որ դեռ ապրիլ ամսի սկզբներին Խորհրդային կառավարությունը Թյուրքիային հայտարարեց, թե հետևյալ փաստն անթույլատրելի է: Բանն այն է, որ ապրիլի սկզբներին Թյուրքիայի տերիտորիայից լինչ վոր ոտարերկրյա լինքնաթիռ թռավ–յեկավ մեր Բաթումի քաղաքի շրջանը, վորտեղ մեծ թվով նավթաթոր գործարաններ կան: Թյուրքական կողմն սկզբում վորձեց գործը պատկերել այնպես, թե ընդհանրապես վոչ մի լինքնաթիռ Թյուրքիայի տերիտորիայից չի անցել, իսկ հետո, այնուամենայնիվ, խոստացավ ապագայում միջոցներ ձեռք առնել այդ տեսակ թռիչքների դեմ: (Դ ա հ լ ի ճ ո ւ մ ա շ խ ո ւ ժ ո ւ թ յ ո ւ ն, ծ ի ծ ա ղ:) Գերմանիայում հրապարակված փաստաթղթերից հետո յերևում է, թե դա լինչ լինքնաթիռ է յեղել: Դրանից հետևում է, որ Թյուրքական կառավարությանը մեր արած հայտարարությունն իրոք լիովին հիմնավորված է յեղել:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա վոչ մի նոր կարևոր մոմենտ չի կարելի նշել: Սակայն Իրանի մասին հիշատակելիս ևս չի կարելի անցնել մի անթույլատրելի փաստի կողքով: Մարտ ամսի վերջերին Բագվի շրջանում, ինչպես նաև մի քիչ հետո Բաթումիի շրջանում յերևաց ոտարերկրյա յերկու լինքնաթիռ, որոնք թռել–յեկել են Իրանի կողմից: Իրանի կառավարությունը հարկավոր համարեց ժխտել այդ փաստը: Սակայն տվյալ դեպքում ևս դերմանական «Սպիտակ դրքի» վերոհիշյալ փաստաթղթերը բավականաչափ պարզաբանում են գործը:

Պետք է նկատել, որ ոտարերկրյա այդպիսի հետախուզիչ ինքնաթիռների առաքման կրկնումը ոչ մի այլ հետևանք չեր կարող ունենալ, եթե ոչ հարևանների հետ մեր ունեցած հարաբերությունների բարդացումը: Իսկ վերոհիշյալ ինքնաթիռների անհրավեր այցելությունները Բաղու և Բաթումի մենք հասկացանք այն իմաստով, որ հետագայում ղեկատուվությունը պետք է ուժեղացնել խորհրդային այդ հարավային սահմաններում եւ: (Ծ ա վ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Ցապոնիայի վերաբերմամբ կարելի յե ասել, որ վերջին ժամանակներս մեր հարաբերությունները սկսեցին որոշ չափով նորմալանալ: Մասնավորապես հունիսի 9-ին համաձայնություն կայացվեց անցյալ տարվա կոնֆլիկտի՝ Խալխին-Գոլ գետի շրջանում սահմանը ճշտելու շուրջը: Այս փաստն ավելի մեծ նշանակություն ունի այն պատճառով, որ այդ հարցի լուծման մեջ տեղի ունեցած երկարատև ձգձգումը մինչև վերջին ժամանակները բացասաբար եր անդրադառնում ԽՍՀՄ-ի և Ցապոնիայի, ինչպես նաև Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության և Մանչժուո-Գոյի փոխհարաբերությունների կարգավորման վրա: Ամենամոտ որերս աշխատանքի յե անցնում Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության և Մանչժուո-Գոյի խառն հանձնաժողովը՝ տեղում սահմանադիծն անցկացնելու համար: կարելի յե ընդունել, թե ընդհանրապես վորոշ նշաններ կան, որ յապոնական կողմը ցանկանում է բարելավել իր հարաբերությունները Խորհրդային Միության հետ: Կողմերի չահերը փոխադարձաբար ճանաչվելու դեպքում, ինչ չափով վոր յերկու կողմերն էլ կհամկանան, թե անհրաժեշտ է վերացնել իրենց նշանակությունը կորցրած մի քանի խոչընդոտներ այդ ճանապարհին, խորհրդա-յին-յապոնական հարաբերությունների այդպիսի բարելավումն իրագործելի յե: Այսենք, պետք է խոստովանել, որ յապոնական նոր կառավարության ծրագրում վոչ-պարզ դեռ շատ բան կա «նոր քաղաքական սորուկտուրա» հաստատելու վերաբերմամբ: Ցերեվում է, որ դեպի հարավ ուղղված եքսպանսիան, որի շուրջն աղմուկ են բարձրացնում յապոնական թերթերը, դնալով ավելի յե դրավում Ցապոնիայի ղեկավար շրջանների ուշադրությունը, մանավանդ այն պատճառով, որ Ցեվրոպայում տեղի ունեցած փոփոխությունները չեն կարող իրենց արտացոլումը չգտնել նաև Ցապոնիայի այդ շրջաններին հետաքրքրող ոլորտներում: Բայց դեռ շատ կողմերով պարզ չեն այդ շրջանների իսկական քաղաքական ձգտումները, մի բան, որ վերաբերում է նաև խորհրդային-յապոնական հարաբերություններին:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ մեր հարաբերությունների վրա յես կանգ չեմ առնի, թեկուզ այն պատճառով, որ դրանց մասին չի կարելի ասել վորևե լավ բան: (Ծ ի ծ ա ղ:) Մեզ հայտնի յե դարձել, որ Միացյալ Նահանգներում վորոշ անձանց դուր չեն գալիս Մերձբալթիկայում խորհրդային արտաքին քաղաքականության ձեռք բերած հաջողությունները: Բայց, ճիշտն ասած, մեզ քիչ է հետաքրքրում այդ հանգամանքը (Ծ ի ծ ա ղ, Ծ ա վ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր), քանի վոր մեր խնդիրները մենք առանց այդ դժգոհ պարոնների ողնության էլ ղլուխ ենք բերում: (Ծ ի ծ ա ղ, Ծ ա վ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:) Սակայն այն հանգամանքը, որ Միացյալ Նահանգներում իշխանությունն ապորինի կերպով կալանքի տակ են առել Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի բանկերից վերջերս մեր Պետական բանկի դնած վոսկին, մեր կողմից առաջացնում է ամենայեռանդուն բողոք: Տվյալ դեպքում մենք միայն կարող ենք հիշեցնել ինչպես Միացյալ Նահանգների կառավարությանը, այնպես էլ Անգլիայի կառավարությանը, վորը կանգնել է նույն այդ ուղու վրա, վոր նրանք պատասխանատու յեն այդ ապորինի գործողությունների համար:

Իսկ ինչ վերաբերում է մեր հարաբերություններին մեծ աղգային Չինաստանի հետ, վորը պայքար է մղում իր գոյության համար, ապա դրանք պահպանել են իրենց բարի-դրացիական և բարեկամական բնույթը, վորը բղխում է չհարձակվելու խորհրդային-չինական պակտից:

Սրանով թույլ տվեք վերջացնել առանձին յերկրների հետ մեր հարաբերություններին վերաբերող դիտողությունները:

Ինձ մնում է մի քանի խոսք ասել միջազգային իրադարձությունների զարգացման ընդհանուր հեռանկարի մասին:

Գերմանական զենքի մեծ հաջողությունների հետևանքով Ցեվրոպայում կատարված փոփոխությունները բնավ չի կարելի ընդունել իբրև այնպիսի փոփոխություններ, վորոնք արդեն այժմ խոստանային պատերազմի մոտալուտ լիկվիդացիան: Իրադարձությունները հասցրին այն կանգին, վոր մեկ կողմը, մանավանդ Գերմանիան, զգալիորեն ուժեղացավ իր ռազմական հաջողությունների հետևանքով, իսկ մյուս կողմն արդեն չի ներկայացնում միասնական ամբողջություն, ըստ ամենայնի, եթե Անգլիայի համար պատերազմը չարունակելու ասպարիզում ստեղծվել են նոր, մեծ դժվարություններ, ապա պատերազմից դուրս յեկած Ֆրանսիան պարտությունից հետո կրում է ծանր ճգնաժամ: Պատերազմող մեկ կողմի ուժեղացումը և պատերազմող մյուս կողմի թուլա-

ցումը լուրջ արտացոլում են դանում վոչ միայն Ցեվրոպայում, այլև աշխարհի մյուս մասերում: Պարտությունն կրածների թվում են դանվում բացի Ֆրանսիայից, Բելգիան ու Հոլլանդիան՝ զաղութային մեծ տիրապետություններով, վոր նրանք այժմ չեն կարող պաշտպանել նախկին ուժով: Դրա հետևանքով, զաղութների վերաբաժանման հարցը սուանում է ավելի ու ավելի մեծ սրություն: Իմպերիալիստական ախորժակները աճում են վոչ միայն հեռավոր Յապոնիայում, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգներում, վորտեղ քիչ չկան իրենց իմպերիալիստական պլաններն ամբողջ «Արևմտյան կիսագնդի» չահերի մասին ռեկլամային «հողատարածության» քողարկելու սիրահարները, կիսագունդ, վորն այդ պարոնայք պատրաստ են դարձնել իրենց սեփականությունը՝ նրա բոլոր բազմաթիվ հանրապետություններով և ամերիկյան մայր ցամաքին մոտիկ կղզիներում այլ երկրների ունեցած զաղութային տիրապետություններով: Այս բոլորը ստեղծում են պատերազմի հետագա ընդարձակման ու հետագա բորբոքման վտանգ, վերածելով այն համաշխարհային իմպերիալիստական պատերազմի:

Այս պայմաններում Խորհրդային Միությունը պետք է ուժեղ զգաստություն ցուցաբերի իր արտաքին անվտանգության դործի նկատմամբ, իր բոլոր ներքին ու արտաքին դիրքերն ամրապնդելու նկատմամբ: Մենք անցանք 7–ից 8 ժամյա աշխատանքային որվա և կիրառեցինք այլ ձեռնարկումներ, նկատի ունենալով, վոր մենք պարտավոր ենք ապահովել երկրի պաշտպանական ու տնտեսական հզորության հետագա ու ե՛լ ավելի հուժկու վերելքը, ապահովել կարզապահության լուրջ ամրացումը բոլոր աշխատավորների մեջ, ուժեղ թափով աշխատել մեր երկրում աշխատանքի արտադրողականության բարձրացնելու ուղղությամբ: Մենք ունենք վոչ–վոքր նոր հաջողություններ, բայց մենք չենք պատրաստվում հանդստանալ ձեռք բերածով: Խորհրդային Միության՝ մեզ համար անհրաժեշտ հետագա հաջողություններն ապահովելու համար մենք միշտ պետք է հիշենք ընկեր Ստալինի այն խոսքերը, վոր «հարկավոր է մեր ամբողջ ժողովուրդը պահել մոբիլիզացիոն պատրաստության վիճակում՝ ռազմական հարձակման վտանգի դեմ–հանդիման, վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել»: (Ցերկարատև ծափահարություններ:) Եթե մենք բոլորս հիշենք մեր այս սըրբազան պարտականությունը, ապա վոչ մի տեսակ իրադարձություն մեզ հանկարծակիի չի բերի և մենք կհաանենք Խորհրդա-

յին Միության նոր ու ե՛լ ավելի փառավոր հաջողությունների: (Բուռն, երկար ժամանակ չլռող ովացիաներ: Բոլորը վոտքի են կանդնում:)

Նախագահող: Անցնում ենք ընկ. Մոլոտովի զեկուցման քննարկմանը: Դեպուտատներից ո՞վ է խոսք ևնդրում ընկ. Մոլոտովի զեկուցման վերաբերյալ: Խոսքը տրվում է դեպուտատ Շչերբակովին:

Ա. Ս. Շչերբակով (Իրկուտսկի ոկրուգ, Իրկուտսկի մարզ): Ընկե՛ր դեպուտատներ: Գերագույն Խորհրդի վերջին, վեցերորդ Սեսիայից հետո անցել է չորս ամիս: Ժամանակամիջոցը մեծ չէ, բայց այդ վոչ–մեծ ժամանակամիջոցում միջազգային կյանքում կատարվել են խոշորագույն իրադարձություններ:

Յերկրորդ իմպերիալիստական պատերազմը ստացավ նոր, ավելի լայն թափ և իր որբիտայի մեջ քաշեց նոր պետություններ:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կանդնած է պատերազմից դուրս: Խորհրդային Միության ժողովուրդները հավանություն են տալիս Խորհրդային Կառավարության ճիշտ, իմաստուն արտաքին քաղաքականությանը, վորն ուղղված է այն բանին, վորպեսզի ապահովվի խաղաղություն ժողովուրդների միջև, զսպվի պատերազմի ընդարձակումն ու հրահրումը Ցեվրոպայում և ապահովվի մեր սեփական յերկրի անվտանգությունը:

Զեղոքության և Ցեվրոպայի խոշորագույն տերությունների միջև մղվող պատերազմին չմասնակցելու դիրքը, վոր բռնել է մեր յերկիրը, ինչպես հայտնի է, չի հարմարվում պատերազմի պրովոկատորների ճաշակին: Պատերազմի հրձիգները փորձել ու փորձում են ԽՍՀՄ–ն ներքաշել պատերազմի մեջ: Այդ փորձերն անփոփոխ վերջանում են կրախով:

Խորհրդային կառավարությունն ապահովել է մեր ժողովուրդին այն բանից, վորպեսզի պատերազմի հրդեհը չփոխադրվի մեր յերկիրը: Խորհրդային Միության քաղաքականությունը, հավատարիմ մնալով խաղաղասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, հասցրեց նոր նշանավոր հաղթանակների:

Կապիտալիստական աշխարհը հարկադրվեց մեկ անգամ ևս նեղվել և հետ նահանջել, իսկ Խորհրդային Միությունն ե՛լ ավելի ամրացրեց իր սահմանները:

Խաղաղ ճանապարհով լուծվեց խորհրդային–ռումինական կոնֆլիկտը Բեսսարաբիայի և Բուկովինայի հյուսիսային մասի հարցի վերաբերյալ:

Սկզբից ի վեր կապված լինելով Ռուսաստանի հետ, Ռուսաստանի արմատական մասը—Բեսսարաբիան Խորհրդային Միությունից (Ռուսաստանից) ռումինական զորքերը բռնի կերպով խլել են 1918 թվին, այն ուրերին, երբ երիտասարդ խորհրդային հանրապետությունը դեռ թույլ էր ռազմական տեսակետից, երբ նա հարկադրված էր հետ մղել սպիտակգվարդիականների ու ինտերվենտների հրոսակախմբերին:

Խորհրդային Միությունը յերբեք չէր հաշտվում Բեսսարաբիան բռնի կերպով խլելու փաստի հետ: 22 տարվա ընթացքում Խորհրդային Միությունն աշխատում էր խաղաղ ճանապարհով լուծել Բեսսարաբիայի կոնֆլիկտը: Ցավ ահա այժմ պատմական արդարությունը հաղթանակեց. Բեսսարաբիան նորից վերամիավորվեց խորհրդային յերկրին: Բեսսարաբիայի աշխատավոր ժողովուրդը մտավ Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ: Այդ նույն մեծ ընտանիքի մեջ մտան նաև ուկրաինացի արյունակից յեղբայրները — Հյուսիսային Բուկովինայի բնակիչները:

Ռումինական բոյարների տիրապետությունը Բեսսարաբիայում անհաշիվ աղետներ պատճառեց Բեսսարաբիայի աշխատավոր ժողովրդին: Ամենահարուստ չրջանը հասցվեց աղքատության:

Խորհրդային Բեսսարաբիան, վերամիավորված իր մայր հայրենիքի հետ, արագությամբ կբուժի ոկկուպանտներից ստացած իր վերքերը, Բեսսարաբիայի աշխատավոր ժողովրդին կհասցնի ունևոր և կուլտուրական կյանքի:

Այսպես ե լուծվել խորհրդային–ռումինական կոնֆլիկտը Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի վերաբերյալ:

Այս, ընկերներ, Խորհրդային կառավարության խաղաղության արտաքին քաղաքականության նշանավոր հաղթանակը չե՞ արդյոք: (Ծափահարություններ:)

Ներկա Սեսսիայում կքննարկվի և կլուծվի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ յերեք նոր խորհրդային հանրապետություններ — Լիտվան, Լատվիան և Եստոնիան ընդունելու հարցը:

Այդ յերկրների աշխատավոր ժողովուրդը սերտորեն կապված և Խորհրդային Միության մեջ բնակվող ժողովուրդների հետ պատմական ճակատագրի ընդհանրությամբ, իր ազատագրման համար

ինքնակալության և կապիտալիզմի դեմ յերկար տարիների ընթացքում համատեղ մղած պայքարով:

Շատ տասնամյակների ընթացքում Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի աշխատավորները ուս բանվորների հետ միասին ընթացել են ինքնակալության դեմ, կալվածատերերի և բուրժուազիայի դեմ մղվող հերոսական պայքարում: Այդ պայքարում նրանք յեղբայրական կապերով կապեցին իրենց բախտը մեր յերկրի բանվորների ու գյուղացիների հետ:

Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի բանվորները մեր յերկրի աշխատավորների հետ ձեռք–ձեռքի տված պայքարել են Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար, Խորհուրդների հաղթանակի համար և ձեռք բերին այդ հաղթանակը: Դժբախտաբար այն ժամանակ չհաջողվեց ամրապնդել այդ հաղթանակները:

Մերձբալթյան յերկրների բուրժուազիան Անտանտայի ողնությամբ բանվոր դասակարգի ձեռքից խլեց այդ հաղթանակը: Մերձբալթյան պետությունները ստեղծվեցին անկայուն իրադրության մեջ առաջին համաշխարհային պատերազմից հետո, յերբ իմպերիալիստական խոշոր տերությունները ըստ իրենց քմահաճույքի ձևում եյին Ցեվրոպայի քարտեզը: Մերձբալթիկայի բանվորներն ու գյուղացիները այն ժամանակ ուժ չունեցան իրենց ձեռքում պահելու նվաճած իշխանությունը:

Բուրժուական պոլիտիկանները, վորոնք ծախվել եյին ոտարերկրյա իմպերիալիստական բուրժուազիային և Լիտվայի, Լատվիայի ու Եստոնիայի աշխատավոր ժողովրդի վրա իշխանություն եյին ձեռք բերել ոտարերկրյա սվինների ողնությամբ, փորձում եյին իրենց ժողովրդին և ամբողջ աշխարհին խաբել չաղակրատելով «դեմոկրատիայի» և «անկախության» մասին: Սակայն բուրժուական Լիտվայում, Լատվիայում և Եստոնիայում յերբեք չի յեղել վո՛չ դեմոկրատիա, վո՛չ անկախություն:

Այդ յերկրների այսպես կոչված անկախության մասին դեռ 1919 թվին չատ լավ ե ասել ընկեր Լենինը. «Այդ վոքր յերկրներից յուրաքանչյուրն իր վրա արդեն զգացել ե Անտանտայի թաթը: Նրանք գիտեն, վոր յերբ ֆրանսիական, ամերիկյան ու անգլիական կապիտալիստներն ասում են՝ «Մենք ձեզ անկախություն ենք ապահովում» — այդ գործնականում նշանակում ե. «Մենք ձեզանից գնում ենք ձեր հարստությունների բոլոր աղբյուրներն ու ձեզ պահում ենք սորկության մեջ: Բացի դրանից, մենք ձեզ վաճառանում ենք սպայի լիտությամբ, վորը յեկել ե ուրիչի

յերկիրը կառավարելու և սպեկուլյացիայով զբաղվելու ու չի ուզում վոչ վոքի հաշվի առնել»:

Այսպիսի արժեք ուներ մերձբալթյան յերկրների «անկախությունը» բուրժուազիայի որոք:

Մոտավորապես մեկ տարի առաջ Խորհրդային Միությունն իր վրա վերցրեց այդ յերկրների անվտանգության և իսկական անկախության պատասխանատվությունը:

Խորհրդային Միությունը հետևողականորեն ու ճշտապահությամբ կատարում եր իր պարտավորությունները: Սակայն Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի նախկին կառավարությունները պատերազմի հրձիգների թելադրանքով յերկերեսանիությամբ տապալում եյին փոխադարձ ոգնության պակտերը, ջարդարարական ագիտացիա եյին մղում Խորհրդային Միության դեմ, այդ յերկրների աշխատավոր ժողովրդին մղում եյին դեպի պատերազմի, անհաշիվ աղետների ու դժբախտությունների հորձանուտները:

Ցեվ բավական եր հարց տալ Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի աշխատավորներին թե ինչ իշխանություն են ուզում նրանք, բավական եր հնարավորություն տալ նրանց ազատորեն արտահայտել իրենց կամքը, վոր գործը միանգամայն այլ ընթացք ստանար, վոչ այն, ինչ ուզում եյին բուրժուական պոլիտիկանները:

Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի ժողովրդական մասսաները միահամուռ կերպով հայտարարեցին. «Նոր կյանքը — դա խորհրդային կյանքն է, նոր ժողովրդական իշխանությունը — դա միայն խորհրդային իշխանություն է»: (Ծափահարություններ:)

Ցեվ մերձբալթյան յերկրների աշխատավորներն այլ վորոշում չեյին ել կարող ընդունել: Խորհրդային Միության փորձով նրանք համոզվեցին, վոր միայն խորհրդային իշխանությունը կփրկի ժողովրդին կարիքից, իրավազրկությունից և չահագործումից, աշխատավորների համար կապահովի խաղաղություն և ազատություն, հաց և աշխատանք:

Հաղթանակեց խորհրդային իշխանության դաղափարը, սոցիալիզմի դաղափարը: Լիտվան, Լատվիան և Եստոնիան դարձան Խորհուրդների հանրապետություններ:

Այս ե մեր Խորհրդային կառավարության խաղաղության արտաքին քաղաքականության նշանավոր հաղթանակներից մեկը ևս: (Ծափահարություններ:)

Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար

ընկ. Մոլոտովը կառավարության արտաքին քաղաքականության մասին տված իր սպառիչ զեկուցման մեջ պատմեց այդ քաղաքականության նոր լուրջ հաջողությունների մասին:

Այդ արտաքին քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ մեր յերկիրը դարձավ ե՛լ ավելի ուժեղ ու հզոր, ամրապնդվեց նրա պաշտպանունակությունը, ե՛լ ավելի բարձրացավ Խորհրդային Միության դերը միջազգային հարցերի լուծման մեջ, ե՛լ ավելի մեծացավ ԽՍՀՄ հեղինակությունն ամբողջ աշխարհի աչխատավորության աչքում:

Մեր կառավարության արտաքին իմաստուն քաղաքականությունն ամբողջովին համապատասխանում ե մեր յերկրի չահերին, ամբողջ խորհրդային ժողովրդի չահերին, խաղաղության ձգտող բոլոր ժողովուրդների չահերին: Ուստի խորհրդային յերկրի աշխատավորությունն ամբողջությամբ ու լիովին հավանություն ե տալիս իր Խորհրդային կառավարության քաղաքականության և բոլոր ձեռնարկումներին: (Ծափահարություններ:)

Ընկեր Մոլոտովը, յելնելով մեր առաջնորդ ընկեր Ստալինի իմաստուն ցուցումներից (բուռն, յերկարատև ծափահարություններ), նորից ու նորից խորհրդային ժողովրդին զգոնության կոչ արեց, վորպեսզի ուչի-ուշով հետամուտ լինել մեր թշնամիների վոտնձգություններին, պատերազմի հրձիգների վոտնձգություններին:

Մեր յերկրի աշխատավորները հասկանում են, վոր միջազգային իրադրությունը հղի յե անակընկալներով, վոր ռազմական վտանգը մեծացել ե:

Ցեվ զգոնության մասին, պաշտպանունակության հետագա ամրապնդման մասին ընկ. Մոլոտովի արած կոչին բոլոր աշխատավորները կպատասխանեն աշխատանքային նոր վերելքով, աղնիվ աշխատանքով, աշխատանքային հերոսությամբ՝ սոցիալիզմի յերկրի տնտեսական ու պաշտպանական հզորությունն ամրապնդելու համար մղվող պայքարում: (Ծափահարություններ:)

Ընկե՛ր դեպուտատներ: Նկատի ունենալով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարության արտաքին քաղաքականության սպառիչ պարզությունն ու հետևողականությունը, յես մտցնում եմ հետևյալ առաջարկությունները.

1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Վ. Մ. Մոլոտովի զեկուցման շուրջը մտքերի փոխանակություն չբանալ:

2. Ընկեր Մոլոտովի դեկուցման առթիվ ընդունել հետևյալ վորոշումը.

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը, լսելով ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար ընկ. Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի դեկուցումը կառավարության արտաքին քաղաքականության մասին, վորոշում է.

Հավանություն տալ կառավարության արտաքին քաղաքականությանը»: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Նախագահող: Դեպուտատներից ո՞վ է ցանկանում արտահայտվել դեպուտատ Շչերբակովի մտցրած առաջարկությունների վերաբերյալ: Ցանկացողներ չկան: Քվեարկենք:

Նախ և առաջ պետք է քվեարկել դեպուտատ Շչերբակովի առաջին առաջարկությունն այն մասին, վոր դեկուցման շուրջը մտքերի փոխանակություն չբանալ: Քվեարկում եմ: Քվեարկում են յերկու պալատների դեպուտատները: Ով կողմնակից է այս առաջարկությունն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Առաջարկությունն ընդունվում է:

Անցնում ենք դեպուտատ Շչերբակովի յերկրորդ առաջարկությունը քվեարկելուն: Կրկնում եմ այդ առաջարկությունը:

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը, լսելով ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար ընկ. Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի դեկուցումը կառավարության արտաքին քաղաքականության մասին, վորոշում է.

Հավանություն տալ կառավարության արտաքին քաղաքականությանը»:

Քվեարկում եմ այս առաջարկությունն ըստ պալատների առանձին-առանձին: Քվեարկում են Ազգությունների Խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է այս առաջարկությունն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Միության Խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է այս առաջարկությանը, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, ընկեր դեպուտատներ, կառավարության արտաքին քաղաքականությանը հավանություն տալու մասին վորոշումը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից ընդունվում է միաձայն: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Ընկեր դեպուտատներ, առաջարկություն կա հայտարարել ընդմիջում մինչև վաղը: Հետևյալ նիստը նշանակել վաղը յերեկոյան ժամը 6-ին: Ով կողմնակից է, վորպեսզի այս առաջարկությունն ընդունվի, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Առաջարկությունն ընդունված է:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1940 թվի ոգոստոսի 2-ին)

Նախագահում է Ազգությունների խորհրդի Նախագահ Ն. Մ. Շվերնիկը:

Նախագահող: *Ընկե՛ր դեպուտատներ: Մխության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը հայտարարում եմ բացված:*

Անցնում ենք օրակարգի յերկրորդ հարցի քննարկմանը—Մխութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու և Բուկովինայի հյուսիսային մասն ու Բեսսարաբիայի Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի գավառներն Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին:

Խոսքը տրվում է Մոլդավական ԱԽՍՀ ԺողովրդականԿոմիսարների Խորհրդի Նախագահ դեպուտատ Կոնստանտինովին: (Ձեռք ծափահարություններ, վորոնք վերջում են ովացիայի:)

Տ. Ա. Կոնստանտինով (*Սլոբոձեյայի ընտրական okրուգ, Մոլդավական ԱԽՍՀ*): *Խոսում է մոլդավերեն: Թարգմանում է ռուսերենի դեպուտատ Ս. Ս. Ջելենչուկը:*

Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային–ռումինական կոնֆլիկտը խաղաղ լուծվելու շնորհիվ Բեսսարաբիայի տերիտորիան և Բուկովինայի հյուսիսային մասը 3 700 հազար բնակչությամբ անցավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը:

Բեսսարաբիան, ինչպես հայտնի յե, սկզբից ի վեր մեր հայրենիքի տերիտորիան եր: Իր տերիտորիայի մեծությամբ Բեսսարաբիան ունի 44 422 քառակուսի կիլոմետր տարածություն:

Բեսսարաբիան կազմում եր և կազմում է մեր հայրենիքի տերիտորիայի անկապտելի մասը, դարավոր անխախտելի միասնությամբ կապված է նրա հետ ազգային առանձնահատկությունների շնորհիվ ու պատմական ճակատագրի ընդհանրությամբ:

Սակայն այդ անվիճելի դարավոր միասնությունը կոպտությամբ խախտվել եր Ռումինիայի կողմից, վորը բռնի կերպով խլել եր Բեսսարաբիան մեր հայրենիքից: 1918 թվի փետրվարին, ոգտվելով քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում Խորհրդային Ռուսաստանի ծանր դրությունից, Ռումինիան ոկկուպացիայի յենթարկեց Բեսսարաբիան:

Խորհրդային կառավարությունը յերբեք չի հաշտվել այդ բռնի խլման հետ: 1918 թվի մարտին Ռումինիան, ՌՆՖՍՀ հետ կնքված պայմանագրի համաձայն պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Բեսսարաբիայից և վերջ տալ իր միջամտությանը նրա ներքին գործերում: Սակայն ռումինական ղինվորականությունն անմիջապես ամենաստոր կերպով խախտեց իր սեփական պարտավորությունները:

Ռումինական ոկկուպանտները Բեսսարաբիան խլելու ժամանակ գործում եյին անգլո–ֆրանսական իմպերիալիստների անմիջական հովանավորության տակ և նրանց անմիջական թելադրանքով: Բեսսարաբիայի տերիտորիայում պատրաստվում եր ԽՍՀՄ–ի վրա ռազմական հարձակում գործելու պլացդարմներից մեկը: Պատահական չե, վոր Բեսսարաբիայից դուրս եյին բերվում արդյունաբերական ձեռնարկությունները, վտարվում եր Խորհրդային Միության համակրող բնակչությունը, իսկ Բեսսարաբիայի տերիտորիայում բնակություն եյին հաստատել մեծ քանակությամբ ռումինական զորքեր, կառուցվում եյին հզոր ամրություններ, ինչպես նաև ուժեղ կերպով տարվում եր հակախորհրդային ագիտացիա:

ԽՍՀՄ կառավարությունը բազմիցս հայտարարել է ամբողջ աշխարհին, վոր նա չի՛ ճանաչել և յերբեք չի՛ ճանաչի Բեսսարաբիայի բռնի խլումը:

Այժմ, յերբ Խորհրդային Միությունը ռազմական և անտեսական տեսակետից զարձել է հզոր յերկիր, իսկ միջազգային իրադրությունը նոր իմպերիալիստական պատերազմի ծավալման կապակցությամբ հղի յե ամեն տեսակի անակնկալներով, այժմ կարիք յեղավ անհապաղ լուծել խորհրդային–ռումինական ձգձգվող կոնֆլիկտը:

Խորհրդային–ռումինական կոնֆլիկտի խաղաղ լուծումը հանդիսանում է խաղաղության ստալինյան քաղաքականության համաշխարհային–պատմական հաղթանակը:

Ռումինական ռազմական okկուպացիայի ժամանակաշրջանում Բեսսարաբիայի արդյունաբերությունը զրեթե լիովին վոչնչացվել էր: Ամենաբերքի Բեսսարաբիան դարձել էր աղքատների, ընչազուրկ մարդկանց, սոցիալական հիվանդությունների, սովի, վոտաիկանական սանձարձակ տեռորի յերկիրը:

Ռումինիան Բեսսարաբիան իրենը չէր համարում. չէր կառուցում ճանապարհներ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն: Գյուղացիների հողերը խլել ու տվել էին ռումինական կալվածատերերին և կուլակներին, վորոնք Բեսսարաբիայի գյուղացիներին հասցրել էին ծայրահեղ աղքատության: Մինչև իսկ ռումինական ոֆիցիոզ «Ռոմինիա»-ն 1939 թվի հուլիսի 31-ի համարում հարկադրված էր խոստովանել, վոր «Բեսսարաբիայի գյուղացիների աղքատության պատճառով գյուղում ամեն տարի 94 699 ծնվածներից մահանում է 59 131-ը: 1937 թվի վիճակագրությունը ցույց է տալիս, վոր 37 334 մարդ հիվանդ է թոքախտով, 17 451-ը՝ տրախոմայով և 90 հազարը՝ մալյարիայով: Աղքատության, ինչպես և գիպենյայի պայմանների բացակայության պատճառով լայնորեն տարածված են վարակիչ հիվանդություններ»:

Լավ գրության մեջ չէր և քաղաքների աշխատավոր բնակչությունը: Բավական է ասել, վոր ռումինական մամուլի խոստովանությամբ իսկ, Բեսսարաբիայի ամենամեծ քաղաքում — Քիշինյովում, բնակչությունը, ռումինական okկուպացիայի առաջին 14 տարիա ընթացքում կրճատվել է համարյա մեկ յերրորդով:

Okկուպանտների արյունալի ճնշման պատճառով Բեսսարաբիայի բնակչությունը դիմեց մասսայական փախուստի: Բեսսարաբիայի աշխատավորությունն իր ազատագրման համար յերկար տարիների ընթացքում պայքար է մղել ռատարերկրյա սարկացուների դեմ: Յերկրում բռնկվում էին ապստամբություններ մեկը մյուսի հետևից: Ռատինի 1919 թվի և Տատարբունարի 1924 թվի ապստամբությունները մոլդավական ժողովրդի վճռական պատասխանն էր ռումինական բոյարների լկտի պահանջների դեմ: Այդ ապստամբությունները ցույց տվին, վոր ժողովրդի մեջ հասունանում է մի հզոր ուժ, վորն ընդունակ է վերջ տալ ճնշողներին: Ժողովրդի տասնյակ հազարավոր հավատարիմ զավակներին սպանեց ու խոշտանգեց սիգուրանցիան — ռումինական ոխրանկան: Կողոպուտի և կամայականության ռումինական ռեժիմը, վորը 22 տարվա ընթացքում խեղդում էր Բեսսարաբիային, անհաշիվ ծանր հետևանքներ ունեցավ և հսկայական վնաս հասցրեց Խորհրդային Միությանն ու Բեսսարաբիայի բնակչությանը:

Բուկովինայի հյուսիսային մասի բնակչությունն իր ճնշող մեծամասնությամբ Խորհրդային Ուկրաինայի հետ կապված և պատմական ճակատագրի, լեզվի և ազգային կազմի ընդհանրությամբ: Բուկովինայի հյուսիսային մասը Խորհրդային Միությանը հանձնելով մի մխիթար աննշան չափով է հատուցվում այն հսկայական վնասը, վոր հասցրել է ռումինական ռեժիմը:

Ավելի քան յերկու տասնամյակ մոլդավական ժողովուրդը բռնի կերպով անջատված էր: Դնեստրի մի կողմում տարածված էր Խորհրդային Մոլդավիան, մյուս կողմում՝ Բեսսարաբիան, վորը ունի գլխավորապես մոլդավական, ինչպես և ուկրաինական բնակչություն: Խորհրդային Մոլդավիայում բնակչությունն ոգևորում էր ազատ և անկախ գոյության, խաղաղ աշխատանքի, կուլտուրական, ունևոր կյանքի բոլոր իրավունքներով: Ռումինական բոյարների ճնշման տակ դտնվող Բեսսարաբիայում մոլդավական ժողովուրդն իրավազուրկ էր, տգետ ու ճնշված:

Մոլդավական Ա.ԽՍՀ-ն, վորը մտնում է ՈւԽՍՀ կազմի մեջ, իր զարգացման ավելի քան 15 տարվա ընթացքում լենինյան–ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ, ռուս և ուկրաինական ժողովուրդների ոգնությամբ ձեռք է բերել հսկայական հաջողություններ ազգային և կուլտուր–տնտեսական զարգացման գործում և անցել է առաջավոր հանրապետությունների շարքը: Մոլդավական Ա.ԽՍՀ-ում ստեղծվել է աննդի խոշոր արդյունաբերություն: Բուռն կերպով զարգանում են արդյունաբերության այնպիսի ճյուղերը, ինչպիսիք են չինանյութերի, տնայնա–արհեստագործական և այլն: Տնտեսական շինարարության ժամանակամիջոցում Խորհրդային Մոլդավիայում ստեղծվել են 235 զանազան արդյունաբերական ձեռնարկություններ: Մեծ հաջողություններ ե ձեռք բերվել նաև գյուղատնտեսության բնագավառում: Մոլդավական Ա.ԽՍՀ-ում կան 715 կոլխոզ, 27 ՄՏՏ կայան, հազարավոր տրակտորներ, կոմբայններ, ավտոմեքենաներ և այլ գյուղատնտեսական բարդ մեքենաներ ու գործիքներ: Յեթե Մոլդավիայի հողի մեկ դեսյատինը հեղափոխությունից առաջ տալիս էր 5—6 ցենտներ բերք, ապա այժմ հողի մեկ դեսյատինի միջին բերքատվությունը բարձրացել ու հասել է 13—15 ցենտների:

Խորհրդային Մոլդավիան կուլտուրական, բարձր զարգացած այգեգործության և խաղողագործության յերկիրը է, վորոնցով

նա այժմ Խորհրդային Միության մեջ դրավում է առաջին տեղերից մեկը: Հանրապետությունում լայնորեն զարգացել են ճակնդեղաբուծությունն ու շաքարի արդյունաբերությունը:

Ցարիզմի որոք մոլդավների ինքը տասերորդն անգրագետ էր: Մոլդավիայում մայրենի լեզվով դպրոցներ չկային: Այժմ Մոլդավական ԱԽՍՀ-ն համատարած դրագիտության հանրապետություն է: Հանրապետությունում ավելի քան հարյուր հազար սովորողներ կան դպրոցներում, տեխնիկումներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Մոլդավերեն թարգմանված են Լենինի և Ստալինի յերկերը, ռուս կլասիկների, ինչպես և խորհրդային դրողների ու պոետների լավագույն յերկերը: Սոցիալիստական կուլտուրայի ընդհանուր վերելքի հետ միասին զարգանում է նաև մոլդավական ժողովրդի ազգային արվեստը:

Հատկապես վայելուն կերպով է յերևան գալիս Մոլդավական ԱԽՍՀ տնտեսական և կուլտուրական հաջողությունների ամբողջ նշանակությունը, յերբ համեմատության է դրվում այն ծայրահեղ աղքատության ու լիակատար անկման պատկերի հետ, որոնց դատապարտված եր Բեսսարաբիան ռումինական տիրապետության որոք:

Այսուհետև Բեսսարաբիայի ազատագրված ժողովրդի համար ևս բացված է լայն ու պայծառ ճանապարհ դեպի ժողովրդական յերջանկությունն ու բերկրալի կյանքը, որն ապահովված է մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակներով, որոնք ձեռք են բերվել մարդկության հանճար, ժողովուրդների առաջնորդ — մեծ Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Այժմ, յերբ Բեսսարաբիան ազատագրվել և վերամիավորվել է Խորհրդային Միությանը, յերկու միլիոնանոց մոլդավական ժողովրդի առջև ազգային, ժողովրդատնտեսական և կուլտուրական շինարարության գործում դրված են նոր մեծ խնդիրներ, որոնք վորոշվում են մոլդավական ժողովրդի ազգային-պետական դյուրության նոր ձևերով:

Դրան համապատասխան, Մոլդավական ԱԽՍՀ ժողկոմխորհը և Ուկ (բ)կ Մոլդավիայի մարզկոմը, արտահայտելով Մոլդավական ԱԽՍՀ-ի և ազատագրված Բեսսարաբիայի աշխատավորության իղձերը, առաջարկություն են ներկայացրել ԽՍՀՄ կառավարությանն ու Համկ(բ)կ կենտկոմին՝ Բեսսարաբիայի մոլդավական բնակչությունը Մոլդավական ԱԽՍՀ-ի մոլդավական բնակչության

վերամիավորելու մասին և Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին:

ԽՍՀ Միության կառավարությունը և Համկ(բ)կ կենտկոմը պաշտպանեցին Մոլդավիայի կազմակերպությունների խնդիրքը և վորոշեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին պատգարկություն ներկայացնել Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին:

Վճռելով մոլդավական ժողովրդի պետական նոր կառուցվածքի հարցը, չի կարելի հաշվի չառնել նաև զգալի քանակությամբ ուկրաինական այն բնակչության շահերը, վորը կոմպակտ մասաներով ապրում է իր տերիտորիայով Ուկրաինական ԽՍՀ-ին հարող Բեսսարաբիայի մի քանի շրջաններում:

Ցելնելով այդ նկատառումներից, մենք խնդրում ենք Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կազմել դերակշռող թվով մոլդավական բնակչություն ունեցող այն շրջաններից, վորոնք այժմ մտնում են Մոլդավական ԱԽՍՀ-ի մեջ և Բեսսարաբիայի Բելցիի, Բենդերիի, Կագուլի, Քիշինյովի, Որգեևի և Սորոկիի վեց գավառներից:

Ս.յսալիսով, Միութենական Մոլդավական Հանրապետության կազմի մեջ կհաշվվի մոտ 2 200 հազար բնակչություն, վորոնցից մոտավորապես 70%-ը մոլդավներ, իսկ մնացածը՝ ռուսներ, ուկրաինացիներ և այլ ազգություններ:

Բեսսարաբիայի այնպիսի գավառներ, ինչպես Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի գավառները, վորոնց բնակչությունը գերազանցապես ուկրաինացիներ են, պետք է մտցնել Ուկրաինական ԽՍՀ կազմի մեջ: Բացի դրանից, Միութենական Մոլդավական Հանրապետության սահմանները վորոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել, վոր Մոլդավական ԱԽՍՀ մի քանի շրջաններում գերակշռում է ուկրաինական բնակչությունը: Այդպիսի շրջանները նույնպես պետք է մտցվեն Ուկրաինական ԽՍՀ կազմի մեջ:

Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմանների հարցի մասին մենք համաձայնության ենք յեկել Խորհրդային Ուկրաինայի հետ:

Բուկովինայի հյուսիսային մասում և Ակկերմանի, Իզմայիլի ու Խոտինի գավառներում գերակշռում է ուկրաինական բնակչությունը, վորն իր լեզվով և ազգային-կենցաղային առանձնահատկություններով բնավ չի տարբերվում Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բնակչությունից:

Ռումինական բոյարական-կալվածատիրական տիրապետության

ժամանակ Բուկովինայի ուկրաինական բնակչությունը, հատկապես գյուղացիությունը, կրում էր ազգային ճնշման և չհավասարծման անօրինակ ծանրություններ: Ռումինական կլինվորականությունը և բոյար-կալվածատերերն այստեղ ևս հողը խլել էին ուկրաինացի գյուղացիներից, փակել էին ուկրաինական դպրոցները և կուլտուրա-լուսավորական կազմակերպությունները, անց էին կացնում ծանր ազգային ճնշման ու վոստիկանական համակարգության ռեժիմ: Այդ հողի վրա բազմիցս ծագել են ուկրաինացի գյուղացիների ապստամբություններ՝ ընդդեմ բոյարների իշխանության և ռումինական ոկկուպանտների բռնապետական ռեժիմի:

Այժմ Հյուսիսային Բուկովինայի ազատագրված ժողովուրդը, որը պատմական ճակատագրի ընդհանրությամբ, լեզվով և ազգային կազմով կապված է Ուկրաինական ՍՍՀ-ի հետ, հնարավորություն ստացավ միասնական Սորհրդային պետության մեջ վերամիավորվելու ամբողջ ուկրաինական մեծ ժողովրդի հետ: Հյուսիսային Բուկովինայի աշխատավորները ՍՍՀՄ ժողովուրդների համերաշխ ընտանիքում բերկրալի կյանք կկառուցեն կուսակցության և կառավարության ղեկավարությամբ, մեծ Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն ծափահարություններ:)

Սորհրդային Մոլդավիայի և ազատագրված Բեսսարաբիայի բոլոր աշխատավորների անունից ես խնդրում եմ Սեսսիային ընդունել Միութենական Մոլդավական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու վերաբերյալ Որենքը:

Վստահություն եմ հայտնում, որ այդ Որենքը միահամուռ հավանություն կգտնի և կընդունվի Գերագույն Սորհրդի յերկու պալատների կողմից:

Միութենական Մոլդավական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելը կլինի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության նոր նշանավոր հաղթանակ, քաղաքականություն, որն ապահովում է բոլոր ազգությունների լիակատար իրավահավասարությունը և խորհրդային ժողովուրդների մեծ բարեկամությունը:

Միութենական Մոլդավական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելը կվկայի նաև այն մասին, որ ինքը ժողովուրդները միայն խորհրդային սոցիալիստական կարգերի պայմաններում կարող են ստանալ իրենց ազատ և բազմակողմանի զարգացման իրոք բոլոր ռեալ հնարավորությունները:

Միութենական Մոլդավական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմելը, վերջապես, կնշանակի միութենական հանրապետությունների ընտանիքի ընդարձակում, ու հետևաբար, նաև մեր մայր հայրենիքի — մեծ Սորհրդային Միության հետագա ամրապնդում:

Կասկած չկա, որ մոլդավական ժողովուրդը, վերամիավորված Միութենական Մոլդավական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ, Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, մեծ Ստալինի ղեկավորությամբ, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին ձեռք կբերի նոր հաղթանակներ կոմունիզմի շինարարության դործում: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բացականչություններ՝ «Սիրելի և թանկագին ընկեր Ստալինին ուռա՛»:)

Նախագահող: Խոսքը տրվում է Ուկրաինական ՍՍՀ ժողովրդական Կոմիսարների Սորհրդի Նախագահ՝ դեպուտատ Կորնիեցին: (Ներկա դանվողները չեմ ծափահարություններով և ովացիայով վողջունում են Ուկրաինական ՍՍՀ Ներկայացուցչին:)

Լ. Ռ. Կորնիեց (Կամեն-Կաշիրսկի ոկրուգ, ՈւՍՍՀ): Խոսում է ուկրաիներեն:

Ընկե՛ր դեպուտատներ: 1940 թվի հունիսի 28-ը Սորհրդային Միության հզորության հաղթանակի, Սորհրդային Միության խաղաղության քաղաքականության հաղթանակի, Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ազատ ժողովրդի հաղթանակի որն է:

Սորհրդային Միությունն արել է այն ամենը, ինչ անհրաժեշտ է, վորպեսզի աղաղակող անարդարությունը, վորպիսին եր Բեսսարաբիան բռնի կերպով խլելը, վերացվեր խաղաղ ճանապարհով:

ՍՍՀՄ և Ռումինիայի միջև կայացված համաձայնությունը լուծեց վոչ միայն Բեսսարաբիան Սորհրդային Միությանը վերադարձնելու հարցը, այլև այդ հարցի հետ սերտորեն կապված մի ուրիշ հարց — իր բնակչության հսկայական մեծամասնությամբ թե՛ պատմական ճակատագրի ընդհանրությամբ և թե՛ լեզվի ու ազգային կազմի ընդհանրությամբ Սորհրդային Ուկրաինայի հետ կապված Հյուսիսային Բուկովինան Սորհրդային Միությանը հանձնելու հարցը:

Բեսսարաբիան Սորհրդային Միությանը վերադարձնելը հանդիսանում է պատմական արդարությունը վերականգնելու միակ,

ԽՍՀՄ խաղաղության քաղաքականության մի նոր հաղթանակ: Խորհրդային կառավարությունը չեշտել է, որ ինքը ձգտում է Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի հարցի վերաբերյալ խորհրդային–ռումինական կոնֆլիկտը կարգավորել խաղաղ ճանապարհով:

1918 թվին Ռումինիան, ոգտվելով մեր յերկրի ռազմական թուլությունից, յերկուսասարդ Խորհրդային պետությունից բռնի կերպով խլեց Բեսսարաբիան և դրանով իսկ խախտեց Բեսսարաբիայի ուկրաինական ու մոլդավական ժողովուրդների դարավոր մխամնությունը մեր մեծ խորհրդային ժողովրդի հետ:

Ռումինիայի կողմից օկկուպացիայի յենթարկվելու տարիների ընթացքում Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները ենթարկվում էին վոչ միայն իրենց կուլտուրան զարգացնելու իրավունքներից, այլև իրենց մայրենի լեզվով խոսելու իրավունքից:

Բեսսարաբիայում և Հյուսիսային Բուկովինայում իշխում էր դաղութային ճնշումը և չհաղորդումը: Ընդհանուր տնտեսական քայքայման հետևանքով խիստ կերպով նվազեց քաղաքային բնակչության թիվը: Ռումինական կառավարությունը կիրառում էր Բեսսարաբիան կիսադաղութային, տնտեսապես հետամնաց մարզ դարձնելու քաղաքականություն:

Բեսսարաբիայի արդյունաբերությունը չէր զարգանում, իսկ այն, ինչ կար, փոխադրվում էր Ռումինիայի խորքերը: Խիստ կերպով կրճատվում էր բանվորների թիվը: Հարյուր հազարավոր բեսսարաբցիներ հարկադրված էին թողնել հայրենի հողը և դնալ ուրիչ յերկրներ աշխատանք փնտռելու: Դաղութային ծանր ճնշումն ու չհաղորդումը Բեսսարաբիայի ժողովրդին տանում էին դեպի այլասերում: Բացառապես մեծ եր մանկական մահացությունը: Մինչև իսկ ռումինական մամուլն է վիճակի չէր թաղցնելու Բեսսարաբիայի աշխատավոր մասսաների բացառիկ ծանր դրությունը ռումինական զավթողների լծի տակ: Ռումինական պաշտոնական տվյալներով անդամ, տգիտության հետևանքով ամեն տարի գյուղերում 94 699 ծնվածներից մահանում եր 59 131–ը: Թե ինչ չափերի յեր հասնում բնակչության այլասերումն ու նրա մահացությունը, վկայում կերպով ասում է այն փաստը, որ ռումինական կառավարությունը հարկադրված եր որենք հրատարակել ամուրիներից հարկ գանձելու մասին, բայց այդ որենքը ցանկալի արդյունքներ չտվեց ռումինական կառավարությանը, իսկ աշխատավորների դրությունը վոչ թե լավացավ, այլ վատացավ:

Առողջապահության դրությունը Բեսսարաբիայում բնութագրվում է նրանով, որ բժշկական ոգնությունը հիվանդանոցներում և ամբուլատորիաներում հիմնականում ցույց եր տրվում վճարով: Հիվանդները բաժանվում էին յերեք դասակարգի: Միայն առաջին դասակարգին՝ կալվածատերերի, կապիտալիստների և խոշոր չինովնիկների արտոնյալ դասակարգին եր տրամադրվում հիվանդանոցների ամենալավ սենյակներն ու առանձին մահճակալները, իսկ մնացած յերկու դասակարգերի հիվանդներից յերկուսին տրամադրվում եր մեկ մահճակալ:

Առողջապահության դրությունը Բեսսարաբիայում վայրկյան կերպով բնութագրում է բժիշկ Վլադիմիր Դոմոնկոչը «Լումյա Ռոմանյասկա» թերթում 1938 թվի հունվարի 1–ին հրապարակված հոդվածում.

«Մահանում են հարյուր հազարավոր քաղաքացիներ, դառնալով բուժելի հիվանդությունների զոհ, իսկ հիվանդանոցներում հրամցնում են միայն լուծողական: Գյուղական խրճիթները լեփլեցուն են հիվանդներով: Բժիշկը հազվադեպ հյուր է գյուղում: Անցյալ տարի Բեսսարաբիայում բծավոր տիֆից մահացել է 5 918 մարդ»:

Բանվոր դասակարգը Բեսսարաբիայում բացառիկ ծանր դրության մեջ եր: Շատ ձեռնարկություններում աշխատանքային որվա տևողությունը հասնում եր 13—14 ժամի: Աշխատավարձը ծայր աստիճանի ցածր եր: Գյուղում բեսսարաբցի գյուղացուն կողոպտում էին կալվածատերերն ու կապիտալիստները, գյուղացիներին խեղդում էին հարկերով:

Հողի դերակշռող մասը զտնվում եր աննշան քանակությամբ կալվածատերերի ձեռքին, իսկ գյուղացիների ճնշող մեծամասնությունն ուներ չնչին հողակտորներ և տեսակարար կշռով ավելի պակաս ընդհանուր հողային մասսիվ:

Անցկացված ագրարային ռեֆորմն ոգտագործվեց չինովնիկներին հարստացնելու և նոր կալվածատերեր ստեղծելու համար: Այդ ռեֆորմի հետևանքով գյուղացիների դրությունը չփոխվեց: Գյուղացիների պարտքային պարտավորությունները մինչև հաշվով կազմում էին նրանց արտադրած պրոդուկցիայի արժեքի 50%–ը:

Բեսսարաբիայի ընտրովի հետադոտված ութ դավառներում 1 128 գյուղացիական տնտեսություններ պարտք էին 17 869 հազար լեյ (661 153 ռուբլի), ընդհանրում այդ տնտեսությունները վճա-

բում էին 5 092 հազար լեյ (188 394 ռուբլի) տակոսները, որ կազմում էր նրանց պարտքի 29%-ը:

Բեսսարաբիայի աղքատացած, սովի մատնված գյուղացիության զրույցները հարկադրված էր խոստովանել նույնիսկ ռումինական «Արդուս» թերթը (անտեսական հարցերի օֆիցիոզ) 1940 թվի փետրվարի 17-ին: Թերթը տալիս է Բեսսարաբիայի գյուղի բանող անասունի զրույցի հետևյալ բնութագիրը.

«Հազար ձիու մեջ չի կարելի գտնել ավելի քան 40—50 լավ ձի: Բեսսարաբիայում կան գյուղեր, որտեղ կա 1—2 զույգ առողջ չեղ, իսկ մնացած բոլոր չեղները կմախք են միայն, անպետք թ'ե լծելու և թ'ե մորթելու համար»:

Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները ձգտում էին իրենց ազատագրմանն ու խորհրդային մեծ միասնական ընտանիքի մեջ վերամիավորվելուն: Այդ մասին են խոսում ռումինական բանուժյան դեմ ծագած ապստամբությունների պերճախոս փաստերը, դաժան գաստաստանի փաստերն այն պայքարի համար, որը մղում էր ժողովուրդը հանուն իր ազատագրման:

Բեսսարաբիան ռումինացիների կողմից okկուպացիայի յենթարկվելու առաջին իսկ որերին մի չարք գավառներում ժողովրդական բողոք բարձրացավ okկուպանտների դեմ: Բողոքների այդպիսի ալիք անցավ նաև Բուկովինայով: 1918 թվի նոյեմբերին Զերնովիցի քաղաքում կայացավ Բուկովինայի գրեթե բոլոր բնակավայրերի ներկայացուցիչների մի հսկայական ժողով, որտեղ որոշվեց միանալ Խորհրդային Ուկրաինայի հետ: Նման ժողովներ տեղի ունեցան Խոտինի գավառի գյուղերում և մեստեչկանեներում, որտեղ նույնպես որոշումներ ընդունվեցին Խորհրդային Ուկրաինայի հետ միանալու մասին:

Բեսսարաբիայի ժողովուրդը, որտեղ և յերբ միայն այդ հնարավոր եր, արտահայտում եր իր կամքը Ռումինիայի ճնշումից ազատագրվելու և միասնական խորհրդային ընտանիքում վերականգնվելու մասին:

ՈւԽՍՀ-ի ժողովուրդն ապրում եր ծանր զրացումներ, տեսնելով, թե ինչ զրության մեջ են գտնվում ռումինական okկուպանտների կողմից բռնի կերպով նվաճված իր յեղբայրները: Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները սպասում և հավատում էին, որ կգա ազատագրման ու վերամիավորման ժամը: Խորհրդային Ուկրաինայի ժողովուրդը դիտեր և հավատում եր, որ կգա ցանկալի ժամը, այն կգա, որովհետև մեզ զեկավարում և իմաստուններից ամենախիմաստուն, մեծ, հարազատ ընկեր Ստալինը: (Բ ու ռն, յերկար ժամանակ չէր ուզում ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի վերաբերյալ մեր Խորհրդային կառավարության ստալինյան վորոշումը ՈւԽՍՀ-ի, Մոլդավական ԱԽՍՀ-ի, Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները ղեմավորեցին բերկրանքի ու զեպի մեր կառավարությունը տածած յերախտագիտության հատուկ զգացմունքով:

Մեր քաջարի կարմիր Բանակի զորամասերի մուտքը Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի տերիտորիան այդ շրջանների բնակչությունը ղեմավորեց վորպես մեծազույն տոն, իսկ կարմիր Բանակի մարտիկներին ու հրամանատարներին՝ վորպես իրենց յեղբայրներին: Մեր մարտիկները չեկան վոչ վորպես նվաճողներ, այլ վորպես բարեկամներ, վորպես այդ մարզերում բնակվող ժողովուրդների հարազատ յեղբայրներ, մարդեր, վորոնք բռնի կերպով խլված եյին հայրենիքից:

Ազատ չունչ քաշելով, Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները սկսեցին իրենց ազատ, յերջանիկ ու բերկրալի կյանքը: Բեսսարաբիան ռումինական okկուպացիայի ճնշումից ազատվելուց հետո Մոլդավական ԱԽՍՀ ԺողկոմխորՀն և ՈւԿ (բ)Կ Մոլդավիայի մարզկոմն առաջարկություն մտցրին ԽՍՀՄ ԺողկոմխորՀ և ՀամԿ (բ)Կ կենտկոմ՝ Բեսսարաբիայի մոլդավական բնակչությունը Մոլդավական Ավտոնոմ Հանրապետության մոլդավական բնակչությանը վերամիավորելու մասին և Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին: ԽՍՀՄ ԺողկոմխորՀը և ՀամԿ (բ)Կ կենտկոմը պաշտպանեցին Մոլդավիայի կազմակերպությունների խնդիրքը և վորոշեցին համապատասխան առաջարկություն մտցնել ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդ:

Այս ծանուցումն առանձին ուրախությամբ ղեմավորեցին Մոլդավական ԱԽՍՀ-ի և Բեսսարաբիայի աշխատավորներն ու ՈւԽՍՀ-ի ժողովուրդները:

Ցես համոզված եմ, որ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը կբավարարի այս միջնորդությունը և կստեղծվի Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքի մի նոր յեղբայրական միութենական հանրապետություն:

Ընկե'ր դեպուտատներ: Ցես ամբողջապես ու լիովին միանում եմ նրան, ինչ ասաց դեպուտատ Կոնստանտինովն իր ճառում: Մոլդավիայի և Խորհրդային Ուկրաինայի միջև սահմանների վերաբերյալ հարցերում և այն մասին, որ ՈւԽՍՀ-ին են անցնում

րում էին 5 092 հազար լեյ (188 394 ռուբլի) տուկոսները, վոր կազմում էր նրանց պարտքի 29%-ը:

Բեսսարաբիայի աղքատացած, սուվի մատնված դյուղացության դրությունը հարկադրված էր խոստովանել նույնիսկ ռումինական «Արդուս» թերթը (տնտեսական հարցերի ոֆիցիոզ) 1940 թվի փետրվարի 17-ին: Թերթը տալիս է Բեսսարաբիայի դյուղի բանող անասունի դրության հետևյալ բնութագիրը.

«Հազար ձիու մեջ չի կարելի դտնել ավելի քան 40—50 լավ ձի: Բեսսարաբիայում կան դյուղեր, վորտեղ կա 1—2 դույդ առողջ յեղ, իսկ մնացած բոլոր յեղները կմախք են միայն, անպետք թե՛ լծելու և թե՛ մորթելու համար»:

Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները ձգտում էին իրենց աղատագրմանն ու խորհրդային մեծ միանական ընտանիքի մեջ վերամիավորվելուն: Այդ մասին են խոսում ռումինական բռնության դեմ ծագած ապստամբությունների սերճախոս փաստերը, դաժան դատաստանի վաստերն այն պայքարի համար, վորը մղում էր ժողովուրդը հանուն իր աղատագրման:

Բեսսարաբիան ռումինացիների կողմից okկուպացիայի յենթարկվելու առաջին իսկ որերին մի չարք դավառներում ժողովրդական բողոք բարձրացավ okկուպանտների դեմ: Բողոքների այդպիսի ալիք անցավ նաև Բուկովինայով: 1918 թվի նոյեմբերին Զերնովիցի քաղաքում կայացավ Բուկովինայի դրեթե բոլոր քնակավայրերի ներկայացուցիչների մի հսկայական ժողով, վորտեղ վորոշվեց միանալ Խորհրդային Ուկրաինայի հետ: Նման ժողովներ տեղի ունեցան Խոտինի դավառի դյուղերում և մեստեչկաներում, վորտեղ նույնպես վորոշումներ ընդունվեցին Խորհրդային Ուկրաինայի հետ միանալու մասին:

Բեսսարաբիայի ժողովուրդը, վորտեղ և յերբ միայն այդ հնարավոր եր, արտահայտում եր իր կամքը Ռումինիայի ճնշումից ազատագրվելու և միասնական խորհրդային ընտանիքում վերականդնվելու մասին:

ՈՒԽՍՀ-ի ժողովուրդն ապրում եր ծանր ղադացումներ, տեսնելով, թե ինչ դրության մեջ են դտնվում ռումինական okկուպանտների կողմից բռնի կերպով նվաճված իր յեղբայրները: Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները սպասում և հավատում էին, վոր կդա ազատագրման ու վերամիավորման ժամը: Խորհրդային Ուկրաինայի ժողովուրդը դիտեր և հավատում եր, վոր կդա ցանկալի ժամը, այն կդա, վորովհետև մեղ ղեկավարում է իմաստուններից ամենաիմաստուն, մեծ, հարազատ ընկեր Ստալինը: (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ, վորոնք վերխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանդնում:)

Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի վերաբերյալ մեր Խորհրդային կառավարության ստալինյան վորոշումը ՈւԽՍՀ-ի, Մոլդավական ԱԽՍՀ-ի, Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները դիմավորեցին բերկրանքի ու դեպի մեր կառավարությունը տածած յերախտադիտության հատուկ ղդացմունքով:

Մեր քաջարի կարմիր բանակի ղորամասերի մուտքը Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի տերիտորիան այդ չրջանների բնակչությունը դիմավորեց վորպես մեծադույն տոն, իսկ կարմիր բանակի մարտիկներին ու հրամանատարներին՝ վորպես իրենց յեղբայրներին: Մեր մարտիկները յեկան վոչ վորպես նվաճողներ, այլ վորպես բարեկամներ, վորպես այդ մարղերում բնակվող ժողովուրդների հարազատ յեղբայրներ, մարղեր, վորոնք բռնի կերպով խլված եյին հայրենիքից:

Ազատ չունչ քաշելով, Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները սկսեցին իրենց ազատ, յերջանիկ ու բերկրալի կյանքը: Բեսսարաբիան ռումինական okկուպացիայի ճնշումից ազատվելուց հետո Մոլդավական ԱԽՍՀ ժողկոմխորհը և ՈւԿ (բ) Կ Մոլդավիայի մարզկոմն առաջարկություն մտցրին ԽՍՀՄ ժողկոմխորհ և Համկ (բ) Կ կենտկոմ՝ Բեսսարաբիայի մոլդավական բնակչությունը Մոլդավական Ավտոնոմ Հանրապետության մոլդավական բնակչությանը վերամիավորելու մասին և Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին: ԽՍՀՄ ժողկոմխորհը և Համկ (բ) Կ կենտկոմը պաշտպանեցին Մոլդավիայի կազմակերպությունների խնդիրքը և վորոշեցին համապատասխան առաջարկություն մտցնել ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդ:

Այս ծանուցումն առանձին ուրախությամբ դիմավորեցին Մոլդավական ԱԽՍՀ-ի և Բեսսարաբիայի աշխատավորներն ու ՈւԽՍՀ-ի ժողովուրդները:

Ցես համոզված եմ, վոր ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը կբավարարի այս միջնորդությունը և կստեղծվի Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքի մի նոր յեղբայրական միութենական հանրապետություն:

Ընկե՛ր դեպուտատներ: Ցես ամբողջապես ու լիովին միանում եմ նրան, ինչ ասաց դեպուտատ Կոնստանտինովն իր ճառում: Մոլդավիայի և Խորհրդային Ուկրաինայի միջև սահմանների վերաբերյալ հարցերում և այն մասին, վոր ՈւԽՍՀ-ին են անցնում

Ակկերմանի, Իզմայիլի, Խոտինի դավառներն ու Հյուսիսային Բուկովինան, որոնց բնակչությունը դերազանցապես ուկրաինացիներ են, մենք լիակատար համաձայնության ենք եկել: Սահմանները վորոշելիս մենք ղեկավարվել ենք մի ձգտումով և ցանկությամբ—լիակատար հնարավորություն ստեղծել Բեսսարաբիայի ու Հյուսիսային Բուկովինայի մոլդավական և ուկրաինական ժողովուրդների տնտեսական ու եկոնոմիկական ծաղկման համար, ինչպես նաև ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկման համար:

Ձես ինդրում եմ ՍՍՀՄ Գերագույն Սորհրդի Ցոթերորդ Սեսսիային՝ Իզմայիլի, Ակկերմանի և Խոտինի դավառների ու Հյուսիսային Բուկովինայի բնակչությունը վերամիավորել միասնական ուկրաինական Սորհրդային պետության մեջ, միասնական ուկրաինական մեծ ժողովրդի մեջ և Ուկրաինական ՍՍՀ-ին անցնող տերիտորիայում կազմել յերկու նոր մարզ—Չերնովիցկի՝ կենտրոնը Չերնովիցի քաղաքում և Ակկերմանի՝ կենտրոնը Ակկերման քաղաքում:

Գաղութային ճնշման և դաժան չահագործման խավար ժամանակն այլևս յերբե՛ք չի վերադառնա Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ազատ հողը: Դրա յերաշխիքն է մեծ Սորհրդային Միության 193-միլիոնանոց հզոր ժողովուրդը, դրա յերաշխիքն է հզոր փառապանծ Կարմիր Բանակը, դրա յերաշխիքն է Լենինի—Ստալինի մեր կոմունիստական կուսակցության ղեկավարությունը: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի:)

Ընդմիշտ անցյալի պատմության անցան Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդների 22 տարվա տառապանքներն ու սարսափները: Այսոր Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդն ազատ ժողովուրդ է, դրանք մեծ, հզոր Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիներն ու քաղաքացուհիներն են:

Աշխատավորների ազատ, յերջանիկ կյանքի ծաղկումը հնարավոր է միայն Սորհրդային իշխանության ժամանակ, միայն բոլշևիկների կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Ձես կոչ եմ անում և հավատացած եմ, վոր Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդները Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ սիրով, ամուր կհամախմբեն իրենց շարքերը մեր պանծալի Սորհրդային կառավարության շուրջը, մեր կոմունիստական կուսակցության շուրջը, ժողովուրդների

մեծ ազատարար—մեր հարազատ ընկեր Ստալինի շուրջը և մեծ Սորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին համարձակ կընթանան առաջ, դեպի նորանոր հաղթանակներ:

(Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Ընկերներ, առաջարկություն ե ստացվել ընդմիջում հայտարարել: Առարկություններ չկա՞ն: Չկան:

Հայտարարվում ե ընդմիջում 15 րոպեյով:

(Ընդմիջում:)

Նախագահող: Նիստը վերսկսվում ե: Դեպուտատներից վորևե մեկը պահանջո՞ւմ ե արդյոք թարգմանել ընկ. Կորնիեցի ճառը:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Ընկե՛ր դեպուտատներ: Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորության կողմից Սեսսիա յեկած պատվիրակությունը խնդրում ե խոսք տալ ՍՍՀՄ Գերագույն Սորհրդին վողջունելու համար: (Դահլիճ են մտնում պատվիրակության անդամները, վորոնց դիմավորում են բուռն ծափահարություններով, վորոնք փոխվում են յերկարատև ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Բեսսարաբիայի աշխատավորների անունից խոսքը տրվում է ընկ. Կրեչունեսկուին: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Զ. Ա. Կրեչունեսկու (քաղ. Որգեև): Խոսում ե մոլդավերեն: Թարգմանում ե ռուսերենի դեպուտատ Դ. Յե. Ոթյանը:

Մեծ Սորհուրդների Ցերկրի թանկագին ընկե՛ր դեպուտատներ:

Ընդունեցեք ամենասրտագին, յերախտապարտ վողջույն ազատագրված Սորհրդային Բեսսարաբիայի աշխատավորության կողմից: (Ցերկարատև ծափահարություններ:)

Մենք թռչունի նման յերկար տարիներ տառապել ենք վանդակում, խոնավ ու խավար նկուղում, թռչունի նման, վորին կարմիր Բանակն այժմ ազատ ե արձակել: Միայն կալանավորը կհասկանա այս թանկագին, բաղձալի բառերի նշանակությունն ու խոր իմաստը:

Շնորհակալություն ձեզ՝ խորհրդային ժողովրդի ընտրյալներ, շնորհակալություն ձեզ՝ ընկեր Ստալին, ձեզ՝ ընկեր Մոլոտով (բուռն, յերկարատև ծափահարություններ), ձեզ՝ ընկեր Վորոշիլով և ընկեր Տիմոշենկո: (Բուռն ծափահա-

դուքյուններ:) Շնորհակալություն խորհրդային մեծ հայրենիքի բոլոր աշխատավորներին՝ մեզ կապիտալիստական սարկուքյան չղթաներից ազատելու համար:

Մեզ, Բեսսարաբիայի բնակիչներիս, 22 տարի կողոպտում էին ռումինական բոյարները, մեզ մարդ չէին համարում, ծեծում և ծաղրի էին յենթարկում մեզ, մեր յերեխաներին, մայրերին ու յեղբայրներին:

Յես, ժողովրդական տարրական դպրոցի ծեր ուսուցչուհիս, 29 տարի աշխատում եմ դպրոցում, լավ դիտեմ Թչվառ մարդկանց կյանքը, մարդիկ, վորոնք զրկված էին իրենց մայր հայրենիքից, վորոնք տառապում էին ռումինական լծի տակ: Սովից, սարսափելի աղքատությունից մահանում էին գյուղացիները, բանվորները, մահանում էին աշխատավոր ինտելիգենտները, վորոնք հնարավորություն չունեյին աշխատելու և իրենց համար մի կտոր հաց վաստակելու:

Տառապելով ուժից վեր ճնշման տակ, Բեսսարաբիայի ժողովուրդն այնուամենայնիվ բարձրացնում եր ապստամբության կարմիր դրոշը: Ռևկուպանտները դաժանորեն պատժում էին ապստամբներին, այրում էին ամբողջ գյուղեր, դնդակահարում հազարավոր մարդկանց:

Յեվ այնուամենայնիվ մենք հավատում էինք մեր ազատագըծմանը, լուսավոր ապագային: Բեսսարաբիայի աշխատավորների հայացքները, բոլոր աղնիվ մարդկանց հայացքներն ավելի ու ավելի հաճախ էին ուղղվում դեպի Արևելք, այնտեղ, վորտեղ մարդիկ ապրում են Ստալինյան Սահմանադրության արևի տակ, վորտեղ հնչում է ուրախ ծիծաղը, վորտեղ յերգում են հրճվալից ժողովրդական յերգեր:

Մեզ հուսադրում էին Դնեստրի ձախ կողմում վառ փայլող կարմիր աստղերը, մեզ հասնում էին «Ինտերնացիոնալի» հաղթական հնչյունները:

Յեվ մեր հույսերն արդարացան: Արդեն յերկրորդ ամիսն է, ինչ մենք ազատ կյանք ենք վարում Ստալինյան Սահմանադրության ջերմ շողերի տակ: Բանվորները դարձել են գործարանների ու ֆաբրիկաների լիիրավ տերերը, գյուղացիները ստացել են վաղուց յերազած հողը, այժմ նրանք հավաքում են իրենց հողի բերքը՝ իրենց յերեխաների համար: Մեր ինժեներները խանդավառությամբ վերականգնում են գործարանները, յերկաթուղիները, բժիշկները ժողովրդի համար բացում են նոր հիվանդանոցներ, ուսուցիչները պատրաստվում են նոր ուսումնական տար-

վան՝ նոր, խորհրդային դպրոցում, վորտեղ յերեխաները կսովորեն իրենց մայրենի լեզվով:

Յենթության մեջ է ամբողջ ազատագրված յերկիրը: Հնչում են նոր յերգեր՝ յերջանիկ հայրենիքի մասին, ստալինյան դարաշրջանում աշխատելու մեծ հրճվանքի մասին:

Մեզ, յերջանիկներիս, ուղարկելով Մոսկվա, Բեսսարաբիայի աշխատավորները խնդրել են հայտնել ձեզ, վոր մենք բոլորս մեկ մարդու պես յանկանում ենք միայն մի բան՝ ամենաարագ կերպով յեղբայրաբար վերամիավորվել մոլդավական ժողովրդի հետ: Բեսսարաբիայի ժողովրդի անունից մենք խնդրում ենք Գերագույն Խորհրդին՝ կազմել Մոլդավական Միութենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Միլիոնավոր ազատագրված մարդկանց անունից մենք հավաստիացնում ենք ձեզ, ընկեր դեպուտատներ, վոր մենք չուտով կսովորենք ապրել խորհրդային ձևով, աշխատել ստախանովաբար, ստալինաբար պաշտպանել մեր ազատությունն ու ձեռք բերած յերջանկությունը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Մենք ընդմիշտ ազատագրվել ենք կապիտալիստական սարկությունից, ռումինական բոյարների ու կալվածատերերի լծից, մենք դարձել ենք Խորհրդային Միության քաջաքաղիներ և ամուր կպահպանենք մեր հարազատ յերկիրը: Թշնամու նժույգները չուր չեն խմի մեր դետերից, ոտարերկրացիները չեն վայելի մեր ծաղկաբեղիծ պտղատու և խաղողի այգիների պտուղները:

Կեցցե՛ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության բազմազգ ժողովուրդը, վորն ողնության յեղբայրական ձեռք մեկնեց մեզ: (Յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ն ժողովրդի ընտրյալները, Գերագույն Խորհրդի — աշխարհում ամենադեմոկրատիկ պառլամենտի դեպուտատները:

Կեցցե՛ անպարտելի կարմիր Բանակը, վորն իրականացրեց մեր բազմամյա յերազը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային կառավարությունն ու նրա դեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ ժողովուրդների առաջնորդ, մեր թանկագին ընկեր Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Հյուսիսային Բուկովինայի աշխատավորների անունից խոսքը տրվում է ընկ. Միխալչուկին: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Ն. Ս. Միխայլչուկ (քաղ. Զերնովից)։ Խոսում է ուկրաիներեն։

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկեր պեպուտատներ։ Հյուսիսային Բուկովինայի բոլոր աշխատավորների անունից մենք վողջունում ենք ձեզ, խորհրդային ժողովրդի ընտրյալներիդ, անպարտելի քաջարի կարմիր Բանակին, Խորհրդային կառավարությանը՝ ընկեր Մոլոտովի գլխավորությամբ։ (Բուռն, երկար ժամանակ չդադարող ծափահարություններ։)

Մենք վողջունում ենք ամբողջ աշխարհի աշխատավորության լավագույն բարեկամին և ուսուցչին, մեր հարազատ յերկիրը՝ Հյուսիսային Բուկովինան ռումինական կալվածատերերի ու կապիտալիստների լծից ազատագրելու վոգեշնչողին — թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին։ (Ցերկարատև ովացիա։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Հարյուրավոր տարիների ընթացքում Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդն արհեստականորեն անջատված եր իր արյունակից ուկրաինացի յեղբայրներից։ Սև ամպի նման մեզ ճնշում եր կեղեքիչների հաստատած սարկացումը։ Ռումինական հափշտակիչների տիրապետության 22 տարվա ընթացքում մեր յերկիրը չտեսնված քայքայման հասցվեց։

Կալվածատերերը տղրուկի նման նստել եյին գյուղացիների վրին, ծծում եյին յերկրագործների արյունը։ Գյուղացիական չքավոր և միջակ տնտեսությունների 67%-ն ուներ հողի միայն 18%-ը։ Մնացած ամբողջ հողը կալվածատերերի ու կուլակների ձեռքին եր։ Ցերը վերհիշում ես Հյուսիսային Բուկովինայի մոտ անցյալի սոսկալի որերը, մարմնովդ սարսուռ է անցնում և սկսում ես ե՛լ ավելի ատել ճնշողներին։

Պրելիպչա-Լուկա գյուղում 855 գյուղացիական տնտեսություններ ունեյին միայն 163 հեկտար հող, իսկ այդ գյուղի յերեք կալվածատերերը տիրում եյին 526 հեկտար լավագույն հողի։ Կոմարովցի գյուղում 785 գյուղացիական տնտեսություններ ունեյին միայն 357 հեկտար հող, իսկ այդ գյուղի 4 կալվածատերերը — 4 061 հեկտար հող։

Ավելի լավ չեր բանվորների վիճակը։ Ծանր, հյուծող աշխատանքը ֆաբրիկաններում և գործարաններում սպառում եր նրանց վերջին ուժերը։ Աշխատանքային որվա տևողությունն որական 12—13 ժամից պակաս չեր, իսկ փետրում և յերբեմն գործարաններում ընդհուպ վարձատրությամբ աշխատում եյին որական մինչև 18 ժամ։

Ռումինական պետվորականությունը դաժան պատասխան եր տեսնում մեզ հետ։ Շեպենեց գյուղից մի գյուղացի, վորը բանակից տուն եր յեկել արձակուրդին և ծանր հիվանդ վիճակի մեջ եր դտել իր մորը, ուշացել եր զորամասը վերադառնալու։ Իմանալով թե ինչ տանջանքներ են սպասում իրեն բանակում, նա ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին։

Այսպես եյին վարվում մեզ, բանվորներիս ու գյուղացիներիս հետ, Հյուսիսային Բուկովինայի կապիտալիստները։

Մեր ծանր տառապանքներին վերջ դրեց խաղաղության խմաստուն և կայուն ստալինյան արտաքին քաղաքականությունը, վորն ամրապնդված է Խորհուրդների Յերկրի պետված ուժերի ամբողջ հզորությամբ։

Ստալինյան Սահմանադրության արևը ծագեց նաև Հյուսիսային Բուկովինայի վրա։ Այժմ մեր ժողովուրդը բացում է իր հզոր թեվերը և Խորհրդային Միության ժողովուրդների յեղբայրական ոգնությամբ կառուցելու յե իր նոր, սոցիալիստական կյանքը։

Կալվածատիրական ու վանքապատական հողն անցավ նրանց օգտագործման, ովքեր հարյուրավոր տարիների ընթացքում վոռոգել են այդ հողն իրենց քրտինքով և արյունով։ Հողազուրկ և սակավահող գյուղացիների մեջ արդեն բաշխվել է 55 հազար հեկտար հող։ Հողը և ցանքերը բաշխելու որերին շատ գյուղերում գյուղացիները դաշտ եյին դուրս գալիս կարմիր դրոշներով, արձուն պահպանելով ստացած հողը, հավաքելով հարուստ բերքը։

Աղատագրված Հյուսիսային Բուկովինայի բատրակները, չքավորներն ու միջակներն այդ բոլորի համար անկեղծորեն չնորհակալություն են հայտնում խորհրդային իշխանությանը, բոլշևիկյան կուսակցությանը և ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինին։ (Բուռն ովացիա։ Բոլորը վոտքի յեն կանգնում։ Բացականչություններ՝ «ուռա»։)

Ընկե՛ր դեպուտատներ։ Թույլ տվեք ինձ այս հանդիսավոր բոպեին բանվորների և բոլոր աշխատավորների անունից հայտարարելու, վոր մենք խորհրդային ամբողջ ժողովրդի հետ միասին ուս-ուսի, ձեռք-ձեռքի տված կամրապնդենք մեր սոցիալիստական հայրենիքի — ԽՍՀՄ-ի հզորությունը։ Մեր ֆաբրիկաններն ու գործարանները կաշխատեն անխափան։ Այլևս յերբեք չեն վերադառնա արյունարբու թշնամիները — չահագործողները։

Հյուսիսային Բուկովինայի աշխատավորները տոգորված են հուր ցանկությամբ՝ ընդմիշտ վերամիավորվել ուկրաինական ժո-

ղովրդի հետ՝ միասնական ուկրաինական սոցիալիստական պետության մեջ: Մենք խնդրում ենք Հյուսիսային Բուկովինայի տերիտորիան մտցնել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ: (Բուռն ծափահարություններ:)

Հյուսիսային Բուկովինայի աշխատավորները հավաստիացնում են ձեզ, որ մենք կլինենք մեր սոցիալիստական հայրենիքի հավատարիմ զավակները և մեծ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին պատվով կպահպանենք մեր խորհրդային հայրենիքի անառիկ սահմանները: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ վերամիավորված ուկրաինական մեծ ժողովուրդը:

Կեցցե՛ ԽՍՀՄ ժողովուրդների անխախտելի բարեկամությունը:

Փա՛ռք համայն աշխարհի աշխատավորության մեծ առաջնորդը— մեր հարազատ հայր ընկեր Ստալինին: (Ջերմ ծափահարություն: Բոլորը վոտքի են կանգնում: Բացականչություններ՝ «ուռա»:)

Նախագահող: Դեպուտատներից որևէ մեկը պահանջո՞ւմ է արդյոք թարգմանել ընկ. Միխայլյուկի ճառը:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորների պատվիրակներին հրավիրում եմ տեղ գրավել Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում: Խոսքը տրվում է դեպուտատ Ստուդինսկուն: (Ջերմ ծափահարություններ:)

Կ. Ո. Ստուդինսկի (Լվովի oկրուգ, Լվովի մարզ): Խոսում է ուկրաիներեն:

Ընկե՛ր դեպուտատներ: XII դարից սկսած մինչև XIII դարի կեսերը, դալիցկո-վոլինսկի իշխանության ամենածաղկուն շրջանում, Բեսսարաբիան և Բուկովինան մտնում էին այդ իշխանության մեջ վորպես նրա բաղկացուցիչ մասը:

Ցավ, դուցե, այդ հանգամանքն է հարկադրում ինձ, վորպես մոտ անցյալում Գալիցիայի քաղաքացու,— իսկ այժմ ես արդեն հպարտությամբ կրում եմ խորհրդային քաղաքացու անունը,— այսոր խոսք վերցնել վողջունելու համար իմ հարազատ և սրտակից յեղբայրներին:

Բեսսարաբիան և Բուկովինան դարձան խորհրդային յերկրներ: Նրանք մտան մեծ Խորհրդային Միության կազմի մեջ— Բեսսարաբիան՝ Մոլդավական հանրապետության կազմի մեջ, իսկ Բուկովինայի մեր արյունակից ուկրաինացի յեղբայրները՝ հզոր Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ:

Շատ վիշտ են կրել այդ յերկրները:

Վողջունում եմ քեզ, բազմաչարչար Բեսսարաբիա, դու ապրել ես ռումինական ծանր դերության: Խոնարհում եմ դլուխս այն 30 հազար քաղաքացիների հիշատակին, վորոնք ռումինական բանտերում սպանվել ու խոշտանդվել են միմիայն նրա համար, վոր նրանք ուզում էին լինել Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ազատ քաղաքացիներ:

Ցես խոնարհում եմ դլուխս և վողջունում քեզ նաև նրա համար, վոր Բեսսարաբիայի հողի վրա ծաղկում եր ուկրաինական կուլտուրան, այդ հողի վրա ապրում, ստեղծագործում և իր քեմանները մոլդավների կյանքից եր վերցնում մեծ դրող Միխայիլ Կոցյուբինսկին:

Վողջունում եմ և քեզ, իմ հարազատ, տառապանքներով լեցուն, կանաչազարդ Բուկովինա, դու տվել ես մեծ դրողներ Ցուրիյ Ֆեդկովիչին և Ոլգա Կոբիլյանսկայային: (Ծափահարություններ:)

Վողջունում եմ քեզ, Բեսսարաբիա, և քեզ, Հյուսիսային Բուկովինա, ամբողջ Խորհրդային Ուկրաինայի անունից վորպես դիտական աշխատող, կուլտուրական դործիչ, վորը տասնյակ տարիների ընթացքում ուկրաինական խորհրդային դիտության դանձարանն ե մտցրել իր դիտելիքներն ու հետազոտությունները: Վողջունում են ձեզ բեսկիդներն ու կարպատները, իրենց վողջույնն են հղում Սանը, Բուգը, Դնեստրը, Դնեպրը և Վորսկլան, վողջունում են և իրենց բերկրանքը հաղորդում Սև ծովին:

Ցեվ վոչ միայն Խորհրդային Ուկրաինան, այլև հզոր Խորհրդային Միության կազմի մեջ մտնող բոլոր սոցիալիստական հանրապետությունները հանուն ժողովուրդների բարեկամության կոչում են ձեզ.

Ամրապնդե՛ք ձեր ուժերը, զարգացե՛ք, ստեղծե՛ք նոր կուլտուրա՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական: Հիշե՛ք, վոչ վոքի չի հաջողվի ձեռք բարձրացնել ձեր հողի վրա, վոչ վոք չի վոչնչացնի ձեր մայրենի լեզվով դպրոցները, ինչպես այդ անում էին պանական Լեհաստանի և բոյարական Ռումինիայի որոք: Խորհրդային Միության մեջ բոլոր ժողովուրդներն իրավահավասար են, ազատ, նրանց բոլորի համար ապահովված է ազատ, կուլտուրական կյանքի իրավունքը:

Փա՛ռք Խորհրդային Բեսսարաբիային, վորը կազմում է Մոլդավական հանրապետության անկապտելի մասը, վա՛ռք Խորհր-

դային Բուկովինային, վորը կազմում է Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մասը: Ձեր աշխատանքին հետամուտ կլինեն ու ձեզ կողնեն Խորհուրդների Ցերկրի 193 միլիոն քաղաքացիները, վորոնք միացած են խորհրդային ժողովուրդների համերաշխ ընտանիքում:

Ասում են, վոր մեծ պոետներն ու մեծ քաղաքագետներն ընդհանուր չատ բան ունեն. պոետները հաճախ նախազուշակում են ապագան և պայքարի յեն կոչում այն իդեալների իրագործման համար, վորոնցով ապրում են ժողովուրդները: Քաղաքագետները դրա հետ միասին կշռադատում են հանգամանքները և ղղույշ ու հետևողականորեն իրագործում իրենց դիտավորությունները:

Սակայն, խորհրդային քաղաքագետները վորքա՞ն են գերազանցել ամենատաղանդավոր պոետներից: Պոետներից կամ դիտնականներից վորևե մեկը կարո՞ղ եր արդյոք մեկ տարի առաջ նախատեսել այն բոլոր իրագործությունները, վորոնց վկան ենք մենք այժմ: Արևմտյան Ուկրաինան, Արևմտյան Բելոռուսիան, Բեսսարաբիան, Հյուսիսային Բուկովինան, Եստոնիան, Լատվիան և Լիտվան դարձան խորհրդային և վորոշում ընդունեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնելու մասին: Պոետները չնախատեսան այդ, բայց դա իրականացավ ընկ. Մոլոտովի գլխավորած Խորհրդային կառավարության իմաստուն քաղաքականության շնորհիվ: (Բուռն ծափահարություններ:)

Փա՛ռք ընկեր Մոլոտովին, վա՛ռք հզոր կարմիր բանակին և նրա ղեկավարներ՝ ընկերներ Վորոշիլովին, Տիմոշենկոյին, Կուլիկին և բազմաթիվ հերոսներին՝ հրամանատարներին և կարմիրբանակայիններին, վորոնք ոգնեցին այդ հանրապետություններին ժողովուրդներին ազատորեն արտահայտելու իրենց կամքը, իրենց ցանկությունը՝ միաձուլվելու մեծ Խորհրդային Միության ժողովուրդների միասնական ընտանիքին: (Բուռն ծափահարություններ:)

Ցես, վորպես մի ուկրաինացի, վորը յերիտասարդ հասակից յերազել է ուկրաինական բոլոր հողերը վորպես միասնական ամբողջություն միավորելու մասին, սրտագին շնորհակալություն եմ հայտնում այն մեծ մարդուն, վորն իրականացրեց այդ յերազը, վորը լավ հոր հոգատարությամբ ուկրաինական բոլոր հողերը միացրեց Խորհրդային հանրապետության մեջ, սոցիալիզմի դրոշի տակ: Այդ մեծ մարդը բոլոր աշխատավորների սրտերում կանգնեցրեց, ինչպես ասել է Պուշկինն իր մասին, իրեն անձեռակերտ արձանը, վորին չեն խորտակի վո՛չ ֆշնամու վոխը, վո՛չ

հոդմ, վո՛չ ամպրոպ, վո՛չ փոթորիկ: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ այդ մեծ մարդը, թող ապրի և յերկա՛ր, յերկա՛ր տարիներ կառավարի մեր մեծ տերությունը նույն իմաստությամբ, ինչպես և մինչ այժմ, թող ապրի Վրաստանի մեծ զավակը, կոմունիստական կուսակցության մեծ առաջնորդը, վորն իր հաստատուն ձեռքերում պահում է ղեկը,—կեցցե՛ մեծ Ստալինը: (Բուռն ովացիա: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «ուռա»:)

Նախագահող: Դեպուտատներից վորևե մեկը պահանջո՞ւմ է արդյոք թարգմանել դեպուտատ Ստուդինսկու ճառը:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Խոսքը տրվում է ԽՍՀՄ ժողկոմխորհի Նախագահի տեղակալ՝ դեպուտատ Բուլգանինին: (Բուռն ծափահարություններ:)

Ն. Ա. Բուլգանին: Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Մենք լսեցինք Մոլդավական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից Գերագույն Խորհրդում ընտրված դեպուտատ Կոնստանտինովին և Ուկրաինական Միութենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ընտրված դեպուտատ Կորնիեցին, վորոնք իրենց ճառերում հիմնավորեցին իրենց խնդիրքը—Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին և Բուկովինայի հյուսիսային մասը և Բեսսարաբիայի Խոտինի, Ակկերմանի ու Իզմայիլի գավառները Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին:

Մենք լսեցինք նաև Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորության ներկայացուցիչների վողջույնի ճառերը: Այդ ներկայացուցիչները ազատագրված ժողովրդի անունից այստեղ չնորհակալություն հայտնեցին կարմիր բանակին, Խորհրդային կառավարությանը և ընկեր Ստալինին: (Ցերկարատև ծափահարություններ:)

Տարակույս չկա, վոր Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորության այստեղ յելույթ ունեցած ներկայացուցիչների բոլոր ճառերն իրոք արտահայտում են Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ժողովուրդների իսկական կամքն ու ցանկությունները, ժողովուրդներ, վորոնք այսոր նշում են պատմական մեծադույն մի իրագործություն—իրենց ազատագրումը ռումինական բոյարների ու կալվածատերերի իշխանու-

թյունից և Խորհրդային Միության ժողովուրդների ստալինյան բազմազգ համերաշխ ընտանիքի մեջ մտնելը: (Ցերկարատև ծափահարություններ:)

Ջափազանց շատ վիշտ ե կրել Բեսսարաբիայի աշխատավոր ժողովուրդը ռումինական ոկկուպացիայի ժամանակաշրջանում: Ռումինական իշխանավորները իր ժամանակին խլելով Բեսսարաբիայի տերիտորիան, խլված տերիտորիայի վրա վերականգնել եյին կալվածատերերի և ժանդարմների իշխանությունը: Հողը խլված եր գյուղացիներից ու Բեսսարաբիայի պաղատու և խաղողի առատ այդիները դարձել եյին կալվածատերերի սեփականություն: Ռումինական իշխանավորները բանվորներին ու գյուղացիներին խեղդում եյին բազմաթիվ հարկերով և տուրքերով:

Ռումինական իշխանավորների տիրապետության հետևանքով անկման հասան Բեսսարաբիայի գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը:

Բուկովինայի հյուսիսային մասի բնակչությունը, որն իր հսկայական մեծամասնությամբ բաղկացած ե ուկրաինացիներից, բացառություն չեր կազմում այդ ծանր վիճակում և այդ ճնշումը զգում եր Նույնպես և իր վրա:

Խորհրդային Միությունը, ինչպես գիտեք, յերբեք չի հաշտվել Բեսսարաբիան բռնի կերպով անջատելու փաստի հետ, որ տեղի ունեցավ 22 տարի սրանից առաջ: Խորհրդային հանրապետություն եր: Ոգտվելով այդ հանգամանքից, ռումինական կալվածատերերը և կապիտալիստները, անգլո-ֆրանսական իմպերիալիստների ոգնությամբ, այն ժամանակ կարողացան բռնի կերպով խլել մեր Բեսսարաբիան:

Սակայն, ինչպես ասում են, կար ժամանակ, բայց անցավ ու դարձավ անցած-դնացած մի բան: Խորհրդային Միությունը Լենինի — Ստալինի կուսակցության ղեկավարությամբ այժմ դարձել ե հզոր ու մեծ պետություն: (Բուռն ծափահարություններ:)

Խորհրդային Միությունն այժմ բոլոր հնարավորություններն ունի իր շահերը պաշտպանելու համար:

Հիմնվելով դրա վրա, մեր Կառավարությունն իրավացիորեն անհրաժեշտ դտավ, արդարությունը վերականգնելու շահերի տեսակետից, Բեսսարաբիան վերադարձնել Խորհրդային Միությանը:

Խորհրդային Միության Կառավարությունը Բեսսարաբիան վերադարձնելու հարցը նույնպես իրավացիորեն կապեց Բուկովինայի հյուսիսային մասը, որի բնակչությունն իր հսկայական

մեծամասնությամբ ուկրաինական ե, Խորհրդային Միությանը հանձնելու հարցի հետ:

Վորպես հետևանք ձեզ հայտնի այն հայտարարությունների, վոր ընթացիկ տարվա հունիսի 26-ին և 27-ին Խորհրդային Կառավարության անունից արեց Ռումինիային ԽՍՀ Միության Ժողկոմխորհի Նախագահ և Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Մոլոտովը, Բեսսարաբիան և Բուկովինայի հյուսիսային մասը դարձան խորհրդային:

Կարմիր Բանակը և խորհրդային իշխանությունն ազատություն ու յերջանկություն բերին Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորներին: Ահա թե ինչու Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի աշխատավորությունն այսչափ ջերմ յերախտապարտ են մեր Կարմիր Բանակին, Խորհրդային Կառավարությանը, մեր կուսակցությանը և մեր առաջնորդ ընկեր Ստալինին: (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի:)

Ընկեր դեպուտատներ, Բեսսարաբիայի ազատագրումն ու Խորհրդային Միությանը վերամիավորելը դգալիորեն ավելացնում ե մոլդավական բնակչության թիվը մեր պետության կազմում: Այդ հանդամանքի կապակցությամբ, Մոլդավական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ժողկոմխորհը և Ուկրաինայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Մոլդավիայի մարզային կոմիտեն ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին և Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտեին առաջարկություն են ներկայացրել Բեսսարաբիայի մոլդավական բնակչությունը Մոլդավական Ավտոնոմ Հանրապետության բնակչությանը վերամիավորելու մասին և Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին:

Միության Կառավարությունը, ինչպես գիտեք, պաշտպանեց Մոլդավիայի կազմակերպությունների խնդիրքը և վորոշեց համապատասխան առաջարկություն մտցնել ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդ:

Դրա հիման վրա, Կառավարության հանձնարարությամբ, յես Գերագույն Խորհրդի քննարկմանն եմ մտցնում Որենքի հետևյալ նախագիծը.

«Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին:

Ընդառաջ դնալով Բեսսարաբիայի աշխատավորների և Մոլդավական Ա.Վոտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների ցանկություններին՝ Բեսսարաբիայի մոլդավական բնակչությունը Մոլդավական Ա.ԽՍՀ մոլդավական բնակչությանը վերամիավորելու մասին և ղեկավարվելով աղգությունների աղատ զարգացման խորհրդային սկզբունքով, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Կազմել Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

2. Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնել Մոլդավական Ա.Վոտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Տիրասպոլ քաղաքը և Գրիգորիոպոլի, Դուբոսսարիի, Կամենկայի, Ռիբնիցայի, Սլոբոձեյայի և Տիրասպոլի շրջանները, Բեսսարաբիայի Բելցիի, Բենդերիի, Քիշինյովի, Կաղուլի, Որգեևի և Սորոկիի դավառները:

3. Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տրամադրությանը հանձնել տվյալ Որենքի յերկրորդ Ղետի համաձայն Բեսսարաբիայի և Մոլդավական Ա.ԽՍՀ տերիտորիայում դտնվող արդյունաբերական ձեռնարկությունները, բացառությամբ այն վոչ-մեծ թվով ձեռնարկությունների, վորոնք ընդհանուր-միութենական նշանակություն ունեն:

4. Խնդրել Ուկրաինական ԽՍՀ Գերագույն Խորհրդին և Մոլդավական ԽՍՀ Գերագույն Խորհրդին՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի քննարկմանը ներկայացնել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև ճշդրիտ սահմանը վորոշելու նախագիծը:

5. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության (Հիմնական Որենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրություններ:

6. Հանձնարարել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»:

Դրա հետ միաժամանակ Բուկովինայի հյուսիսային մասի և Բեսսարաբիայի՝ Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցվելիք տերիտորիաների պետական կառուցվածքի հարցի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի քննարկմանը մտցվում է Որենքի հետևյալ նախագիծը.

«Բուկովինայի հյուսիսային մասն ու Բեսսարաբիայի Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի դավառները Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Բուկովինայի հյուսիսային մասը և Բեսսարաբիայի Խոտինի, Ակկերմանի և Իզմայիլի դավառները մտցնել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ:

2. Հանձնարարել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել Ուկրաինական ԽՍՀ նոր տերիտորիաների բնակչության կողմից Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրությունների որը»:

Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային Միության ճիշտ քաղաքականությունը, մեր կարմիր բանակի ուժը Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի բնակչությանը հնարավորություն տվին ազատագրվել ռումինական բոյարների ճնշումից և ընդմիշտ վերջ դնել լրավաղրկությանը, ստորացմանը, աղքատությանն ու քայքայմանը: Այսուհետև Բեսսարաբիան և Հյուսիսային Բուկովինան ընդմիշտ վերամիավորվում են Խորհրդային պետությանը, իսկ Բեսսարաբիայի ու Հյուսիսային Բուկովինայի մոլդավացի, ուկրաինացի, ռուս և այլ բնակչությունը, վորպես հավասարներ մտնում են մեծ Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքի մեջ:

Խորհրդային Միության մեջ լրականում է բոլոր ազգերի, ազգություններն և ազգային խմբերի՝ պատմության մեջ չտեսնված ստալինյան համագործակցությունը:

Մի քանի վերջին տարվա ընթացքում տեղի ունեցավ արևմտյան և արևելյան ուկրաինացիների վերամիավորումը միասնական Ուկրաինական պետության — Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ, արևմտյան ու արևելյան բելոռուսների վերամիավորումը միասնական Բելոռուսական պետության — Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ, աղգակից կարելո-ֆինն ժողովրդի վերա-

միավորումը Կարելո-Ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ:

Տվյալ Սեսսիան պետք է քննարկի Լիտվական, Լատվիական և Եստոնական խորհրդային հանրապետությունների՝ ԽՍՀՄ-ի մեջ մտնելու հարցը: Այսօր մենք վորոշում ենք ընդունում Խորհրդային Մոլդավիայի մոլդավական բնակչությունն ազատագրված Բեսսարաբիայի մոլդավական բնակչության հետ միասնական Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ վերամիավորելու մասին, վոր նշանակում է լենինյան–ստալինյան ազգային քաղաքականության մի նոր խոշոր հաղթանակ, վորն ապահովում է Խորհրդային Միության մեջ մտնող յուրաքանչյուր հանրապետության անտեսության և կուլտուրայի ծաղկումը:

Բեսսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ազատագրված ժողովրդի ընկե՛ր ներկայացուցիչներ: Ձեր ժողովրդի անցյալը դեղել է ծանր ու անուրախ, բայց դա հիմա անցյալ է և յերբե՛ք չի վերադառնա:

Այժմյանից դուք մտնում եք ձեր զարգացման նոր պատմության շրջանը: Մտնակից լինելով խորհրդային կարգերին, աշխատելով վոչ թե ընչազների, այլ ձեզ համար, դուք կարող եք աղնիվ, ստեղծագործ աշխատանքով, Խորհրդային Միության յեղբայրական ժողովուրդների ողնությամբ կարճ ժամանակամիջոցում վերացնել ծանր անցյալի հետքերը և կապրեք Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ: (Ծափահարություններ:)

Այսօր դուք մտնում եք մեծ Խորհրդային Միության քաղաքացիների շարքերը, Միության, վորը մեր պանծալի բոլշևիկյան կուսակցության հզոր ղեկավարության շնորհիվ ընթանում է դեպի կոմունիզմ տանող ուղիով: Մեզ հետ միասին յեկեք և դուք, ընկերներ, այդ ուղիով, ամրապնդե՛ք Խորհրդային պետության հզորությունը, սերտորեն համախմբե՛ք ձեր շարքերը Խորհրդային կառավարության շուրջը, մեր պանծալի, հարազատ բոլշևիկյան կուսակցության շուրջը, ժողովուրդների մեծ ազատարար — մեր մեծ Ստալինի շուրջը: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն և ստացվել մաքերի վոխանակությունը դադարեցնելու մասին: Արդյոք կա՞ն ուրիշ առաջարկություններ:

Ձայներ: Չկան:

Նախագահող: Քվեարկում են յերկու պալատները: Ով կողմնակից է մաքերի վոխանակությունը դադարեցնելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, մաքերի վոխանակությունը դադարեցված է:

Դեպուտատներից ո՞վ է խոսք խնդրում կառավարության հանձնարարությամբ դեպուտատ Բուլգանինի կողմից մտցված Որենքների նախագծերի վերաբերյալ: Յանկացողներ չկա՞ն: Դեպուտատներից վորևե մեկն ունի՞ արդյոք այլ առաջարկություններ:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Այդ դեպքում թույլ տվեք անցնել Որենքների նախագծերի քվեարկությանը: Հրապարակում եմ Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմելու մասին Որենքի նախագիծը:

«Ընդառաջ դնալով Բեսսարաբիայի աշխատավորների և Մոլդավական Ա.Խ.Տ.Ռ-ում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների ցանկություններին՝ Բեսսարաբիայի մոլդավական բնակչությունը Մոլդավական Ա.Խ.Տ.Ռ մոլդավական բնակչությանը վերամիավորելու մասին և ղեկավարվելով ազգությունների ազատ զարգացման խորհրդային սկզբունքով, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Կազմել Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

2. Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնել Մոլդավական Ա.Խ.Տ.Ռ-ում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Տիրասպոլ քաղաքը և Գրիգորիոպոլի, Դուբոսսարիի, Կամենկայի, Ռիբնիցայի, Սլոբոձեյայի և Տիրասպոլի շրջանները, Բեսսարաբիայի Բիլցիով քաղաքը և Բելցիի, Բենդերիի, Բիլցիով, Կաղուլի, Որգեևի և Սորոկիի դավառները:

3. Միութենական Մոլդավական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ստեղծմանը հանձնել տվյալ Որենքի յերկրորդ կետի համաձայն Բեսսարաբիայի և Մոլդավական Ա.Խ.Տ.Ռ տերիտորիայում գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները, բացառությամբ այն վոչ–մեծ թվով ձեռնարկությունների, վորոնք ընդհանուր–միութենական նշանակություն ունեն:

4. Խնդրել Ուկրաինական Ա.Խ.Տ.Ռ Գերագույն Խորհրդին և Մոլդավական Ա.Խ.Տ.Ռ Գերագույն Խորհրդին՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի քննարկմանը ներկայացնել Ուկրաինական Խորհրդային Սոցիա–

լիստական Հանրապետության և Մոլդավական Սովետական Սոցիալիստական Հանրապետության միջև հզրիտ սահմանը վորոշելու նախագիծը:

5. Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության (Հիմնական Որենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Մոլդավական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կողմից Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սովետի դեպուտատների ընտրությունները:

6. Հանձնարարել Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սովետի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»:

Դեպուտատները պահանջո՞ւմ են արդյոք Որենքի նախագիծը քվեարկել ըստ հոդվածների առանձին-առանձին: Վո՛չ:

Անցնում ենք Որենքի նախագիծն ամբողջությամբ քվեարկելուն:

Քվեարկում եմ ըստ պլատների առանձին-առանձին:

Քվեարկում են Միության Սովետի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքի նախագիծն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իշեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Ազգությունների Սովետի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքի նախագիծն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իշեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, Միութենական Մոլդավական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին Որենքը Գերագույն Սովետի կողմից ընդունված է միաձայն: (Բուռն ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի:)

Անցնում եմ Բուկովինայի հյուսիսային մասը և Բեսսարաբիայի Հոտինի, Ակկերմանի և Իզմայիլի գավառները Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին Որենքի նախագիծը քվեարկելուն:

Հրապարակում եմ Որենքի նախագծի տեքստը:

«Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սովետը վորոշում է.

1. Բուկովինայի հյուսիսային մասը և Բեսսարաբիայի Հոտինի, Ակկերմանի և Իզմայիլի գավառները մտցնել Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ:

2. Հանձնարարել ՍՍՀՄ Գերագույն Սովետի Նախագահությանը՝ նշանակել Ուկրաինական ՍՍՀ նոր տերիտորիաների բնակչության կողմից Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սովետի դեպուտատների ընտրությունների որը»:

Անցնում եմ Որենքի նախագիծը քվեարկելուն:

Դեպուտատները պահանջո՞ւմ են արդյոք քվեարկել ըստ հոդվածների առանձին-առանձին: Վո՛չ: Քվեարկում եմ Որենքի նախագիծն ամբողջությամբ:

Քվեարկում են Միության Սովետի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքի նախագիծն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իշեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Ազգությունների Սովետի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքի նախագիծն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ Չկա:

Բուկովինայի հյուսիսային մասը և Բեսսարաբիայի Հոտինի, Ակկերմանի և Իզմայիլի գավառներն Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտցնելու մասին Որենքը Գերագույն Սովետի կողմից ընդունված է միաձայն: (Բերկրատեղ ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի:)

Ընկե՛ր դեպուտատներ: Սեսիայի որակարգի յերկրորդ հարցը սպառված է: Գերագույն Սովետի հետևյալ նիստը կկայանա ոգոստոսի 3-ին յերեկոյան ժամը 6-ին:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1940 թվի օգոստոսի 3-ին)

Նախագահում է Միության խորհրդի Նախագահ Ա. Ա. Ա ն դ ր ե ե վ ը:

Նախագահող: *Գերագույն Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված:*

Ընկե՛ր դեպուտատներ: Գերագույն Խորհրդի նիստի օրակարգում — Լիտվական հանրապետության Սեյմի Լիաղոր Հանձնաժողովի հայտարարությունը: (Բ ու ռն, յ ե ր կ ա ր ա տ ա ռ ձ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ու ն ն ե ր:)

(Դահլիճ են մտնում Լիտվական հանրապետության ժողովրդական Սեյմի Լիաղոր Հանձնաժողովի անդամները և կանգնում տրիբունայի մոտ: Դեպուտատները վոտքի կանգնած յերկարատև ջերմ ովացիայով վողջունում են Լիաղոր Հանձնաժողովի անդամներին — լիտվական ժողովրդի ներկայացուցիչներին: Բացականչություններ՝ «ուռա»:)

Լիտվական հանրապետության Սեյմի Լիաղոր Հանձնաժողովի կողմից հայտարարության համար խոսքը տրվում է հանրապետության պրեզիդենտի պարտականությունը կատարող պրեմյեր-մինիստր ընկ. Պալեցկիսին: (Բ ու ռն ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ու ն ն ե ր:)

(Տ ր ի բ ու ն ա յ ի վրա ընկ. Պալեցկիսի յերևալը դեպուտատները վոտքի կանգնած վողջունում են յերկարատև ջերմ ովացիայով և «ուռա» բացականչություններով:)

Ց ու. Պալեցկիս (Լիտվական հանրապետության պրեզիդենտի պարտականությունը կատարող պրեմյեր-մինիստր, Սեյմի Լիաղոր Հանձնաժողովի նախագահ:) Խոսում է լիտվերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Յե. Վ ի ց յ ա ս ը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Վորպես Լիտվական ժողովրդական Սեյմի Լիաղոր Հանձնաժողովի նախագահ, վորպես Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետության ու կառավարության դեկավարի պաշտոնը ժամանակավորապես կատարող և վորպես Լիտվայի աշխատավոր ժողովրդի դործի համար պայքարող չարքային մարտիկ, ինձ մեծ յերջանկություն է վիճակվել հայտարարելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին, վոր լիտվական աշխատավոր ժողովրդի յերկարամյա լուձերը, նրա լավագույն զավակների ծանր, համառ պայքարը պսակվեցին տրիումֆալ հաղթությամբ: Բոլոր մարտիկներին այդ պայքարի մեջ վոդեշնչում եր մեկ անուն — այդ անունը բանվոր դասակարդի պայքարի սիմվոլն է ու դրոշը, ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդի ու ապավենի անունն է, մեծ խորհրդային Միության ժողովուրդների առաջնորդի, Լենինի դործը չարունակողի անունը — Ստալինի անունը: (Բ ո լ ո ր դ ե պ ո ւ տ ա տ ն ե ր ը վ ո տ ք ի յ են կ ա ն գ ն ու մ և ջ ե ր մ ո վ ա ց ի ա յ ի յ են ս ա ր ք ու մ է պ ա տ իվ ընկ ե ր Ս տ ա լ ի ն ի: Դ ա հ լ ի ճ ու մ լ սվ ու մ են «ուռա» բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր:) Այդ անունը մի թանկագին թալիսման եր, վորը չարքային մարտիկներին դարձնում եր հսկաներ: Ստալինի անունը սրտում դեպի իր պանծալի հաղթանակներն եր գնում բանվորա-գյուղացիական կարմիր բանակը քաղաքացիական պատերազմի տարիներին, Ստալինի անունով խորտակվեց տխրահռչակ Մաններ հայմի գիծը, վորը վոչ միայն ֆինական սպիտակ-դվարդիականության — բալթիկ ծովի ափերին իմպերիալիստական հակախորհրդային քաղաքականության այդ վերջին լակեյի ու կամակատարի, այլև բալթիական բոլոր յերկրների ամբողջ վոճրադործ ու ղաղիր սպիտակդվարդիականության վերջին հույսն եր: Ստալինի անունով՝ կարմիր բանակը յեկավ Լիտվա, Խորհրդային Միության չահերը պաշտպանելու սմետոնյան բանդայի դավաճանական դավադրությունից, վորի նպատակն եր վիժեցնել 1939 թվի հոկտեմբերի 10-ին կնքված փոխադարձ ողնության պայմանագիրը: Ստալինի անունով՝ կարմիր բանակը պատկառելի աջակցություն ցույց տվեց լիտվական ժողովրդի այն պահանջներին, վոր նա ներկայացնում եր պլուտոկրատական, ուղուրպատորական ռեժիմին: Լիտվական ժողովրդի կյանքի ամենադժվար մոմենտներին Խորհրդային Միության որինակը վոդե-

ընդել է լիտվական ժողովրդի պայքարն ընդդեմ կեղեքիչների։ Վ. Մ. Մոլոտովի գլխավորած Խորհրդային կառավարության հետաքաղաքականությունը, որի ղեկավարողն է ընկեր Ստալինը, պահպանեց ՌՍՖՍՀ ժողովուրդների մեծ ընտանիքի խաղաղությունն ու հանդարտությունը, աղատություն բերեց Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդներին, խաղաղություն և աղատություն բերեց բալթիական ժողովուրդներին, այդ թվում նաև լիտվական ժողովրդին՝ բելոռուսական ժողովրդի պատմական բարեկամին ու հարեվանին, ցարիզմի դեմ նախկին Ռուսաստանի կայսրության ժողովուրդների մղած ընդհանուր պայքարի մասնակցին։ Այժմ միանգամայն պարզ է, որ բալթիական պետությունների նախկին կառավարողները, ինչպես այդ յերևաց ֆինանսական սպիտակգվարդիականության որինակից, Լիտվայի, Լատվիայի ու Եստոնիայի նախկին կառավարությունների դավաճանական քաղաքականության որինակներից, հաճույքով կատարեցին յերեց տերիտորիաներն իրենց պլացդարմ և ժողովուրդներին կներդրավեցին իմպերիալիստական սպանդի մեջ։ Բայց այդ բանն այլևս չի լինի յերբեք։ Լիտվական ժողովուրդը, որը միահամուռ կերպով արտահայտվեց Խորհրդային Լիտվա ստեղծելու ոգին, մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնելու ոգին, հավիտյան դադարել է միջազգային իմպերիալիզմի ձեռքին խաղալիք լինելուց։ Նա արագորեն անցնում է նոր, խորհրդային կյանքի ռելսերի վրա, նա կլինի և՛ իր սոցիալիստական հայրենիքի, և՛ բոլոր ժողովուրդների ընդհանուր հայրենիքի՝ հզոր Խորհրդային Միության հավատարիմ ու դիտակից պաշտպանը։

Լիտվական ժողովուրդը անքուն էր բարչչինայի ծանր ճնշման տակ։ Լեհական և լեհացած կալվածատերերը, հոգեվորականությունը խեղդում էին լիտվական ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրա լեզուն հալածվում էր, մնում էր միայն վորպես ծառաների լեզու։ Միայն ընկճված, կիսաքաղց, աղքատ գյուղացիությունն իր խրճիթների ծղոտապատ կուրների տակ պահպանեց լիտվական լեզուն, որը թվում էր մահվան դատապարտված։ Ցարիզմը հանձին դահիճ Մուրավյովների և նրանց նմանների, ել ավելի ուժեղացրեց հալածանքները լիտվական լեզվի դեմ, իսկ դրա հետևանքն այն յեղավ, որ լիտվական ժողովուրդը 40 տարվա ընթացքում — մինչև 1904 թիվը — մնացել էր առանց վորևե գիր ու գրականության, բացառությամբ լիտվական հազվադեպ բրոշյուրների ու թերթերի, որոնք մեծ դժվարությամբ, գաղտնի կերպով բերվում էին արտասահմանից։ Այս բոլորը ծանր

հինք եր դրել մեր ժողովրդի բախտի վրա։ Լիտվական ժողովրդի առաջավոր մասը բարձրացրեց աղատության համար պայքարելու դրոշը և այդ պայքարն ընթանում եր Լիտվան կալվածատերերի, խավարամոլների ու կապիտալիստական չահագործողների լծից աղատագրելու լոզունգով՝ հանուն այն բանի, որ Լիտվան իրավունք ունենար ինքնորոշելու իր բախտը, հանուն ազատ Լիտվայի ֆեդերացիայի՝ նախկին ցարական Ռուսաստանի ազատ ժողովուրդների հետ, որոնք 1917 թվին ստեղծեցին բանվորա-գյուղացիական խորհրդային հանրապետություն։

Այդ կամքի արտահայտությունը հանդիսացավ Խորհրդային Լիտվայի ստեղծումը 1918 թվի դեկտեմբերին, իսկ ապա 1919 թվի վերջերին Լիտվական-Բելոռուսական Խորհրդային հանրապետության ստեղծումը, որը գլխավորում եր աշխատավոր ժողովրդի դործի համար պայքարող կայուն մարտիկ Վ. Կապսուկաս-Միցկեվիչուսը։ Բայց լիտվական ռեակցիայի ուժերը, մենշևիկների՝ սոցիալ-դավաճանների հետ միավորված, ոգտագործելով դանազան իմպերիալիստական ինտերվենտների ոգնությունը, խեղդեցին յերիտասարդ խորհրդային հանրապետությունը։ Սակայն պայքարի դրոշը չարունակում եր կրել Լիտվայի կոմունիստական կուսակցությունը, չնայած ամենադաժան տեռորին ու հետապնդումներին։

Այդ ժամանակաշրջանում մեծ նշանակություն ստացավ կոմունիստական հոգեվորականության իշխանությունը, որի գլխավոր խնդիրն էր՝ լիտվական ժողովրդին պահել միջնադարյան խավարամոլության ճիրաններում, Լիտվան դարձնել վատիկանի հզոր դաղութը։ 1926 թվի ընտրությունների ժամանակ կղերականության ուժեղ հարված ստացավ։ Այսպես կոչված ժողովրդական-ները և մինչևիկները դաչինք կնքեցին նացիոնալիստների (ատաուտինինկների) վոչ-մեծ խմբի հետ և իրենց ձայներով ոգնեցին սեյմի մեջ նրա յերեք ներկայացուցիչների մտնելուն՝ Սմետոնայի գլխավորությամբ։ Սմետոնան ոգտվելով կղերականների ոգնությունից և հենվելով կալվածատիրական ու սպայական ռեակցիոն վերնախավի վրա, գլխավորեց հեղաշրջում կատարեց, տապալելով լատուդինինկներին և սոցիալ-դեմոկրատներին։ Թե ինչպիսի «իդեոլոգիական» հիմքեր ուներ այդ գլխավորական հեղաշրջումը, յերևում է թեկուզ այսպիսի մի որինակից։ Հեղաշրջումը գլխավորող մայորը՝ սպայական ռեակցիոն կլիկայի ներկայացուցիչ Պլեխավիչուսը հոդագործության մինիստրի պոստի թեկնածու Ալեկսային հայտարարել եր. «Յեթե ինձ կտաս մի կալվածք և ջրաղաց, ապա կլինես մինիստր»։ Ալեկսան դարձավ

մինիստր, իսկ Պլեխանովիչուսը, այդ արյունարբու դահիճը, վոր ինքնագլուխ կերպով դնդակահարում եր վո՛չ միայն կոմունիստներին, այլև կոմունիստներին համակրելու մեջ մեղադրվող յուրաքանչյուրին, ստացավ կալվածք, յեկամտաբեր մի ջրաղաց, ելեկտրակայան, իսկ հետագայում Սմետոնայից ստացավ նաև ամսական 1800 լիտա կենսաթոշակ: Սա արդեն ցույց է տալիս այդ հեղաշրջման վոգին, հեղաշրջում, վորի առաջին քայլերից մեկը յեղավ չորս կոմունիստների դնդակահարությունը, այնուհետև՝ անթիվ դնդակահարություններ, ռազմա-դաշտային, զինվորական ու այլ դատարանների դատավճիռներ, իսկ սմետոնյան արդարադատությունը մարտիկներին հաղարներով դգում եր բանտերն ու համակենտրոնացման ճամբարները: Սմետոնյան իշխանությունը դաժանորեն դատաստան եր տեսնում ժողովրդական բողոքի ամենափոքր արտահայտությունների նկատմամբ: Սմետոնան ժողովրդին խաբեց և հաստատեց իր անձնական դիկտատուրան: Դա բացահայտ համայականության ու բռնության դիկտատուրա յեր: Սմետոնյան դիկտատուրայի ռեժիմը, իհարկե, ինքնուրույն չեր, այն պարզապես պատճենն եր նեխած ու քայքայված պանական Լեհաստանի իրավազրկության ռեժիմի:

Սմետոնյան ռեժիմի անկյունաքարերից մեկն եր կալվածատիրական հողատիրության ամրապնդումը: Հողային ռեֆորմի որենքի փոփոխումով Սմետոնան ավելացրեց կալվածատիրական կալվածքների նորման 80-ից հասցնելով մինչև 150 հեկտարի, իսկ փաստորեն «որինակելի» տնտեսությունների անվան տակ կային նաև 400—500 հեկտար ու ավելի տարածություն զրավող կալվածքներ: Կալվածատերերը միշտ վարկ եյին ստանում և պաշտպանություն եյին գտնում, նրանց վնասներն ամենուրեք բացատրվում եյին Սմետոնայի կամ նրա կալվածատիրուհի կնոջ անձնական մինչնորդությամբ: Միևնույն ժամանակ մանր գյուղացիությունը անքամ եր հարկերի ու պարտքերի ծանրության տակ, հսկայական թվով գյուղացիական տնտեսություններ աճուրդով վաճառվեցին, իսկ այդ տնտեսությունների տեր գյուղացիները ցիր ու ցան յեղան աշխարհով մեկ: Կալվածատերերին մեծ չափաղանցությամբ վարձատրություն եր վճարվում խլված հողի համար, նրանց թույլատրվում եր կորել անտառը, իսկ չքավոր գյուղացիությունը մի չոփ եղ չեր կարող ստանալ իր կարիքների համար: Դժվար է պատկերացնել թե վորքան մեծ և միահամուռ եր գյուղացիության աոելությունը դեպի Սմետոնայի ռեժիմը, մանավանդ տնտեսական այն ծանր ճգնաժամից հետո, վորը խոր, դժվարությամբ հարթվող հետքեր է թողել լիտվական գյուղի

կյանքում: Ավելի լավ չեր բանվորների դրությունը, վորոնք չունեյին քաղաքական իրավունքներ. բոլոր պրոֆմիությունները վակվածք եյին, իսկ աշխատանքի պալատի ընտրությունները կատարվում եյին այնպես, վոր թեկնածուները նշանակվում եյին ոխրանկալի կողմից: Բանվորներն այդ ընտրությունները բոյկոտի եյին ենթարկում և դրանց մասնակցում եր միայն մի աննշան տոկոս: Սմետոնյան հիվանդանոցային դրամարկղների ընտրություններին մասնակցում եր ընտրողների միայն 3 %-ը: Շահագործումն ամենալկտ չափերի յեր հասնում, կալիտալիստների համայականությունն անսահման եր ինչպես խոշոր, այնպես և մանր ձեռնարկություններում:

Սմետոնյան «հողատարությունը» ժողովրդի կուլտուրայի մասին արտահայտվում եր ամեն տեսակ խոչընդոտների մեջ, վորոնք հարուցվում եյին աշխատավորներին՝ նրանց դպրոց ընդունելու հարցում, իսկ ընդհանուր տարրական կրթությունը փաստորեն դոյություն ուներ թղթի վրա, վորովհետև չկային վո՛չ բավարար թվով ուսուցիչներ, վո՛չ չենքեր, վո՛չ էլ հնարավորություններ բնակչության ամենաչքավոր խավերի համար՝ իրենց յերեխաներին ուղարկելու դպրոց: Դպրոցականների մեծամասնությունը, մանավանդ դյուղում, բավականանում եր միայն մեկ յերկու ձմռան ընթացքում տարրական դպրոց հաճախելով:

Բոլոր պրոգրեսիվ և կուլտուրական ընկերությունները վակվածք եյին, չկար վորևե հողատարության հասակավորների ինքնակրթության մասին: Թեև վիճակագրությունը ցույց եր տալիս դրության մեծ տոկոս, բայց դա նույնպես դոյություն ուներ միայն թղթի վրա, վորովհետև դրագետ համարվում եր նա, ով միայն կարողանում եր ստորագրել: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեֆորմները կերտվում եյին Պոթեմկինոսցեվի ռեֆորմների վոգով: Բանի վոր յեկեղեցին Սմետոնայի ռեժիմի ֆորմների վոգով: Բանի վոր յեկեղեցին Սմետոնայի ռեժիմի սյուներից մեկն եր, դպրոցը մեծ կախման մեջ եր գտնվում հոգեվորականությունից: Մամուլի և դրականության ասպարիզում մոլեգնում եր սևհարյուրականի դրաքննությունը:

Սմետոնայի ռեժիմը մի կատարյալ մղձավանջ եր լիտվական ժողովրդի համար և մի ահագին արդելակ նրա զարգացման դործում: Ուստի, լիտվական ժողովուրդն այդ բոլոր տարիների ընթացքում բազմիցս հանդես է յեկել ատելի ռեժիմը տապալելու համար և այժմ հասավ ցանկացած հաղթանակին:

Բուրժուական Լիտվայում չատ եր դրվում և խոսվում այսպես կոչված՝ Լիտվական պետության անկախության մասին: Սակայն այդ անկախությունը միայն իլյուզիա յեր: Իր դոյության ամ-

քողջ ժամանակ Լիտվան խաղալիք է եղել իմպերիալիստական տերությունների ձեռքում: Վիլնոյի հարցում վո՛չ Ազգերի լիգայում, վո՛չ էլ դաշնակիցների կողմից Լիտվան չդատավ իր օրինական շահերի պաշտպանությունը: Դա այդպես եր Լիտվայի բուրժուական կառավարող կլիկայի արտաքին քաղաքականության նաև մյուս բոլոր հարցերում: Միայն Խորհրդային Միությունն եր անշեղորեն աջակցում Լիտվային և ոգնում նրան:

Ցեղբայրական կարմիր բանակի աջակցությամբ 1919 թվին Վիլնոն դարձավ Խորհրդային Լիտվայի մայրաքաղաքը: 1920 թվին, լեհերի չախչախումից հետո, Խորհրդային Միությունը խաղաղության պայմանագրի հիման վրա Վիլնոն հանձնեց Լիտվային: 1939 թվին Խորհրդային Միությունը վո՛չ միայն Լիտվային հանձնեց Վիլնո քաղաքն ու Վիլնոյի մարզը, այլև փոխադարձ ոգնության պայմանագրի կնքմամբ լիտվական ժողովրդին ազատեց նոր պատերազմի վտանգից: Այդ բոլորին բուրժուական Լիտվան պատասխանում եր պրովոկացիաներով Խորհրդային Միության հասցեին, և մինչև վերջին մոմենտը դեռ ադասում եր մնալ վորպես միջազգային իմպերիալիզմի թաղին, այլ վոչ թե ընթանալ աղնիվ համագործակցության ուղիղ ճանապարհով, վոր առաջարկում եր ՍՍՀՄ կառավարությունը: Ստանալով Վիլնոն, բուրժուական Լիտվան լեհական շովինիզմի փոխարեն այնտեղ մտցրեց նույնպիսի լիտվական շովինիզմ, վորից սարսափով չերես դարձրեց Վիլնոյի մարզի բազմազգ բնակչությունը: Բուրժուական Լիտվան քանտ եր ազգային փոքրամասնությունների աշխատավոր խավերի համար, իսկ միևնույն ժամանակ նրա կառավարողները համերաշխորեն սերտաճում եյին այդ ազգությունների կալվածատերերի ու կապիտալիստների հետ:

Այն մասին, թե լիտվական ժողովուրդն ինչպես դնահատեց Լիտվայի սմետոնյան կառավարող չրջանների վարած՝ ժողովրդին թշնամի վողջ քաղաքականությունը, պարզ վկայում են Լիտվական Ժողովրդական Սեյմի այս տարվա հուլիսի 14–ին և 15–ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքները: Ցերբեք չեր եղել այնպիսի ժողովրդական միասնություն, ինչպես այդ ընտրությունների ժամանակ: Չնայած ժողովրդի թշնամիների վոտնձգություններին ու քչփչոցին, ընտրություններին մասնակցեց ընտրողների 95,51%–ը, վորից 99,19%–ը քվեարկեց Լիտվայի Աշխատավոր Ժողովրդի միության թեկնածուների ոգտին:

Համեմատության համար կարելի յե հիշատակել, վոր սմետոնյան սեյմի անցյալ ընտրությունների ժամանակ ընտրություններին վիստորեն մասնակցում եր քվեարկելու իրավունք

ունեցողների միայն մոտավորապես 38%–ը: Իսկ այդ իրավունքն ընտրական նոր որենքով ընդարձակվեց՝ ընտրական իրավունք տալով քաղաքացիներին 21 տարեկանից սկսած, մինչդեռ Սմետոնայի որով քաղաքացիներն ընտրել կարող եյին միայն 24 տարեկանից սկսած, իսկ ընտրվել կարող եյին միմիայն 30 տարեկանից: Նախորդ սեյմում չկար վո՛չ մի բանվոր, դյուղացի և դինվոր, դիտության ու արվեստի վո՛չ մի ներկայացուցիչ, աղդային փոքրամասնությունների վո՛չ մի ներկայացուցիչ, վո՛չ մի կին: Այդ սեյմում կային միայն մեծ ու փոքր կալվածատերեր, չինովնիկներ և 4 քահանա: Իսկ Ժողովրդական Սեյմում մենք նրա 79 անդամների մեջ տեսնում ենք՝ 21 բանվոր, 26 դյուղացի, դիտության, արվեստի և աշխատավոր ինտելիգենցիայի 27 ներկայացուցիչ, մեկ արհեստավոր, մեկ բատրակ, Լիտվական Ժողովրդական բանակի 3 դինվոր, 8 կին:

Ժողովրդական Սեյմն իր կողմում ունենալով ժողովրդի այդպիսի չտեսնված մեծամասնություն և այդպիսի վստահություն, վորն արտահայտվեց աշխատավորների անթիվ ժողովներում ու միտինգներում,—ժողովրդական ժողովի իրավունքներով ընդունեց վորոշումներ, վորոնք Լիտվական ժողովրդի ամբողջ կյանքն ուղղում են նոր ուղիով, ժողովրդի չահերին ու իղձերին համապատասխան:

Ժողովրդական Սեյմը միաձայն վորոշում ընդունեց Լիտվան խորհրդային սոցիալիստական հանրապետություն հռչակելու մասին: Նույնպես միաձայն ընդունվեց և ժողովրդական համընդհանուր ցնծությամբ հավանության արժանացավ Ժողովրդական Սեյմի յերկրորդ վորոշումը—Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնելու դեկլարացիան: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:) Այդ վորոշման հիման վրա էլ հենց, Ժողովրդական Սեյմի լիազոր պատվիրակությունը ներկայացել է ՍՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ Լիտվան ՍՍՀ Միության մեջ ընդունելու միջնորդությամբ:

Թույլ տվեք կարդալ Լիտվական Ժողովրդական Սեյմի այդ պատմական վորոշումը:

«Լիտվական ժողովուրդը, վորն անդադրաբար կեղեքվում եր չահագործողների կողմից, յենթարկվում եր կողոպտուի և բռնության, դատապարտված եր աղքատության ու մահացման, Լիտվայում հաստատել է պետական նոր կարգեր, կարգեր, վորոնց պայմաններում յերկրի լիիչխան տերն է ժողովուրդն ինքը:

Այդ կարգերը՝ խորհրդային են: Լիտվան վերակազմվել է խորհրդային սոցիալիստական հանրապետության:

Լիտվական բանվորները, աշխատավոր ինտելիգենցիան յերկար տարիներ տառապում էին դործազրկությունից, ապրում էին կարիքի ու իրավազրկության ճիրաններում:

Լիտվական դյուղացիությունը խեղդվում էր հողազրկությունից ու սակավահողությունից, քանի վոր հողի մեծ մասը զավթել էին կալվածատերերն ու այլ խոշոր հողատերերը:

Հին Լիտվայում լավ էին ապրում միայն չհադործողները՝ ձեռնարկատերերը, ֆաբրիկատերերը, բանկիրները, կալվածատերերը, բարձրաստիճան չինովնիկները, վորոնք վիթխարի չահույթների ու յեկամուտների հետևից վազելով ստրկացնում էին Լիտվայի աշխատավորներին: Սմետոնյան ծախու կառավարողները Լիտվայում արմատավորում էին ոտարերկրյա կապիտալը, վորն անկուշտ կողոպտում էր, դիշատիչ ճիրաններով պատառոտում և հոշոտում էր լիտվական ժողովրդի մարմինը: Ավելի ու ավելի յեր աճում Լիտվայի տնտեսական ու քաղաքական կախումն իմպերիալիստական դիշատիչներից, ոտարերկրյա կապիտալիստներից ու բանկիրներից:

Այժմ ժողովուրդը հզոր կարմիր բանակի ոդնությամբ թոթափեց սմետոնյան կեղեքիչների լուծը և իր պետության մեջ հաստատեց խորհրդային իշխանություն: Գոյություն ունեցող խորհրդային սոցիալիստական հանրապետությունները հանդիսանում են վոչ թե առանձնացած, միմյանցից կտրված պետություններ, այլ կազմում են անխզելի միություն: Նրանք մտնում են կամավոր միավորման հիման վրա կազմված իրավահավասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ: Կյանքը ցույց տվեց, վոր խորհրդային հանրապետությունների համագործակցությունը նրանց հասցրել է չտեսնված ծաղկման, նրանց եկոնոմիկայի և կուլտուրայի բուռն վերելքին: Պատմականորեն կարճ ժամանակամիջոցում նրանք դարձան քաղաքական, տնտեսական և կուլտուրական տեսակետից առաջավոր հանրապետություններ: Առանձին վերցրած մի հանրապետություն յերբեք չեր կարողանա հասնել դրան:

Կյանքը ցույց տվեց, վոր միայն միավորված խորհրդային հանրապետությունները կարող են դիմադրել իմպերիալիստական տերությունների պայքարին, վոր մղվում է փոքր աղդությունները իրենց յենթարկելու և հպատակեցնելու համար: Առանց Խորհրդային Հանրապետությունների պետական Միության, առանց նրանց համախմբմանը՝ ...կազմելով միասնական ռազմա-

տնտեսական ուժ, անհնարին կլիներ դիմադրել համաչխարհային կապիտալիզմի միացյալ ուժերին՝ վոչ ռազմական, վոչ էլ տնտեսական ճակատում:

Լիտվական ժողովուրդը դիտե, վոր Խորհրդային Միությունը բոլոր տարիների ընթացքում ամենաբարեկամական քաղաքականություն է վարել իր վերաբերմամբ: Թեթե Լիտվան չնվաճվեց պանական Լեհաստանի կողմից, յեթե Լիտվային և վերադարձված նրա հնադարյան մայրաքաղաքը՝ Վիլնո քաղաքը, յեթե Լիտվան ղերծ և մնացել պատերազմի մոլեգնող հրդեհից, յեթե լիտվական ժողովուրդը թոթափել է կալվածատերերի ու կապիտալիստների լուծը և հնարավորություն է ստացել իր յերկրում հաստատելու միակ արդարացի պետական կարգերը՝ խորհրդային իշխանություն, ապա այդ բոլորը չնորհիվ Խորհրդային Միության: Ահա՛ թե ինչու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետ սերտ մերձեցման մեջ լիտվական ժողովուրդը միշտ տեսել է իր լավագույն ապագան:

Լիտվայի նախկին կառավարողների վոճրագործ ռեակցիոն կլիկան բոլոր միջոցներով խոչընդոտե հանդիսացել ԽՍՀՄ և Լիտվայի յեղբայրական մերձեցմանը, բոլոր միջոցներով ձգտել է խանգարել ԽՍՀՄ և Լիտվայի միջև ամուր, անխորտակելի դաշինքի հաստատումը:

Այժմ լիտվական ժողովուրդը, վորը վերջ է դրել ճնշմանն ու իրավազրկությանը և հաստատել է պետական ու հասարակական նոր կարգեր, պետք է որենազրականորեն հաստատի Լիտվական հանրապետության ամուր դաշինքն ու բարեկամությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետ:

Լիտվայի ժողովրդական Սեյմը հավատացած է, վոր միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելը կապահովի Լիտվական պետության իսկական սուվերենիտետը, նրա արդյունաբերության և դյուղատնտեսության իսկական վերելքը, ազդային կուլտուրայի իսկական ծաղկումը, ժողովրդի նյութական և հոգևոր ուժերի իսկական զարգացումը:

Հետևելով ժողովրդի կամքին, ժողովուրդ, վորը տապալել է կեղեքման ու իրավազրկության հին ռեժիմը, մարդու կողմից մարդուն չհադործելու ռեժիմը,—ժողովրդական Սեյմը վորոշում է.

Ընդրել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին, Լիտվական Խորհրդային Սո-

ցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Միության կազմի մեջ՝ որպես միութենական հանրապետություն նույն այն հիմունքներով, ինչպես որ ՍՍՀՄ-ի կազմի մեջ են մտնում Ուկրաինական, Բելոռուսական և մյուս միութենական հանրապետությունները:

Կեցցե՛ Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Կեցցե՛ մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը»: (Բուռն ծափահարություններ:)

Լիտվայի Ժողովրդական Սեյմի լիազոր պատվիրակության անունից հանձնում եմ դեկլարացիան: (Ցերկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:) Այս դեկլարացիան մարմնավորում է Լիտվայի աշխատավոր ժողովրդի լավագույն հույսերի ու իղձերի և արտահայտում է նրա անհողդողդ կամքը՝ մեծ Խորհրդային Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում ստեղծելու նոր, յերջանիկ կյանք:

Անցնելով Խորհրդային Լիտվայի ստեղծման կոնկրետ խնդիրներին, Ժողովրդական Սեյմը հողային հարցի մասին ընդունած իր պատմական վորոշումով Լիտվայի ամբողջ հողը՝ նրա ընդերքով, բոլոր անտառներն ու ջրերը հայտարարեց ժողովրդական ունեցվածք, այսինքն՝ պետական սեփականություն: Ժողովրդական Սեյմը դյուղացիական տնտեսությունների համար իբրև առավելագույն նորմա ընդունեց 30 հեկտար, դրանով իսկ վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելով կալվածատիրական հողատիրությունը: Այդ նորմայից ավելի յեղած հողային տարածության ավելցուկները կվերածվեն պետական հողային ֆոնդի, հողազուրկ և սակավահող դյուղացիներին հող ձեռք բերելու գործում ոգնություն ցույց տալու համար:

Ժողովրդական Սեյմը վորոշում ընդունեց դյուղացիների վրայից բոլոր վերկավճարները, պարտքերն ու վարչական կարգով դրված տուգանքները վերացնելու, ինչպես նաև հարկային ծանրության ու պարտքային պարտավորությունները թեթևացնելու մասին:

Նաև վորոշում ե ընդունվել բանկերն ու խոշոր արդյունաբերության աղգայնացնելու մասին:

Այս պատմական վորոշումները հսկայական խանդավառությամբ դիմավորվեցին Լիտվայի ինչպես քաղաքի, այնպես և դյուղի բոլոր աշխատավորների կողմից:

Մենք, Լիտվական Ժողովրդական Սեյմի լիազոր պատվիրակներս, Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բոլոր աշխատավորների անունից խնդրում ենք Լիտվան ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ՝ միութենական հանրապետության իրավունքներով: Ամբողջ Լիտվան անհամբեր սպասում է Գերագույն Խորհրդի այդ պատմական վորոշմանը: Մեր կողմից մենք խոստանում ենք արժանի լինել այդ պատվին և ամբողջ յեռանդով միանալ սոցիալիստական շինարարության մեծ աշխատանքին, ՍՍՀՄ ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի ընթանալ մեր մեծ հայրենիքի հզորության ու պաշտպանունակության ամրապնդելու գործում:

Կեցցե՛ ժողովուրդների ստալինյան բարեկամությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ազատագրված ժողովուրդը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ ՍՍՀՄ Կառավարությունը և նրա ղեկավար Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ լմաստուն առաջնորդ, աշխատավոր մարդկության պայքարի ու հաղթանակների վոգեշնչող, մեր բարեկամ ու ազատարար — մեծ Ստալինը: (Փոթորկալի ծափահարություններ: Բուռն ովացիա ի պատիվ ընկեր Ստալինի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «ուռա»:)

Նախագահող: Ինդրում եմ Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամներին տեղ դրավել Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում: (Բոլորը վոտքի յեն կանգնում և ջերմ ովացիա սարքում Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամներին: Դահլիճում լսվում են վոշնչությունի բացականչություններ աղգային լեզուներով: Լիազոր Հանձնաժողովի անդամները տեղ են գրավում ՍՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում:)

Անցնում ենք Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության քննարկմանը: Խոսքը տրվում է Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Պետրաուսկասին: (Ծերկատաև ծափահարություններ:)

Պ. Պետրաուսկաս (Լիտվական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ, դյուղացի): Խոսում է լիտվերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ա. Սնեչկուսը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Միջակ, սակավահող և հողազուրկ դյուղացի իմ հեղբայրները, որոնք կապիտալիզմի ճնշումից ազատագրված Լիտվայի առաջին Ժողովրդական Սեյմում ինձ ընտրել են որպես իրենց դեպուտատ, իմ շուրթերով բոցավառ վողջույն են ուղարկել մեր մեծ ազատարար, բարեկամ, ուսուցիչ և առաջնորդ ընկեր Ստալինին (ծերկատաև ծափահարություններ), ինչպես և մեղ ազատություն բերող անպարտելի կարմիր Բանակին: (Ծափահարություններ:) Ծեղբայրական վողջույն և ձեղ բոլորիդ, Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: (Ծափահարություններ:)

Մեր կողմից տնպալվածք, ամբողջ աշխատավոր ժողովրդի համար ատելի բուրժուական կառավարությունը սիրում եր պարծենալ մեր առջև, որ աշխարհում ուրիշ վոչ վոք այնպես չի հոգում իր յերկրի քաղաքացիների մասին, ինչպես ինքը մեր, դյուղացիների մասին: Իբր թե նա ամեն տարի մեզ պետական գանձարանից հսկայական գումարներ ե վճարում թե անասուններ բազմացնելու և թե կաթնատնտեսության համար, և դա անում ե այն պատճառով, որ պաշտպանում ե մեր շահերը և լիտվական յուրաքանչյուր քաղաքացու «սրբազան սեփականությունը»: Դրա հետ միասին մեղ անպայման մատնանշում եյին, թե իբր դյուղացիներն ու ամբողջ աշխատավոր ժողովուրդը վատ ե ապրում Խորհրդային Միության մեջ, որտեղ չկա վոչ մի սեփականություն, որտեղ ամեն ինչ կոլեկտիվացված ե:

Այո՛, մենք դիտենք, որ մեր ժողովրդի կողմից տապալված կապիտալիստական կառավարությունը պաշտպանում եր սեփականությունը, բայց վո՛չ մեր, այլ միայն իր սեփականությունը: Առանձնապես դա մեղ համար պարզ դարձավ, յերբ ժողովրդի այդ ամենավոխերիմ թշնամիների ու պարազիտների կլիկան, վախենալով իր դործերում հաչիվ տալուց, պոչն իրեն քաշած ծածուկ փախավ արտասահման: Այդ կլիկան փախավ թանկարժեք իրերով ու ոտարերկրյա վալյուտայով լեցուն ճամբրուկներով: Նրանց կողոպտած և մեր արյուն քրտինքով վաստակած այդ սեփականությունը նրանք պաշտպանում եյին բոլոր միջոցներով: Իսկ մենք, աշխատավոր դյուղացիներս, և մեր աշխատավորական կյանքը նրանց, կապիտալիստներին հետաքրքրում եյին միայն այն չափով, վոր չափով նրանք մեղանից, ինչպես կթի կովից, կարող եյին կորզել վարկատոմսեր, վորպեսզի իրենց համար կառուցեն չքեղ պալատներ ու դնեն յեկամտաբեր կալվածքներ մեր յերկրում ու դրկական՝ արտասահմանում:

Ծես ինքս, ընկեր դեպուտատներ, սակավահող դյուղացի յեմ: Իմ ընտանիքը բաղկացած ե 10 հոգուց: Ամբողջ տարին մենք բոլորս, յեղան նման, աշխատում ենք վաղ առավոտից մինչև ուշ յերեկո: Վորպեսզի թեկուզ մի կերպ ընտանիքս կերակրեմ, յես փորձեցի բոլոր հնարավորը իմ տնտեսությունը բարձրացնելու համար:

Կառավարությունն ու նրա դործակալները ամեն տարի ինձ համոզում եյին, վոր յես իմ ընտանիքով դոյությունս պահպանում եմ միայն շնորհիվ կառավարության աջակցության, վոր կառավարությունը շատ լավ ե վճարում մեղանից դնած անասունի ու կաթի համար: Սակայն իրականում միանդամայն այլ կերպ եր: Թեև յես սովորական, կինակիրթ դյուղացի յեմ, բայց և իմ սեփական խելքով ել կարող եյի շատ չուտ ըմբռնել այդ պարծենկոտության ամբողջ լկտիությունն ու կեղծիքը: Մեղ մոտ, Լիտվայում, շատ դյուղացիներ հատկապես գերացնում եյին խոզեր՝ Անգլիայում վաճառելու համար: Այդ խոզերին մեղ մոտ, անգլիացիների նման, անվանում են բեկոններ: Այդ խոզերը մեղանից դնում եյին կառավարական հատուկ դործակալները, վերից սահմանված՝ առաջին, յերկրորդ և յերրորդ կարգի գներով: Սակայն սակավահող դյուղացուն քիչ եր հաջողվում այդպիսի խոզ վաճառել, թեկուզ և նա իր գնով լիովին համապատասխաներ առաջին և յերկրորդ կարգի պահանջներին: Այդ գները վիճակվում եյին կալվածատերերին և այն դյուղացիներին, վորոնք կարողանում եյին քծնել և հաճոյանալ կառավարական դործակալներին: Բայց դա դեռ քիչ ե: Իմ հաչվով վոչ թե կառավարությունն եր լրացուցիչ կերպով վճարում ինձ, այլ յես նրան՝ անգլիական լորդերին ի բարի վայելումն վաճառված իմ ամեն մի դիրացրած խոզի համար լրացուցիչ կերպով վճարելով իմ արյուն քրտինքով վաստակած 44 լիտան:

Հավասարապես, վո՛չ թե կառավարությունը, այլ ես էլ նրան վճարում ամեն տարի նաև իմ յերկրորդ սեփականության՝ կովի համար: 1939 թվի դեկտեմբեր ես կաթ հանձնելով կառավարական կաթհանձնման կետերին, կաթը վաճառելիս վո՛չ միայն չեզի տառնում վորևե լրացուցիչ վճար պետությունից, այլ ինքս լրացուցիչ կերպով վճարում էլ վոչ-քիչ դրամար: Դա առաջանում էր նրանից, վոր կով պահելն ինձ շատ ավելի թանգ էր նստում, քան ես տառնում էլի իմ վաճառած կաթի համար:

Ահա ինչպես ծանր էր մեզ նման միջակ ու սակավահող գյուղացու համար ձեռք բերել վառելափայտ ու շինափայտ կապիտալիստական Լիտվայում: Մեզ մոտ որենք էր հրատարակված, վորի համաձայն չէր կարելի վառելափայտ դնել առանց աճուրդների: Բայց այդ տեսակ աճուրդներ ամսվա ընթացքում լինում էլին միայն 2 որ: Այդ աճուրդներին չորանից դալիս էր թվով 500—700 մարդ: Նրանք ամենքը կամենում էլին տուն տանել թեկուզ մի քիչ վառելափայտ իրենց խրճիթը տաքացնելու, մրսող յերեխաներին և ծերերին տաքացնելու համար, կամ թե տանել շինանյութ խարխուլ խրճիթը վերանորոգելու համար: Բայց ավելի հաճախ սակավահող գյուղացին տուն էր վերադառնում ձեռնունայն: Նրա յերեխաները դարձյալ դողդողում էլին ցրտից, իսկ կինը վո՛չ փայտ ուներ տաքացնելու կերակուրն ընտանիքի համար, վո՛չ էլ կեր՝ անասունների համար: Աճուրդներին վառելափայտ դնելու համար հարկավոր էր ունենալ ավելի շատ դրամ, քան կարող էր ունենալ չքավոր կամ միջակ գյուղացին:

Իսկ նրանք, վորոնք անտառապահներին հյուրասիրում էլին ողիով, կարող էլին վառելափայտ դնել առանց աճուրդների էլ: Իսկ մեր քսենձը, որինակ, ներկա լինելով աճուրդներին, միշտ նստում էր առաջին տեղում, անտառապահի կողքին ու տեսնելով, վոր աճուրդի յե հանվում անտառի ամենալավ տեղամասը, կսկսեր ականջին փսփսալ. «դա ինձ համար դրիր», և դրանից հետո էլ ո՞վ պիտի մտածեր վիճել նրա հետ: Իսկ յեթե հավաքված գյուղացիներից վորևե մեկը դիտողություն աներ անտառապահին, թե նա վարվում է վոչ ըստ որենքների, քսենձն անմիջապես առաջինը ծուռ աչքով կնայեր բողոքողին, իսկ անտառապահը, հոնքերը կիտելով այնպես կդոռար. «Այդ ո՞ւմ խելքին փչեց խախտել այստեղ կարգ ու կանոնը: Կոմունիստի՞: Ուզո՞ւմ ես ծանոթանալ վոստիկանության հետ»: Յեվ գյուղացին ստիպված էր լռել ու բավականանալ ամենալատ անտառամասով կամ թե ձեռնունայն տուն վերադառնալ: Ինքս էլ այդ

պատճառով հինգ տարի շարունակ խրճիթ եմ կառուցում և այնուամենայնիվ չեմ կարողանում ավարտել:

Այդպես ուրեմն, մենք անտառներ էլինք ածեցնում, հանձնում էլինք կետերին, քշում էլինք շատ կիլոմետր տարածության և, վերջիվերջո, լինքներս էլինք այդ ամենի համար լրացուցիչ կերպով վճարում: Յերբեք չունենալով ավելորդ դռոշ, մենք պետք է սնվելինք միայն սև հացով և սախարինախառն ջրով ու յերեսը քաշած կաթով, վորը բավականանում էր միայն փոքր յերեխաներին, այն էլ վո՛չ միշտ և վո՛չ առատորեն:

Այդպիսի կյանքով էլինք ապրում յես ու իմ ընտանիքը և իմ յեղբայր գյուղացիների մեծ մասը, յեթե նրանք չէլին կամենում թուլ տալ, վորպեսզի ժամանակին չմուծած հողային հարկերի կամ ուրիշ պարտքերի համար դատական պրիստավն աճուրդով վաճառի վերջին բարձը, իսկ բարձ չունենալու դեպքում — հենց նաև մի կտոր հողը: Յերբ պարտքերի կամ հարկերի համար հարկավոր էր աճուրդով վաճառել մեր անտեսությունները, մեր «սրբազան» սեփականությունից վո՛չ հետք էր մնում, վո՛չ էլ հոտ: Դրա փոխարեն հողային բանկը հարյուր հազարներ արժեցող կալվածքները նվիրում էր ուղուրպատոր-պրեզիդենտի ընտանիքի անդամներին:

Վորքա՜ն ցատ ցնցող որինակներ դիտեմ յես, յերբ իր հողը հորից ու պապից ժառանգած գյուղացուց դատական պրիստավը խլում էր ամեն ինչ և նրան ամբողջ ընտանիքով վռնդում էր հողից դեպի բաց դաշտ:

Իսկ յեթե չքավոր գյուղացու աշխատավոր կինը կամ յերեխաները հիվանդանում էլին և անհրաժեշտ էր լինում նրանց փոխադրել հեռավոր հիվանդանոց, այդ կարելի յեր անել միայն շատ դրամ ունենալու դեպքում: Առանց դրամի թեկուզ և մեռի՛ր: Յես ինքս մի անգամ տեսել եմ, ինչպես մի չքավոր գյուղացի մեր գավառային հիվանդանոցն էր բերել իր կիսամեռ կնոջը: Դուրս է գալիս ավագ բժիշկը և հարցնում.

— Հոգ ունե՞ս:

— Ջունեմ, — պատասխանում է կիսկիսորը:

— Իսկ վոլոստից վկայական ունե՞ս, վոր կվճարեն բժշկության համար:

— Վո՛չ, — պատասխանում է գյուղացին:

— Դե, ինչու՞ յես յեկել, — վերադարձիր:

Հազիվ թե աղքատ գյուղացին կենդանի տուն հասցներ հիվանդ կնոջը: Այնքան արդեն այդ թշվառ կինը տնքում էր և տանջված էր:

Կասեմ դարձյալ, վոր հաղվագյուտ սակավահոդ և հոդազուրկ դյուղացու յեր հաջողվում իր վորդուն տարրական դպրոցից բարձր կրթություն տալ: Գյուղական չքավորությանը վո՛չ միայն մոտ չեյին թողնում դիտության, այլ, ընդհակառակը, նրան չարունակ մատնանշում եյին, թե դիտուններ առանց այն էլ շատ վաղանց չատ կան և թե նրանք, ուղարկելով իրենց յերեխաներին դպրոցները, յերկրին ավելի չատ մուրացկաններ և անպետք մարդիկ կատն միայն:

Կարող եք յերևակայել, Գերագույն Խորհրդի ընկեր դեպուտատները, թե ինչպես քաղցր եր մեր կյանքը, լիտվական միջակ, սակավահող գյուղացիների, առավել ևս հոդազուրկ գյուղացիների կյանքը: Բայց մենք դիտենք, վոր այժմ մեր, արդեն խորհրդային սոցիալիստական հանրապետության մեջ կսկսվեն նոր, պայծառ օրեր: Մյուս խորհրդային միութենական հանրապետությունների որինակը մեզ էլ կսովորեցնի, թե ինչպես և հարկավոր ապրել:

Մենք գիտենք, վոր մեր լավագույն կյանքը կսկսվի այն որից, յերբ մեր հանրապետությունը կկանգնի յեղբայրական Բելոռուսիայի, Ուկրաինայի, Վրաստանի և մյուս միութենական հանրապետությունների հետ կողք-կողքի: Ձես ուրախանում եմ իմ հայրենիքի համար և Լատվիայի ու Եստոնիայի յեղբայրական խորհրդային հանրապետությունների համար, վորոնց հավասարապես ճնշում եյին իրենց կապիտալիստական կառավարությունները և վորոնք մեզ հետ միաժամանակ, նույն քաջարի կարմիր Բանակի աջակցությամբ, թոթափեցին աշխատավոր ժողովրդի համար ատելի լուծը:

Դուք, ընկեր դեպուտատներ, ձեր այսորվա պատմական վորոշումով, չհետաձգելով հետագա ժամանակի, ոդնեցեք մեզ հենց այժմ սկսել այդ նոր կյանքը: Ձես հավատում եմ, վոր դուք մեզ կոդնեք:

Կեցցե՛ մեծ Խորհրդային Միությունը, կապիտալիզմից ստրկացված բոլոր ժողովուրդների նեցուկն ու հույսը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ անպարտելի, փառապանծ, ազատարար կարմիր Բանակը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Միության կառավարությունը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր վաղն ու պարծանքը, մեր աչքի լույսը, խելոքներից խելոքագույնը, առաջնորդ, բարեկամ և հայր — մեծ Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Ովացիա ի պատիվ ընկեր Ստալինի:)

Նախագահող: Ընկեր դեպուտատներ, առաջարկություն և ստացվել ընդմիջում հայտարարել: Առարկություններ չկա՞ն: Չկան:

Հայտարարվում է ընդմիջում 15 րոպեյով:

(Ընդմիջում:)

Նախագահող: Նիստը վերսկսվում է: Խոսքը տրվում է Լիտվական հանրապետության Սեյմի Լիտզոր Հանճնաժողովի անդամ Սալոմեյա Ներիսին: (Բուռն ծափահարություններ:)

Սալոմեյա Ներիս (Լիտվական հանրապետության Սեյմի Լիտզոր Հանճնաժողովի անդամ, պոետեսա): Խոսում է լիտվերեն: Ռուսերեն թարգմանությունը կարդում է պոետ Մ. Զենկևիչը:

Առաջնորդ, ուսուցիչ, բարեկամ, լիտվական ժողովրդի աղատարար մեծ Ստալինին եմ ճոնում իմ բանաստեղծական խոսքը — Ստալինի մասին պոեմից: (Բուռն ծափահարություններ:) Այդ պոեմում արտահայտված են իր յերջանկության ու իր ազատագրման համար յերախտապարտ լիտվական ժողովրդի խոհերն ու ղգացմունքները:

Свободный, словно ветер в поле,
Слагает песни мой народ,
За солнце красное, за волю
Он Сталину спасибо шлет!

Ученье Сталина сияло
Для всех трудящихся земли,
Но из тюремного подвала
Мы солнце видеть не могли...

Нам были все пути заказаны,
И родина была тюрьмой.
И были руки крепко связаны,
И вся страна была немой.

Казалось, воля так близка,
Там, за кордоном, рядом с нами!..
Мы на нее издалека
Смотрели жадными глазами.

Мы знали: там страна героев,
К победам Сталин их ведет,
Народы, жизнь свою построив,
Живут там, как один народ.

Там воля Сталина стальная
Открыла к счастью всем пути,
Там радостная жизнь, иная,
Ужель такой нам не найти?..

Но Сталин к солнцу путь широкий
Открыл для всех земных племен, —
Теперь для нас настали сроки,
И воплотился давний сон!

Вещает сталинское имя,
Подобно грому — смерть врагам;
Навеки близкими, родными
Красноармейцы стали нам!

Они литовские границы
Стальной стеною стерегут,
И красная звезда лучится
И охраняет мирный труд.

Товарищи на воле снова,
Теперь им не грозит тюрьма.
Свободна мысль, свободно слово,
Рассеяна навеки тьма!

Нас греет сталинское пламя,
Открыл дорогу к солнцу он!
Земля с цветущими полями
Кладет ему земной поклон.

О нем везде легенды снова
Творит народная молва,
И славит Сталина родного
Освобожденная Литва![1]

(Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: *Խոսքը տրվում ե Լիտվական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Միցկիսին:* (Ծափահարություններ:)

---

[1]) *Թարգմանել են ռուսերենի պոետներ Միխայիլ Զեննևիչը և Արկադիյ Շտեյնբերգը:*

Մ. Միցկիս (Լիտվական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ, հողագործության մինիստր): Խոսում ե լիտվերեն: Թարգմանում ե ռուսերենի ընկ. Պ. Ցվիրկան:

Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Լիտվայի ժողովուրդն իր լավագույն զավակների, ժողովրդական Սեյմի դեպուտատների չուրթերով արտահայտեց իր անհողդողդ կամքը մեծ Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքի մեջ մտնելու մասին: Լիտվայի ժողովուրդը, արտահայտելով իր խոր, սրտագին ցանկություններն ու լոզունգները, մեծագույն հրճվանքով և աննկուն կամքով վորոշել ե իր բաղդն առհավետ կապել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների ընտանիքի հետ: Լիտվայի ժողովրդի ամենալայն մասսաների այդ սրտագին ցանկությունը, յես համարձակվում եմ կարծել, ճիշտ կհասկացվի ու կդնահատվի Գերագույն Խորհրդի ընկեր դեպուտատների կողմից և ձեր սրտերում կգտնի համապատասխան համակրանք: (Ծափահարություններ:)

Լիտվայի ժողովուրդն իր պատմության ամբողջ ժամանակաշրջանում դաժանորեն չահագործվել ե: Նա դարեր չարունակ յոտատակել ե, քարշ տալով ստրկության չղթաները, վորոնցով կապկպել եյին նրան իր և ոտար տերերը: Նա ճնշվել և չահագործվել ե իր իշխանների, ամբողջ աշխարհի յեկվոր-խաչակիրների, լեհական չլյախտայի, ռուսական ցարիզմի և իր կապիտալիստների կողմից:

Պատմական 1918 թվին Լիտվայի ժողովուրդը, Ռուսաստանի պրոլետարիատի ոգնությամբ փորձեց ստեղծել խորհրդային սոցիալիստական Լիտվա, բայց սոցիալ-դավաճանների դավադրության և իմպերիալիստական տերությունների նենգաբարության հետևանքով ստեղծվեց բուրժուական Լիտվա, վորի դլուխն անցավ Լիտվայի ժողովրդի պատմական թշնամիների դործը չարունակող Սմետոնան:

Սմետոնայի տիրապետության չրջանում Լիտվան ժողովրդի համար դարձավ ֆիզիկական և հոդեկան բանտ: Ամբողջ յերկրում մոլեգնում եյին լիտվական ժողովրդի դահիճները — գենեբալ պլեխավիչները, դլուխացկինները և դրանց նմանները: Ամբողջ Լիտվան ծածկված եր ժողովրդի դործի համար զոհված մարտիկների դերեզմաններով: Ժողովրդին կերակրում եյին պատարակ խոստումներով, իսկ կալվածատերերին տվին հող, անտառներ և այլ բարիքներ:

Լիտվայի աշխատավոր գյուղացիները յերբեք չեն յեղել իրենց յերկրի ու իրենց հողի տերը, այլ միայն յեղել են կալվածատերերի և կալիտալիստների ստրուկները: Նրանք միշտ հարկադրված են յեղել պայքարել հանուն իրենց ազատության, հանուն հացի և հողի:

1918 թվին, այսպես կոչված անկախ Լիտվա ստեղծվելուց հետո, հողազուրկ և սակավահող գյուղացիները պահանջեցին արմատական հողային ռեֆորմ: Բուրժուական կառավարությունը հարկադրված եր ղիջել: Կալվածքները կրճատվեցին, բայց կալվածատերերին մնացին կալվածքների մեծ կենտրոնները՝ իրենց բոլոր կենդանի և մեռյալ ինվենտարով, իսկ հողազուրկ ու սակավահող գյուղացիներից ամեն մեկը ստացավ մի չնչին հողամաս ու միքանի կոճղ՝ չենքեր «չինելու» համար:

Տնտեսությունը կարգի բերելու համար միջոցներ չունենալու պատճառով, հող ստացած նորաբնակները մեծ կարիքի մեջ եյին, և միայն նրանց չատ փոքր մասը համեմատաբար տանելի կերպով դրսավեց: Նրանց մեծ մասը հարկադրված եր եժան գնով վաճառել իր հողամասերը հին կամ նոր կալվածատերերին: Գյուղացիների ուրախությունը կարճատև եր: Հողը, վորի վրա հույս ունեյին նրանք թե կդրսավեն ու կդտնեն իրենց յերջանկությունը, դուրս սողաց նրանց ձեռքից, և նորաբնակները կոճղեր հանելով, ճահիճներ չորացնելով ու իրենց առողջությունը կորցնելով, նորից դարձան բատրակներ, պրոլետարներ: Հողային ռեֆորմից միայն 4 տարի անցնելուց հետո, 1930 թվին, ստացված հողամասերի 35%-ը ծախված եր: Այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր ռեֆորմն անցկացրեց բուրժուազիան, նկատի ունենալով իր սեփական շահերը:

Լավ չեր նաև հին գյուղացիների դրությունը: Քաղաքի լիտվացի և ռուսերկրացի կալիտալիստները թելադրում եյին մեր գյուղատնտեսության մթերքների գները, իջեցնելով դրանք ու բարձր գներ սահմանելով արդյունաբերության արտադրանքի համար: Գների միջև յեղած տարբերությունը չափունակ մեծանում եր: Գյուղացին ընկավ կապիտալից լիովին կախված վիճակի մեջ: Տարեցտարի աճում եյին գյուղացիների պարտքերը, այդ պարտքերի տոկոսները, չվճարված հարկերը, տուգանքներն ու դրանց հետ կապված կարիքները:

Աշխատավոր գյուղացիության դրությունն անհուսալի յեր: Ամբողջ ժամանակ նրա ապրում եր սարսափի մեջ — չլինի՞ թե նրա տնտեսության իսկական տերը, կալիտալիստը, աճուրդով ծախի հողն ու իրեն քչի բատրակների ու դործազուրկների չարքերը: Բուրժուական Լիտվայի դոյության ընթացքում աճուրդով ծախվել է 25 հազար գյուղացիական տնտեսություն:

Այդպիսի դրությունը չեր կարող չարունակվել հավիտյան: Լիտվայի ժողովուրդը համբերությունը կորցրեց: Հասավ ազատագրման ժամը: Լիտվայի ժողովուրդն ազատագրվեց կալիտալիստական ստրկությունից — Լիտվան դարձավ խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Այդ վերակառուցումը վերջ է դնում Լիտվայի ժողովրդի կարիքներին: Այժմ բանվորները, գյուղացիներն ու աշխատավոր ինտելիգենցիան իրենք են իրենց բազդի միակ որինական տերերը: Լիտվական հողի վրա կաշխատեն Լիտվայի ազատ գյուղացիները: Հողն այլևս չի լինի սպեկուլյացիայի առարկա և աշխատավոր գյուղացին այլևս ստիպված չի լինի թողնելու հայրենի դաշտերը: Լիտվայում հողը հայտարարված է ամբողջ ժողովրդի պատկանելիք, այսինքն՝ պետական սեփականություն: Ժողովրդական Սեյմի այդ վորոշման մեջ արտացոլված են Լիտվայի ամբողջ ժողովրդի իղձերը:

Մինչև հիմա Լիտվայում հողի բաշխումը կատարվում եր անարդարացի: Լիտվայում կա ընդամենը, առանց Վիլնոյի յերկրամասի, 295 024 տնտեսություն, վորոնք ունեն 4 146 542 հեկտար հող: Ցես ուզում եմ այստեղ ձեզ միքանի թվեր հիշատակել, վորոնք վկայում են Լիտվայում տասնյակ ու հարյուր հազարավոր մարդկանց նկատմամբ յեղած նախկին անարդարության մասին: Վիճակագրական վերջին տվյալներով 1939 թվի վերջին Լիտվայում 0,2-ից մինչև 10 հեկտար հողամաս ունեցող գյուղացիական տնտեսությունների թիվը հաշվվում եր 140 598, այսինքն՝ բոլոր տնտեսությունների 49,05%-ը: Այդ տնտեսություններին պատկանում եր 700 536 հեկտար, այսինքն՝ ամբողջ հողի 16,89%-ը: Միջամանակ 30-ական հեկտար և ավելի հող ունեցող 27 475 տնտեսություններին (բոլոր տնտեսությունների 9,32%-ին) պատկանում եր 2 185 242 հեկտար, այսինքն՝ ամբողջ հողի 52,70%-ը: Ստացվում է, վոր Լիտվայի գյուղացիների կեսը յերեք անդամ ավելի պակաս հող ուներ, քան խոշոր տնտեսությունների մեկ տասերորդ մասը: Ել ավելի յե աչքի ընկնում հողի անարդար բաշխումը, յերբ համեմատում ենք խոշոր տնտեսությունները մանր տնտեսությունների հետ: 0,2-ից մինչև 5 հեկտար հող ունեցող 70 հազար տնտեսություններն ունեյին 132 568 հեկտար, իսկ 624 խոշոր տնտեսություններն ունեյին 143 527 հեկտար հող: Ստացվում է, վոր 70 հազար

մանր տնտեսություններն ունեյին ավելի քիչ հող, քան 624 խոշոր տնտեսությունները:

Աղքատացած հողազուրկ և սակավահող գյուղացիներին Լիտվայի բուրժուազիան ծաղրելով անվանում եր ծուլ ու անհող: Կալվածատերերն ավելի շատ եյին հող տանում տնտեսությունների, քան իրենց բանվորների մասին: Նրանք ամբողջ յեռանդով ու մանրամասնությամբ հաշվում եյին թե մի տոհմային կովի կամ խոզի համար քանի մետր հատակ, ինչքան լույս և ինչքան ոդ և հարկավոր, մինչդուն ժամանակ կալվածքների բանվորներն ապրում եյին սարսափելի պայմաններում, իսկ պարոն կալվածատերերը դրանով բնավ չեյին հետաքրքրվում:

Այժմ դրան Լիտվայում վերջ և դրված: Հողից կոդտվեն նրանք, վորոնք մշակում են այդ հողը:

Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը պետք և հողով ապահովի տասնյակ հազարավոր հողազուրկ ու սակավահող գյուղացիների: Լիտվայում գյուղացիական տնտեսությունների համար առավելագույն նորման սահմանված և մեկ տնտեսությանը 30 հեկտար: Ով սահմանված նորմայից ավելի հող ունի, նրանից ավելցուկը կվերցվի առանց վարձատրության և անվճար կհանձնվի նրան, ում անհրաժեշտ և այդ հողը:

Մեր մոտավոր հաշվումներով, այդ միջոցառումն անցկացնելուց հետո կստեղծվի 560 հազար հեկտար հողային ֆոնդ: Բացի այստեղ հիշված վոխոխություններից, Լիտվայի Ժողովրդական Սեյմն ընդունել և և այլ վորոշումներ, վորոնք կթեթևացնեն աշխատավոր գյուղացիների հարկային ծանրությունն ու պարտքային մյուս պարտավորությունները:

Խորհրդային Լիտվայի առջև այժմ դրված են պատմական նշանակություն ունեցող մեծ խնդիրներ: Առաջին հերթին պետք և վերջնականապես լիկվիդացիայի յենթարկել տնտեսության կապիտալիստական սիստեմը և ստեղծել սոցիալիստական ներդրնակ պլանային տնտեսություն: Ամենամեծ ուշադրությունը պետք և դարձնել գյուղատնտեսության վրա, վորովհետև յերկրի բոլոր քաղաքացիների 75%-ն ապրում և միայն գյուղատնտեսությամբ: Այստեղ հարկ կլինի մեծ ուշադրություն դարձնել անասնաբուծության հետագա զարգացման վրա, վորովհետև Լիտվայի կլիման և մյուս բոլոր պայմանները լավին նպաստում են դրան:

Գերազույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Մենք հուսով ենք, վոր դուք մանակից եք Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ մտնելու մեր բուռն ցանկությանը: Լիտվայի ժողովուրդը ցանկանում և, վոր իր հողը լուսավորի Ստալինյան Սահմանադրության արևը:

Կեցցե՛ մեր մեծ, հզոր հայրենիքը — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ ամբողջ առաջադեմ մարդկության պարծանքը — մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը: (Բուռն, յերկար ժամանակ չդադրող ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացության: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «կեցցե՛ ընկեր Ստալինը: Ուռա՛»:)

Նախագահող: Խոսքը տրվում և Լիտվական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Զիբերտասին: (Բուռն ծափահարություններ:)

Պ. Զիբերտաս (Լիտվական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ, բանվոր): Խոսում և լիտվերեն: Թարգմանում և ռուսերենի ընկ. Մ. Շուսմաուսկասը:

Թանկագին ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք ինձ Խորհրդային Լիտվայի ազատագրված պրոլետարիատի անունից սրտագին վողջույն հաղորդել ձեզ և խորհրդային բազմամիլիոն ամբողջ ժողովրդին: (Բուռն ծափահարություններ:) Մենք, Լիտվական Հանրապետության Ժողովրդական Սեյմի պատվիրակներս, յեկել ենք կարմիր մայրաքաղաք Մոսկվան, վորպեսզի խնդրենք ձեր բարձր ժողովին և ամբողջ աշխարհի աշխատավորների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին (ծափահարություններ) Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ՝ վորպես լիիրավ անդամ: (Յերկարատև ծափահարություններ:)

Ամբողջ 22 տարվա ընթացքում Խորհրդային Միության և մեր աշխատավոր ժողովրդի թշնամիներն ինչքան հնար ունեյին սևացնում եյին աշխարհում առաջին սոցիալիստական յերկիրը: Նրանք ստոր ղրպարտություններ եյին տարածում խորհրդային յերկրի կյանքի մասին: Մենք, դիտակից բանվորներս, բնավ չեյինք հավատում նրանց ու միշտ ասում եյինք բոլորին, վոր նույնպես նրանց չհավատան: Մենք դիտեյինք, վոր Լենինի—

Ստալինի յերկիրը միակ յերկիրն է աշխարհում, վորտեղ կյանքը կառուցված է աշխատավորների չահերի տեսակետից: Սակայն, թեև մենք այդ գիտեյինք, բայց և այնպես, ինչ վոր մենք այստեղ տեսանք առաջին որն իսկ, հազարապատիկ գերազանցեց այն ամենից, ինչ սպասում եյինք: Մեր աչքերը հիմա կուզեյին միայն նայել ու նայել, մեր ականջները — միայն լսել ու լսել: Մեր լեզուն ու շուրթերը, յեթե կարողանային, հիմա կպատմեյին հեռու մեր տանը գտնվող յեղբայրներին ու քույրերին և լիտվական ամբողջ աշխատավոր ժողովրդին, թե ի՛նչ ենք տեսնում ու լսում մենք այստեղ, ի՛նչ ենք զգում մենք այստեղ մեր ամբողջ հոգով:

Բայց մեր առաջին ցանկությունն ու պարտքն է պատմել ձեզ, Գերագույն Խորհրդի Թանկագին ընկերք դեպուտատներ, պատմել մեր սիրելի առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ, մեծ Ստալինին այն մասին, թե ինչ ենք կրել մենք մինչև այժմ: Իսկ ահա թե ինչ ենք կրել մենք. մենք, բանվորներս ու գյուղացիներս կամայականությունից, բանտից, խոշտանգումից, զնդակահարություններից բացի Լիտվայում ուրիշ վոչինչ չենք տեսել: Բոլոր իրավունքներից զրկված կալանավորներ եյին մեզ մոտ վոչ միայն նրանք, վորոնք նստած եյին բանտի վանդակների հետևում: Լիտվայի ամբողջ աշխատավոր ժողովուրդը մշտական կալանավոր եր, և մեր ամբողջ յերկիրը յեթե վոչ բանտ, ապա վոստիկանական զնդան եր:

Ցես ինքս, յերկու անգամ մահվան դատապարտված, 20 տարի անց եմ կացրել բանտում՝ կոմունիզմի դաղափարի համար: (Բուռն ծափահարություններ: Բոլոր դեպուտատները վոտքի յեն կանգնում և ովացիա յեն սարքում ընկ. Ջիբերտասին:) Այդ ժամանակամիջոցում յես անցել եմ Լիտվայի բոլոր ամենադլխավոր բանտերը, վորոնց պատերն ամենից հաստ և վանդակներն ամենից ամուր եյին: Այդ ամբողջ ժամանակամիջոցում յես, միայն նրա համար, վոր կոմունիստ եյի և չեյի ցանկանում հրաժարվել այդ բարձր պատվից, ավելի քան 60 որ ու գիշեր անց եմ կացրել կարցերներում: Մեր, բանտարկված կոմունիստներիս նկատմամբ դործադրվում եյին կարդապահական ռեժիմի ամենախիստ կանոնները: Ցես մյուս ընկերներիս հետ ստիպված եմ յեղել մինչև իսկ անցնել հրացանի կոթերով մեզ ծեծող զաղանացած բանտային հսկիչների չարքերի միջով:

Իմ բանտում յեղած ժամանակ մեռավ զառամյալ հայրս: 20 ծանր տարիներից հետո միայն ծեր մայրս արժանացավ իր վերջին պատտ տեսնելու ուրախությանը: Այսոր նա ինձ հետ միասին չգիտի ինչպես ուրախանա ու չնորհակալություն հայտնի դրա համար ազատարար քաջարի Կարմիր Բանակին և նրա առաջնորդներին՝ մեծ Ստալինի դլխավորությամբ: (Բուռն ծափահարություններ:) Իմ բանտարկության ամբողջ ժամանակի ընթացքում վո՛չ հայրս, վո՛չ մայրս, վո՛չ փոքր յեղբայրներս վոչ մի անգամ վոչ վոքի չեն դանգատվել և ինձ չեն մեղմացրել իրենց արցունքներով: Ինձ հասած ռեպրեսիաները չեն ընկճել նրանց պրոլետարական վոգին: Ընդհակառակը, նրանք ինձ միայն խրախուսում եյին. «Ամուր կա՛ց, Պրանաս»: Դա պահպանում եր իմ վոգին, ինչպես և իմ հավատը, վոր վաղ թե ուշ մեր ժողովուրդը, մեծ Խորհրդային Միության աջակցությամբ և ողնությամբ ձեռք կբերի իր և Լիտվայի ազատությունը: (Բուռն ծափահարություններ:) Իմ մայրն իր վիշտը կրելու ուժ եր դտնում իր մեջ, բայց այն որը, յերբ իմացավ իմ ազատության մասին, նա լացեց մեծ հրճվանքից և դեպի Կարմիր Բանակը տածած յերախտագիտական զգացմունքից:

Բանտում, թեև սակավ, բայց այնուամենայնիվ լուսավոր րոպեներ եյինք ունենում: Այդ այն րոպեներն եյին, յերբ մենք, պահապաններից խիստ ծածուկ կարդում եյինք խորհրդային արգելված դրքեր ու թերթեր: Այն ժամանակ մենք ամենամեծ ազահությամբ եյինք վորսում ամեն մի բառ Լենինի մասին, Ստալինի մասին, յերջանիկ ու ազատ կյանքի մասին խորհրդային սահմանների ներսում: Առանձնապես քաջալերվեցինք մենք այն որից, յերբ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվելուց հետո խորհրդային զորքերը առաջին անգամ վոտք դրին մեր լիտվական հողի վրա: Թեև մենք չուտով իմացանք, վոր իմպերիալիստական արբանյակների կառավարությունը, մահվան չափ վախենալով կորցնել իշխանությունն ու հեշտությամբ ձեռք բերվող հարուստ չահույթը, սկսել է է՛լ ավելի ճնշել մեր աշխատավոր ժողովրդին, է՛լ ավելի ուժեղ խեղդել ազատ մտքի ամենաչոքը արտահայտությունն անգամ, բայց մենք արդեն հանգիստ եյինք, վորովհետև միանգամայն համոզված եյինք, վոր չուտով վերջ կդրվի մեր դերության:

Կարմիր Բանակի չնորհիվ քաղաքական մյուս բանտարկյալների հետ միասին ազատ արձակվեցի և յես: Թեև իմ յերիտասարդության ամենալավ տարիները բանտում անցան, բայց յես, ինչպես և ազատված քաղաքական բանտարկյալ իմ մյուս ընկերները, ազատության մեջ անցկացրած առաջին որն իսկ բոլորովին մոռացանք, վոր դեռ յերեկ մենք նստած եյինք վան-

դակների հետևում: Կարծես բանտի այդ սարսափելի տարինները բնավ չեն եղ ու չեղել: Այնքան մեծ եր մեր խանդավառությունը և չեղբայրական հոգատարությամբ ու սիրով մեզ անմիջապես շրջապատող մեր ամբողջ աշխատավոր ժողովրդի խանդավառությունը: Մենք նորից աշխատանքի անցանք ղեկավ մեզ չահել և ուժեղ, աշխատանքի անցանք ազատության և ստեղծագործության այն մեծ բերկրությամբ չահելացած, վոր ապրում է այժմ լիտվական ամբողջ աշխատավոր ժողովուրդը: (Ծափահարություններ:)

Ընկեր դեպուտատներ, մենք չեկել ենք այստեղ վո՛չ միայն նրա համար, վոր պատմենք ձեզ անցյալում կրած մեր տառապանքների մասին միայն: Մենք չեկել ենք ձեզ մոտ նաև նրա համար, վորպեսզի սովորենք, թե ինչպես կառուցել մեր սոցիալիստական հայրենիքի լուսավոր ապագան: Լիտվական բանվորները, ինչպես և դյուղացիները ու աշխատավոր ինտելիգենցիան մինչև այժմ գտնվում եյին ամենավատ դրության մեջ: Աշխատանքի ու կյանքի առանձնապես անտանելի պայմանների մեջ եյին ֆաբրիկաների ու դործարանների բանվորները: Մենք չունեյինք վո՛չ ուսման, վո՛չ հանդստի և վո՛չ էլ աշխատանքի իրավունք անդամ: Յեվ յեթե աշխատանքը մեծ խորհրդային յերկրում հրճվանք է, մեզ մոտ այն դարձել եր տաժանակիր աշխատանք: Հետևապես զարմանալի չէ, վոր լիտվական բանվորները հատկապես սպասում եյին և հատկապես ղդացին իրենց ազատագրումն ու բոլորը մեկ մարդու պես, ամենամեծ խանդավառությամբ մասնակցում են նոր, սոցիալիստական կյանքի կառուցմանը:

Ուստի, ընկեր դեպուտատներ, Լիտվական ամբողջ աշխատավոր ժողովրդի անունից, ինձ այս պատվավոր տրիբունան ուղարկողների անունից խնդրում եմ ձեզ և Խորհրդային Միության կառավարությանը, Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը յեղբայրաբար ընդունել ձեր պանծալի ընտանիքի մեջ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:) Խնդրում եմ և հուսով եմ, վոր իմ այս խնդիրքը, վոր իմ ժողովրդի այս խնդիրքը դուք կհարդեք և կբավարարեք: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ անսասան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, վորն այսորվանից մեծանում է Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունով: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր հարազատ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ անպարտելի ազատարար Բանվորա-Գյուղացիական կարմիր բանակը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ Համամիութենական կառավարության ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք վոխվում են ովացիայի:)

Կեցցե՛ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը, նա, վորի անունը մեզ, բանտերի և համակենտրոնացման ճամբարների կալանավորներիս տալիս եր անսպառ ուժ, անխոնջ արիություն և անդրդվելի հավատ դեպի լուսավոր ապագան,—կեցցե՛ մեր հարազատ, մեծ Ստալինը: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ, վորոնք վոխվում են ովացիայի: Բացականչություններ՝ «ուռա»:)

Նախագահող: Խոսք ունի դեպուտատ Պոնոմարենկոն: (Ծափահարություններ:)

Պ. Կ. Պոնոմարենկո (Բարանովիչիի օկրուգ, Բարանովիչիի մարզ, ԲԽՍՀ): Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Մենք լսեցինք Լիտվական Հանրապետության Ժողովրդական Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, վորով խնդրում են Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Միության կազմի մեջ մտցնելու մասին:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի դեպուտատները մեծ ուշադրությամբ լսեցին Լիտվայի Ժողովրդական Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամների բոցավառ ճառերը, վորոնք արտահայտեցին ազատագրված լիտվական ժողովրդի ղգացմունքները, իղձերն ու կամքը, հաղորդեցին ջերմ սիրո ղգացմունք դեպի խորհրդային մեծ ժողովուրդը, Գերագույն Խորհուրդը, մեր կառավարությունը, մեր մեծ կուսակցությունը, մեր Միության մեծ առաջնորդ և ուսուցիչ—ընկեր Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Լիտվական ժողովուրդն իր այդ ցանկություններն ու կամքն արտահայտեց Ժողովրդական Սեյմի դեպուտատներին ընտրելիս,

միահամուռ քվեարկելով Լիտվայի Աշխատավոր ժողովրդի միության թեկնածուների ոգին:

Լիտվական ժողովրդի այդ կամքն արտահայտված է ժողովըրդական Սեյմի միահամուռ վորոշման մեջ՝ Լիտվայում խորհըրդային իշխանություն հաստատելու և Լիտվան Խորհրդային Միության կազմի մեջ մտնելու մասին:

Այդ կամքը հնաստատեց ամբողջ ժողովուրդը Լիտվայի քաղաքներում և գյուղերում տեղի ունեցած բազմաթիվ միտինգներում ու ժողովներում:

Լիտվական հանրապետության գոյության սկզբից իսկ Խորհըրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը միշտ և անխոտոր հարգել ու պաշտպանել է Լիտվայի սուվերեն իրավունքները, անկախությունը և անվտանգությունը:

Խորհրդային կառավարությունն առաջինը ճանաչեց կազմված Լիտվական պետությունը և 1920 թվին հանձնեց նրան նախկին Վիլնոյի նահանգի ղզալի մասն ու Վիլնո քաղաքը:

Յերբ լեհական զորքերը, ներխուժելով Լիտվայի տերիտորիան, գրավեցին Վիլնո քաղաքը, Խորհրդային կառավարությունը միակ կառավարությունն եր, վորը վճռական բողոք հայտնեց պանական Լեհաստանի ավազակային գործողությունների դեմ ու յերբեք որինական չի համարել Վիլնոյի գրավումը լեհերի կողմից:

1926 թվին Խորհրդային Միությունը չհարձակվելու պայմանադիր կնքեց Լիտվայի հետ:

1927 թվին Խորհրդային Միության յեռանդուն միջամտության շնորհիվ լիովին կանխվեց Լեհաստանի կողմից Լիտվայի վրա ռազմական հարձակում գործելու ռեալ վտանգը: Ճիշտ այդպես էլ 1938 թվի մարտին Խորհրդային Միությունը կանխեց Լեհաստանի հարձակումը Լիտվայի վրա:

Յերբ Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը 1939 թվի սեպտեմբերի յերկրորդ կեսին, լեհական պետությունը քայքայվելուց հետո, ոգնության ձեռք մեկնեց Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդներին, նա միաժամանակ իր պաշտպանության տակ առավ Լիտվայից Լեհաստանի խլած Վիլնոյի մարզը:

Վիլնո քաղաքը և Վիլնոյի մարզն ազատելով սոցիալ-լեհական okkupantներից, Խորհրդային կառավարությունը վերականգնեց Լիտվայի վտանգված իրավունքները և Լիտվային վերադարձրեց Վիլնո քաղաքն ու Վիլնոյի մարզը: Խորհրդային կառավարությունը գտնում եր, վոր Վիլնոն պետք է պատկանի

Լիտվային, վորպես մի քաղաք, վորի հետ կապված է Լիտվական պետության պատմական անցյալը և լիտվական ժողովրդի ազգային իդեալը:

Համաշխարհային պատմության մեջ չի յեղել մի ուրիշ այդպիսի որինակ, յերբ մեծ ու հզոր մի պետություն իր սեփական կամքով վոչը պետությանը հանձնի այդպիսի մեծ քաղաք: Դրանով իսկ այդ վճռոն ավելի վայելուն կերպով է ցուցադրում մեծ Խորհրդային պետության խաղաղասիրությունն ու բարեկամությունը: (Բուռն ծափահարություններ:)

Յեվ, վերջապես, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության՝ Լիտվայի հետ 1939 թվին կնքած փոխադարձ ոգնության պակտը և խորհրդային զորքերի Լիտվա մտնելը նպատակ ունեին պայմաններ ստեղծել Լիտվական պետության անվտանգ գոյության համար, ծառայել Լիտվայի ու Խորհրդային Միության մերձեցման գործին: Սակայն ոտարերկրյա կապիտալին վաճառված բուրժուական քաղաքագետները, վորոնք նստել եյին լիտվական ժողովրդի մեջքին, սկսեցին պատրաստակամորեն Լիտվան դարձնել պլացդարմ Խորհրդային Միության վրա հարձակում գործելու համար, սկսեցին ստեղծել մի-ջաղգային պրովոկացիայի ոջախներ, հրահրել հակախորհրդային ագիտացիա: Իմպերիալիզմի սմետոնյան սորուկները, վորոնք թաղվել եյին չոայլության ու անառակության մեջ, ճնշում եյին ու աղքատության մատնում լիտվական ժողովրդին, չհաղթրդված չեյին պակտը կատարելու մեջ: Նրանք ձգտում եյին լիտվական պետությունը դարձնել կապիտալիստական յերկրների հետամնաց ագրարային կցորդը: Նրանք գործ եյին դնում բոլոր ուժերը Լիտվան մեծ Խորհրդային Միությունից պատնեշով անջատելու համար: Նրանք սկսեցին ստոր պրովոկացիաներ հնարել ու տարածել կարմիր Բանակի զորամասերի մասին, կանդնեցին ԽՍՀՄ դեմ ռազմական դաշինք կազմակերպելու ուղղությամբ: Դա նեխված ու վաճառված կառավարողների քաղաքականությունն եր: Ժողովուրդն ատում եր այդ քաղաքականությունը, ինչպես և այդ կառավարողներին: Լիտվական ժողովուրդն ուշի-ուշով հետևում եր թե ինչ է կատարվում մեր մեծ յերկրում: Նա ջերմորեն սիրեց մեր՝ բանվորների ու գյուղացիների Խորհրդային պետությունը: Սմետոնյան ռեժիմի ծանր ճնշման տակ մասսաների մեջ հասունանում եր Խորհրդային Լիտվայի վերաբերյալ միտքը: Լիտվայի բանվորներն ու գյուղացիներն անսահման սիրով եյին արտասանում Լենինի և Ստալինի անունները: Ժողովուրդը վերացրեց սմետոնյան ատելի

ռեժիմը: Լիտվայի աշխատավորները չցանկացան, որ կալվածատերերն ու ֆաբրիկատերերը դլխավորեն ժողովրդին, զորակվեն նրա անունով: Նրանք ցանկացան դառնալ ու դարձան իրենք իրենց ճակատագրի տերը: (Ծափահարություններ:)

Ընդհանուր քվեարկությամբ ընտրված Լիտվական Ժողովրդական Սեյմը լիտվական ժողովրդի ազատ կամքի լիազոր ու իսկական արտահայտիչն է:

Լիտվական Ժողովրդական Սեյմը միահամուռ արտահայտելով Լիտվայի ազատ աշխատավոր ժողովրդի կամքը, իր առաջին վորոշումով հռչակեց խորհրդային իշխանության հաստատում Լիտվայի ամբողջ տերիտորիայում, Լիտվան հայտարարեց խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Այսուհետև Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի և դյուղի աշխատավոր մասսաներին՝ հանձինս աշխատավորների դեպուտատների Խորհուրդների: (Ծափահարություններ:)

Լիտվայի Ժողովրդական Սեյմը՝ հողը համաժողովրդական ունեցվածք, պետական սեփականություն հայտարարելու, բանկերը և խոշոր արդյունաբերությունն ազգայնացնելու և դրանք աշխատավորների տնօրինությանը հանձնելու մասին իր առաջին պատմական վորոշումներով դրեց լիտվական ժողովրդի բարդավաճման հիմքն ու սկիզբը:

Հետևելով ժողովրդի կամքին, ժողովուրդ, վորը տապալել և հին ռեժիմը, Լիտվայի Ժողովրդական Սեյմը վորոշեց.

Խնդրել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին՝ Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Միության կազմի մեջ՝ վորպես միութենական հանրապետություն նույն այն հիմունքներով, ինչպես վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ են մտնում Ուկրաինական, Բելոռուսական և մյուս միութենական հանրապետությունները: (Ծափահարություններ:)

Ընդունելով այս վորոշումը, լիտվական ժողովուրդը յելնում եր նրանից, վոր միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելը կապահովի Լիտվական պետության իսկական սուվերենիտետը, արդյունաբերության և դյուղատնտեսության վերելքը, ազգային կուլտուրայի ծաղկումը, ժողովրդի նյութական ու հոգեվոր ուժերի զարգացումը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կառավարության հանձնարարությամբ առաջարկություն եմ մտցնում բավարարել Լիտվայի Սեյմի խնդիրքը և Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ՝ վորպես իրավահավասար միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի: Բոլոր դեպուտատները վոտքի յեն կանգնում:)

Ընկե՛ր դեպուտատներ: Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կառավարությունը և Գերագույն Խորհրդի Նախագահությունը, ինչպես և Բելոռուսիայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտեն առաջարկություն են մտցնում Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը միացնել ներկայումս Բելոռուսական ՍՍՀ Վիլեյկայի և Բարանովիչիի մարզերի կազմում գտնվող Սվենցյանիի շրջանը և Վիդզովի, Գոդուտիշկովի, Ոստրովեցկի, Վորոնովսկի, Ռադունսկի շրջանների տերիտորիայի լիտվական բնակչությամբ գերակշռող մասերը: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ: Բոլոր դեպուտատները վոտքի յեն կանգնում: Լիտվերեն բացականչություններ ի պատիվ ընկերներ Մոլոտովի, Ստալինի, Վորոշիլովի:)

Այս առաջարկությունն ամբողջովին բղխում է Խորհրդային պետության ազգային քաղաքականության սկզբունքից:

Մեր մեծ առաջնորդներ Լենինն ու Ստալինը Խորհրդային պետության ազգային քաղաքականության հիմքում դրել են մեր յերկրի տերիտորիայում բնակվող ժողովուրդների յեղբայրական բարեկամությունը և իրավահավասարությունը: Բոլոր ազգություններին, վոչ միայն մեծ, այլև վոքր ազգություններին տրվում են քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման ամենալայն հնարավորություններ:

Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու և այդ հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելու կապակցությամբ, գերակշռող լիտվական բնակչություն ունեցող այդ շրջանների քաղաքական, տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացումը կվինի ավելի արդյունավետ Լիտվական

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կազմի մեջ։ (Բուռն, երկարատև ծափահարություններ։)

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարության հանձնարարությամբ ես Գերագույն Խորհրդի քննարկմանն եմ ներկայացնում Օրենքի հետևյալ նախագիծը.

«Օրենք Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին։

Լսելով Լիտվայի Սեյմի լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Բավարարել Լիտվայի Սեյմի խնդիրքը և Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ՝ վորպես իրավահավասար միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն։

2. Ընդունել Բելոռուսական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջարկությունը՝ Բելոռուսական ԽՍՀ Սվենցյանիի չրջանը և Վիդզովի, Գոդուտիշկովի, Ոստրովեցկի, Վորոնովսկի, Ռադունսկի չրջանների տերիտորիայի լիտվական բնակչությամբ դերակչող մասերը Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմին հանձնելու մասին։

3. Խնդրել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդին և Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդին՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի քննարկմանը ներկայացնել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև ճշգրիտ սահմանը վորոշելու նախագիծը։

4. ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական Օրենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրություններ։

5. Հանձնարարել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»։

Ընկե՛ր դեպուտատներ։ Խորհրդային Միության ժողովուրդները ջերմորեն վողջունում են նոր յեղբայրական Միութենական

Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ծնվելը։ Այսօր լիտվական ժողովուրդը մտնում է մեծ Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքի մեջ։

Այսօրվանից լիտվական ժողովրդի ազատ հայրենիքի վրա կփայլի Ստալինյան Սահմանադրության արևը։

Այժմ Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անվտանգությունը՝ բոլոր և ամեն տեսակի արտաքին թշնամիների վտանգություններից՝ կհենվի ամբողջ 193-միլիոնանոց խորհրդային ժողովրդի հզորության, մեր Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի ու Ռազմա-Ծովային Նավատորմի հզորության և արիության վրա։ Այսուհետև լիտվական ժողովուրդը խորհրդային ամբողջ ժողովրդի հետ միասին կընթանա հետագա հաղթանակների ու նվաճումների ուղիով, մեր հայրենիքի ածման, վառքի և հզորության ուղիով։

Լիտվական ժողովուրդը համերաշխ, յերջանիկ ընտանիքի մեջ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, բոլշևիկյան կուսակցության ու ամբողջ աշխարհի ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ կկառուցի յերջանիկ, բերկրալի կյանք։ (Բուռն ծափահարություններ։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Կեցցե՛ լիտվական ժողովուրդը։ (Բուռն ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Կեցցե՛ Խորհրդային Լիտվան։ (Բուռն ծափահարություններ։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Կեցցե՛ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների մեծ, անխախտելի ստալինյան բարեկամությունը։ (Բուռն ծափահարություններ։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Կեցցե՛ Լենինի—Ստալինի հզոր կուսակցությունը։ (Բուռն, յերկարատև ծափահարություններ։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Կեցցե՛ մեր առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ — մեծ Ստալինը։ (Բուռն ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի։ Բոլորը վոտքի յեն կանգնում։ ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով վողջույնի բացականչություններ և պատիվ ընկեր Ստալինի։)

Նախագահող։ Ընկե՛ր դեպուտատներ։ Առաջարկություն է ստացվել Լիտվական Հանրապետության Սեյմի լիազոր Հանձնաժողովի հայտարարության չուրջը մտքերի փոխանակություն

դադարեցնել: Կո՞ն արդյոք ցանկացողներ արտահայտվելու այս հարցի վերաբերյալ: Չկան: Թույլ ավեք քվեարկել: Ով կողմնակից է, վորպեսզի մաքերի փոխանակությունը դադարեցվի, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Մաքերի փոխանակությունը դադարեցվում է:

Դեպուտատներից ո՞վ է ցանկանում խոսք վերցնել դեպուտատ Պոնոմարենկոյի կողմից մտցված առաջարկության առթիվ, կամ ո՞վ է ցանկանում մտցնել այլ առաջարկություններ, բացի դեպուտատ Պոնոմարենկոյի կողմից մտցված առաջարկությունից: Ցանկացողներ չկան:

Նախքան քվեարկությանն անցնելը, ես նորից հրապարակում եմ կառավարության առաջարկությամբ դեպուտատ Պոնոմարենկոյի կողմից մտցված Որենքի նախագիծը.

«Որենք Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին:

Լսելով Լիտվայի Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Բավարարել Լիտվայի Սեյմի խնդիրքը և Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ՝ վորպես իրավահավասար միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն:

2. Ընդունել Բելոռուսական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջարկությունը՝ Բելոռուսական ԽՍՀ Սվենցյանիի շրջանը և Վիդզովի, Գոդուտիշկովի, Ոստրովեցկի, Վորոնովսկի, Ռադունսկի շրջանների տերիտորիայի լիտվական բնակչությամբ գերակշռող մասերը Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմին հանձնելու մասին:

3. Խնդրել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդին և Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդին՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի քննարկմանը ներկայացնել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև ճշգրիտ սահմանը վորոշելու նախագիծը:

4. ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական Որենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրություններ:

5. Հանձնարարել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»:

Ի՞նչպես եք առաջարկում Որենքը քվեարկել, ըստ հոդվածների, թե՞ ամբողջությամբ:

Ձայներ: Ամբողջությամբ:

Նախագահող: Վոչ վոք չի՞ պնդում քվեարկել ըստ հոդվածների: Վո՛չ: Որենքը քվեարկում եմ ամբողջությամբ: Քվեարկությունը կատարվում է ըստ պալատների առանձին-առանձին:

Քվեարկում են Ազգությունների Խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Քվեարկում են Միության Խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Ամպլիսով, ընկեր դեպուտատներ, Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին Որենքը Գերագույն Խորհրդի կողմից ընդունված է միաձայն: (Բուռն, երկարատև ծանդալոտ ովացիաներ ամբողջ դահլիճում: Բոլորը վոտքի են կանգնում: ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով վողջույնի բացականչություններ ի պատիվ Նոր Միութենական Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, ի պատիվ ազատ լիտվական ժողովրդի, ի պատիվ ընկեր Ստալինի:)

Ընկեր դեպուտատներ, Գերագույն Խորհրդի Սեսիայի որակարգի յերրորդ կետը սպառված է: Առաջարկություն կա վաղը Գերագույն Խորհրդի նիստ չհրավիրել, հետևյալ նիստը նշանակել ոգոստոսի 5-ին յերեկոյան ժամը 6-ին: Առարկություններ կա՞ն: Չկան:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1940 թվի օգոստոսի 5–ին)

Նախագահում է Ազգությունների խորհրդի Նախագահ Ն. Մ. Շվերնիկը:

Նախագահող: *Ընկե՛ր դեպուտատներ: Գերագույն Խորհրդի Սեսսիայի նիստը հայտարարում եմ բացված: Որակարգում — Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը:*

(Դահլիճ են մտնում Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամները և կանգնում տրիբունայի մոտ: Դեպուտատները վոտքի կանգնած յերկարատև ովացիայով վողջունում են Լիազոր Հանձնաժողովի անդամներին, Լատվիական ժողովրդի ներկայացուցիչներին: Յերկար ժամանակ չլռող ծափահարություններ: Բացականչություններ՝ «ուռա»:)

Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի կողմից հայտարարության համար խոսքը տրվում է հանրապետության պրեզիդենտի պարտականությունը կատարող, մինիստր-պրեզիդենտ Ա. Կիրխենշտեյնին:

(Տրիբունայի վրա ընկ. Կիրխենշտեյնի յերեվալը դեպուտատները դիմավորում են բուռն; յերկարատև ծափահարություններով, վորոնք վոխվում են ջերմ ովացիայի:)

Ա. Կիրխենշտեյնս (Լատվիական հանրապետության պրեզիդենտի պարտականությունը կատարող, մինիստր-պրեզիդենտ, Ժողովրդական Սեյմի Լիազոր Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր): Խոսում է լատիշերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Պ. Բլառուբը:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Լատվիայի ամբողջ աշխատավոր ժողովրդի անունից թույլ տվեք լինճ հաղորդել ջերմ, սրտագին վողջույն ձեզ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատներիդ և հանձինս ձեր՝ ամբողջ խորհրդային մեծ ժողովրդին, Խորհրդային կառավարությանը, նրա ղեկավար վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովին և ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ առաջնորդ և ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին: (Բոլորը վոտքի յեն կանգնում: Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք վոխվում են ովացիայի:)

Մենք յեկել ենք այստեղ, հինավուրց Կրեմլը, վորպեսզի մեր ժողովրդի անունից յեղբայրական վողջույն հաղորդենք մեծ Խորհրդային Միությանը, վորպեսզի արտահայտենք ԽՍՀՄ հանդեպ ունեցած սիրո և բարեկամության մեզ հուզող զգացմունքները:

Ընդամենը մի քանի յերկու չաբաթ է անցել այն որից, յերբ Լատվիայի պետական իշխանության գերագույն որգանը՝ նրա Ժողովրդական Սեյմն ամբողջ ժողովրդի աննկարագրելի ցնծության և մինչ այդ Լատվիայում չտեսնված միասնության պայմաններում հանդիսավոր կերպով հռչակեց Խորհրդային իշխանության հաստատումը Լատվիայի ամբողջ տերիտորիայում (բուռն ծափահարություններ), ամբողջ հողը հայտարարեց համաժողովրդական ունեցվածք, այսինքն պետական սեփականություն, վորից իրավունք ունի ոգտվելու միայն նա, ով սեփական աշխատավորական ձեռքերով հերկում և մշակում է այն, ընդունեց մի որենք բանկերի և արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների ազգայնացման մասին և դրանով իսկ դրեց Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության նոր, սոցիալիստական արդյունաբերության հիմքերը:

Սույն թվի հուլիսի 21–ին և 22–ին մեր ժողովուրդը քաշեց պատմական մի դիծ, վորը լատվիական աշխատավոր ժողովրդի՝ հավիտենականության դիրկն անցած մոտալ անցյալն ընդմիշտ ու անվերադարձ կերպով բաժանում է այսօրվա ամենայերջանիկ որից, ժողովուրդ, վորը սկսում է նոր կյանք, վորը բացում է նոր դարաշրջան ազատ Լատվիային սպասվող վայելուն բարգավաճման պատմության մեջ, այն Սահմանադրության դրոշի տակ, վորը կրում է վոքր ժողովուրդների ու յերկրների մեծ բարեկամի, աշխատավորների հանճարեղ առաջնորդի, մեր ուսուցիչ — Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի անունը: (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ:)

Վերջացան Լատվիայի աշխատավոր ժողովրդի դարավոր տառապանքները, Լատվիայի, վորի ամբողջ պատմությունը ներկայացնում է մի ծանր պատմվածք այն մասին, թե ինչպես հարուստները, կապիտալիստները, կալվածատերերը, կուլակներն ու բարոնները, անգլիական և ֆրանսական բանկիրներն ու սպեկուլյանտները ծծում էին ժողովրդական արյունը, դաղանաբար ճնշում էին ժողովրդին, անամոթաբար ծաղրուծանակի յենթարկում նրան, վարժվում էին ժողովրդին չհադործելու և սարկացնելու ամենանուրբ յեղանակներով:

Հնադույն ժամանակներից իվեր լատիշները տառապել են քաղաքական իրավազրկությունից և տնտեսական ճնշումից, վոր սահմանել էին լատվիական կապիտալիստներն ու կալվածատերերը և արևմտա-յեվրոպական կեղեքիչները, վորոնք սրով և հրով էին պահպանում իրենց իշխանությունը լատվիական ժողովրդի վրա:

Պատահական չե, վոր լատիշ ժողովրդի պատմաբաններից մեկը գրել է, թե «նրա պատմությունը—դա մի սոսկալի, մռայլ մարտիրոսագրություն է, վչտալի մի պատմվածք՝ տասնյակ հազարավոր մերձմահ խոշտանդվածների, պատերազմների ժամանակ սպանվածների, սովից, ցրտից ու ժանտախտից մահացածների, սարկության վաճառվածների մասին: Այս վոջրիկ, բազմաչարչար ժողովրդի պատմության ամենաաչքի ընկնող ժամանակագրական թվերը—դրանք առանձնապես սոսկալի սովերի, համաճարակների, պատերազմների և այլն տարիներ էին»:

Կալվածատերերն արյունալի միջոցներով էին ավերում գյուղացիական տնտեսությունները, իսկ իրենք գյուղացիները դառնում էին «լոսարեյբերներ»—հողազուրկ բատրակներ, «դրեզներ»—չուկաներում վորպես անասուն և ապրանք վաճառվող սորուկներ:

Ճորտատիրական իրավունքը Լատվիայում դոյությունը պահպանեց մինչև 1864 թիվը, ամբողջ յերեք տարի ավել մնալով ռուս գյուղացիների ճորտատիրական կախումից:

Ցարական ինքնակալությունն արևմտա-յեվրոպական ճնշողներից հետ չերմնում Լատվիայի աշխատավոր մասսաներին սարկացնելու գործում, և իրեն արատավորում եր ազատասեր լատիշ աշխատավոր ժողովրդի հետ տարրդի դատաստան տեսնելով:

Լատվիական ժողովուրդը յերբեք չեր հաշտվում իր սարկության հետ: Ճնշողների և չահադործողների այդ մոլադարության դեմ նա պատասխանում եր ապստամբություններով:

Նա իր յերգերում և ժողովրդական ավանդություններում վառաբանում եր այդ ապստամբությունների առաջնորդներին վորպես ժողովրդական սիրելի հերոսների:

Նա ստեղծեց ժողովրդական հերոս Լաչպլեսիսի հերոսական կերպարը, վորի մեջ մարմնավորեց իր ատելությունը դեպի ժողովրդի ճնշողները, իր սերը դեպի հայրենիքն ու ազատությունը, իր վճռակամությունը՝ մինչև վերջ պայքարելու հանուն իր ազատագրման և յերջանկության:

Այդ պայքարն իր գագաթնակետին հասավ XX դարում:

1905 թիվը Լատվիայի պատմության մեջ, ազատագրական շարժման պատմության, պրոլետարական, դասակարգային հեղափոխական պայքարի պատմության մեջ դրված է վորպես լատվիական ժողովրդի հերոսական մեծ կռիվների տարի, կռիվներ, վոր նա մղել է ռուս բանվորների և գյուղացիների հետ ձեռք-ձեռքի տված:

Լենինը 1910 թվին այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատական մամուլի որգան «Ձիննյա»-ում լատիշ պրոլետարիատի մասին գրել և վորպես հեղափոխական բանվորների ամենաառաջավոր ջոկատներից մեկի մասին, վորոնք պայքարում էին ցարական ինքնակալության և հին հասարակարգի բոլոր ուժերի դեմ: Լատիշ պրոլետարիատը պատմական այդ անմոռանալի տարիներին չեր սահմանափակվում միմիայն գործադուլային պայքարով, այլ «նա,—գրում եր Վլադիմիր Իլյիչը,—ընթանում եր պինված ապստամբության ավանդարդում, նա բոլորից չատ եր աջակցում չարժումն ամենաբարձր աստիճանին, այսինքն ապստամբության աստիճանին հասցնելուն: Նա ավելի, քան մի ուրիշը, ցարիզմի և կալվածատերերի դեմ մղված հեղափոխական մեծ պայքարի մեջ ներգրավեց լատիշական գյուղատնտեսական պրոլետարիատին և լատիշ գյուղացիությանը»:

Յես գոհունակությամբ և ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ ուսուցիչ Վլադիմիր Իլյիչ Լենինի հանդեպ խորին չնորհակալությամբ եմ մտաբերում այս նշանավոր խոսքերը, վորովհետև ինքս յեղել եմ 1905 թվի հեղափոխական չարժման մասնակիցը, իմ անձնական ճակատագիրը կապել եմ հեղափոխական բանվորների և գյուղացիների ճակատագրի հետ: (Ծափահարություններ:)

Լատիշ ժողովուրդը—բանվորները, գյուղացիները, աշխատավոր ինտելիգենցիան—դարերից իվեր անձնվեր և հերոսական պայքար է մղել հայրենի և ոտարերկրյա ճնշողների դեմ: Այդ պայքարը կոփեց լատվիական ժողովրդին և նախապատրաստեց պատ-

մական այն հաղթանակը, որը այժմ տարավ լատվիական ժողովուրդը և հասցրեց Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակմանը:

Մեր ժողովուրդը մինչև վերջին ժամանակներս զրկված էր քաղաքական բոլոր իրավունքներից, նա չէր համարձակվում արտահայտել իր մտքերը, նա կաշկանդված էր, և իր պայքարի յուրաքանչյուր քայլի համար, իր համար մարդավայել կյանքի իրավունք, իր սեփական ճակատագրի տերը լինելու իրավունք նվաճելու ամեն մի փորձի համար հատուցում էր նոր տառապանքներով ու տանջանքներով, իր լավագույն զավակների ու դուստրերի բանտարկությամբ և տաժանքով, անողոք պատիժներով ու հալածանքներով՝ Լատվիայում իշխող կապիտալիստների ու կալվածատերերի պլուտոկրատական կլիկայի կողմից:

Բանվոր դասակարգը Լատվիայում զրկված էր իր պրոֆեսիոնալ և դասակարգային կազմակերպություններից, նրա կոմունիստական կուսակցությունը քշված էր խոր և մռայլ ընդհատակ:

Լատվիայի պրոլետարիատը տառապում էր գործազրկությունից և կիսաքաղց գոյությունից: Դրա փոխարեն չնչին մի բուռն հարուստներ — կապիտալիստներ, բանկիրներ և խոշոր հողատերեր — հին կառավարությունների պաշտպանությամբ և հովանավորությամբ ամենաանզուսպ, անամոթ կերպով հարստանում էր ի հաշիվ ժողովրդի:

Իրերի այդպիսի դրության հետևանքով, Լատվիայում, այսպես կոչված դեմոկրատական կառավարությունների որոք, սիստեմատիկաբար նվազում էր ծննդաբերությունը, ընկնում էր բնակչության աճը:

Վիճակագրական տվյալների համաձայն, 1935 թվին Լատվիայի քաղաքներում բնական աճի փոխարեն նույնիսկ նկատվում էր նվազում: Մահացության դերապանցումը ծննդաբերության նկատմամբ յուրաքանչյուր 10 հազար մարդուն կազմում էր 3,3, իսկ Ռիգայում — յուրաքանչյուր 10 հազար մարդուն նույնիսկ 4 մարդ:

Գյուղացիական անտեսությունների ավելի քան 60%-ը քարշ էր տալիս իր խղճուկ գոյությունը հողազրկության և սակավահողության պատճառով, բանող անասուններից և գյուղատնտեսական ինվենտարից զուրկ լինելու պատճառով:

Լատվիայի աշխատավոր գյուղացիությունը հյուծվում էր կապիտալիստների, կուլակների, բարոնների ճնշման տակ, յենթարկվելով ամենաանճարճակ, դաժան, տմարդի շահագործման: Հիմա վերջ դրվեց այդ անարդանքին:

Այս տարվա հուլիսի 21-ին Լատվիայի Ժողովրդական Սեյմը վորոշում ընդունեց ամբողջ հողը համաժողովրդական ունեցվածք, այսինքն պետական սեփականություն հայտարարելու մասին և հողազուրկ ու սակավահող գյուղացիներին հող տրամադրելու մասին: Մինչև այժմ Լատվիայում հողային ֆոնդի բաշխումն այնպես է յեղել, վոր ավելի քան 270 հազար տնտեսությունների ընդհանուր թվից մոտավորապես 180 հազարը, այսինքն ավելի քան 60%-ը հողազուրկ և սակավահող եր:

Միաժամանակ կուլակության, այսպես կոչված «դորշ բարոնների» ձեռքում կենտրոնացված եր ամբողջ բանող և մթերատու անասունների մոտ յերկու յերրորդը և գրեթե ամբողջ գյուղատնտեսական ինվենտարը (ավելի քան 85%-ը):

Զբաղորները և միջակները տառապում էին ավելի կատաղի շորթվածք յերկրագործական գործիքներ ձեռք բերելու և ոգտվելու հնարավորության չունենալուց, հարկադրված էին իրենց տնտեսություններում ոգտվել գլխավորապես հին գործիքներից և նույնիսկ հողի մի մասը թողնել բոլորովին անմշակ:

Աշխատավոր գյուղացիության տնտեսական ծանր դրությունը սոխում եր հարյուրավոր և հազարավոր գյուղացիների լքելու սեփական տնտեսությունները: Կարիքից հալածված նրանք ստիպված էին լինում հեռանալ արտաքնաց արհեստների և աշխատելու կուլակների մոտ իբրև բատրակներ:

Կուլակների կողմից բատրակության չհատուցման ուժեղացումն իր արտահայտությունն եր գտնում նաև գյուղատնտեսական բանվորների աշխատավարձի չեչտակի անկման և աշխատանքային որվա մեծացման մեջ, վորը հասնում եր որական 16—18 ժամի:

Չնայած Լատվիայի անտառային հարստություններին, հին կառավարությունները դիլետանտ կերպով եյին վարում անտառային տնտեսությունը, վոր հասցրեց անտառային տարածությունների դղալի կրճատման և հսկայական վնաս պատճառեց լատվիական ժողովրդի և Լատվիական պետության շահերին: Այդպիսի դիլետանտ քաղաքականության հետևանքով, վորն ավերեց յերկրի անտառային տնտեսությունը, աշխատավոր գյուղացիությունը գտնվում եր այնպիսի դրության մեջ, վոր գյուղացիները զրկված եյին իրենց համար խրճիթ և բակում շենքեր կառուցելու հնարավորությունից, յերբ նրանք չեյին կարողանում ոգտվել նույնիսկ վառելափայտից իրենց աղքատիկ խրճիթները տաքացնելու համար:

Ծանր անցյալ ուներ նաև լատվիական պրոլետարիատն իր թիկունքում: Լատվիայի արդյունաբերությունը, որ նախահեղափոխական շրջանում հասել էր զգալի զարգացման, իմպերիալիստների և այսպես կոչված տնտեսության «դեմոկրատների» տիրապետության վերջին տարիների ընթացքում ծայր աստիճան ծանր դրության մեջ ընկավ և վատորեն հասավ զարգացման ամենացածր մակարդակի:

Բուրժուական կառավարության ամբողջ տնտեսական քաղաքականությունն ուղղված էր տեղական արդյունաբերությունն արհեստականորեն պաշտպանելուն՝ ի հաշիվ բանվորների աշխատավարձի, ի հաշիվ մաքսատուրքերի և ծանր, անարդար հարկային բեռի, որն ընկած էր Լատվիայի ամբողջ բնակչության վրա: Այդ բանը կատարվում էր այնպիսի ձևով, որ սպառող լայն մասսաները հարկադրված էին լինում, որևիցե, յուղը և դյուղատնտեսական մյուս մթերքները ձեռք բերել արհեստականորեն ուռճացած գներով: Լատվիայի նախկին այսպես կոչված «դեմոկրատական» կառավարությունների հակաժողովրդական քաղաքականությունն արտաքին առևտրի մեջ արտահայտվում էր նրանով, որ կապիտալիստների և խոշոր հողատերերի շահերը պաշտպանվում էին արհեստական միջոցներով, դեմ էլով չնչին գների քաղաքականության, որը չնորհիվ գյուղատնտեսական մթերքներն արտաքին շուկաներում ավելի էժան էին վաճառվում, քան Լատվիայի ներքին շուկաներում:

Այսպիսով, ի հաշիվ ժողովրդի հարստանում էին մի վոչ-մեծ խումբ կապիտալիստներ, ակցիոներներ, սպեկուլյանտներ, որոնց ձեռքում էր վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական իշխանությունը:

Հենց այդպիսի արհեստական և ուղղակի հանցավոր մեթոդներով ու կուլակների արտադրության տակ ապորինի կերպով պետական միջոցներ դնելով էր պահպանվում նաև կուլակային տնտեսությունը:

Տնտեսական և քաղաքական տեսակետից Լատվիական այսպես կոչված դեմոկրատական հանրապետությունը, ուր լատվիական բուրժուազիան և խոշոր հողատերերն անխնա չահագործում էին ժողովրդին, վատորեն կորցրել էր իր անկախությունը, իսկ նրա կառավարությունը վողորմելի խաղատիկնիկ էր իմպերիալիստական կլիկների ձեռքին:

Այժմ տապալված ուլմանիսյան կառավարությունը միջոցներ էր ձեռք առնում, վորպեսզի և՛ ավելի ամրապնդի Լատվիայի կախումն իմպերիալիստական դիշատիչներից, պատրաստելով մեր հայրենիքի համար իմպերիալիզմի ավար դառնալու ցավալի վիճակ:

Հին, ռեակցիոն կառավարությունը, վարելով Լատվիան ՍՍՀՄ դեմ պատերազմի նախապատրաստելու իր պրովոկացիոն քաղաքականությունը, ամեն կերպ ձգտում էր թուլացնել լատվիական ժողովրդի համակրանքն ու սերը ՍՍՀՄ-ի նկատմամբ: Բայց դա չհաջողվեց: Այն պատմական կապերը, որոնք լատվիական ժողովրդին և Սորհրդային Միության ժողովուրդներին կապում են իրենց տնտեսական ու քաղաքական ազատագրման համար, աշխատանքի իշխանության համար, կապիտալի նկատմամբ աշխատանքի հաղթանակի համար տասնյակ տարիներ չարունակ մղած համատեղ պայքարով, ավելի ուժեղ դանվեցին ամեն տեսակ պրովոկացիաներից ու ստորություններից, որոնց նպատակն էր վիժեցնել բարեկամական հարաբերությունները Լատվիայի և ՍՍՀՄ-ի միջև:

Լատվիայում իշխանության գլուխ կանգնած պրովոկատորների ու պատերազմի հրձիգների նպատակն էր վիժեցնել Լատվիայի և ՍՍՀՄ-ի միջև 1939 թվի հոկտեմբերի 5-ին կնքված փոխադարձ ոգնության պայմանագիրը: Նրանք գաղտագողի և ՍՍՀՄ-ի թիկունքում կռում էին ռազմական դաշինք ՍՍՀՄ-ի դեմ, պատրաստում էին ռազմական հարձակում ՍՍՀՄ-ի վրա:

Այս պրովոկատորական գործելակերպը տապալվեց:

Սորհրդային Միության, նրա կառավարության և ընկեր Ստալինի դլխավորած կուսակցության (բոլշևիկների) արտաքին իմաստուն քաղաքականությունը խորտակեց ոտարերկրյա կապիտալի այդ վարձկանների խորամանկ մախինացիաները:

Սորհրդային կառավարության այս տարվա հունիսի 16-ի նոտան ամբողջ Լատվիայում վորոտաց վորպես ահեղ նախազգուշացում պատերազմի հրձիգներին, վորպես ահեղ հիշեցում, թե ինչպիսի մեծ պատասխանատվություն են կրում Սորհրդային Միության ժողովուրդների և լատվիական ժողովրդի հանդեպ նրանք, վորոնք կփորձեն պատմական իրադարձությունների ընթացքն ուղղել Լատվիայի աշխատավոր ժողովրդի և փոքր պետությունների մեծ ու փորձված բարեկամի՝ Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների կամքի ու չահերի դեմ: (Բուռն ծափահարություններ:)

Սույն թվի հունիսի 21-ին հին կառավարությունը տապալվեց: Ժողովուրդը կառավարության կազմի մեջ կոչեց նոր մարդկանց:

Սեյմի ընտրությունները, որ տեղի ունեցան սույն թվի հուլիսի 14—15-ին, յեղան Լատվիայի Աշխատավոր Ժողովրդի միության փայլուն տրիումֆը, միություն, որը պայքարում եր հանուն ժողովրդական լոզունգների, հանուն խաղաղության, հանուն հացի ու աշխատավոր ժողովրդի ազատության:

Լատվիայի պատմության մեջ առաջին անգամ ընտրություններին մասնակցեց համարյա ամբողջ ժողովուրդը: Այսպես, 1940 թվի հուլիսի 14—15-ին Սեյմի ընտրություններին Լատվիայում բոլոր ընտրական տեղամասերում ու յենթատեղամասերում տրվել է 1 179 649 ձայն, դրանից Լատվիայի Աշխատավոր Ժողովրդի միության թեկնածուների № 1 ցուցակի ոգին — 1 151 730 ձայն, կամ քվեարկությանը մասնակցածների ընդհանուր թվի 97,6%-ը, իսկ առանձին ընտրական okրուգներում տրվել են դրալի թվով ավելի շատ ձայներ:

Սույն թվի հուլիսի 14—15-ի ընտրություններին ձեռք բերված փայլուն հաղթանակը հանդիսացավ պայծառ ապացույց վոչ միայն այն մեծ պատելության, որ տածում է լատվիական ժողովուրդը դեպի հարստահարողները, վորոնք տապալվեցին հունիսի 19—20-ի պատմական այդ անմոռանալի որերին, հանդիսացավ վոչ միայն իր պետական իրավակարգը նոր ձևով, իր չահերին համապատասխան կազմակերպելու ջերմ ձգտման արտահայտությունը, այլև դեպի Խորհրդային Միությունն ունեցած մեծ բարեկամության ապացույցը, Խորհրդային Միություն, վորի որինակն ու հերոսական սխրագործությունները հանուն սոցիալիզմի մղած պայքարում անխոտոր վոգեշնչում եյին նաև այդ որերին, ինչպես այժմ էլ չարունակում են վոգեշնչել ամբողջ լատվիական ժողովրդին: (Ծափահարություններ:)

Լատվիայի Աշխատավոր Ժողովրդի միությունը միավորեց ամբողջ ժողովրդին, վորը միահամուռ կերպով իր դերագույն կամքն արտահայտեց Սեյմի վորոշումներում՝ Լատվիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու մասին, Լատվիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ ընդունելու խնդրիքով ՍՍՀՄ Գերագույն Խորհրդին դիմելու մասին, հողը համաժողովրդական ունեցվածք հայտարարելու և բանկերն ու արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները ազդայնացնելու մասին վորոշումներում:

Սեյմը միահամուռ կերպով Լատվիան հռչակեց Խորհրդային Հանրապետություն, վորովհետև Խորհրդային Միության ամբողջ պատմական փորձը սովորեցնում է բոլոր ժողովուրդներին, վոր միմիայն Խորհրդային իշխանությունն է իսկական արդարացի

իշխանությունը, իսկական ժողովրդական իշխանությունը, մինչդեռ կապիտալիստական յերկրների փորձը վկայում է, վոր կապիտալիստական կարգերը, ինչպիսի դեմոկրատական փետուրներով էլ վոր զարդարված լինեն դրանք, հանդիսանում են չնչին մի բուռն շահագործողների իշխանությունը՝ աշխատավոր ժողովրդի մեծամասնության նկատմամբ:

Այսպես կոչված դեմոկրատական պետությունների խղճուկ վիճակը բոլորի աչքի առջևն է:

Լուծելով Լատվիայի պետական իշխանության ձևի հարցը, Սեյմը միահամուռ կերպով այդ հարցը լուծեց այնպես, ինչպես կարող եր և պետք է լուծեր յուրաքանչյուր աշխատավոր մարդ: Նա լուծեց այն, հաստատելով Լատվիայում խորհրդային իշխանություն, Լատվիական Հանրապետությունը հռչակելով Խորհուրդների Հանրապետություն: (Ծափահարություններ:)

Ինձ, վորպես Լատվիայի Ժողովրդական Սեյմի Լիազոր պատվիրակության անդամի, Լատվիական Հանրապետության պետության պրեզիդենտի պարտականությունը կատարողի և մինիստր-պրեզիդենտի, մեծ պատիվ է վիճակվել՝ ՍՍՀՄ Գերագույն Խորհրդին հաղորդելու Լատվիական ժողովրդի խնդիրքը՝ Լատվիան Խորհրդային Միության մեջ ընդունելու մասին:

Հուլիսի 21-ին Լատվիայի Ժողովրդական Սեյմը դեկլարացիա ընդունեց Լատվիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելու մասին:

Թույլ տվեք ինձ կարդալ այդ պատմական դեկլարացիան.

«Յերկար տարիների ընթացքում լատվիական ժողովուրդը տքնքում եր չահագործողների ճնշման տակ, յենթարկվում եր կողոպուտի ու տարկացման, դատապարտվում եր աղքատության և մահացման: Լատվիական բանվորները և աշխատավոր ինտելիգենցիան դատապարտված եյին գործազրկության և սովամահության: Լատվիական գյուղացիները համարյա զրկվում եյին հողազրկությունից ու սակավահողությունից, քանի վոր ամբողջ հողը, աննշան բացառությամբ, զավթված եր սև ու դարչ բարոնների և այլ խոշոր հողատերերի կողմից: Տարեցտարի Լատվիան ավելի ու ավելի յեր քայքայվում: Նրա տնտեսությունն ավերվում եր և արտադրողական ուժերը կործանվում եյին: Բնակչության աճն անվերջ նվազում եր: Ազգային յեկամուտն ավելի ու ավելի յեր պակասում, ազգային պարտքն ավելի ու ավելի յեր աճում:

Դրա հետ միասին ավելի ու ավելի յեր ուժեղանում Լատվիայի համար կործանիչ տնտեսական ու քաղաքական կախումն իմ-

պերիալիստական դիշատիչներից, ոտարերկրյա կապիտալիստներից ու բանկիրներից: Իր հակաժողովրդական քաղաքականությամբ պլուտոկրատական հին կառավարությունը Լատվիային հասցրել էր կործանման եզրին: Անցյալում իշխանության գլուխ կանգնած ռեակցիոն կլիկայի վոճրագործ, դավաճանական քաղաքականության հետևանքով Լատվիային սպառնում էր իմպերիալիստների ավարը դառնալու վտանգ: Լատվիայի նախկին կառավարողների վոճրագործ կլիկան արհեստական միջոցներով փորձում էր պատնեշ ստեղծել լատվիական ժողովրդի և ԽՍՀՄ ժողովուրդների միջև, փորձում էր ամեն կերպ խանգարել մեր և խորհրդային ժողովուրդների եղբայրական մերձեցմանը, խանգարել մեր բարեկամության ու ամուր, անխախտ դաշինքին՝ մեր մեծ հարևանի, անպարտելի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետ:

Հին կառավարությունն աշխատում էր վերացնել 1939 թվի հոկտեմբերի 5-ին ԽՍՀՄ-ի հետ Լատվիայի կնքած փոխադարձ ոգնության պայմանագիրը: Հին կառավարությունն ուխտադրուժ կերպով խախտեց այդ պայմանագիրը, մեր երկիրը դավաճանորեն մղելով դեպի պատերազմի ու կորստի ուղին: Ժողովուրդների բարեկամության փոխարեն, անցյալում մեր պետության մեջ իշխանության գլուխ կանգնած ռեակցիոն կլիկան ամեն կերպ բորբոքում և հրահրում էր աղգային երկպառակությունն ու մարդատյաց չովինիզմը:

Այժմ, երբ լատվիական ժողովուրդը տապալել է հին ռեժիմը, ճնշման ու իրավազրկության ռեժիմը, և դուրս է եկել նոր կյանքի, նոր պետական ու հասարակական շինարարության լայն և լուսավոր ուղին, հասել է պատմական մեծ ժամը, երբ պետք է վերջնականապես ու հավիտյան վերացվեն բոլոր խոչընդոտները Լատվիայի ու ԽՍՀՄ-ի միջև, երբ պետք է որենսդրական կարգով ամրապնդվի Լատվիական Հանրապետության հաստատուն դաշինքն ու բարեկամությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետ: Լատվիայի Ժողովրդական Սեյմը, որ գումարվել է այժմ, հավատացած է, որ միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելն է ապահովում մեր պետության իսկական սուվերենիտետը, մեր արդյունաբերության, գյուղատնտեսության, մեր աղգային կուլտուրայի իսկական ծաղկումը, լատվիական ժողովրդի նյութական և կուլտուրական բարեկեցության վայելքն ու հուժկու վերելքը, մեր սիրելի հայրենիքի հուժկու պարզացումն ու ծաղկումը:

Մեր ժողովուրդը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության եղբայրական ժողովուրդների հետ կապված է ցարիզմի, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ մղված շատ ու շատ տարիների հեղափոխական պայքարի ամուր կապերով, նրանց դեմ, ովքեր կեղեքում էին ռուսական և լատվիական բանվորներին ու գյուղացիներին:

Հասել է այդ կապերն առհավետ ամրապնդելու ժամը: Լատվիական ժողովուրդը մտնելով սոցիալիզմի յերկրի յերջանիկ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքը, կծավալի իր հարուստ ստեղծագործ բոլոր ուժերը և Խորհրդային Միության աշխատավորների հետ ձեռք-ձեռքի տված առաջ կընթանա նոր կյանքի կառուցման ուղիով: Միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ լատվիական ժողովուրդը կկարողանա բուժել այն վերքերը, որ հասցրել են նրան ոտրկացման յերկար տարիները: Միայն իր մեծ բարեկամի՝ Խորհրդային Միության ոգնությամբ և վորպես խորհրդային հանրապետությունների եղբայրական ընտանիքի իրավահավասար անդամ, լատվիական ժողովուրդը կկարողանա բարձրացնել իր տնտեսությունը, զարգացնել իր աղգային կուլտուրան, ապահովել աղգային իրավահավասարությունը, Լատվիայի աշխատավորների համար ապահովել խաղաղություն, հաց և իսկական աղատություն:

Ցելնելով լատվիական ժողովրդի միահամուռ արտահայտված կամքից, Սեյմը վորոշում է.

Մտնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին, Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Միության կազմի մեջ՝ վորպես միութենական հանրապետություն նույն այն հիմունքներով, ինչպես վոր Խորհրդային Միության մեջ են մտնում Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը և մյուս միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետությունները:

Կեցցե՛ Խորհրդային Լատվիան: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի են կանգնում:)

Կեցցե՛ մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը»: (Բուռն ծափահարություններ: Ընկ. Կիրխենչեյնսը նախագահողին է հանձնում Լատվիական հանրապետության Սեյմի դեկլարացիան Լատվիան ԽՍՀՄ-ի մեջ մտնելու մասին: Բո-

լորը վոտքի յեն կանգնում: Ցերկարատև ովացիա ի պատիվ ազատ Լատվիայի յեղբայրական ժողովըրդի:)

Ցես խնդրում եմ բավարարել մեր խնդիրքը: Ամբողջ լատվիական ժողովրդի անունից յես հատուկապես հավատացած եմ, վոր ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը կբավարարի մեր խնդիրքը: (Բուռն ծափահարություններ:)

Ցես լինձ թույլ եմ տալիս խոր համոզմունք հայտնելու, վոր լատվիական ժողովուրդը մխահամուռ կերպով կընդունվի Խորհըրդային Միության ժողովուրդների յեղբայրական ընտանիքի մեջ, վոր Լատվիական հանրապետությունը կընդունվի ԽՍՀՄ կազմի մեջ վորպես լիիրավ միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեծ Խորհրդային Միությունը — ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ հերոսական Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ լամասուն Խորհրդային կառավարությունը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր առաջնորդ և ուսուցիչ, Լատվիայի ու ամբողջ աշխարհի աշխատավոր ժողովրդի առաջնորդ — ընկեր Ստալինը: (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Վողջույնի բացականչություններ ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով:)

Նախագահող: Խնդրում եմ Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամներին տեղ գրավել Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում:

(Ցերկար ժամանակ չլռող ծափահարություններ ի տես Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամները տեղ են գրավում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում:)

Անցնում ենք Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության քննարկմանը: Խոսքը տրվում է Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Պլեսումսին: (Բուռն ծափահարություններ:)

Պ. Պլեսումս (Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ): Խոսում է լատիշերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Գ. Իլյինը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք լինձ, վորպես պատվիրակության անդամի, մեզ ընտրող լատվիական ժողովրդի անունից վողջունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին և հանձնել նրա՝ մեծ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին: (Ծափահարություններ:)

Թույլ տվեք լինձ լատվիական ժողովրդի բոցավառ վողջույնը հաղորդել Խորհրդային կառավարությանը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովին (յերկարատև ծափահարություններ) ու ջերմ, սրտագին վողջույն սիրելի բարեկամ, առաջնորդ և ուսուցիչ — ընկեր Ստալինին: (Բուռն ծափահարություններ, վորոնք վոտքի յեն կանգնում: Բոլոր դեպուտատները վոտքի յեն կանգնում:)

Ընկերնե՛ր: Կատարվեցին լատվիական աշխատավոր ժողովրդի բազմամյա երազները: Լատվիայում տապալվել է կապիտալիստների ու կալվածատերերի կառավարությունը և հաստատվել է խորհրդային իշխանություն: Բազմաչարչար լատվիական ժողովրդի համար բացվել է յերջանիկ, ազատ, բերկրալի կյանքի ուղին, այն կյանքի ուղին, վորն իրենց համար նվաճել են Խորհրդային Միության ժողովուրդները բոլշևիկների կուսակցության և ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: (Ծափահարություններ:)

Լատվիական ժողովուրդը ամենատերտ բարեկամության կապերով միշտ կապված է յեղել ռուս ժողովրդի հետ, Խորհրդային Միության ժողովուրդների հետ:

Լատվիական բանվորները, գյուղացիները, աշխատավոր լինտելիգենցիան անձնազոհաբար պայքարել են խորհրդային իշխանության համար նաև Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության տարիներին՝ քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում: Լատիշ հրաձիգների զնդերը կանգնած են յեղել քաջարի Կարմիր Բանակի առաջավոր շարքերում:

Լատիշ բանվորներն ու գյուղացիները ուս-ուսի տված իրենց դասակարգային յեղբայրների՝ ռուս բանվորների ու գյուղացիների հետ, Կարմիր Բանակի շարքերում պայքարել են և՛ կրաս-

նովի դեմ, և՛ Դենիկինի դեմ, և՛ սպիտակգվեհացիների դեմ, և՛ ոտարերկրյա ինտերվենտների դեմ ու աշխատավորության այլ թշնամիների դեմ:

Այն ժամանակ մեզ չհաջողվեց պահպանել խորհրդային իշխանությունը Լատվիայում: Բուրժուազիան բանվորների ու գյուղացիների արյան մեջ խեղդեց Խորհրդային Լատվիան: Բայց ռուս բանվորները և գյուղացիները պաշտպանեցին ամենաթանկագին բանը — Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության գործը յերկրագնդի մեկ վեցերորդ մասում, և դրանումն է կոմունիզմի վերջնական հաղթանակի գրավականն ամբողջ աշխարհում:

Յես անձամբ լավ եմ հիշում Վլադիմիր Իլյիչ Լենինի խոսքերը, վոր ասել է նա 22 տարի սրանից առաջ Լատիշական 9-րդ հրաձիգ գնդի ժողովում Բրեստի հաշտության հարցի կապակցությամբ, յերբ Վլադիմիր Իլյիչը նախազուշակեց Լատվիայում խորհրդային իշխանություն հաստատելու անհրաժեշտությունը՝ վորպես հետևանք Ռուսաստանի հաղթական սոցիալիստական հեղափոխության:

Մեր մեծ ուսուցիչ ընկեր Լենինի մարգարեական խոսքերը կատարվեցին: Մենք ընթացանք Լենինի նշած ուղիով և այդ ուղին հասցրեց մեզ հաղթանակի:

Լատվիական ժողովուրդը դժվարությամբ ձեռք բերեց այդ հաղթանակը: Մեր թիկունքում մենք թողել ենք հեղափոխական պայքարի 22 տարիները, կյանքի ամենածանր պայմանների 22 տարիները:

Լատվիական աշխատավորները հյուծվում եյին կապիտալիստական չհատգործման ուժից վեր ծանրության տակ:

Հարկ չկա բացատրելու թե ինչ սարսափելի դրության մեջ եյին գտնվում գործազուրկ բանվորները, իսկ նրանք կազմում եյին բավականին մեծ թիվ, վորը պաշտոնական վիճակագրությունը թաղցնում եր:

Լավ չեր նաև գյուղացիության դրությունը:

Գյուղացիական սակավազոր անտեսությունները, վորոնք կազմում եյին բոլոր գյուղացիական անտեսությունների կեսից մի փոքր պակաս, ունեյին ամբողջ հողի 10%-ը միայն: Այդ նույն ժամանակ, կուլակային անտեսությունները, վորոնք կազմում եյին բոլոր անտեսությունների 15%-ը միայն, տիրում եյին ամբողջ հողի 25%-ին:

Գյուղացիներին խեղդում եյին հարկերով, աշխատավոր գյուղացիության արյունը խմում եյին կալվածատերերը, կուլակները, սպեկուլյանտները:

Ծանր եր նաև աշխատավոր ինտելիգենցիայի կյանքը: Լատվիայի ինտելիգենցիայի ճնշող մեծամասնությունը Լատվիայի բոլոր աշխատավորների հետ միասին տառապում եր թշվառության մեջ և այնպես, ինչպես բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը, տենչում եր ժողովրդի ազատագրումը և պայքար եր մղում կապիտալիստական ռեժիմի դեմ:

Լատվիայի բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը չատ տառապանքներ կրեցին կապիտալի կամակատարների նողկալի կլիկայի տիրապետության տարիներին:

Յես, ինչպես և Լատվիայի չատ ու չատ չարքաշ աշխատավորներ, յենթարկվել եմ դաժան ռեպրեսիաների: 8 տարի և 9 ամիս յես բանտ եմ նստել, ուր նետել եյին ինձ անլեգալ կոմունիստական գործունեության համար:

Յերբ վերհիշում ես թե բանտերում ինչպիսի տարբեր ծանակի եյին յենթարկում մեզ, քաղաքական կալանավորներիս, ակամայից սեղմվում են բռունցքներդ:

Բանվորներն ու գյուղացիները, վորոնք կազմում եյին Լատվիայի բնակչության դրեթե յերեք քառորդ մասը, չեյին կարող իրենց կուսակցությունն ունենալ: Մենշևիկները, եսերները և կապիտալի այլ գործակալները, գտան մորթի հագած այդ պայլերը սրիկայաբար փորձում եյին խոսել բանվորների ու աշխատավոր գյուղացիների անունից:

Կոմունիստական կուսակցությունը ընդհատակում յեվս չդադարեցրեց իր աշխատանքը: Մեր նիստերի դահլիճներն եյին քաղաքի վորևե ծայրամասում գտնվող տների նկուղներն ու խուլ անտառների բացատները: Մենք հնարք եյինք գտնում կոնսպիրատիվ դրադարաններ ունենալ մարքսիզմի-լենինիզմի կլասիկների յերկերից, ծածուկ կարդում եյինք Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի յերկերը, դրա համար ոգտվելով ամեն մի հնարավորությունից, կարդում եյինք հաճախ մոմի լույսի տակ:

Բանտում կարդում եյինք ընկեր Ստալինի ճառերը, կոմինտերնի վորոշումները և այլ փաստաթղթեր, վորոնք մանր տառերով գրված եյին լինում ծխախոտի բարակ թղթի վրա:

Լատվիայի կոմունիստական կուսակցությունը համառ ու հերոսական աշխատանք եր տանում բանվորների ու գյուղացիների շրջանում:

Վո՛չ կյանքի անտանելի պայմանները, վո՛չ ռեպրեսիաների ծանրությունը չկարողացան ընկճել լատվիական աշխատավոր ժողովրդի վոգին: Մենք չարունակում եյինք պայքարել կոմունիական ինտերնացիոնալի դրոշի տակ: Մեզանից ամեն մեկի

կրծքում անչեջ հրի պես վառվում եր Մարքսի — Ենգելսի — Լենինի — Ստալինի գաղափարների հաղթանակի մեծ հավատը:

Ցեվ ահա հասավ ժամը, յերբ լատվիական ժողովուրդը հպարտությամբ տոնում է կապիտալիստական կարգերի նկատմամբ ձեռք բերված իր հաղթանակը:

Սեյմը միահամուռ կերպով վորոշում ընդունեց Լատվիան խորհրդային սոցիալիստական հանրապետություն հռչակելու մասին:

Լատվիայի ժողովրդական Սեյմը վորոշեց խնդրել ՌՍՖՍՀ Գերագույն Խորհրդին՝ Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ ընդունելու մասին:

Վորպես Սեյմի Լիազոր պատվիրակության անդամ, յես լատվիական ամբողջ ժողովրդի անունից ջերմորեն պաշտպանում եմ այդ խնդիրքը և ՌՍՖՍՀ Գերագույն Խորհրդին խնդրում եմ բավարարել Սեյմի խնդիրքը՝ Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ ընդունելու մասին:

Կեցցե՛ Խորհրդային Կառավարությունը (բուռն ծափահարություններ) և նրա ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեծ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր մեծ, սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Ընկեր դեպուտատներ, առաջարկություն եստացվել ընդմիջում հայտարարել: Առարկություններ չկա՞ն: Չկան: Հայտարարվում է ընդմիջում 15 րոպեյով:

(Ընդմիջում:)

Նախագահող: Նիստը վերսկսվում է: Խոսքը տրվում է Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ Ցեվա Ռուսիս-Պալդինիային: (Բուռն ծափահարություններ:)

Ցե. Ռուսիս-Պալդինիա (Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ): Խոսում է լատիշերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Դ. Դերզաչը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Լատվիայի կոմունիստական կուսակցության անունից, լատվիայի ժողովրդական Սեյմի անունից, Լատվիայի աշխատավոր կանանց և Լատվիայի ամբողջ աշխատավոր ժողովրդի անունից վողջունում եմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին: (Ցերկարատև ծափահարություններ:)

Լատվիայի աշխատավոր ժողովուրդը 22 տարի դանվում եր լատվիական բուրժուազիայի ծանր ճնշման տակ:

Այդ դիշատիչները 1919 թվին արյան մեջ խեղդեցին Լատվիայի յերիտասարդ խորհրդային հանրապետությունը: Ցերբ հակահեղափոխական բանդաներն ոտարերկրյա ինտերվենտների անմիջական մասնակցությամբ զավթեցին Ռիգան, միայն Ռիգայում դանառաջ սպանվեցին ու մահապատժի յենթարկվեցին Լատվիայի բանվոր դասակարգի և դյուղացիության ավելի քան 3 հազար լավագույն ներկայացուցիչներ:

Սպիտակ տեռորի զոհերի քանակն ամբողջ Լատվիայում մի քանի անգամ գերազանցում եր այդ թվից:

Այդ որվանից հաստատվեց ամենասանձարձակ տեռորի ու չահագործման իշխանություն, կապիտալիստների և կալվածատերերի արյունարբու դիկտատուրա, վորը դլխավորում եր լատվիական ժողովրդի վոխերիմ թշնամին — խոշոր կապիտալիստ ու կալվածատեր Ուլմանիսը:

Դժվար է, ընկեր դեպուտատներ, բառերով նկարագրել այն սոսկալի դրությունը, վորի մեջ այդ 22 տարվա ընթացքում դանվում եյին Լատվիայի բանվորները, դյուղացիները, աշխատավոր ինտելիդենցիան: Առանձնապես ծանր եր կանանց դրությունը: Ուժից վեր աշխատանք, չնչին աշխատավարձ, աշխատավոր մոր ու մանկան վորևե պաշտպանության լիակատար բացակայություն, լիակատար իրավազրկություն — ահա թե ինչ եր վիճակված Լատվիայի աշխատավոր կանանց: Լատվիայում անընդհատ վոտնահարվում եյին կնոջ իրավունքները: Կյանքի մարդկային պայմանների պահանջներին կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները պատասխանում եյին զազրելի առաջարկություններով, վորոնք կանանց հրում եյին անբարոյականության դիրկը: Կինը միայն մի տեսակետից եր տղամարդուն «իրավահավասար»: Այդ այն դեպքում, յերբ հեղափոխական դործունեության մասնակցելու համար կանանց վոչ պակաս դաժանությամբ, քան տղամարդկանց, յերկար տարիներով բան-

Եյին նետում, ուղարկում եյին տաժանակիր աշխատանքի, մայրերին խլում եյին մանուկներից, դատապարտելով նրանց սովալուկ մահվան ու վոչնչացման: Բուրժուազիայի տիրապետության որոք լատվիական ժողովուրդն ավելի ու ավելի խորն եր ընկնում կապիտալիստական շահագործման, աղքատության, աղետների և տառապանքների անդունդը:

Լատվիայի կոմունիստական կուսակցությունը, վորին յերբեք,— վո՛չ մինչև 1934 թիվը և, առավել ևս, վո՛չ այդ թվից հետո,— թույլ չեր տրվում լեգալ գոյություն ունենալ, այդ բոլոր տարիների ընթացքում, մոայլ ռեակցիայի ամենածանր պայմաններում ընդհատակյա աշխատանք եր տանում՝ կազմակերպելով բանվորներին ու գյուղացիներին պայքարելու կապիտալիզմի դեմ, պայքարելու հանուն իրենց քաղաքական ու տնտեսական ազատագրման, Լատվիայի աշխատավոր մասսաների մեջ պարզացնելով սիրո ղեկացմունք դեպի ԽՍՀՄ, վորտեղ բանվորներն ու գյուղացիները Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ սոցիալիզմի համար մղվող պայքարում ձեռք են բերել վայելուն հաղթանակներ:

Կոմունիստական կուսակցությանը պատկանելն անգամ դատի տրվելու և յերկար տարիների բանտարկության պատճառ եր դառնում:

Որինակների համար կարիք չունեմ հեռու գնալու: Այդ ամենը յես, ինչպես և իմ ընդհատակյա կոմունիստական աշխատանքի գծով շատ ու շատ ընկերներ, ղեկացել եմ ինձ վրա:

1930 թվին ոխրանկան ինձ ձերբակալեց բանվորական և գյուղացիական բնակչության շրջանում ընդհատակյա աշխատանք կատարելու համար: Մինչև դատը յես մեկ տարուց ավելի գտնվել եմ նախնական կալանքի մեջ: Դատարանն ինձ դատապարտեց հինգ տարվա տաժանակիր աշխատանքի, չհաշվելով անգամ նախնական կալանքը: Այդ յերկարատև վեց տարիներից հետո ինձ բանտից չազատեցին: Գտնվեց մի «որենք», վորի հիման վրա յես պետք է մնայի բանտում ու յես մնացի այնտեղ դարձյալ ավելի քան յերկու ու կես տարի: Ճես բանտում մնացի դրեթե ինքը տարի:

Դժվար է բառերով նկարագրել այն տանջանքներն ու ծաղրուծանակը, վորին յենթարկվում եյինք բանտում մենք, քաղաքական կալանավորներս:

Ցերեք տարի յես նստած եյի մեկուսարանում ե՛լ ավելի վատթար պայմաններում: Բայց չնայած ամեն տեսակի տանջանքներին ու տառապանքներին, չնայած բուրժուական ճնշման ու բուրժուական կամակատարների մոլեգնություններին ամբողջ սար-

ափին, մեր մեջ կենդանի յեր հավատը, վոր կոմունիստական կուսակցության գործը կհաղթանակի (բուռն, յերկարատև ծափահարություններ), վոր մեզ կոգնի խորհրդային մեծ ժողովուրդը, վոր մեր մասին հիշում է նա, վորի անունը միշտ յեղել է ու մնում է մեր սրտերում,—ընկեր Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Բանտի յերկար տարիները, վորով ինձ պարզեվատրել եր լատվիական բուրժուազիան, հիմա դարձել են անցյալ: Այժմ յես ներկա յեմ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Սեսսիայում վորպես լատվիական ժողովրդի կողմից ազատ ընտրված պատվիրակության անդամ: Ահա իսկական պարգեվը, վորը յես ստացել եմ ժողովրդից: (Ծափահարություններ:)

Կարող եք դուք, ընկեր դեպուտատներ, հասկանալ, թե ինչքա՞ն խորն է հուզում ինձ այդ, ինչքա՞ն յերջանիկ եմ յես ու ինչքա՞ն յերջանիկ են Լատվիայի աշխատավորները, վորոնք վերջապես ազատ, յերջանիկ կյանք են ձեռք բերել իրենց համար Խորհրդային Միության բարեկամության չնորհիվ, նրա ոգնության չնորհիվ:

Ամբողջ աշխարհը տեսնում է թե ինչպիսի հսկայական հաջողություններ է ձեռք բերել խորհրդային ժողովուրդը, վորին ղեկավարում է բոլշևիկների անպարտելի կուսակցությունը և նրա մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Փոթորկալի ծափահարություններ: Ովացիա: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Լատվիական ժողովրդի առջև խնդիր է դրված՝ ուժեղ տեմպերով առաջ ընթանալ Լենինի և Ստալինի մատնանշած ուղիով:

Մեծ Խորհրդային Միության բարեկամության չնորհիվ լատվիական ժողովուրդը խուսափեց պատերազմից և ոգտվում է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի բարիքներով: Լատվիայի աշխատավորներն ազատվել են չղթաներից: Խորհրդային Լատվիան արագորեն առաջ կընա սոցիալիստական չինարարության ուղիով:

Մենք, լատվիական ժողովուրդս, գործ կդնենք մեր բոլոր ուժերը, վորպեսզի ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին ամրապնդենք խորհրդային յերկրի պաշտպանական հզորությունը և ապահովենք կոմունիստական հասարակության կառուցումը ԽՍՀՄ-ում:

Ընկեր դեպուտատներ, ձես ամբողջ սրտով, մեր վսեմ ամբողջ ժողովրդի հետ միասին, խնդրում եմ բավարարել Ժողովրդական Սեյմի միջնորդությունը՝ Լատվիական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ ընդունելու մասին: (Ջերմ ծափահարություններ:)

Կեցցե՛ Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Կեցցե՛ մեր առաջնորդ, բարեկամ և ուսուցիչ մեծ Ստալինը: (Բուռն, երկար ժամանակ չդադարող ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի:)

Նախագահող: Խոսքը տրվում է Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Պաբերզսին:

Յու. Պաբերզս (Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ, արդարադատության մինիստր): Խոսում է լատիշերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ս. Սիմանովիչը:

Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Վորպես Լատվիական Ժողովրդական Սեյմի դեպուտատ և վորպես Լատգալիայի աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչն այդ Սեյմում, ձես հաղորդում եմ ձեզ ամենասրտագին ու ամենաանկեղծ ողջույն: (Բուռն ծափահարություններ:)

Լատվիական աշխատավոր ժողովուրդը, և հատկապես լատգալական գյուղացիները, վորոնք ճնշող մեծամասնությամբ հողագործ և սակավահող են, լատգալական բանվորներն ու աշխատավոր ինտելիգենցիան, վորոնց ամեն կերպ հետապնդել և ճնշել են Լատվիայի կապիտալիստներն ու խոշոր հողատերերը, այսօր իրենց հայացքներն ամենամեծ հուզմունքով հառում են մեծ Սորհրդային Միությանը, կարմիր Մոսկվային: Նրանք անհամբերությամբ սպասում են Գերագույն Սորհրդի այն պատմական վորոշմանը, վորն առհավետ կվճռի յերիտասարդ Սորհրդային Լատվիայի բաղդը:

Լատվիայի աշխատավոր ժողովուրդը մինչև վերջերս իրավազուրկ եր թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական տեսակետից, վորովհետև բուրժուազիան վոչնչացրել եր աշխատավոր ժողովրդի բոլոր իրավունքները:

Լատվիայի լավագույն մարդիկ բանտ եյին նետված:

Ազատ մտքի ամեն մի արտահայտություն ճնշվում եր անողորքաբար: Հասարակական կազմակերպությունները ցրում եյին, և հասարակական կյանքը քայքայված եր մինչև հիմքերը:

Վորպեսզի մեկ ազգության մեջ ատելություն հրահրի դեպի մյուսը, բուրժուական կառավարությունն արմատավորում եր դաշնային չովինիզմ, սերմանելով ազգային յերկպառակություն, վոչնչացնելով մյուս ժողովուրդների ազատ ազգային զարգացման ամեն մի հնարավորություն: Վորպես դատական գործիչ ձես չեմ կարող չասել թե ինչպիսի խայտառակ ու ստոր բացուցիչ դրություն մեջ եյին դտնվում Լատվիայի դատարանները ու արդարադատությունը:

1922 թվի բուրժուա-դեմոկրատական սահմանադրությունը հրաչակում եր դատարանների անկախություն, բայց իրականում այդ անկախությունը գոյություն չուներ: Դատարանը վերածված եր մի որգանի, վորն ամբողջությամբ և լիովին կախված եր կառավարությունից, կուրորեն կատարում եր կառավարական որգանների բոլոր դիրեկտիվները ու ցուցումները:

Այսպես կոչված «արդարադատությունը» առանձնապես խայտառակ կերպով եր վարում քաղաքական գործերը, վորոնց նկատմամբ ձեպպես չեյին պահանջվում դատապարտյալի հանցանքի վոչ միայն ձևական, այլև ընդհանրապես վոչ մի տեսակի ապացույցներ: Բավական եր ունենալ քաղաքական ոխերանկայի մատնություն, վորպեսզի մեղադրյալի բաղդն անդարձ վորոշված լիներ:

Կառավարությունը դատարաններին ուղղակի հարկադրում եր կայացնել այնպիսի վճիռներ, վորպիսիք ցանկալի եյին կառավարությանը:

Դաժան կերպով հետապնդվում եյին մանր հանցագործությունները: Դրա փոխարեն լայնորեն խրախուսվում եյին խոշոր բարձրաստիճան հանցագործները, վորոնք բոլորովին անպատիժ եյին մնում:

Լատվիայում հասարակության մեջ և Սեյմում բազմիցս հարց է հարուցվել անկախ դատարան ստեղծելու մասին, դատարան, վորում մասնակցեն հասարակության ներկայացուցիչները, կամ ժողովրդական ատենակալները: Բայց բուրժուական Լատվիան չեր կարող ժողովրդին տալ անկախ և արդարադատ դատարան, վորովհետև լատվիական բուրժուազիայի ձեռքում դատարանը ժողովրդի չհաղթահարման ու ճնշման գործիք եր միայն:

Լատվիան իսկապես անկախ, արդարադատ ժողովրդական դատարան կտեսնի միայն հիմա, խորհրդային իշխանության որոք,

յերբ լատվիական արդարադատությունը կվերափոխվի մեծ Ստալինյան Սահմանադրության նոր հիմունքներով:

Դեռ 1914 թվի պատերազմից առաջ Լատգալիայի բնակչության զգալի մասը, ապրուստի միջոց չգտնելով իր հայրենիքում, աշխատանք էր վորոնում Լատգալիայի սահմաններից դուրս ու մինչև իսկ Լատվիայի սահմաններից դուրս:

Ռուսաստանի ֆաբրիկաներում և գործարաններում աշխատելով ռուս բանվորների հետ, լատգալցիները ռուս բնակչության հետ ապրում էին յեղբայրաբար թե Լատգալիայում և թե այն վայրերում, վորտեղ լատգալցիներն աշխատում էին ռուս բանվոր ընկերների հետ: Լատգալցի բանվորներն ընթանալով ձեռք-ձեռքի տված Պետերբուրգի և այլ քաղաքների բանվորների հետ, 1905 թվին ու հետագա տարիներին քաջությամբ և անձնազոհաբար պայքարում էին ցարական ռեժիմի դեմ, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ, աշխատավոր ժողովրդին ճնշողների դեմ: Լատգալիայի զավակները, ինչպես նաև Վիտեմցի, Կուրզեմցի և Զեմգալցի լատիշները, ռուս պրոլետարների ու բանվորների հետ միասին 1917 թվին տոկուն և անվեհեր կերպով պայքարում էին Ռուսաստանում կապիտալիստական կարգերը տապալելու համար, խորհրդային իշխանություն — ժողովրդի իշխանություն հաստատելու համար:

Քաղաքացիական պատերազմի չրջանում նրանք մարտնչում և զոհվում էին խորհրդային ժողովրդի բազմաթիվ թշնամիների դեմ մեծ յերկրի հյուսիսում և հարավում, արևելքում և արևմուտքում մղվող պայքարում: Այդ պատճառով Լատգալիայի բնակչությունը, ինչպես և ամբողջ Լատվիայի բնակչությունը դեպի մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը միշտ տածել և այժմ էլ տածում է համակրանքի, սերտ բարեկամության ու սրտագին յեղբայրության զգացմունքներ:

Լատգալցիները Լատվիայի ավելի չքավոր, կուլտուրական և տնտեսական տեսակետից վորոշ չափով հետամնաց բնակիչներն են: Լատգալցիները Լատվիայի մյուս մասի բնակչությունից տարբերվում են իրենց լեզվի և տնտեսական կենցաղի վորոշ առանձնահատկություններով:

Լատգալցիներին վիճակվել էր առանձնապես աղաղակող անարդարություն՝ բուրժուական կառավարողների կողմից: 1921 — 1924 թվերին ագրարային ռեֆորմ անցկացնելիս լատգալական գյուղացիներին ինչպես և մյուս հողազուրկ և սակավահող գյուղացիներին, խաբեցին ու թողին առանց հողի:

Լատգալցիների դրությունը տարեցտարի վատանում էր, հատկապես այն կապակցությամբ, վոր նրանց սակավ-յեկամտաբեր հողի հարկերի ու պարտքերի ծանրությունն անարդել կերպով մեծանում էր: Դրա հետևանքը յեղավ այն, վոր շատ գյուղացիական տնտեսություններ վաճառքի հանվեցին հասարակական աճուրդով, ամբողջ գյուղացիական ընտանիքներ մնացին անտիևան ու առանց աննդի, ստիպված յեղան գնալ կուլակների մոտ բատրակության անելու՝ կիսաքաղց, վողորմելի վարձատրությամբ:

Լատգալցիներին բատրակ դարձնելու մեջ կուլակներին ոգնության էր գալիս նաև 1937 թվին հրատարակված որենքը, վորն արգելում էր բաժանել 10 հեկտարից պակաս հողամասերը: Այդ դեպքում ամբողջ տնտեսությունը պետք է մնար ավազ տղայի, յեղբոր կամ քրոջ ձեռքում: Մնացած մյուս ժառանգները կամ համատերերը, ստանալով իրենց բաժին հողամասի համար չնչին դռոշներ, պետք է հայրենի տնից հեռանային ուր աչքերը կտրեր և մնային բաց յերկնքի տակ:

Լատգալցիների ազգային զարգացումը ճնշվում էր ամեն կերպ: Լատգալցիները զրկված էին սեփական դպրոցներից: Լատգալական լեզուն արգելված էր դպրոցում:

Միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում լատգալցի յերիտասարդության ընդունելությունն անկարելիության չափ սահմանափակված էր: Կրթություն ստացած լատգալցիներին, վորպես կանոն, աշխատանքի չէին թողնում պետական ապարատում, այն ժամանակ, յերբ ուլմանիսյան կլիկայի արբանյակներն ու լակեյները զրավում էին յերեք-չորս պաշտոն:

Այդ բոլոր կեղեքումներին ու ճնշումներին այժմ վերջ է դրված: Լատվիական աշխատավոր ժողովուրդը, փառապանծ և հերոսական բանվորա-գյուղացիական կարմիր բանակի պաշտպանության տապալեց բոլորին տեսլի ուլմանիսյան ռեժիմը: Այդ ռեժիմը, վորն անհամար թշվառություններ պատճառեց աշխատավոր ժողովրդին, այլևս յերբե՛ք հարություն չի առնի ու չի բարձրացնի իր գիշատիչ գլուխը: Դրա յերաշխիքը մենք տեսնում ենք խորհրդային իշխանության անխորտակելի ուժի մեջ:

Այդ պատճառով Լատգալիայի բնակչությունը Խորհրդային Լատվիայի բոլոր աշխատավորների հետ միասին անկեղծորեն խնդրում է Գերագույն Խորհրդին՝ Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն առհավետ ընդունել խորհրդային սոցիալիստական հանրապետությունների մեծ ընտանիքի մեջ: (Ծերկարատև ծափահարություններ:)

Լատգալցիները համոզված են, որ այն բանից հետո, երբ Լատվիական Ժողովրդական Սեյմը խորհրդային կարգեր հաստատեց Լատվիայում, այն բանից հետո, երբ Խորհրդային Լատվիան կդառնա մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավահավասար անդամը, ընդմիշտ վերջ կտրվի և այն կեղեքումներին ու անարդարություններին, որոնք այնպե՛ս ճնշում էին Լատվիայի աշխատավորներին, այդ թվում նաև առանձնապես լատգալցիներին:

Այս բերկրալի ժամին մենք ամբողջ սրտով հայտարարում ենք.

Կեցցե՛ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների մեծ ընտանիքը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ ԽՍՀՄ–ի կազմակերպիչ, նրա հաղթանակների վոզեչնչող, ճնշված ժողովուրդների առաջնորդ և ազատարար—Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը: (Բուռն, երկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի են կանգնում:)

Նախագահող: Խոսքը տրվում է Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Լացիսին: (Բուռն ծափահարություններ:)

Ցու. Լացիս (Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի անդամ, ժողովրդական բարերարության մինիստր): Խոսում է լատիշերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ի. Կազիսը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք ինձ ազատագրված և նոր կյանքի համար վերածնված Լատվիայի անունից բոցավառ վողջույն հաղորդել ձեզ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատներիդ, և հանձինս ձեր՝ բազմազգ խորհրդային ժողովրդին: (Բուռն ծափահարություններ:)

Լատվիայում կատարվեց մեծագույն հեղափոխություն, մի հեղափոխություն, որը հնարավոր է միայն մեր որերում, և որն ավարտեց լատվիական ժողովրդի՝ հանուն իր ազատության մղած պատմական պայքարը:

Այդ պայքարում Լատվիայի բանվորների և աշխատավոր գյուղացիների կողքին կանգնած էր Լատվիայի աշխատավոր ինտելիգենցիայի առաջավոր մասը և մասնավորապես առաջադեմ գրողները, որոնք իրենց յերկերում մերկացնում էին կապիտալիստական աշխարհի սոցիալական մեծ անարդարությունը: Դրա համար նրանք թանդ էին հատուցում՝ բանտարկությամբ

կամ հարկադրված էին քարշ տալ իրենց խղճուկ գոյությունը վտարման մեջ:

Առաջադեմ գրողների գրքերն արգելվում կամ բռնագրավվում էին: Գրողները, քաղցից չմեռնելու համար, յեթե նրանք չէին ցանկանում վաճառել իրենց համոզմունքները կապիտալիստներին, ստիպված էին լինում այլ աշխատանք վորոնել, մինչև անգամ հատարակ ֆիզիկական աշխատանք կատարել:

Ինձ, վորպես լատվիական գրողներից մեկին, այդ լավ հայտնի յե իմ գրական աշխատություններով և մասնավորապես ուլմանիսյան գրաքննության կողմից այլանդակված «Կուսական անտառ» վեպի որինակով:

Սոցիալ–քաղաքական թեմայով գրելն ընդհանրապես անհնարին եր: Բացի այդ, չեր կարելի գրել նույնիսկ կարմիր գույնի մասին: Նույնպես չեր կարելի գործածել այնպիսի բառեր, ինչպես որինակ «սառցահոսանք» բառը, վորովհետև սառցահոսանքը նույնպես Ուլմանիսին թվում եր ինչ–վոր կասկածելի: (Դահլիճում աշխուժություն:) Կարելի յեր գրել սիրո մասին, բայց այն էլ վոչ ամեն տեսակի սիրո մասին: Ազատության, Խորհրդային Միության և կոմունիզմի նկատմամբ տածած սերը համարվում եր ամենածանր հանցագործություն, և այդ սիրո արտահայտությունը գրականության մեջ դաժանորեն հետապնդվում եր ուլմանիսյան գրաքննության կողմից, վորը մոլեգնում եր ամենուրեք:

Վոչ վոք չպետք է իմանար ճշմարտությունը Խորհրդային Միության մասին:

Գրողները պետք է նենգափոխեին պատմությունը և ապացուցեին, վոր Ուլմանիսի իշխանության գլուխ անցնելը նախատեսված է յեղել համարյա թե անդրջրհեղեղյան ժամանակից: (Դահլիճում ուրախ աշխուժություն:)

Բայց չնայած այդ ամենին, չնայած վոր լավագույն գրողները քշված էին ընդհատակ, լատիշական գրականությունն այդ ծանր, կոշմարային պայմաններում անգամ չարունակում եր ապրել ու զարգանալ, ստեղծելով գեղարվեստական ստեղծագործության հիասքանչ նմուշներ, վորոնք դաստիարակում էին ժողովրդին ու կոչում նրան իր ազատության թշնամիների դեմ պայքարելու համար, նմուշներ, վորոնք աշխատավոր ժողովրդին ոգնում էին քայլ առ քայլ առաջընթացել այդ պայքարում:

Դեռ 1905 թվի հեղափոխությունից առաջ պոետ Պումպուրսը գրել եր մի հոյակապ ժողովրդական եպոս՝ «Լաչպլեսիս» վերնագրով, վորի մեջ գովերգում եր ժողովրդական հեքյաթային հե-

րոսին, վորը մենամարտի մեջ հաղթահարել է արջին: Լատվիայի մեծագույն պոետ Ռայնիսն այդ նույն թեման մշակեց «Կրակ ու դիշեր» դրամայում, վորը ժողովուրդը մինչև հիմա յել դիտում է սրտի հուզումով, վորովհետև Լաչպլեսիսի մեջ տեսնում է իր ազատարարին՝ ոտարերկրյա և հայրենի ճնշողների լծից: Գրող Անդրեյ Ուպիտսը, վորը ներկայումս ժողովրդական Սեյմի դեպուտատ և մեր Լիագոր Հանձնաժողովի անդամն է, իր վեպերում ու պիեսներում անդուլ կերպով ցույց էր տալիս բանվորների և գյուղացիների անձնվեր պայքարը հանուն իրենց ազատության: Դրա համար նրա անունը վերջին տարիների ընթացքում հնարավորություն չուներ յերևալ մամուլում: Նույնիսկ Ալեքսեյ Տոլստոյի «Պետրոս Առաջին» վեպի թարգմանությունն ընկ. Ուպիտսը ստիպված էր ստորագրել Կուրմիս կեղծ անունով, վոր լատիշերեն նշանակում է խլուրդ, թաղցնելով լատվիական ժողովրդի մեջ փառք վայելող իր դրական անունը:

Վորպես Լատվիայի ժողովրդական բարորության մինիստր, յես չեմ կարող կանգ չառնել նաև մի քանի այլ հարցերի վրա, վորոնք բնութագրում են Լատվիայի բանվորների, գյուղացիների և աշխատավոր ինտելիգենցիայի դրությունն ամբողջությամբ: Այդ կապակցությամբ յես ուզում եմ չոչափել, թեկուզ և մի քանի խոսքով, բուրժուական Լատվիայի այսպես կոչված աշխատանքային որենադրությունը, վորն ըստ էության վոչ այլ ինչ էր, յեթե վոչ բացարձակ ծաղրուծանակ աշխատավոր ժողովրդի իրավունքների նկատմամբ:

Աշխատավորների ամենամեծ խումբը — գյուղատնտեսական բանվորները բոլորովին չեյին պաշտպանվում որենքով: Նրանց վրա չեյին տարածվում մինչև իսկ այն խղճուկ որենքները, վորոնք գործում եյին քաղաքի բանվորների վերաբերյալ, ինչպես որինակ՝ աշխատանքային որվա որենքը, արձակուրդների վերաբերյալ վորոշումը, հիվանդանոցային դրամարկղների վերաբերյալ որենքը: Բատրակներին բժշկական ոգնություն ցույց տալու անհրաժեշտությունը վորոշում էր վոլոստային վարչությունը: Բայց վոլոստային վարչություններում նստած եյին կուլակները: Սովորաբար հիվանդ բատրակը կամ նրա հարազատներն այնքան եյին գնում վոլոստային վարչություն, վոր հիվանդը կամ առողջանում էր, կամ մահանում:

Լատվիայում կիրառվում էր — «եժան ողի, թանգ դրքեր» սկզբունքը: Հետևելով այդ սկզբունքին, կառավարությունը հարբեցնում էր ժողովրդին և աշխատում էր նրանից միջոցներ

կորզել իր տիրապետության համար և միաժամանակ նրա մեջ մեռցնել ամեն մի ազատ միտք:

Ուլմանիսի կառավարությունն աչքի յեր ընկնում առանձին մոլեռանդությամբ դպրոցների և այլ կուլտուր-լուսավորական հիմնարկների հաշվին յեկեղեցիներ կառուցելու գործում:

Արտադրության մեջ տուժած բանվորների նկատմամբ հարուցվում եյին աղաղակող անարդարություններ: Յեթե բանվորը հաշմանդամ էր դառնում ձեռնարկատերերի կողմից անհրաժեշտ նախապաշտպանական միջոցներ ձեռք չառնելու պատճառով, ապա դրա հանցանքը դնում եյին վոչ թե ձեռնարկատիրոջ, այլ բանվորի վրա և բոլորովին մերժում եյին թոշակ նշանակել նրան:

Միևնույն ժամանակ բարձրաստիճան չինովնիկները ստանում եյին այնպիսի թոշակներ, վոր հարյուրապատիկ դերազանցում եյին աշխատանքի հաշմանդամ բանվորների թոշակներից: Որինակ, պետության նախկին պրեզիդենտ պարոն Կվիեսիսը տարեկան ստանում էր 15 հազար լատ թոշակ, չհաշված ակցիոներական ընկերության մեջ դիրեկտորի պաշտոնի համար ստացած 24 հազար լատը: Միևնույն ժամանակ ծեր, աշխատունակությունը կորցրած բանվորներին պահելու համար անկելանոցներին տրվում էր ամսական միմիայն 10-ական լատ:

Այդ բոլոր ծաղրուծանակները կվոխում եյին ազատության համար մարտնչողների մարտական վոգին:

Հին, պլուտոկրատական կառավարությունը, կապիտալիստների ու կալվածատերերի կառավարությունը տապալվեց — Լատվիան դարձավ խորհրդային: Լատվիայի աշխատավոր ժողովուրդը ցնծում է, դիտենալով, վոր ձեռք է բերել այնպիսի ազատություն, ինչպիսի ազատությամբ արդեն քսան տարուց ավելի յե ինչ ոգտվում են Խորհրդային Միության ժողովուրդները:

Այժմ մեր յերկրում ընդմիշտ կվոչնչանա մարդու չահագործումը մարդու կողմից:

Այժմ յուրաքանչյուր աշխատավոր վստահ է իր վաղվա որվա նկատմամբ, տեսնելով, վոր իր գլխի վերև փայլում է և յերբեք չի՛ մթագնի Ստալինյան Սահմանադրության մեծ արևը (բուռն, յերկարատև ծափահարություններ), Սահմանադրություն, վորը մարդու համար ապահովում է աշխատանքի, հանգստի, կրթության իրավունք, ծերության ժամանակ նյութական ապահովության իրավունք, ապահովում է ժողովուրդների իրավահավասարությունը, մեր յերկրի նյութական և հոգևոր զարգացման հսկայական վերելքը, մեր աղգային կուլ-

աուրայի վայլուն ծաղկումը, մեր ամբողջ աղգային զարգացման վայլուն հաջողություններըը:

Լատվիական ժողովրդի հսկայական հոգևոր ուժը չի մարել: Այն չկարողացան խեղդել ճնշման յերկար տարինեըը: Այժմ չտեսնված ուժով կզարգանան ժողովրդի հզոր ձիրքերը, տաղանդները, ժողովուրդ, վորը կստեղծի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական իր նոր կուլտուրան:

Ընկե՛ր դեպուտատներ: Մենք հավատում ենք, վոր մի քանի րոպեյից հետո, մեծ սոցիալիստական պառլամենտը, խորհրդային ժողովրդի կամքի իսկական արտահայտիչը, կընդունի մեզ իր ընտանիքի մեջ—յերջանիկ, ծաղկափթիթ, մեծ խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ընտանիքի մեջ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Ցերբ Սեյմի Լիատոր Հանձնաժողովը մեկնում եր Լատվիայի սահմաններից, վորպեսզի այստեղ, հենավուրց Կրեմլում Գերագույն Խորհրդին հանձնի իր խնդիրքը՝ Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը ԽՍՀՄ-ի մեջ ընդունելու մասին, մեզ ճանապարհում եյին հազարավոր ու տասնյակ հազարավոր աշխատավորները, վորոնք հանձնարարում եյին Լիատոր Հանձնաժողովի անդամներին ջերմ վողջույն հաղորդել Խորհրդային Միության ժողովուրդներին, Խորհրդային կառավարությանը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովին (բուռն, յերկարատև ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգնում), կոմունիստական կուսակցությանը (բուռն ծափահարություններ), ԽՍՀՄ ժողովուրդների և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջնորդ մեծ Ստալինին: (Բուռն ծափահարություններ, վորոնք վոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «կեցցե՛ ընկեր Ստալինը: Ուռա՛»:)

Նախագահող: Խոսքը տրվում է Ուզբեկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝ դեպուտատ Ախունբաբաևին: (Ծափահարություններ:)

Յու. Ախունբաբաև (Անդիջանի ընտրական okpուգ, Ֆերղանայի մարզ, Ուզբեկական ԽՍՀ): Խոսում է ուզբեկերեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ցու. Քարիմովը:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Մենք լսեցինք Լատվիայի Սեյմի Լիատոր Հանձնաժողովի հայտարարությունը և Լիատոր Հանձնաժողովի անդամների յելույթները:

Մենք պետք է վճռենք մի պատմական հարց — Լատվիական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը մեծ Խորհրդային Միության մեջ մտնելու մասին:

Լատվիական Սեյմը, կատարելով լատվիական ամբողջ աշխատավոր ժողովրդի կամքն ու ցանկությունը, դեկլարացիա յե ընդունել Լատվիայի ամբողջ տերիտորիայում խորհրդային իշխանության հաստատելու մասին:

Լատվիական ժողովուրդը խնդրում է Լատվիան ընդունել Խորհրդային Միության մեջ:

Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, վորը Ռուսաստանի ժողովուրդներին ազատագրել է կապիտալիստական սարկության, ազատագրել եր նաև լատվիական ժողովրդին: Բայց լատվիական ժողովուրդը յերկար չոգտվեց սոցիալիստական հեղափոխության պտուղներով: Լատվիայում իշխանությունը նորից գրավեցին կապիտալիստներն ու կալվածատերերը:

Անցյալ տարի Խորհրդային Միության և Լատվիայի միջև կնքված պայմանագիրը չեր կատարվում Լատվիայի նախկին կառավարության կողմից, թեև Խորհրդային Միությունն իր պարտավորություններըը կատարում եր ճշտությամբ: Լատվիայի կառավարող բուրժուա-կալվածատիրական կլիկան ձգտում եր Լատվիայի և մերձբալթյան այլ յերկրների ժողովուրդներին ներքրավել պատերազմի մեջ: Մեր կառավարության խմաստուն արտաքին քաղաքականությունը խորտակեց այդ պլաններըը:

Լատվիայի բուրժուա-կալվածատիրական կառավարությունը խաբելով բանվորներին, գյուղացիներին և ինտելիգենցիային, գրպարտում եր մեր յերկիրը, թշնամություն եր սերմանում Խորհրդային Միության — ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքի նկատմամբ:

Բայց ժողովրդին չի կարելի խաբել: Ճշմարտությունը միշտ յերևան կգա:

Մեզ մոտ, Ուզբեկստանում մի առած կա.—«Ինչքան ել վորձես արևը թաշկինակով ծածկել, չես կարող, վորովհետև արևը գոյություն ունի քո թաշկինակից անկախ»:

Ինչպես չի կարելի արևը թաշկինակով ծածկել, այնպես ել չի կարելի վոչ մի խաբեբայությամբ ծածկել ճշմարտությունը մեր սոցիալիզմի յերկրի մասին, կառուցվող կոմունիստական հասարակության յերկրի մասին:

Ճշմարտությունը սոցիալիզմի հաղթանակի մասին մեր յերկրում, այդ յերկիրն առաջ տանող՝ մարդկության մեծագույն

հանճար ընկեր Ստալինի մասին, բացում է իր ճանապարհը, չնայած վոչ մի արդելքի: (Բուռն ծափահարություններ:)

Լատվիայի աշխատավոր ժողովուրդն ընդմիշտ վերջ տվեց իրեն ստելի ռեակցիոն ռեժիմին: Լատվիական ժողովուրդը վերջ դրեց հին բուրժուական կառավարության դիչատիչ, կործանիչ քաղաքականությանը, կառավարություն, վորը յերկիրը դրել եր ոտարերկրյա կապիտալիստներից տնտեսական ու քաղաքական կախման մեջ և աշխատավոր ժողովրդին զրկել եր մարդկային բոլոր իրավունքներից: Լատվիայի աշխատավոր ժողովուրդը վռնդեց իրեն ստելի կառավարությունը և իր սեփական ձեռքն առավ իր ճակատագրի վորոշումը:

Լատվիայի ժողովուրդը ստեղծեց պետական նոր կարգեր, հաստատեց իր մոտ խորհրդային իշխանություն, վորը և միակ իսկական ժողովրդական իշխանությունն է:

Մեր մեծ յերկրում խորհրդային իշխանությունն ընդմիշտ վոչընչացրել է մարդու չհաղորդումը մարդու կողմից: Ստալինյան Սահմանադրությանը համապատասխան Խորհրդային Միության բոլոր քաղաքացիներն ապահովված են աշխատանքի իրավունքով, հանգստի իրավունքով, կրթության իրավունքով, ծերության ժամանակ նյութական ապահովության իրավունքով:

Խորհրդային Միության ժողովուրդները բոլշևիկների կուսակցության և սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ, ամրապնդելով վոխադարձ բարեկամությունը, պատմական ամենակարճ ժամանակամիջոցում ձեռք բերին չտեսնված հաջողություններ: ԽՍՀՄ-ն դարձավ հզոր ինդուստրիալ յերկիր: Հաղթանակեցին կոլխոզային կարգերը: Բանվորի, կոլխոզնիկի, մտավորականի աշխատանքը դարձավ բերկրալի, իսկ կյանքը՝ լիարյուն:

Խորհրդային իշխանությունն ու բոլշևիկների կուսակցությունը չտեսնված բարձրության հասցրին մեր բազմազգ ժողովրդի կուլտուրան:

Այս ժամանակամիջոցում ծաղկեցին մեր միութենական հանրապետությունները: Այդ ծաղկման վայելուն որինակն է Ուզբեկստանը: Խորհրդային Ուզբեկստանի ժողովուրդները մինչև Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը դտնվում եյին կրկնակի ճնշման տակ — ցարական ինքնակալության և տեղական բուրժուազիայի ու բայերի ճնշման տակ: Ուզբեկ ժողովուրդը հեղափոխությունից առաջ ճնշվում եր այնպես, ինչպես Լատվիայի, Լիտվայի և Եստոնիայի ժողովուրդներն են ճնշվել մոտ անցյալում:

Ուզբեկստանի աշխատավորները, 1917 թվին Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության շնորհիվ ազատագրվելով պաղութային ստրկությունից, սիրահոժար կերպով միացան Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքին:

Ուզբեկստանը ոուս մեծ ժողովրդի յեղբայրական ոգնությամբ, կուսակցության, կառավարության և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ (յերկարատև ծափահարություններ) զարձավ առաջավոր ծաղկավետ հանրապետություն: Մեր հանրապետությունը չուներ արդյունաբերություն, այժմ ստեղծված է այն: Բոլոր դյուղացիական տնտեսությունների ավելի քան 99%-ը միավորված են կոլխոզներում, նրանք վարում են կուլտուրական, ունեվոր կյանք: Բուռն կերպով զարգանում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան:

Մեր հանրապետությունում ստեղծված են հազարավոր նոր դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ, դրադարաններ, թատրոններ:

Ուզբեկստանը լինելով Խորհրդային Միության բամբակի հիմնական բազան, այժմ տալիս է բամբակի հումքի ամբողջ միութենական պրոդուկցիայի 60%-ից ավելին, նախապատերազմյան ժամանակի համեմատությամբ բամբակի բերքն ավելացնելով միքանի անգամ: Ուզբեկստանը հարուստ է մետաքսով, կարակուլով, վորոնց պրոդուկցիան կազմում է ամբողջ միութենական պրոդուկցիայի կեսից ավելին:

Մերձբալթյան խորհրդային սոցիալիստական հանրապետությունների մանելը Խորհրդային Միության մեջ նրանց համար ևս բացում է արդյունաբերության և դյուղատնտեսության բազմակողմանի ծաղկման, ազգային ազատ զարգացման և ազգային կուլտուրայի վերելքի նույնպիսի փայլուն հեռանկարներ:

Մերձբալթյան յերեք սովետական Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների և նրանց ազատագրված ժողովուրդների առջև դրված է կարևորագույն խնդիրը՝ մոտակա ժամանակաշրջանում հասնել արդյունաբերության, դյուղատնտեսության և ազգային կուլտուրայի բազմակողմանի ծաղկման:

Ընկեր դեպուտատներ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարությունը հանձնարարել է ինձ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Սեսսիայի քննարկմանը մտցնել Որենքի հետևյալ նախագիծը.

«Որենք Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին:

Լսելով Լատվիայի Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Բավարարել Լատվիայի Սեյմի խնդիրքը և Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ՝ վորպես իրավահավասար միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն: (Ծերկատաև ծափահարություններ:)

2. ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական Որենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Միութենական Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրությունները:

3. Հանձնարարել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»:

Մենք համոզված ենք, վոր լատվիական ժողովուրդը Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ ձեռք կբերի վայելուն հաջողություններ սոցիալիզմի կառուցման գործում: Դրա յերաշխիքն է մեծ Խորհրդային Միության ժողովուրդների յեղբայրական ոգնությունը, դրա յերաշխիքն է Համկ(բ)կ կենտկոմի, Խորհրդային կառավարության և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությունն ու ոգնությունը: (Բուռն ծափահարություններ, վորոնք վոտի են ովացիայի բերվում: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Ընկե՛ր դեպուտատներ: Մեծ Խորհրդային յերկրի աշխատավորները ապրում են վորպես յեղբայրական մի ընտանիք, նրանք աչքի լույսի պես են պահում ժողովուրդների բարեկամությունը: Այսոր այդ ընտանիքի մեջ է մտնում Լատվիայի ժողովուրդը:

Ձեզ չեմ կասկածում, վոր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Սեսսիան, արտահայտելով ամբողջ խորհրդային ժողովրդի կամքը, կբավարարի Լատվիայի Սեյմի Լիազոր Հանձնաժողովի և Լատվիական ժողովրդի խնդիրքն ու Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կընդունի մեծ Խորհրդային Միության իրավահավասար անդամների թվի մեջ: (Ծերկատաև ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Լատվիայի ազատագրված ժողովուրդը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեծ Խորհրդային Միությունը և նրա ժողովուրդներից

անխախտելի բարեկամությունը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ Միության կառավարությունը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ Լենինի—Ստալինի կուսակցությունը և ամբողջ աշխատավոր մարդկության մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բացականչություններ՝ «ուռա»: Բոլորը վոտքի յեն կանգնում: Ովացիա է պատիվ ընկեր Ստալինի: Դահլիճից լսվում են բացականչություններ՝ «կեցցե՛ մեր ուսուցիչ և առաջնորդ ընկեր Ստալինը: Ուռա՛»:)

Նախագահող: Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություն է ստացվել Լատվիական Հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության քննարկման չուրջը մտքերի փոխանակությունը դադարեցնելու մասին:

Ուրիշ առաջարկություններ կա՞ն արդյոք: Չկան: Ինձ թվում եմ մտքերի փոխանակությունը դադարեցնելու վերաբերյալ առաջարկությունը: Ով կողմնակից է մտքերի փոխանակությունը դադարեցնելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իրեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Մտքերի փոխանակությունը դադարեցված է:

Լատվիական հանրապետության Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության առթիվ առաջարկություն է մտցրել դեպուտատ Ախունբաբաևը: Դեպուտատներն ուրիշ առաջարկություններ ունե՞ն արդյոք: Վո՛չ:

Ո՞վ է ցանկանում խոսք վերցնել դեպուտատ Ախունբաբաևի մտցրած առաջարկության վերաբերյալ: Ցանկացողներ չկան:

Նախքան քվեարկությանն անցնելը, հրապարակում եմ կառավարության հանձնարարությամբ դեպուտատ Ախունբաբաևի մտցրած Որենքի նախագիծը:

«Որենք Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին:

Լսելով Լատվիայի Սեյմի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Բավարարել Լատվիայի Սեյմի խնդիրքը և Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-

թյան մեջ՝ վորպես իրավահավասար մխութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն: (Բուռն ծափահարություններ:)

2. ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական Որենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Մխութենական Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրություններ:

3. Հանձնարարել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»:

Դեպուտատներից վորևե մեկը պահանջո՞ւմ է արդյոք Որենքի նախագիծը քվեարկել առանձին-առանձին, ըստ հոդվածների:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Որենքի նախագիծը քվեարկում եմ ամբողջությամբ:

Քվեարկում են Մխության Խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքի նախագիծն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Ազգությունների Խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է Որենքի նախագիծն ընդունելուն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Ընկե՛ր դեպուտատներ: Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Մխության մեջ ընդունելու վերաբերյալ Որենքը Գերագույն Խորհրդի կողմից ընդունված է միաձայն: (Բուռն, յերկար ժամանակ չլռող խանդավառ ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Յերկարատև ովացիաներ ի պատիվ նոր Մխութենական Լատվիական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, ի պատիվ ազատ լատվիական ժողովրդի, ի պատիվ Խորհրդային Կառավարության ղեկավար—ընկեր Մոլոտովի, ի պատիվ ժողովուրդների մեծ առաջնորդ—ընկեր Ստալինի: Բացականչություններ՝ «ուռա»:)

Ընկեր դեպուտատներ, որակարգի չորրորդ հարցը սպառված է: Գերագույն Խորհրդի հետևյալ նիստը կկայանա ոգոստոսի 6-ին յերեկոյան ժամը 6-ին:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

(1940 թվի ոգոստոսի 6-ին)

Նախագահում է Մխության Խորհրդի Նախագահ Ա. Ա. Անդրեևը:

Նախագահող: Գերագույն Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված:

Ընկե՛ր դեպուտատներ: Որակարգում — Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը: (1905 թվի և 1917 թվի հեղափոխական պայքարի որերի մարտական դրոշներով պահվում են մանում Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամները և կանգնում տրիբունայի մոտ: Դեպուտատները Լիազոր Հանձնաժողովի անդամներին, ազատ Եստոնական ժողովրդի ներկայացուցիչներին դիմավորում են բուռն, յերկարատև ովացիայով: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի կողմից հայտարարության համար խոսքը տրվում է Լիազոր Հանձնաժողովի անդամ, Եստոնիայի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղար ընկ. Ի. Լաուրիստինին:

(Տրիբունայի վրա ընկ. Լաուրիստինի յերեվալը դեպուտատները դիմավորում են բուռն, յերկարատև ծափահարություններով, վորոնք փոխվում են ջերմ ովացիայի:)

Ի. Լաուրիստին (Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ, Եստոնիայի կոմունիստական կուսակցության

կենտրոնական կոմիտեյի քարտուղար): Խոսում է եստոներեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ն. Կարոտամմը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք ինձ Խորհրդային Եստոնիայի աշխատավոր ժողովրդի անունից սրտագին վողջունել ձեզ, ԽՍՀՄ ազատ ժողովուրդների ներկայացուցիչներիդ, վեհանձն կարմիր Բանակին, որն իր զորեղ ուսերի վրա վերցրեց հոգատարությունն Եստոնիայի անվտանգության մասին, և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարությանը՝ խաղաղության ստալինյան քաղաքականության իմաստուն կերտողի — ընկ. Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի դլխավորությամբ: (Բուրբը վոտքի են կանգնում: Բուռն, երկարատև ծափահարություններ:)

Եստոնիայի ամբողջ աշխատավոր ժողովուրդը բոցավառ վոլջույն է հղում մեր մեծ ուսուցիչ և առաջնորդ ընկեր Ստալինին: (Բուրբը վոտքի են կանգնում: Բուռն, երկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի:)

Ստալինյան իմաստուն քաղաքականության շնորհիվ խորտակվեցին իմպերիալիստների նենգ պլանները, իմպերիալիստներ, որոնք փորձում էին պատերազմին մասնակից անել թե՛ Խորհրդային Միությունը և թե՛ մեր եստոնական ժողովուրդը: Խորհրդային Միության իմաստուն քաղաքականության հետևանքով եստոնական ժողովուրդը հնարավորություն ստացավ Խորհրդային Միության ազատ ժողովուրդների հետ միասին դնալ դեպի լուսաշող ապագան, վայելել խաղաղության բարիքները և կառուցել երիտասարդ սոցիալիստական հանրապետություն:

Ընկերնե՛ր: Եստոնիայի աշխատավոր մասսաները զարեր շարունակ տառապել են բալթիական բարոնների ճնշման տակ: Եստոնական աշխատաոեր դյուղացիությունից հողը խլվում եր: Ամենաիոքր անհնազանդության դեպքում բարոնի մարակը չառաչում եր դյուղացու մեջքին: Ցերբ սարկացված ժողովուրդը համարձակվում եր ապստամբել իրեն կեղեքողների դեմ, ապա նրան ճնշում էին ամենադաժան ձևով: Բալթիական բարոնների ճնշումը միահյուսվում եր ցարական ռեժիմի ճնշման հետ, և կապակային նապոլեան չառաչում եր ինչպես ռուս, այնպես և եստոնական բանվորի ու դյուղացու մեջքին: Ցարական ոստիկանները, բալթիական բարոնները, կապիտալիստներն ու կալվածատերերը յերկար տարիներ խեղդում էին եստոնական ժողովրդին:

1917 թվին եստոնական բանվորներն ու դյուղացիները, Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հետևանքով հաստատեցին խորհրդային իշխանություն: Հողը խլվեց կալվածատերերից, իսկ ձեռնարկություններն ու բանկերը՝ կապիտալիստներից: Բայց եստոնական աշխատավոր ժողովուրդը չկարողացավ յերկար վայելել ազատությունը: Նախ տեղի ունեցավ դերմանական okkուպացիան, իսկ այնուհետև ներքուժեցին անգլիական իմպերիալիստներն ու նրանց կամակատարները, որոնք և իշխանությունը հանձնեցին եստոնական բուրժուազիային:

Եստոնական բուրժուազիան նույնքան արյունախում և դազանաբարո եր ժողովրդի նկատմամբ, որքան և բալթիական բարոններն ու ցարիզմը: Ազատության համար պայքարող բազմաթիվ անձնազոհ մարտիկներ սպանվեցին քաղաքացիական պատերազմի ժամանակ: Եստոնական բուրժուազիան, սպիտակ դեներալները, ֆիննական մսագործները և այլ դահիճներն անողոքաբար վոչնչացնում էին եստոնական աշխատավոր ժողովրդի ականավոր առաջնորդներին: Եստոնական աշխատավոր ժողովրդի փորձված առաջնորդ Վիկտոր Կինգիսեպպը դավաճանորեն ձերբակալվեց, նրան խոշտանգեցին, ջարդեցին նրա վոսկորները, դնդակահարեցին նրան ու թաղեցին հայտնի չե թե վորտեղ: Մեր անատոներն ու դաշտերը լեփլեցուն են հեղափոխական բանվորների ու դյուղացիների դերեզմաններով:

Մինչև ամենավերջին ժամանակները եստոնական աշխատավոր ժողովուրդը անքուամ եր կապիտալի լծի տակ և ռեակցիոն կլիկայի իշխանության տակ:

Կառավարող կապիտալիստական կլիկան վարում եր Եստոնիան ինչպես քաղաքական ու տնտեսական, այնպես և կուլտուրական տեսակետից Խորհրդային Միությունից լիովին մեկուսացնելու քաղաքականություն: Այդպիսի մեկուսացման հետևանքը յեղավ մեր արդյունաբերության և դյուղատնտեսության հետամնացությունը: Մեր ֆաբրիկանեն ու գործարանները կանգ էին առել: Հարյուրավոր մեքենաներ ժանգոտվել էին, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների չենքերը քանդվում էին:

1913 թվին մետաղագործական և տեքստիլ խոշոր ձեռնարկություններում կային 36 հազար բանվորներ, իսկ 1940 թվին նույն այդ ձեռնարկություններում մնացին միայն 17 հազար բանվոր ու ծառայող: Նարվայում կրենհոլմի մանուֆակտուրայում

1914 թվին աշխատում եր 14 հազար բանվոր, իսկ այժմ աշխատում է 2 հազարից մի փոքր ավելի:

Գործազուրկների թիվը հասնում եր հսկայական չափերի: Գործազրկություն ընտելիգենցիային չահագործում էին վորպես ձրի բանվորական ուժ — սրբակիրկանների անվան տակ: Եստոնիայի դյուղերում և ավաններում կան հազարավոր գործազուրկներ, վորոնք տարվա մեջ աշխատանք են գտնում 1½ — 2 ամիս միայն: Աշխատանքը սահմանված էին բնդրել վորպես վողորմություն:

Շատ կան այնպիսի բանվորներ, վորոնք միջոցներ չունեն դնելու ամենաանհրաժեշտ սննդամթերք, չենք խոսում արդեն հագուստի և վոտնամանի մասին:

Դպրոցական տարիքի հարյուրավոր յերեխաներ մի կտոր հաց չունեյին: Նույնիսկ բուրժուական թերթերը գրում էին այնպիսի աշակերտների մասին, վորոնք ամեն որ իրենց համար անունդ էին վորոնում աղբահորերում, քանի վոր գործազուրկ ծնողները հնարավորություն չունեյին իրենց յերեխաներին կերակրելու:

Եստոնիայի բուրժուական պարապլուխները Եստոնիայի ամբողջ եկոնոմիկան յենթարկել էին իմպերիալիստական յերկրների դիչատիչ պահանջներին: Եստոնական ժողովուրդն ուներ ավելի քան 186 միլիոն կրոն արտաքին պարտք: Բացի դրանից, եստոնական ժողովրդի վրին գրված էին եստոնական բուրժուազիայի ավելի քան 130 միլիոն կրոն պատերազմական պարտքերը, վորոնք ծախսվում էին Խորհրդային Միության դեմ ռազմական ավանտյուրաներ նախապատրաստելու և աշխատավորներին ճնշելու համար: Յերկրի տնտեսությունը, այդպիսով, վաճառված եր իմպերիալիստական դիչատիչներին, վորոնք Եստոնիան դարձրել էին կիսագաղութային մի յերկիր:

Աշխատավորներին լիակի կերպով կողոպտելու հաշվին իրենց հարստությունները կուտակած եստոնական և ռուսերկրյա կապիտալիստները մրցում էին միմյանց հետ մեր բանվոր դասակարգին, դյուղացիությանը և աշխատավոր ինտելիգենցիային անողոքաբար չահագործելու ասպարիզում:

Բանվորների կենսական մակարդակը հասցվել եր ծայրահեղ ցածր աստիճանի և ամենավերջին տեղերից մեկն եր գրավում Յեվրոպայում:

Վատ եր նաև դյուղացիության դրությունը: Եստոնիայում կա մոտավորապես 140 հազար խուտոր: Ճնշող մեծամասնությունը գրանցից — մանր ու միջակ տնտեսություններ են, վորոնք հազիվ-հազ ծայրը ծայրին են հասցնում: 15 հազար հողազուրկ դյուղացիներ իրենց դոյությունը քարշ էին տալիս ամենավողորմելի վիճակում: Հողը սպեկուլյացիայի առարկա յեր:

Եստոնական դյուղացիությունը տնքում եր պարտքերի, հարկերի ու անվերջ տուգանքների ծանրության տակ: Գյուղացիության վրին գրված եր ավելի քան 142 միլիոն կրոն պարտք:

Ուստի, զարմանալի չէ, վոր ամեն տարի հազարավոր խուտորներ վաճառվում էին աճուրդով: Վաճառված յուրաքանչյուր խուտորին ընկնում եր միջին հաշվով 6 հազար կրոն պարտք:

Եստոնիայի դյուղատնտեսությունն ամբողջապես կախված եր համաշխարհային չուկայի քմահաճույքներից:

Աշխատավոր դյուղացիությունն անողոքաբար չահագործվում եր մոնոպոլիստական կապիտալի կողմից: Այն ժամանակ, յերբ բարձրանում էին դյուղացու կողմից գնվող տեղական և արտասահմանյան արդյունաբերական ապրանքների գները, ինչպես, որինակ տեքստիլ, հողամշակման գործիքների, չաքարի, լուցկու և այլ ապրանքների գները, դյուղացու կողմից վաճառվող դյուղատնտեսական ապրանքների գները արհեստականորեն իջեցնում էին «Մասլոբազորտ», «Մյասոբազորտ», «Յայցեբազորտ» և այլ մոնոպոլիստական միավորությունները: Արդյունաբերական ապրանքների բարձր գները և դյուղատնտեսական ապրանքների ցածր գներն ամբողջ ուժով խփում էին թե՛ դյուղացուն և թե՛ բանվորին:

Ժողովրդի չքավորության ու աղքատության պատճառը ռեակցիոն կլիկայի դիչատիչ ոլիգարխություն եր: Եստոնիայի խոշոր արդյունաբերության մեջ, բանկային գործում և խոշոր առևտրի մեջ իշխող դեր եր կատարում ռուսերկրյա իմպերիալիստական կապիտալը, վորը միայն մի բանի մասին եր հոգում՝ վորքան կարելի յե շատ շահույթ քամել եստոնական բանվորից ու դյուղացուց և այն տեղափոխել արտասահման: Ամեն տարի արտասահման եր ուղարկվում մոտավորապես 200 միլիոն կրոն: Եստոնական բանվորները, դյուղացիները, ինտելիգենցիան սոսկալի էին ապրել կարիքի մեջ ու սոված, տոկալ էին բավարարվել սովյալ պայմանով նրա համար, վորպեսզի կապիտալի ռուսերկրյա և եստոնական մագնատները կարողանային քեֆ քաշել, իրախճանալ:

Բուրժուական պարապլուխները, վորոնք սեփականացրել էին եստոնական ազգի անունից մոնոպոլ կերպով հանդես գալու իրավունքը, իրականում ղեկավարում էին իրենց ժողովրդի շահերի առևտրով, ոգնելով ռուսերկրյա կապիտալիստներին կողոպտելու եստոնական ժողովրդին: Խոշոր ֆինանսական կապիտալն

անբարոյականացրել եր պետական ապարատը: Մինիստրություններում և պետական այլ հիմնարկներում զարգացած եր կաշառակերությունը: Այսպես օրինակ, ժողովրդական տնտեսության նախկին մինիստր Սելտերը դուրս եկավ միայն մեկ գործարանից վորպես կաշառք հարյուր հազարավոր կրոն: Ցեվ վորպեսզի մինիստրներն ու բարձրաստիճան չինովնիկները քողարկեյին կապիտալիստական տնօրենների սև գործերը, նրանց նվիրում եյին կապոցներով ակցիաներ և վճարում բարձր վարձատրություն:

Բանվորների իրավունքները, կյանքն ու առողջությունը հաշվի չեյին առնվում: Դժբախտ դեպքերի թիվը սարսափելի մեծ եր, աշխատանքի պայմանները՝ վոչ-սարդկային, նույնիսկ աշխատանքի պաշտպանության պոչատ որենքներն եյ վոտնահարվում եյին բուրժուական Եստոնիայի ձեռնարկատերերի կողմից:

Այդպիսի «տիրապետությունը» անանկության եր հասցրել Եստոնիայի ժողովրդական տնտեսությունը: Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը լիակատար կաթվածի մեջ եյին մինչդպին տնտեսական կոնյունկտուրայի խաղից և արտաստհմանյան շուկաների քմահաճույքներից:

1929—1934 թվերի ճգնաժամը վոչնչացրեց մանր առևտրականների ու արհեստավորների հարյուրավոր տնտեսություններ: Հարյուրավոր խոտորներ աճուրդի հանվեցին: Նրանց հզղերը չնչին գներով գնում եյին բանկերի դիրեկտորները, խոշոր ակցիոներները և նրանց խոնարհ ծառաները — պետական բարձրաստիճան չինովնիկները, վորոնք ոգուտ եյին քաղում ժողովրդի կարիքից:

Եստոնիայի տնտեսությունը 1929—1934 թվերի ճգնաժամից հաղիվ եր մի քիչ կարգի ընկել, երբ 1937 թվին սկսվեց նոր համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Բայքայվող կապիտալիզմը նոր փակուղու մեջ ընկավ: Առանձնապես դժվարին դրության մեջ ընկան այն փոքր պետությունները, վորոնք ամբողջովին կախված եյին իմպերիալիստական խոշոր տերություններից: Եստոնիայում կրկին աճեց գործազրկությունը, ձեռնարկությունների զգալի մասը վեցորյա աշխատանքային չաբաթից նորից անցավ յերեք և չորսորյա չաբաթի, իսկ բանվորները ստիպված եյին հաշվել համապատասխանորեն կրճատված աշխատավարձի հետ:

Սրանք եյին կառավարող չրջանների կործանարար և հակաժողովրդական քաղաքականության արդյունքները, չրջաններ, վորոնք Եստոնիան մեկուսացրել եյին Խորհրդային Միությունից և Եստոնիայի տնտեսական կյանքը յենթարկել Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստական յերկրների շահերին:

Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստներն իրենց ձեռքն եյին վերցրել Եստոնիայի վոչ միայն տնտեսությունը, այլև նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը: Եստոնիայի բուրժուական կառավարությունը մի խաղալիք եր ոտարերկրյա և հայրենական դրամական մագնատների — այդ բոլոր Շեելների, Լյութերների, Պուխկերի ձեռքում: Նրանք տապալում ու կազմում եյին կառավարություններ, ինչպես վոր իրենց ձեռնտու յեր լինում: Նրանք իջեցնում կամ բարձրացնում եյին մաքսերը, յերբ այդ ձեռնտու յեր լինում իրենց: Իրենց դիչատիչ քաղաքականությունը քողարկելու և ժողովրդի շահերի իսկական պաշտպաններից, իսկական հայրենասերներից ազատվելու համար նրանք գործի եյին դնում վոստիկանական ճնշման ու տեռորի ապարատը:

Քաղաքական ազատությունից ոգտվել կարող եյին միայն անբարոյականացած պլուտոկրատիան, ռեակցիոն բանդաներն ու նրանց կամակատարները, իսկ ժողովրդին ստիպում եյին լռել՝ վոստիկանական տեռորի, բանտերի ու մահապատիժների միջոցով:

Մեր Լիտոր Հանձնաժողովի կազմի մեջ գտնվում են Եստոնական ժողովրդի հավատարիմ զավակներն ու դուստրերը, վորոնք մինչև վերջերս անողոքաբար հետապնդվում և հալածանքների եյին յենթարկվում բուրժուական հին ռեժիմի կողմից, իսկ այժմ դարձել են ժողովրդի ընտրյալներ, ժողովուրդ, վորն իր սեփական ձեռքն է վերցրել իր բախտը:

Այստեղ, Դերպտում Խորհրդի նիստի դահլիճում և գտնվում Եստոնական բանակի քաղաքական ղեկավար Պավել Կեերդոն, վորին 1924 թվին դատապարտել եյին ցմահ տաժանակիր աշխատանքի նրա համար, վոր նա, լինելով պատմաբնագետ և բանվորական չարժման գործիչ, անձնվիրաբար պայքարում եր Եստոնական ատելի և արյունարբու ռեակցիոն կլիկայի դեմ: Մեր չարքերումն է գտնվում Յուլիանա Տելմանը, Եստոնական ժողովրդի դահիճների կողմից խոշտանգված մեր սիրելի առաջնորդ Վիկտոր Կինգիսեպպի ամենամերձավոր գինակիցը: Նա դեռ յերիտասարդ աղջիկ եր, յերբ դատապարտվեց ցմահ տաժանակիր աշխատանքի: Ցես կարող եմ մատնանշել իմ անձնական «փորձը»: Ցես գինվորական դատարանի կողմից յերկու անգամ դատապարտված եմ յեղել տաժանակիր աշխատանքի՝ կոմունիստական գործունեության համար և 15 տարի նստել եմ բուրժուական Եստոնիայի բանտերում: (Ծափահարություններ:) Ցես կարող եմ մատնանշել մեր պատվիրակության ան-

դամներից ընկերներ՝ Աբելոին, Ոյնասին, Մուլին և ուրիշներին, որոնք դատապարտված են յեղել տաժանակիր աշխատանքի և բանտարկության նրա համար, որ նրանք չեյին վախեցել մասաներին պարզաբանել մարդկության հանճարեղ առաջնորդների— Լենինի և Ստալինի ուսմունքը, աշխատավորներին վոտքի յեն հանել իրենց կեղեքիչների դեմ և պաշտպանել են ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքի — ԽՍՀ Միության շահերը: (Ծափահարություններ:)

Եստոնիայում տիրում եր վոսոխիկանական ճնշման սոսկալի ռեժիմ: Բանվոր դասակարգի, գյուղացիության և աշխատավոր ինտելիգենցիայի հեղափոխական ավանգարդն որենքից դուրս եր հայտարարված և յենթարկվում եր արյունալի սպիտակ տեռորի:

Եստոնիայի աշխատավոր ժողովուրդը և մանավանդ նրա անվեհեր առաջավոր ջոկատը — Եստոնիայի կոմունիստական կուսակցությունն անդադրում պայքարել են իմպերիալիստների- կամայականության դեմ, պլուտոկրատիայի տիրապետության դեմ, պայքարել են հանուն եստոնական ժողովրդի և Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամության: Այդ բարեկամությունը, վորը եստոնական ժողովրդին հարկավոր եր ինչպես ոդը, կառավարող ռեակցիոն կլիկան ճգտում եր ամեն կերպ խոչընդոտ հանդիսանալ, մեր ժողովուրդների միջև էինական պարիսպ ստեղծելով:

Այժմ այդ պարիսպը վոչնչացված է:

Եստոնիայի աշխատավորների լայն մասսաները համոզվել են, վոր եստոնական բուրժուազիայի իշխանությունը ժողովրդի թշնամիների իշխանություն եր, վոր այդ իշխանությունը դեմ եր այն բոլոր ազնիվ, ստեղծագործ ուժերին, վոր կան մեր ժողովրդի մեջ: Այդ իշխանությունը յերկիրը փակուղու մեջ դրեց: Յերկրի արտադրողական ուժերը չեյին զարգանում, այլ նվազում եյին: Նյութական ծանր դրության հետևանքով բուրժուական ռեակցիայի տիրապետության տարիներին խիստ պակասեց բնակչության բնական աճը: Իսկական ժողովրդական կուլտուրան ու դիտությունը զարգացնելու փոխարեն, ժողովրդին թունավորում եյին մարդատյաց չովինիզմի թույնով:

Յերբ Եստոնիայի և Խորհրդային Միության միջև փոխադարձ ոգնության պակտի կնքումից հետո 1939 թվի սեպտեմբերի 28-ին Կարմիր Բանակի զորամասերն անցան սահմանը և մեր բանվորներն ու գյուղացիները ցնծությամբ ընդունեցին նրանց, մեր սրտերում վառվեց մոտալուտ ազատության հույսը: Բուրժուազիայի ռեակցիոն կլիկան դրա մեջ տեսավ իր տիրապետության

վախճանի մոտեցումը և սկսեց ե՛լ ավելի մեծ դաժանությամբ ճնշել աշխատավոր ժողովրդին, սաբոտաժի յենթարկելով պակտը, դրպարտություններ տարածելով ԽՍՀՄ-ի և նրա քաջարի Կարմիր Բանակի հասցեյին՝ հրահրելով պատերազմ: Բայց պատերազմի լիսի պրովոկատորներին չհաջողվեց իրականացնել իրենց դաշտնի պլանները: Նրանք մերկացվեցին, նրանց խաղը տանուլ տրվեց: 1940 թվի հունիսի 21-ին Եստոնիայի աշխատավոր ժողովուրդը սրբեց պատերազմի պրովոկատորների դարչելի բանդան և իշխանության ղլուխ դրեց իր, ժողովրդական կառավարությունը:

Նոր կառավարությունը կատարեց նոր Պետական Դումայի ընտրություններ: Հուլիսի 14-ի և 15-ի ընտրությունները յեղան Եստոնիայի ամբողջ աշխատավոր ժողովրդի կամքի հուժկու դրսեվորումը և հանդիսացան մի ահեղ դատավճիռ ռեակցիայի համար: Ժողովուրդն ընտրեց իր իսկական ներկայացուցիչներին, վորոնք պետք է հոդուտ ժողովրդի շահերի վճռեն Եստոնիայի կյանքի արմատական հարցերը:

Այժմ, յերբ ընտրված է իսկական ժողովրդական ներկայացուցչություն, հնարավոր դարձավ անարդել իրականացնել աշխատավոր ժողովրդի վառ ցանկությունը՝ Եստոնիայում հաստատել խորհրդային իշխանություն և Խորհրդային Եստոնիան մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ: Ժողովրդի այս ցանկությունը միշտ վորպես պայծառ մի բոց վառվում եր նրա սրտում:

Իրենց հարյուրավոր միտինգներում բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենցիան Պետական Դումայի իրենց ընտրյալներին հանձնարարում եյին հաստատել նակազ տվին, վոր Եստոնիան պետք է դառնա խորհրդային հանրապետություն և մտնի Խորհրդային Միության կազմի մեջ, վոր բուրժուազիայի ստեղծած այն արհեստական պատնեշը, վորն եստոնական ժողովրդին բաժանում եր Խորհրդային Միության ժողովուրդներից, պետք է վոչնչացվի:

Եստոնիայի Աշխատավոր ժողովրդի միությունը, վորի պլատֆորմի մեջ առաջարկվում եր՝ Եստոնիայի ամենասերտ դաշինքի ու բարեկամության հաստատումը Խորհրդային Միության հետ, հուլիսի 14-ի և 15-ի ընտրություններին ստացավ տրված բոլոր ձայների համարյա 93%-ը: Դրանում իր վառ արտահայտությունը դտավ ժողովրդի կամքը:

Նոր Պետական Դուման, վորն առաջին անգամ ազատ ու չտես- նված ակտիվությամբ ընտրվել է ժողովրդի կողմից, Եստոնիայի կյանքի արմատական հարցերը վճռել է այնպես, ինչպես այդ

ցանկանում եր աշխատավոր ժողովրդի ճնշող մեծամասնությունը: Պետական Դուման Եստոնիայում հաստատեց խորհրդային իշխանության, հողը հայտարարեց համաժողովրդական ունեցվածք և պետության ձեռքը հանձնեց բանկերն ու խոշոր արդյունաբերությունը: Կատարելով Եստոնիայի ժողովրդի կամքը, Պետական Դուման վորոշեց խնդրել ՌՍՖՍՀ Գերագույն Սորհրդին՝ Եստոնական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել ՌՍՖՍՀ կազմի մեջ նույն այն հիմունքներով, ինչպես վոր նրա մեջ են մտնում բոլոր միութենական հանրապետությունները: (Ծափահարություններ:)

Եստոնական աշխատավոր ժողովուրդը ՌՍՖՍՀ ժողովուրդների հետ կապված է ինչպես ռուսական, այնպես էլ եստոնական բանվորներին ու գյուղացիներին ճնշող ցարիզմի դեմ, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ համատեղ մղված պայքարի վաղեմի եղբայրական կապերով: Մեր համատեղ հեղափոխական պայքարի սիմվոլն են հանդիսանում մարտական այն հին դրոշները, վորոնց ներքո եստոնական բանվորները 1905 և 1917 թվերին գրոհի էն դիմել ցարիզմի ու կապիտալիզմի դեմ, դրոշները, վորոնք այսոր մենք բերել ենք այստեղ: (Բուռն ծափահարություններ:) Այդ դրոշները ռեակցիայի և վոսոիկանական տեռորի ամենասև որերին մեր բանվորները պահպանել են վորպես իրենց համար ամենանվիրական սրբություն:

Մենք միասին ապրել ենք յերեք հեղափոխություն և այժմ ցանկանում ենք ՌՍՖՍՀ ժողովուրդների միասնական համերաշխ ընտանիքում կառուցել ազատ Սորհրդային Սոցիալիստական Եստոնիա: (Բուռն ծափահարություններ:)

Եստոնիան ՌՍՖՍՀ կազմի մեջ մտնելը միայն կապահովի մեր պետության իսկական անկախությունն ու սուվերենությունը, կապահովի մեր ժողովրդի ազգային ազատ զարգացումը, մեր արդյունաբերության, գյուղատնտեսության և ազգային կուլտուրայի վերելքը, ժողովրդի բարեկեցության հզոր ծաղկումը և մեր սիրելի հայրենիքի բարգավաճումը:

Այդ իսկ պատճառով Եստոնիայի Պետական Դուման 1940 թվի հուլիսի 22-ին վորոշեց դիմել Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սորհրդին, խնդրելով Եստոնական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ՝ վորպես միութենական հանրապետություն նույն այն հիմունքներով, ինչպես վոր մտնում են Միության մեջ Ուկրաինական ՍՍՀ-ն, Բելոռուսական ՍՍՀ-ն և

մյուս միութենական հանրապետությունները, և մշակեց համապատասխան դեկլարացիա, վորը յես պատիվ ունեմ այստեղ կարդալու.

«Յերկար տարիներ Եստոնական ժողովուրդը տառապել է չհադրծող ռեակցիոն ռեժիմի ճնշման տակ, յենթարկվելով կողոպտման ու սարկացման, դատապարտված լինելով աղքատության և կիսաքաղց դոյության: Եստոնական բանվորների և աշխատավոր ինտելլիգենցիայի բաժինն է յեղել խրոնիկական գործազրկությունը և լիակատար անվստահությունը վաղվա նկատմամբ: Եստոնական գյուղացիությունը տառապում եր հողազրկությունից ու հողատակավորությունից, պարտքերի ու հարկերի բեռից, վաշխառուների ու սպեկուլյանտների ճնշումից: Ռեակցիոն կլիկայի տիրապետությունը յերկիրը կանգնեցրել եր փակուղու առջև: Եստոնիայի ժողովրդական տնտեսությունը ղեպի անկումն եր գնում: Նրա արտադրողական ուժերը չէին զարգանում: Բնակչության մեջ հետզհետե նվազում եր: Ագգային յեկամուտն ավելի ու ավելի յեր պակասում, աղքային պարտքն ավելի ու ավելի յեր աճում: Արդյունաբերությունն ավելի ու ավելի մեծ կախման մեջ եր ընկնում ոտարերկրյա կապիտալից: Գյուղատնտեսության բախտը կախված եր համաշխարհային շուկայի փոփոխություններից: Այսպիսով ավելի ու ավելի յեր ուժեղանում Եստոնիայի համար կործանիչ տնտեսական ու քաղաքական կախումն իմպերիալիստական պետություններից ու բանկիրներից:

Հին, ռեակցիոն ռեժիմի հակաժողովրդական քաղաքականությունը Եստոնիային հասցրել եր կործանման յեզրին: Եստոնիային սպառնում եր իմպերիալիստների ավարը դառնալու վտանգ: Այն ժամանակ, յերբ Եստոնական ժողովրդի արմատական կենսական շահերը պահանջում էին ամենասերտ և բազմակողմանի համագործակցություն Եստոնիայի և ՌՍՖՍՀ-ի միջև, Եստոնիայի նախկին կառավարողների կլիկան, ի վնաս ժողովրդի, արհեստական պատնեշ եր ստեղծում Եստոնիայի ու ՌՍՖՍՀ ժողովուրդների միջև:

Իր չհատանելի, նեղ-դասակարգային շահերից յելնելով, նախկին մութքյան եր սերմանում մեր ժողովրդի և ՌՍՖՍՀ ժողովուրդների միջև, արմատավորում եր մարդատյաց չովինիզմ: Նա փորձում եր ամեն կերպ խանգարել մեր և խորհրդային ժողովուրդների եղբայրական մերձեցմանը, խանգարել մեր բարեկամությանը և ամուր, անխորտակելի դաշինքին մեր մեծ հարևանի՝ անպարտելի Սորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-

ների Միության հետ: Հին կառավարությունը վանդնեց Եստոնիայի կողմից 1939 թվի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրի վիժեցման ուղու վրա և դավաճանորեն մեր յերկիրը մղում էր դեպի պատերազմի ու կործանման ուղին:

Ժողովուրդների բարեկամության փոխարեն, ռեակցիոն կլիկան վոռնահարում էր Եստոնիայում բնակվող ազգային փոքրամասնությունների տարրական իրավունքները, ամեն կերպ բորբոքում և հրահրում էր ազգամիջյան յերկպառակություն:

Այժմ, յերբ եստոնական ժողովուրդը ջախջախել է հին ռեժիմի — ճնշման ու իրավազրկության ռեժիմի տիրապետությունը, իր ձեռքն է վերցրել իր հայրենիքի բախտը և դուրս է յեկել նոր կյանքի կառուցման լայն ու լուսավոր ուղին, հասել է այն պատմական մեծ ժամը, յերբ համաժողովրդական քվեարկության ժամանակ եստոնական ժողովրդի արտահայտած կամքը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետ Եստոնական Հանրապետության ամուր դաշինք և անխորտակելի բարեկամություն հաստատելու վերաբերյալ, պետք է որենդրական կարգով հաստատվի:

Պետական Դուման հավատացած է, վոր Եստոնիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնելը միայն կապահովի մեր պետության իսկական սուվերենիտետը, մեր ժողովրդի ազգային ազատ զարգացումը, մեր արդյունաբերության, դյուղատնտեսության, մեր ազգային կուլտուրայի ծաղկումը, եստոնական ժողովրդի նյութական ու կուլտուրական բարեկեցության հուժկու վերելքը, մեր սիրելի հայրենիքի բարգավաճումը: Եստոնիայի աշխատավոր ժողովուրդը ՍՍՀՄ ժողովուրդների հետ վաղուց կապված է համատեղ հեղափոխական պայքարի յեղբայրական կապերով, պայքար ընդդեմ ցարիզմի, ընդդեմ կապիտալիստների ու կալվածատերերի, վորոնք կեղեքում էին ռուսական և եստոնական բանվորներին ու դյուղացիներին:

Եստոնական ժողովուրդը մտնելով սոցիալիզմի յերկրի ազատ ժողովուրդների յեղբայրական մեծ ընտանիքի մեջ, կծավալի իր բոլոր հարուստ ու ստեղծագործ ուժերը և ՍՍՀՄ աշխատավորների հետ ձեռք-ձեռքի տված առաջ կընթանա նոր կյանքի կառուցման ուղիով:

Միայն մեծ Խորհրդային Միության կազմի մեջ և վորպես խորհրդային հանրապետությունների յեղբայրական ընտանիքի իրավահավասար անդամ, եստոնական ժողովուրդը հնարավորություն կստանա բարձրացնելու իր տնտեսությունը, զարգացնելու

իր ազգային կուլտուրան, ապահովելու ազգային իրավահավասարությունը, Եստոնիայի աշխատավորների համար ապահովելու խաղաղություն, հաց և իսկական ազատություն:

Ցեղնելով եստոնական ժողովրդի միահամուռ արտահայտած կամքից, Պետական Դուման վորոշում է.

Ընդրել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին՝ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Միության կազմի մեջ՝ վորպես միութենական հանրապետություն, նույն այն հիմունքներով, ինչպես վոր նրա մեջ են մտնում Ռուսական ՍՍՀ-ն, Բելոռուսական ՍՍՀ-ն և միութենական մյուս հանրապետությունները:

Կեցցե՛ ազատ Խորհրդային Եստոնիան: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը»: (Բուռն ծափահարություններ: Ընկ. Լաուրիստինը նախագահողին է հանձնում Եստոնական Հանրապետության Պետական Դումայի դեկլարացիան Եստոնիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնելու մասին: Ցերկարատև ովացիա: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Մենք, Եստոնիայի Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամներս, հուսով ենք, վոր Գերագույն Խորհուրդը կբավարարի Պետական Դումայի խնդիրքը՝ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ վորպես միութենական հանրապետություն ընդունելու մասին: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:) Դրանով իսկ կիրականան մեր բանվոր դասակարգի, դյուղացիության և աշխատավոր ինտելիգենցիայի լուծերը: Եստոնական ազատ ժողովուրդը հնարավորություն կստանա Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության բոլոր ժողովուրդների հետ միասին առաջ ընթանալու դեպի իր պայծառ ապագան, հաղթահարելով իր ճանապարհին ծառացած բոլոր դժվարությունները՝ իմաստուն ու մեծ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության և մեր հանճարեղ առաջնորդ և ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի

յեն կանդնում: Բացականչություններ՝ «Ընկեր Ստալինին ուռա՛»:)

Թույլ տվեք Լիազոր Հանձնաժողովի անունից, Եստոնիայի ամբողջ աշխատավոր ժողովրդի անունից հավատիացնել ձեզ, Գերագույն Խորհրդի Թանկագին ընկեր դեպուտատներ, և հանձինս ձեր՝ ամբողջ խորհրդային ժողովրդին, վոր Ստալինյան Սահմանադրության արևով ջերմացած, եստոնական ժողովուրդը, վորն սկսել է իր պատմության նոր մեծ գլուխը և վոտք է դրել նոր կյանքի կառուցման ուղին, չի՛ լինի վերջին չարքերում՝ ինչպես ի բարիք սոցիալիզմի իր կատարած ստեղծագործ բերկրալի աշխատանքում, այնպես էլ մեր ընդհանուր մեծ խորհրդային հայրենիքի բոլոր թշնամիների դեմ մղվող մարտերում, վորտեղից էլ վոր վորձեն հարձակվել այդ թշնամիները: (Ջերմ ծափահարություններ:)

Կեցցե՛ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ ԽՍՀՄ Կառավարությունը՝ վկայեսլավ Միխայլովիչ Մոլոտովի գլխավորությամբ: (Բուռն, երկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանդնում:)

Կեցցե՛ մարդկության հանճար, միլիոնավոր աշխատավորների միտքն ու սիրտը, մեր լամասուն ու սիրելի առաջնորդ — մեծ Ստալինը: (Բուռն ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանդնում: ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»:)

Նախագահող: Ինդրում եմ Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամներին տեղ գրավել Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում:

(Բուռն ծափահարությունների տակ Լիազոր Հանձնաժողովի անդամները տեղ են գրավում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների շարքում:)

Ընկե՛ր դեպուտատներ: Անցնում ենք Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության քննարկմանը: Խոսքը տրվում է Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ Ջուլիանա

Տելմանին: (Ջերմ ծափահարություններ: Ովացիա: Բոլորը վոտքի յեն կանդնում:)

Յու. Տելման (Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ): Խոսում է եստոներեն: Թարգմանում է ռուսերենի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ն. Տիխանովան:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Թանկագին ընկե՛ր դեպուտատներ: Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավոր կանանց անունից հաղորդում եմ ձեզ պրոլետարական բոցավառ վողջույն: (Բուռն, երկարատև ծափահարություններ:) Մենք, Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պատվիրակներս, եկել ենք ձեզ մոտ, վորպեսզի հայտնենք ձեզ եստոնական ժողովրդի խնդիրքը՝ մեզ Խորհրդային Միության ժողովուրդների մեծ, համերաշխ ընտանիքում ընդունելու մասին: (Ծափահարություններ:)

Մենք եկել ենք ձեզ մոտ մի յերկրից, ուր ավելի քան 20 տարի բռնության ու կողոպուտի իշխանությունը վոչ մի սահման չեր ճանաչում, մի յերկրից, ուր բուրժուական նացիոնալիստներն Եստոնիայի բնակչության մեջ բորբոքում էին թշնամություն ու յերկպառակություն և ստիպում էին մեզ ապրել խավարի, կարիքի ու սովի մեջ:

Առանձնապես ծանր եր կնոջ դրությունը կապիտալիստական Եստոնիայում: Եստոնիայի աշխատավոր կինը կրկնապատիկ եր չահագործվում, ինչպես այդ տեղի ունի ամենուրեք այն բոլոր յերկրներում, ուր իշխանությունը դեռևս պատկանում է կապիտալին:

Հին, ռեակցիոն կառավարությունը վորքան էլ աշխատում եր փշալարերի հետևում մեր հայացքից թաքցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության բարգավաճման ու պրոգրեսի հրաշալի պատկերը, վորքան էլ պատժում եր մեզ աքսորով ու բանտով այն քանի համար, վոր մենք մեր ժողովրդին պատմում էինք ճշմարտությունը Խորհրդային Միության մասին, այնուամենայնիվ վոչ մի ուժ իվիճակի չեր արգելք հանդիսանալու մարդկության մեծ գաղափարների ներթափանցմանը, և այդ փշալարերի միջով, բանտային հաստ պատերի միջով նրանք հասան մեզ, քանի վոր այն ամենը, ինչ կենսունակ է, ընդունակ է զարգանալու և ամրապնդվելու, իր համար ճանապարհ է գըտնում նույնիսկ յերկաթե պատերի միջով: Մարքսի — Ենգելսի —

Լենինի—Ստալինի մեծ գաղափարների համար վոչ մի խոչընդոտ դոյություն չունի: (Ցերկարատև ծափահարություններ:)

Եստոնական աշխատավոր կնոջ համար Խորհրդային Միությունը միշտ էլ յեղել է մեծ լուսեր:

Բուրժուական դեմոկրատիան միայն խոսքով հռչակեց տղամարդկանց ու կանանց իրավահավասարություն: Կանանց թուլլ չեր տրվում զեկավար պաշտոններ ստանձնելու պետական ապարատում: Մեզ մոտ վոչ մի կին չի յեղել Դումայի դեպուտատ կամ դատավոր, կամ արդյունաբերական ձեռնարկության զեկավար: Մինչդեռ թուլլ եր տրվում ոլտադործել կնոջը ֆիզիկական ծանր աշխատանքում, սակայն այդտեղ էլ նրա աշխատանքը վարձատրվում եր տղամարդու առանց այն էլ ցածր աշխատավարձից պակաս: Մայրության իսկական պաշտպանության մասին Եստոնիայում խոսք անգամ չկար: Աշխատավոր մայրը և նրա յերեխան թողնված էին բախտի քմահաճույքին: Յեվ զարմանալի չե, վոր յերեխաների մահացություն Եստոնիայում հասնում եր սպառնող տոկոսի: Եստոնիայի բնակչությունը չեր ավելանում:

Հղի կանանց արձակում էին աշխատանքից, նրանց մատնում դործազուրկների ծանր ու չքավոր դրության:

Բազմազավակ ընտանիքներին տնատերերը մերժում էին բնակարան վարձով տալ: Տնատերերն առանց քաշվելու իրենց տներից դուրս էին վռնդում այն ապրողներին, վորոնց ընտանիքի անդամների թիվն ավելանում եր: Մանկապարտեզներ ու մանկատներ չափազանց քիչ կային, յեղածն էլ անչափ վատ եր կահավորված: Մեկ դաստիարակչուհուն ընկնում եր 50—60 յերեխա: Յերեխաների հետ ավելի վատ էին վարվում, քան տաժանակիրների հետ: Ուստի և զարմանալի չե, վոր յերեխաները մանկատներում յերեք տարեկան հասակում նույնիսկ խոսել չգիտեին:

Վերջին ամսվա ընթացքում Եստոնիայի աշխատավոր կնոջ դրությունը դգալի չափով լավացել է: Նախորդ պառլամենտում, վոր ընտրված եր կառավարող կլիկայի յուդումով, վոչ մի կին չկար: Պառլամենտի նոր կազմում կա 7 կին: Սոցիալական ապահովության մինիստրությունն անհրաժեշտ միջոցառումներ է անցկացրել մայրության և յերեխաների պաշտպանության դծով, ֆաբրիկաններին կից կազմակերպված են մանկապարտեզներ և մանկամսուրներ: Այս դործում ևս մենք յուրացրել ենք Խորհրդային Միության փորձն, այնպես, ինչպես և ապագայում մենք կհենվենք ԽՍՀՄ ժողովուրդների փորձի վրա:

Ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքի — Խորհրդային Միության հետ սերտորեն միացած մենք ընդհանուր ուժերով մեր հողի վրա կկառուցենք յերջանիկ կյանք:

Մենք, աշխատավոր կանայք, դիտենք, վոր մենք կարող ենք մեր ուժերն ամրապնդել՝ միայն զեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով: Մենք չատ աշխատանք ունենք կատարելու — հասնել ձեզ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիներ, կորցրածի տեղը հանել: Մենք հայտարարում ենք ձեզ, վոր դուք, ընդունելով մեզ ձեր ընտանիքում, մեր պատճառով ամոթահար չեք լինի: Յեթե կապիտալիստական բեռի տակ մենք տոկունորեն դիմացանք բոլոր փորձություններին և հողեվես կոփվեցինք, ապա այժմ, յերբ ճանապարհը մեր առաջ ուղիղ է ու լայն, յերբ մեր նպատակը պարզ է, մենք կտասնապատկենք մեր դիտելիքները և ուժերը, կսովորենք կրակել ըստ Վորոշիլովի և ձեռք-ձեռքի տված, ուսուսի տված կպաշտպանենք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանները: (Ցերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՞ն Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ազատագրված կանայք: (Ցերկարատև ծափահարություններ:)

Կեցցե՞ մեծ Խորհրդային Միության ժողովուրդների անխախտ բարեկամությունը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՞ քաջարի Կարմիր Բանակը, սոցիալիստական հայրենիքի սահմանների հավատարիմ պաշտպանը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՞ Խորհրդային կառավարության զեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՞ մեր հայր, ուսուցիչ և աշխատավորության սիրելի առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Ովացիա ի պատիվ ընկեր Ստալինի:)

Նախագահող: Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկություններ ստացվել ընդմիջում հայտարարել: Առարկություններ չկա՞ն: Չկան:

Հայտարարվում է ընդմիջում 15 րոպեյով:

(Ընդմիջում:)

Նախագահող: Նիստը վերսկսվում է: Խոսքը տրվում է Եստոնական հանրապետության Պետական Դումայի Լիազոր Ժողովի անդամ ընկ. Աբելսին: (Բուռն ծափահարություններ:)

Գ. Աբելս (Եստոնական հանրապետության Պետական Դումայի Լիազոր Ժողովի անդամ): Խոսում է եստոներեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Դ. Կուզմինը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Թանկագին ընկերներ պատվաստաներ: Թույլ տվեք վողջունել ձեզ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դյուղացիության անունից: (Ծափահարություններ:)

Դարերի ընթացքում եստոնական դյուղացին տառապել է կալվածատերերի ու բարոնների ճնշման տակ: Նա ապրել է կալվածատերերի, բարոնների ու ցարական չինովնիկների կրկնակի չահագործման և ազգային ճնշման ռեժիմ:

Եստոնական աշխատավոր ժողովուրդը Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը ղիմավորեց ուրախությամբ: Ռուս բանվորների ու դյուղացիների հետ ուս-ուսի տված նա մարտնչել է բարրիկադներում՝ ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի: Բայց դեպքերն այնպես դասավորվեցին, որ Եստոնական ժողովրդին չհաջողվեց հեղափոխությունը մինչև վերջ հասցնել, չհաջողվեց հաղթել: Իշխանությունը խլեց բուրժուական կլիկան, որը ծառայության մեջ էր դտնվում արևմտյան իմպերիալիստների մոտ: Եստոնական տնտեսությունը, այդ թվում նաև դյուղատնտեսությունը, ընկավ Արևմտյան Եվրոպայի չուկաներից լիակատար կախման մեջ:

Ժողովրդական հեղափոխական մասսաների ճնշման տակ բուրժուական կառավարությունը 1919 թվին հայտարարեց բարոնների կալվածքների բաժանման մասին և հողի այդ «բաժանումը» կատարեց հողազուրկ դյուղացիների միջև: Սակայն այդ «բաժանումը» կատարվեց այնպես, որ չքավորների ու բատրակների մեծամասնությունը զրկված մնաց առանց հողի: Հողի համար նշանակվեցին հսկայական վերկավճարներ, որոնց ծանր լուծը դյուղացիությունը կրեց մինչև որս: Անցկացնելով հողային ռեֆորմը, Եստոնական բուրժուազիան հայտարարեց դասակարգային պայքարի վերջը դյուղում: Բայց հակառակ այդ պնդումի դասակարգային պայքարը դյուղում վոչ միայն չթուլացավ, այլ ընդհակառակը, ուժեղացավ: Գյուղի չերտավորումը ել ավելի

արագ եր կատարվում: Բոլոր տնտեսությունների մինչև 40%-ը կազմում էին հողազուրկ և սակավահող դյուղացիները, վորոնք քարշ էին տալիս կիսաքաղց դոյություն: Տնտեսությունների 40%-ից ավելին միջակային էին, վորոնք հազիվ էին ծայրը ծայրին հասցնում: Միայն կուլակների ու խոշոր հողատերերի տնտեսություններն էին լցնում իրենց դրպանները և ճարպակալում ի հաշիվ բատրակների ու չքավորների աշխատանքի: Գյուղի չահագործող այդ վերնախավը կազմում եր տնտեսությունների 15%-ը:

Եստոնական դյուղատնտեսության մեջ մեքենաներ քիչ կան, և յեղածն էլ դտնվում է կուլակների, «գորշ բարոնների» ձեռքում:

Եստոնական դյուղացիությունը խիստ ճնշված եր կապիտալիստական չահագործման ճիրաններում: Գյուղատնտեսությունը ֆինանսավորող բանկերը, վորոնց տերերն ու ակցիոներները կառավարող ռեակցիոն կլիկայի անդամներն էին, հսկայական չահույթ էին բերում նրանց: Գյուղատնտեսական մթերքների վաճառահանության կոոպերատիվների ցանցը վիաստորեն հանդիսանում եր դյուղացուց գրպանը քամելու ապարատ: Բարձր անդամավճարներով դժվարացնելով ընդունելությունը կոոպերատիվները, կուլակները կոոպերատիվների անդամ չհանդիսացողներից մթերքները գնում էին չափազանց ցածր գներով և ստանում մինչև 400% չահույթ:

Մոնոպոլիստական կապիտալի կողոպտիչ քաղաքականությունը բնորոշում է հացի մոնոպոլիա մտցնելը: «Պուխկ և վորդիներ» ակցիոներական ընկերությունը մոնոպոլիան մտցնելուց առաջ հավաքադնել եր մեծ քանակությամբ հաց: Մոնոպոլիան մըտցնելուց հետո, յերբ հացի դինը բարձրացավ, այդ պաշարները վաճառքի հանվեցին, և «Պուխկ և վորդիներ»-ն այդ գործարքից չահեցին 5 միլիոն կրոն:

Եստոնական դյուղացիությունը, վոր Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո ազատված եր ցարական պարտքերից, նորից ընկավ պարտքային ստրկացման մեջ: Գյուղացիական տնտեսությունների պարտքերը հասան ավելի քան 140 միլիոն կրոնի, չատ տնտեսություններ ծանրաբեռնված էին պարտքերով իրենց արժեքի 50—60%-ի չափով:

Այդպիսի քաղաքականության հետևանքը յեղավ այն, վոր Եստոնական դյուղացին սնանկացավ, նրա տնտեսությունն աճուրդի հանվեց և նա ինքը մտավ բատրակ կամ գնաց քաղաք ձեռնարկության մեջ աշխատելու: Նրա տնտեսությունը գնվում եր կալվածատիրոջ և կուլակի կողմից:

Առանձնապես ծանր եր բատրակների դրությունը: Նրանց աշխատավարձն ամսական կազմում եր 25—30 կրոն, ըստ որում նրանք աշխատում էին որական 13—15 ժամ ու ստանում ճաշ, վոր բաղկացած եր աղի տառեխուկներից և յերեսը քաշած կաթից, եվ չենք խոսում այն մասին, վոր բատրակների վրա չեր տարածվում բանվորների աշխատանքի պաշտպանության նույնիսկ պզտա որենքները: Իսկ մյուս բելեռում եստոնական դյուղացու քրտինքի ու արյան դնով ճարպակալվում ու հարստանում էին կուլակներն ու կալվածատերերը, ինչպես, որինակ դյուղատնտեսական պալատի դիրեկտոր Տինիս կինսը, վորը բացի այն, վոր ուներ պատկառելի կալվածք, դրավում եր նաև դիրեկտորի և վարչության անդամի պաշտոններ 22 ակցիոներական ընկերություններում:

Խորհրդային Միության դյուղատնտեսության նվաճումների մասին, այն մասին, թե ինչպես կուլտուրական կյանքը զարգացած է խորհրդային դյուղում, հին, ռեակցիոն կառավարությունը վոչ միայն լռում եր, այլև հալածում եր նրանց, ովքեր աշխատում էին եստոնական դյուղացուն պատմել ճշմարտությունը Խորհրդային Միության մասին:

Հողագործության նախկին մինիստր Տուպիտսը անցյալ տարի հողագործության մինիստրության դեկավար աշխատողների հետ միասին գալով Համամիութենական դյուղատնտեսական ցուցահանդես, արգելեց թերթերում դրել սոցիալիստական դյուղատնտեսության այն նվաճումների մասին, վոր ցուցադրված են ցուցահանդեսում:

Այժմ, իշխանությունը ժողովրդական կառավարությանն անցնելուց հետո, հողը հայտարարված է աշխատավոր ժողովրդի ունեցվածք: Դյուղացիական բանկային պարտքերի նկատմամբ հայտարարված է մորատորիում, վրկավճարների պարտքերը հողի համար ջնջված են: Բայց դրանք միայն առաջին քայլերն են: Մենք դեռ շատ աշխատանք ունենք կատարելու հողագործի և սակավահող դյուղացիներին հողաբաժիններ հատկացնելու, ինչպես և մեր դյուղատնտեսության զարգացման դծով: Մենք համոզված ենք, վոր Եստոնիայի կոմունիստական կուսակցության դեկավարությամբ և մեծ Խորհրդային Միության ողնությամբ մենք կարող կլինենք այդ խնդիրը հաջողությամբ լուծել: (Ծափահարություններ:)

Եստոնական աշխատավոր ժողովուրդը, ինձ վստահություն ցույց տալով և ընտրելով Պետական Դումայի դեպուտատ, ինձ նպատակ է տվել հայտնելու ՄԱՀՄ Գերագույն Խորհրդին բոցավառ խնդիրք՝ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ, վորպեսզի մեր եստոնական ժողովուրդը Խորհրդային Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքի հետ միասին կարողանա հաղթականորեն ընթանալ դեպի մեր մեծ ընդհանուր նպատակը—դեպի կոմունիստական հասարակության կառուցումը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ եստոնական ազատ աշխատավոր դյուղացիությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային կառավարությունը և նրա դեկավար վ. յաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ ամբողջ աշխարհի աշխատավորության լիմաստուն առաջնորդ—մեծ Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք վոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Խոսքը տրվում է Եստոնական հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Յուրնային: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Մ. Յուրնա (Եստոնական հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ): Խոսում է եստոներեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Վ. Տելլինգը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք հայտնելու ձեզ բոցավառ վողջույն Եստոնիայի աշխատավոր ինտելիգենցիայի անունից և խնդրել ձեզ՝ հարգել մեր խնդիրքը Եստոնիան մեծ Խորհրդային Միության կազմի մեջ ընդունելու մասին: (Բուռն ծափահարություններ:)

Խորհրդային Միության մեջ կենսագործված են մարքսիզմ-լենինիզմի մեծ գաղափարները—կառուցված է սոցիալիստական հասարակություն: Ընդմիշտ վոչնչացված է մարդու չահագործումը մարդու կողմից:

Եստոնիան խորհրդային սոցիալիստական հանրապետություն հայտարարվելուց և ՄԱՀՄ կազմի մեջ մտնելուց հետո մեր ժողովրդի համար ևս բացվում է ճանապարհ դեպի պայծառ սոցիալիստական ապագան:

Մինչև վերջերս ծանր էր Եստոնիայի աշխատավոր ինտելիգենցիայի կյանքը:

Եստոնական ժողովրդի կուլտուրան ու ժողովրդական կրթությունը վողորմելի դրության մեջ էին գտնվում և մատնված էին թշնության այն պատճառով, որ կառավարող բուրժուազիան առելություն էր տածում դեպի իսկական կուլտուրան:

Ռեակցիոն բուրժուազիան ամեն տեսակ արգելքներ էր ստեղծում աշխատավոր յերիտասարդության առաջ՝ կրթություն ստանալու գործում:

Ձևականորեն մեզ մոտ դպրոցական ուսուցում, բայց տղոցների 48%-ը նյութական անապահովության պատճառով տարրական դպրոցի այդ վեց դասարաններն էլ չեր ավարտում:

Միջնակարգ ուսումնական հաստատություններում, որպես կանոն, կարող էին ընդունվել միայն հարուստ ծնողների զավակները: Բանվորի մի տղին աշխատավարձը կազմում էր ամսական 50—60 կրոն, մինչդեռ ուսման վճարը միջնակարգ դպրոցներում հասնում էր տարեկան մինչև 150 կրոնի: Այդ իսկ պատճառով միայն անցյալ տարի միջնակարգ դպրոց չընդունվեցին աշխատավորների մոտավորապես 4 հազար յերեխաներ:

Համալսարանը ձեվականորեն ավտոնոմ էր իր աշխատանքում, բայց փաստորեն նա կոչված էր ծառայություն մատուցելու ռեակցիոն կլիկային:

Համալսարանների ղեկավար պոստերում, իսկական և ժողովրդին նվիրված դիտնականների փոխարեն նշանակված էին այնպիսի անձինք, որոնք ոչ մի ժողովրդականություն և հեղինակություն չունեին:

Եստոնիայի Գիտությունների ակադեմիան ղբաղվում էր չնչին դործերով, բաշխելով պարգեվներ կեղծ դիտնականներին և այլ մարդկանց, որոնք սերտորեն կապված էին ղեկավարող շրջանների հետ:

Գոյություն ունեցող ռեժիմը դովաբանող և ռեակցիոն շրջանների առաջ սողացող դրողներին պարգեվատրում էին և ամեն կերպ պաշտպանում, նրանց նշանակելով բարձր վարձատրվող պաշտոններում: Իսկ այն դրողներին, որոնք չէին յենթարկվում ռեակցիոն ռեժիմին, որոնք պայքարում էին ժողովրդի իրավունքների համար, — այդպիսիներին ատում էին և ամեն կերպ աշխատում էին արգելակել նրանց դրվածքների հրատարակությունը, չնայած որ նրանք, որպես դեղարվեստագետներ, անչափորեն

բարձր էին կանգնած դրականության այդ պատենտավոր լակեյներից:

Եստոնական կառավարող կլիկան բոլոր ուժերով թագցնում էր ժողովրդից ճշմարտությունը ՍՍՀՄ-ի մասին: Ժողովրդին թույլ չէին տալիս ծանոթանալ խորհրդային կուլտուրային: Դպրոցներում ռուսաց լեզվի ուսուցումն արգելված էր: Խորհրդային դրքերի տարածումը հետապնդվում էր: Մաքսի Գորկու և խորհրդային այլ դրողների յերկերն արգելված էին հանրային դրադարաններում:

Այժմ այդ բոլորին վերջ է տրվել: Այժմ ճշմարտությունը, մեծ ժողովրդական ճշմարտությունը Եստոնիայում հաղթանակել է:

Կապիտալիզմի իշխանությունը մեզ մոտ կործանված է:

Եստոնական աշխատավոր ժողովուրդը՝ բանվորները, դյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան տոնում են իրենց մեծ պատմական հաղթանակը: Նրանց աչքերում փայլում է ազատագրված, յերջանիկ մարդու մեծ ուրախությունը:

Նրանք դիտեն, որ Խորհրդային Եստոնիան մեծ և հզոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնելուց հետո իրենց համար ապահովված են այն բոլոր իրավունքները, որ ունեն Խորհրդային Միության յերջանիկ ժողովուրդները, Խորհրդային Միություն, որն իր քաղաքացիներին վերապահում է աշխատանքի իրավունք, ապրուստի մարդկային պայմաններ ունենալու իրավունք, կուլտուրական կյանքի իրավունք, այն բոլոր բարիքների իրավունք, որ իր քաղաքացիների համար ապահովում է միմիայն մեծ խորհրդային Միությունը:
(Յերկատաև ծափահարություններ:)

Եստոնիայի ազատագրված աշխատավոր ինտելիգենցիան՝ դիտնականները, դրողները, նկարիչները, որոնց ճշմարիտ խոսքն ու ստեղծագործ միտքը ճնշված ու ցեխի մեջ տրորված էին ազահ ու դեպի իսկական կուլտուրան թշնամաբար վերաբերվող բուրժուազիայի կողմից, հաստատ համոզմունքով և խորը գիտակցությամբ այժմ իր գիտելիքները և իր տաղանդը դործադրում է և կդործադրի ամբողջ խորհրդային ժողովրդի բարօրության համար, իր սոցիալիստական հայրենիքի բարօրության համար:

Այդ ուժերն այժմ ակտիվ մասնակցում են Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ նոր, յերջանիկ կյանքի շինարարությանը:

Նոր, Խորհրդային Եստոնիայի գիտության, դրականության, յերաժշտության և կերպարվեստի մեջ այժմ ազատ ու անարդել

կանդրադառնան ազատագրված աշխատավոր ժողովրդի ամբողջ ուրախությունը, հոգսերն ու ցանկությունները: Սոցիալիստական ռեալիզմը կդառնա մեր արվեստի ուղեցույց աստղը:

Նոր, Խորհրդային Եստոնիայում տեր դարձավ աշխատավորը— նյութական և հոգեվոր կուլտուրայի բոլոր բարիքների ստեղծողը:

Ընկերներ, ստեղծագործական կոլեգաներ, խորհրդային կուլտուրայի և դիտության աշխատողներ, Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքի անդամներ, ընդունեցեք մեր բոցավառ վողջույնը և դիտցեք, որ Խորհրդային Եստոնիայի դիտնականները, դրողներն ու նկարիչներն ուս-ուսի կդնան ու կպայքարեն ձեզ հետ միասին: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ն խորհրդային կուլտուրայի ազատ ստեղծագործողները: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Միության նոր անդամը — Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: (Բուռն, երկարատև ծափահարություններ:)

Կեցցե՛ ժողովուրդների ազատարար կոմունիստական Ինտերնացիոնալը: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր հաղթանակների վոդեշնչողը, մեր մեծ ուսուցիչ և առաջնորդ — Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը: (Բուռն, երկար ժամանակ չդադարող ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի են կանգնում: Բացականչություններ՝ «կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ուռա՛»:)

Նախագահող: Խոսքը տրվում է Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ն. Ռուուսին: (Բուռն ծափահարություններ:)

Ն. Ռուուս (Եստոնական Հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամ): Խոսում է եստոներեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ն. Անդրեզենը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Թանկագին ընկե՛ր դեպուտատներ: Եստոնիայի Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովը յեկել է այստեղ, վորպեսզի կատարի պատվավոր պատմական խնդիրը — ներկայացնի ձեզ ամբողջ եստոնական ժողովրդի միջնորդությունը՝ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության

մեջ վորպես իրավահավասար անդամ ընդունելու մասին: (Ծափահարություններ:)

Եստոնական աշխատավոր ժողովուրդը ԽՍՀՄ ժողովուրդների հետ միասին մասնակցել է յերեք հեղափոխություններին: Ռուս աշխատավորների հետ ուս-ուսի տված նա պայքարել է ռուսական ցարիզմի ճնշման դեմ, կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետության դեմ: Մեր Տալլինի հին բանվորները լավ են հիշում Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ ընկեր Կալինինին (բուռն ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգնում), վորն աշխատել է Տալլինում և հեղափոխական կուսակցական անդուլ աշխատանք է կատարել եստոնական բանվորների մեջ: (Ցերկարատև ծափահարություններ:) Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ միասին եստոնական աշխատավոր մասսաները Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության որերին հաղթանակ ձեռք բերին:

Սակայն եստոնական աշխատավորներին այն ժամանակ չհաջողվեց հասնել վերջնական հաղթանակի: Իմպերիալիստական պետությունների ողնությամբ եստոնական բուրժուազիային հաջողվեց ջախջախել յերիտասարդ և դեռևս չամրապնդված խորհրդային իշխանությունը Եստոնիայում, իշխանությունն իր ձեռքը վերցնել ու սորկացնել եստոնական աշխատավորներին, նրանց հաղցնելով իր և ոտարերկրյա կապիտալի չղթաները:

20 տարուց ավելի եստոնական ժողովուրդը դանվում եր ռեակցիոն բուրժուական կլիկայի իշխանության տակ: Ոչոր կապիտալիստները դարձել եյին իսկական պլուտոկրատներ, վորոնք իրենց ձեռքում անբաժան կերպով կենտրոնացրել եյին և՛ տնտեսական և՛ քաղաքական տիրապետությունը: Նրանք անխնա չահագործում եյին Եստոնիայի աշխատավորներին — բանվորներին, գյուղացիներին, ինտելիգենցիային: Եստոնական բանվորներին վճարում եյին չնչին աշխատավարձ, եստոնական գյուղացուն գցել եյին ծանր պարտքային սորկության դիրքը: Ցերկրի ընդերքի դանձերը և ազգային յեկամտի աղբյուրները գարձրել եյին հայրենական և ոտարերկրյա մի խումբ խոշոր կապիտալիստների հարստացման աղբյուր: Ոչոր ակցիոներները ստանում եյին բարձր դիվիդենտներ և, բացի այդ, հսկայական վարձատրություն եյին վերցնում վորպես դիրեկտորներ: Հաճախ իրենց գործի յերեսը չտեսնելով և ապրելով արտասահմանում, դիրեկտորները հարյուր անդամ ավելի ռոճիկներ եյին ստանում, քան բանվո-

նները, իսկ եստոնական բանվորի մի ընտանիքի աշխատավարձը կազմում էր ամսական 50—60 կրոն:

Եստոնիայում իրենց կողոպտիչ տիրապետությունը քողարկելու համար ռուսաբերկրյա իմպերիալիստները եստոնական բուրժուական քաղաքական գործիչներին ուղղակի դնում էին: Ռուսաբերկրյա կապիտալով աշխատող բոլոր ակցիոներական ընկերությունները իրենց մոտ վարձում էին վորպես վճարովի դիրեկտորներ, վարչության ու խորհրդի անդամներ՝ կամ բանակի գլխավոր հրամանատար Լայդոներին, կամ մինիստր Յուրգմային և կամ վորևե նման կարևոր պերսոններին: Այդ պարոնները միաժամանակ դառնում էին տասնյակ ակցիոներական ընկերությունների դեկավար անձինք և փողը դիզում էին բահով:

Եստոնական բանվորների և գյուղացիների ծանր աշխատանքով ստեղծված միլիոնները հոսում էին արտասահման, ուր բուրժուական տնօրենները ձեռք էին բերում իրենց համար կալվածքներ և ֆաբրիկաներ կամ բանկերում բացում էին իրենց հաշիվները:

Այդպիսով, Եստոնիան հեշտ կողոպուտ դարձավ ռուսաբերկրյա իմպերիալիստների համար, վորոնք եստոնական բուրժուազիայի հետ միասին և սիրաբար հարստանում էին ի հաշիվ Եստոնիայի աշխատավոր ժողովրդի:

Իր ավազակային տիրապետությունը պահպանելու համար եստոնական բուրժուազիան ատելության էր ժողովրդին լրել: Ժողովրդից խլել էին քաղաքական ազատությունը, մամուլը կենթարկվում էր խիստ գրաքննության, քաղաքական ժողովներն արգելված էին ծանր պատիժների սպառնալիքի տակ:

Բայց այդքանով չէին բավարարվում: Իմպերիալիստական չերկրները, վորոնք Եստոնիան կեղեքում էին անտեսապես, մտադիր էին Եստոնիայի տերիտորիան դարձնել պլացդարմ Խորհրդային Միության դեմ ուղղված ռազմական ավանտյուրաների համար:

Բարեբախտաբար, մեր պետությունը և մեր ժողովուրդը փրկվեցին արևմտա-եվրոպական իմպերիալիստական ավազակների ճանկերից: Այդ հնարավոր դարձավ միայն չնորհիվ խաղաղության այն իմաստուն քաղաքականության, վոր վարում է Խորհրդային Միությունը, չնորհիվ Կարմիր Բանակի, վորը փրկեց մեզ պատերազմի արհավիրքներից և ապահովեց մեր սահմանների անվտանգությունը: (Մ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

1939 թվի սեպտեմբերի 28-ին փոխադարձ ոգնության պակտ կնքվեց Եստոնիայի և Խորհրդային Միության միջև: Այդ

մոմենտից Եստոնիայի և Խորհրդային Միության ժողովուրդների փոխհարաբերությունների մեջ սկսվեց նոր փուլ: Եստոնական ժողովուրդը՝ բանվոր դասակարդը, գյուղացիությունը և աշխատավոր ինտելիգենցիան ջերմորեն վողջունեցին Եստոնիա մտած Կարմիր Բանակին, դրանում տեսնելով խաղաղության յերաշխիքն Եստոնիայի համար: Իսկ եստոնական խոշոր բուրժուազիան, անգլիական և ֆրանսական իմպերիալիստների ցուցումով, սկսեց ստոր պատերազմել Խորհրդային Միության դեմ և Կարմիր Բանակի դեմ:

Եստոնական բուրժուազիան, վորը վարում էր և ուղղություն տալիս չարանենգ հակախորհրդային կամպանիային, չատ լավ էր հասկանում, վոր եստոնական աշխատավոր ժողովուրդը, ծանոթանալով Խորհրդային Միության աշխատավորների դրության հետ, վոտքի կկանգնի և կվոչնչացնի կապիտալիստների ու խոշոր հողատերերի ճնշումը և իր մայրենի հողը կազատի կապիտալի լծից: Դրանից մահու չափ վախենում էր եստոնական բուրժուազիան և նրա կառավարող կլիկան:

Այդ իսկ պատճառով Եստոնիայի ռեակցիոն կառավարող շրջանները փորձում էին եստոնական ժողովուրդը հեռու պահել Խորհրդային Միությունից: Այդ իսկ պատճառով էլ տարվում էր ամենաանխիղճ և անպատասխանատու պրովոկացիոն պրոպագանդա Խորհրդային Միության դեմ, բանվորների ու գյուղացիների պետության դեմ: Եստոնական պլուտոկրատիան փորձում էր չինական պարիսպ ստեղծել եստոնական ժողովրդի և Խորհրդային Միության ժողովուրդների միջև, փորձում էր ժողովրդից թաղցնել այն հսկայական նվաճումները, վոր Խորհրդային Միության մեջ ձեռք են բերվել տնտեսական, սոցիալական և կուլտուրական շինարարության բնագավառում: Այդ բոլորը կատարվում էր նրա համար, վորպեսզի ժողովուրդը չկարողանա տեսնել, թե ինչպես կապիտալիստական բռնության վոչնչացումը բարենպաստ աղդեցություն է ունեցել Խորհրդային Միության կյանքի ուժեղ զարգացման վրա:

Բայց եստոնական բանվոր դասակարդին անկարելի չեր անտեղյակ պահել այն ամենի մասին, ինչին վոր հասել է բանվոր դասակարդը Խորհրդային Միության մեջ: Եստոնական բանվոր դասակարդը, մանավանդ նրա խելոք ու միշտ պայքարի պատրաստ ավանգարդը — Եստոնական կոմունիստական բոլշևիկյան կուսակցությունն անդուլ կերպով աշխատում էին կապիտալիստների տիրապետությունը կործանելու նախապատրաստության վրա

և եստոնական ժողովրդի ու Խորհրդային Միության ժողովուրդների միջև ամենասերտ բարեկամություն հաստատելու վրա:

Եստոնական բուրժուազիայի ռեակցիոն ուժերի վոչ մի ջանքերը, վոստիկանական վոչ մի տեռոր չկարողացան ընկճել հեղափոխական բանվոր դասակարգի կամքը, քանի վոր այդ դասակարգը վոդեշնչված և Խորհրդային Միության բանվորների ու գյուղացիների մեծ որինակով և ղեկավարված և մարքսիզմի–լենինիզմի դաղափարական կարող ղենքով:

Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքը հաղթականորեն ճանապարհ է հարթել իր համար նաև Եստոնիայում, չնայած ամեն տեսակ ռեպրեսիաներին ու տեռորին: Ընկեր Ստալինը իր ղեկուցումներից մեկում միանդամայն ճիշտ և ասել մարքսիզմը «վոչնչացնելու» այն փորձերի մասին, վոր այնքա՜ն վատ ավարտում է բուրժուազիան: Ընկեր Ստալինը ասել է՝ «Մարքսիզմը բանվոր դասակարգի արմատական շահերի դիտական արտահայտությունն է: Մարքսիզմը վոչնչացնելու համար պետք է վոչնչացնել բանվոր դասակարգը: Իսկ բանվոր դասակարգը վոչնչացնել անկարելի է: 80 տարուց ավելի է անցել այն ժամանակից, երբ մարքսիզմը հրապարակ է եկել: Այդ ժամանակաընթացքում տասնյակ ու հարյուրավոր բուրժուական կառավարություններ փորձել են մարքսիզմը վոչնչացնել: Ցավ ի՞նչ: Բուրժուական կառավարությունները եկել ու գնացել են, իսկ մարքսիզմը մնում է: Ավելին, — մարքսիզմը հասավ այն բանին, վոր նա լիակատար հաղթանակ տարավ աշխարհի մեկ վեցերորդ մասում, ըստ վորում հաղթանակեց հենց այն երկրում, ուր մարքսիզմը համարում էին վերջնականապես վոչնչացված»:

Ընկեր Ստալինի այս խոսքերը միանդամայն ճիշտ են և լիովին դործադրելի Եստոնիայի նկատմամբ: Եստոնիայում մարքսիզմն արմատախիլ անելու բոլոր փորձերն իզուր անցան, չնայած վոր դրա համար շատ էին աշխատում պլուտոկրատական կլիկան ի դեմս Պյատսի, Ենպալուի, Ուլուոտսի կառավարության և բանվոր դասակարգին դավաճանելու դործում հայտնի մանշևիկները, բուրժուազիայի հավատարիմ կամակատարները — սոցիալ–դեմոկրատները II Ինտերնացիոնալից: Եստոնական բանվոր դասակարգը հավատարիմ մնաց հեղափոխական ավանդարդին — Եստոնիայի կոմունիստական կուսակցությանը, վորը բարձր բռնած առաջ է տանում հեղափոխական պայքարի անպարտելի, վեհ դրոշը՝ Մարքսի — Ենգելսի — Լենինի — Ստալինի դրոշը: (Ծափահարություններ:)

Հունիսի 21–ի ժողովրդական ապստամբությունը ցույց տվեց, վոր եստոնական բանվոր դասակարգն Եստոնիայի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բավականին ուժեղ է՝ պլուտոկրատիայի բռնությունը վերջնականապես վոչնչացնելու և կապիտալիզմի շղթաները փշրելու համար:

Այդ պատմական խնդիրը մենք կարողացանք կատարել: Այժմ մեր ժողովրդի ամենավառ ցանկությունն է — Եստոնիայում սոցիալիզմն իրականացնելու համար մղվող պայքարը հասցնել մինչև վերջ: Մենք դրան կարող ենք հասնել միայն Խորհրդային Միության ժողովուրդների մեծ ընտանիքի ոգնությամբ, ընդհանուր ուժերով: Ահա թե ինչու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին խնդրում ենք Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ: (Ծափահարություններ:)

Եստոնիայում սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար անհրաժեշտ է, վորպեսզի մարքսիզմի–լենինիզմի հեղափոխական ուսմունքի հիմունքները դիտենա վոչ միայն պրոլետարիատի ավանդարդը, այլ վորպեսզի այդ հիմունքներին ծանոթ լինի Եստոնիայի ամբողջ աշխատավոր ժողովուրդը: Դրա համար մենք պետք է դաստիարակենք կադրեր և ամենալայն մասսաներին սովորեցնենք մարքսիզմի–լենինիզմի հիմունքները: Դրա համար մենք պետք է ընդհուպ մոտենանք ժողովուրդների մեծ և հանճարեղ առաջնորդ, մեր ուսուցիչ ընկեր Ստալինի խորը դիտելիքների աղբյուրներին, վորպեսզի քաղենք այն փորձը, վորն ոգնեց Խորհրդային Միության ժողովուրդներին յերկիրը տանելու բարգավաճման ուղիով: (Ծափահարություններ:) Ընկեր Ստալինի ղեկավարությամբ, նրա հանճարեղ ուսմունքի փորձով ղինված, մեր ժողովուրդն արագ ու վստահորեն ընդառաջ կընա յերջանիկ ապագային: (Ծափահարություններ:)

Իմպերիալիստների և «իր» բուրժուազիայի դիշատիչ տիրապետության դեմ ուժասպառ յեղած Եստոնիան կարիք ունի նաև տնտեսական կաղդուրման: Նրա արնաքամ գարկերակները կարիք ունեն թարմ արյան:

Մեզ մոտ կան տասնյակ հազար բանվորական ձեռքեր, վորոնք սպասում են աշխատանքի, աշխատավարձի ու հացի: Մենք պատրաստ ենք ձեռնամուխ լինել մեր ընդհանուր մեծ հայրենիքի սոցիալիստական շինարարությանը մեր բոլոր ստեղծագործ ուժերով:

Ըստ իմ դործունեության բնույթի, վորպես սոցիալական ապահովության մինիստր, ես ուզում եմ կանդ առնել նաև ժո-

ղովրդական առողջապահության դրության վրա Եստոնիայում:

Մեզ մոտ Եստոնիայում կան հարյուրավոր հիվանդներ, որոնց համար հիվանդանոցներում ու սանատորիաներում տեղ չկա, քանի որ բուրժուազիան չեր հետաքրքրվում ժողովրդի առողջական վիճակի բարելավմամբ: Ձեզ մոտ, Խորհրդային Միության քաղաքացիներ, հարյուրավոր որինակելի, հրաշալի սանատորիաներ կան: Մենք խնդրում ենք ողնել մեզ ժողովրդական առողջապահության գործը կարգավորելնույնպես որինակելիորեն, ինչպես դա արված է Խորհրդային Միության մեջ: (Ծափահարություններ:)

Մեզ մոտ Եստոնիայում կան հազարավոր ընդունակ յերիտասարդ մարդիկ, որոնք ուսման բարձր վճարի պատճառով չեն կարողացել ընդունվել միջնակարգ և բարձրագույն դպրոցներում: Նրանցից կարող եյին աճել հրաշալի բժիշկներ, լավ ինժեներներ, դիտության, տեխնիկայի, արվեստի գործունյա աշխատողներ:

Մեր կուլտուրան նվաղում եր, որովհետև բուրժուազիան շատ եր խոսում ազգային կուլտուրայի մասին, որպեսզի մթագներ ժողովրդի գիտակցությունը, բայց իրականում նա արգելակում եր կուլտուրայի զարգացումը և դիտության ու կուլտուրայի նվաճումների իրավունքը դարձրել եր հարուստների մի բուռն խմբակի արտոնություն, ժողովրդի համար թողնելով անհույս կարիք, հյուծող աշխատանք, սոցիալական հիվանդություններ և տգիտություն:

Մխիայն Խորհրդային Միության մեջ, որպես ժողովուրդների միանական համերաշխ ընտանիքի իրավահավասար և կամավոր անդամ, եստոնական ժողովուրդը կստանա իսկական ազգային կուլտուրայի ծաղկման պայմաններ: Միայն խորհրդային իրավակարգն է ստեղծում յուրաքանչյուր ժողովրդի համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները նրա կուլտուրական պետքերի ու պահանջների զարգացման համար:

Մենք համոզված ենք, որ յեթե մեր խնդիրքը ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը բավարարի և Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը դառնա մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավահավասար անդամ, մեզ կհաջողվի Խորհրդային Միության ընդհանուր տնտեսական սիստեմում վերջ տալ գործազրկությանը Եստոնիայում, ձեռնամուխ լինել աշխատավորների նյութական դրության վճռական բարելավմանը, բարձրացնել մեր ժողովրդի կուլտուրան և խորհրդային ամբողջ ժողովրդի հետ միասին վոտք-վոտքի, ուս-ուսի առաջ չարժվել դեպի կոմունիզմ տանող ճանապարհով: (Ծափահարություններ:)

Ահա թե ինչու մենք խնդրում ենք ձեզ, Գերագույն Խորհրդի ընկեր դեպուտատներ, ընդունել պատմական վորոշում՝ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին և դրանով իսկ կատարել Եստոնիայի աշխատավոր ժողովրդի իղձերը, վոր վաղուց ի վեր վառվում են նրա սրտում անմարելի կրակով:

Մենք բավական տանջվել ենք իմպերիալիստական տերությունների հաշտերում: Այժմ մենք չտիել ենք մեր ուսերը և ցանկանում ենք դուրս գալ Խորհրդային Միության արևաչող ասպարեզը:

Կեցցե՛ Եստոնիայի և ԽՍՀՄ ժողովուրդների անխախտ միասնությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ ԽՍՀՄ Կառավարությունը և նրա դեկավար — ընկեր Մոլոտովը: (Ցերկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ ժողովուրդների մեծ առաջնորդ և ուսուցիչ — ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «ուռա»:)

Նախագահող: Խոսք ունի կարելո-ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝ դեպուտատ Կուուսինենը: (Ցերկարատև ծափահարություններ: Ցերկարատև ջերմ ովացիա: Բացականչություններ՝ «ուռա»:)

Ո. Կուուսինեն (Դյակիսալմիի ոկրուգ, Կարելո-Ֆիննական ԽՍՀ): Խոսում է ֆիններեն: Թարգմանում է ռուսերենի ընկ. Ի. Սյուկկիյայնենը:

Ընկե՛ր դեպուտատներ: Մենք լսեցինք Եստոնական Հանրապետության Գերագույն Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, վորով խնդրում են Գերագույն Խորհրդին՝ Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Միության կազմի մեջ:

Եստոնական պրոլետարիատը ցարական ինքնակալության դեմ, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ անցյալում մղած իր պայքարում սերտ կապված եր Ռուսաստանի բանվորների և գյու-

դայինների հեղափոխական չարժման հետ, վորը դլխավորել են Լենինը և Ստալինը: (Յերկարատև ծափահարություններ:) Մեծ Հոկտեմբերյան հեղափոխությունը դարավոր բռնությունից ազատագրեց նաև եստոնական ժողովրդին, և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին ամիսների ընթացքում Եստոնիան դտնվում եր խորհրդային ժողովուրդների պետական միության կազմի մեջ: Սակայն 1918 թվին Արևմտյան Յեվրոպայի իմպերիալիստները, հակառակ Եստոնիայի աշխատավոր մասսաների իղձերին, բռնի կերպով անջատեցին Եստոնիան Խորհուրդների Յերկրից և այնտեղ հաստատեցին իրենց կամակատարների, եստոնական չահագործողների, կապիտալիստների տիրապետությունը:

Իսկ թե այն ժամանակ ինչպիսի դիչատիչ ռեժիմ սահմանվեց Եստոնիայում, ինչպիսի անհնդյալ լծի տակ ընկավ եստոնական աշխատավոր ժողովուրդը, այդ մասին այսոր այստեղ համոզեցուցիչ կերպով պատմեցին եստոնական ժողովրդի իսկական ներկայացուցիչները, Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի անդամները: Կառավարող բուրժուազիան, վորը վոչինչ չարավ յերկրի տնտեսական հետամնացությունը հաղթահարելու համար, ընդունակ եր միայն, ինչպես վամպիրը, եստոնական ստրկացված աշխատասեր ժողովրդի մարմնից ծծել վերջին կենսական հյութերը:

Յերկու տասնյակ տարիներից ավելի եստոնական աշխատավոր ժողովուրդը տանջվեց բուրժուական դիչատիչների այդ պարազիտային իշխանության ներքո: Գիտակից բանվորները, դլխավորելով Եստոնիայի բոլոր աշխատավորներին, տևական պայքար մղեցին կառավարող բուրժուական կլիկայի դեմ: Նրանց հայացքները ուղղված եյին դեպի մեծ Խորհուրդների Յերկիրը: Դասակարդային ծանր պայքարում նրանց համար մշտական ոժանդակություն եյին հանդիսանում ուրախ լուրերը սոցիալիզմի համաշխարհային պատմական այն հաղթանակների մասին, վոր ձեռք են բերել խորհրդային ժողովուրդները միջազդային բանվոր դասակարդի առաջավոր կուսակցության — բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ, ժողովուրդների մեծագույն առաջնորդ — ընկեր Ստալինի հանճարեղ դեկավարությամբ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանդնում:)

Իսկ եստոնական բուրժուազիան, վախենալով իր ժողովրդից, արեց այն ամենը, ինչ կարող եր, վորպեսզի դադարեցնի հեղափոխական լուսավորության ներթափանցումը մասսաների մեջ: Նա փորձում եր մասսաներին խաբել, քողարկվելով բուրժուական դեմոկրատիայի կեղծավորությամբ, կառավարական ապարատին մասնակից անելով սոցիալ-դեմոկրատիայի վաճառվող լիդերներին ևս: Բայց ժողովրդական մասսաներն իսկույն նկատեցին այդ կեղծ-դեմոկրատիան և յերես դարձրին ժուլիկ-մենշևիկներից:

Դրանից հետո եստոնական բուրժուազիան անցավ դաժան տեռորի ռեժիմին: Բայց տեռորով ժողովրդին չես համոզի անարդար իշխանության արդարության մեջ: Եստոնիայի աշխատավոր մասսաներն իմացան խորհրդային ժողովուրդների Ստալինյան Սահմանադրության մասին, և նրանց մեջ ուժեղացավ վճռակամությունը պայքարելու հանուն նոր-նովի սահմանադրության և հանուն ժողովրդի նոր-նովի իշխանության:

Եստոնական բուրժուական մամուլը մոբիլիդացիայի յենթարկվեց՝ դրպարտողական հալածանք սկսելու Խորհրդային Միության դեմ, և Եստոնիայի տնորեններն ոտարերկրյա իմպերիալիստների հետ սարքեցին ամեն տեսակի մախինացիաներ, վորպեսզի Եստոնիայի տերիտորիան դարձնեն պլացդարմ՝ Խորհրդային Միության վրա հարձակվելու համար: Նրանք խոսում եյին եստոնական ժողովրդի ազդային չահերի պաշտպանության մասին, իսկ ժողովուրդն ել տեսնում եր, վոր նրանք ուղղակի վաճառել են իր ազդային չահերը և եստոնական ժողովրդին հանցավոր կերպով հրում են դեպի պատերազմ ու կործանում:

Խորհրդային Միությունը հսկայական համբերատարությամբ ձգտում եր, վոր եստոնական կառավարությունը հրաժարվի պրովոկացիոն հակախորհրդային քաղաքականությունից: Անցյալ տարի Խորհրդային Կառավարությունը, հավատարիմ մնալով խաղաղության իր քաղաքականությանը, ցանկանալով փրկել եստոնական ժողովուրդը ծավալվող յերկրորդ իմպերիալիստական պատերազմի սարսափներից, վոխադարձ ոդնության պակտ կնքեց Եստոնիայի հետ: Բայց Եստոնիայի բուրժուական կառավարողները ամեն կերպ ճդնում եյին ի չիք դարձնել այդ պակտի նշանակությունը և չարունակում եյին իրենց թշնամական քաղաքականությունը Խորհրդային Միության նկատմամբ:

Ինչպես նշեց Խորհրդային Կառավարության դեկավար ընկեր Մոլոտովն այս Սեսսիայում տված իր դեկուցման մեջ, Խորհրդային Կառավարության համար այլևս անկարելի յեր դարձել համբերել այդպիսի դրության: Հարկ համարվեց ԽՍՀՄ կողմից դործ դնել համապատասխան միջոցառումներ՝ Խորհրդային Միության և եստոնական աշխատավոր ժողովրդի արմատական չահերը պաշտպանելու համար:

Այդ ժամանակ խոսուն հայտարարվեց, որ Եստոնիայի կառավարող բուրժուական կլիկան մխանգամայն զրկված է յեղել ժողովրդական մասսաների վորևե պաշտպանությունից: Յերկու տասնյակ տարիներից հետո, վորոնց ընթացքում բուրժուազիան չկանում եր թունավորել եստոնական ժողովրդի հոգին հակախորհրդային նացիոնալիզմի թույնով, բանից դուրս յեկավ, որ այդ չհաջողվեց բուրժուազիային: Յերկու տասնյակ տարիներից ավելի նրան կոչ եյին անում առել Խորհրդային Միության կարմիր Բանակը, բայց յերբ առաջին կարմիրբանակային վաշտը յերեվաց Տալլինի փողոցներում, ամբողջ աշխատավոր բնակչությունը չտապեց դիմավորել նրան և անսահման ուրախությամբ վողջունեց մեր վառապանծ կարմիր Բանակի հերոսներին (ծափահարություններ), դիտենալով, որ կարմիր Բանակը— դա եստոնական աշխատավոր ժողովրդի բարեկամն ու ազատարարն է:

Քսանամյա պայքարն Եստոնիայի բուրժուազիայի և աշխատավոր ժողովրդի միջև ավարտվեց աշխատավոր ժողովրդի հաղթանակով: Հաղթանակեց ժողովուրդների յեղբայրության դործը: Հաղթանակեց ժողովուրդների բարեկամության և համագործակցության լենինյան-ստալինյան հանճարեղ քաղաքականությունը: (Ծափահարություններ:) Եստոնիայի պատմության մեջ չտեսնված համերաշխությամբ ամբողջ եստոնական աշխատավոր ժողովուրդն իր շարքերն արագորեն համախմբեց խորհրդային իշխանության դրոշի տակ, վռնդեց անանկացած բուրժուական կառավարող կլիկային և առաջ քաշեց Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը մեծ Խորհրդային Միության կազմի մեջ մտնելու լոզունգը: (Յերկարատև ծափահարություններ:)

Ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ զաղտնի ձայնատվության ընտրված Եստոնական հանրապետության Պետական Դուման եստոնական ժողովրդի այդ կամքը լիովին արտահայտել և միաձայն ընդունված դեկլարացիայում, վորն այսոր հրապարակվեց այստեղ:

Կասկած չկա, որ եստոնական ժողովուրդը ԽՍՀՄ-ի մյուս ժողովուրդների յեղբայրական ոգնությամբ կկարողանա մոտ ապագայում լիկվիդացիայի յենթարկել իր յերկրի տնտեսական հետամնացությունը:

Նայեցե՛ք, եստոնացի ընկերներ, Խորհրդային Միության բոլոր միութենական և ավտոնոմ հանրապետությունների հսկայական նվաճումներին: Պատմեցե՛ք Եստոնիայի բոլոր աշխատավորներին, որ ինչպես, այն նշանավոր հաջողությունների մասին, որ ձեռք է բերել ձեր ժողովրդին ազատելից կարելո-Ֆինն ժողովուրդը, որը մինչև խորհրդային իշխանությունը դտնվում եր կուլտուրայի և եկոնոմիկայի ավելի հետամնաց աստիճանի վրա, քան եստոնական ժողովուրդը, և վորն այսոր բնակչության դրագիտության տեսակետից Խորհրդային Միության մյուս միութենական հանրապետությունների միջև դրավում է առաջին տեղերից մեկը: (Ծափահարություններ:) Մեր Խորհրդային կարելի աղգային կուլտուրայի և արդյունաբերության ամբողջ զարգացումը վառ որինակ է հանդիսանում այն բանի, թե ինչպիսի սրընթացությամբ նույնիսկ հետամնաց ժողովուրդը խորհրդային սոցիալիստական իրավակարդում կարող է աղքատության ու խավարի խորքից բարձրանալ մինչև անտեսական պրոգրեսի և առաջավոր կուլտուրայի մակարդակը:

Խորհրդային Միության Կառավարության հանձնարարությամբ յես Գերագույն Խորհրդի քննարկմանն եմ ներկայացնում Որենքի հետևյալ նախագիծը.

«Որենք Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին:

Լսելով Եստոնիայի Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը վորոշում է.

1. Բավարարել Եստոնիայի Պետական Դումայի խնդիրքը և Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ՝ վորպես իրավահավասար միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետություն: (Բուռն ծափահարություններ:)

2. ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական Որենքի) 34-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան անցկացնել Միութենական Եստոնական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրությունները:

3. Հանձնարարել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝ նշանակել ընտրությունների որը»:

Յես համոզված եմ, որ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը կբավարարի եստոնական ժողովրդի պատվիրակների խնդիրքը, վորոնք արտահայտում են եստոնական աշխատավոր ժողովրդի կամքն ու

ցանկությունը, և կընդունի իր պատմական վորոշումը՝ Խորհրդային Եստոնիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ընդունելու մասին։ (Բուռն ծափահարություններ։)

Եստոնական աշխատասեր, խելոք, քաջարի ժողովուրդն այսոր մտնելով Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքը, Ստալինյան Սահմանադրության հիման վրա այսուհետև ստանում է բոլոր հնարավորությունները՝ կառուցելու իր երջանիկ սոցիալիստական ապագան։

Այսոր, 1940 թվի ողոստոսի 6-ին, Եստոնական ժողովրդի կյանքում սկսվում է նոր դարաշրջան, երջանիկ դարաշրջան։

Թող Եստոնիայի բոլոր աշխատավորները աշխատեն՝ համոզված լինելով, վոր աղնիվ աշխատանքը և անձնվեր պայքարը Լենինի — Ստալինի ամենահաղթ դրոշի տակ ամբողջ աշխատավոր մարդկության կհասցնեն նոր, չտեսնված հաղթանակների։ (Բուռն ծափահարություններ։)

Կեցցե՛ Խորհրդային Եստոնիայի ժողովուրդը։ (Ցերկարատև ծափահարություններ։)

Կեցցե՛ մեծ Խորհրդային Միությունը։ (Ցերկարատև ծափահարություններ։)

Կեցցե՛ Խորհրդային կառավարությունը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովը։ (Բուռն, երկարատև ծափահարություններ։ Բոլորը վոտքի կեն կանդնում։)

Կեցցե՛ պանծալի բոլշևիկյան կուսակցությունը և ամբողջ մարդկության մեծ առաջնորդ—ընկեր Ստալինը։ (Փոթորկալի ծափահարություններ։ Բոլորը վոտքի կեն կանդնում։ Ովացիա ի պատիվ ընկեր Ստալինի։ Բացականչություններ դահլիճից՝ «Կեցցե՛ Խորհրդային կառավարությունը», «Ուռա՛»։ Բուռն ծափահարություններ։)

Նախագահող։ *Ընկե՛ր ղեպուտատներ։ Առաջարկություն է առացվել Եստոնական հանրապետության Պետական Դումայի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության չուրջը մտքերի փոխանակությունը դադարեցնել։*

Ուրիշ առաջարկություններ կա՞ն արդյոք։ Չկան։ Քվեարկում եմ։ Ով կողմնակից է, վորպեսզի մտքերի փոխանակությունը դադարեցվի, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ձեռնպա՞հ։ Չկա։

Այսպիսով, մտքերի փոխանակությունը դադարեցված է։

Ղեպուտատներից ո՞վ է ցանկանում խոսք վերցնել ղեպուտատ Կուուսինենի կողմից մտցված առաջարկության վերաբերյալ։ Բացի մտցված առաջարկությունից ղեպուտատներն ունե՞ն արդյոք վորևե այլ առաջարկություն։ Վո՛չ։

Այդ դեպքում, նախքան քվեարկությանն անցնելը, նորից եմ հրապարակում Որենքի նախագիծը, վոր կառավարության հանձնարարությամբ մտցրել է ղեպուտատ Կուուսինենը։

